Իսակին

Դեղասիրութեան

ընկերաբար

891.710
Դա - 14

ՅԵ. ԽԱՉԻՆ

30 MAY 2011

# ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԹՄԲԿԱՀԱՐԸ



891.71ա
Խ-14

ՊԵՏՀՐԱՏ — ԳԵՂՀՐԱՏԲԱԺԻՆ 1934

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՍԵՐԻԱ

891.71|5

ՑԵ. ԽԱՋԻՆ

# ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԹՄԲԿԱՀԱՐԸ

Թարգմ. Ա. ԱԹԱՅԱՆ



1934
ՊԵՏՀՐԱՏ—ԳԵՂՀՐԱՏՐԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ

Гос.Публ.Библиотека
ССР
им. А. Мясникяна
4607
39



ԳԼՈՒԽ I.

## ՏՈԲԻՆ ՅԵՎ ԻՐ ԱՐՏԻՍՏՆԵՐԸ

Ամբողջ Փարիզը գիտեր Տոբի-Թռչնորսին։

Ահա յերեք տարի յեր, ինչ ամեն օր առավոտները նա դուրս եր գալիս Սեն-Ժակ արվարձանից՝ առաջից հրելով ձեռքի փոքրիկ սայլակը, վորի վրա դարսված եյին լինում արկղներ, վանդակներ ու զամբյուղներ։

Նա կամաց եր գնում, ժամանակ առ ժամանակ կանգ առնելով, վորպեսզի զիլ ձայնով կանչի.

— Ահա՛, ահա՛։ Վարժեցրած թռչուննե՛ր։ Ուսում առած թռչուննե՛ր։ Արույրե վանդակնե՛ր։ Ձողերից շինած վանդակնե՛ր։ Կոճա՛կ։ Ասե՛ղ, թե՛լ, ժապավե՛ն։ Ազգային կոկարդնե՛ր (գլխարկի նշաններ)։

Ժամը տասին նա հայտնվում եր Մոբեր հրապարակում։ Այստեղ նա ցած եր թափում իր սայլակի բեռը, տեղավորվում շատրվանի մոտ, շուկայի մեջ տեղը և իր առաջ դարսում զամբյուղները, վանդակները և արկղիկները։

Տոբիին ամեն կողմից դիմավորում եյին հարեվանուհիների վողջույնները՝

— Բարի լույս, Տոբի։ Բարև՛, Տոբի։ Ի՞նչպես ե առուտուրըդ։

Տոբին տասնուհինգ—տասնվեց տարեկան էր—ինքն էլ ստույգ չըգիտեր, թե քանի տարեկան է, վորովհետեվ՝ չնայած բոլոր ջանքերին, նա չեր կարողացել իր ծննդյան վերաբերյալ փաստաթղթեր ձեռք բերել:

Յերբ նա առաջին անգամ շուկա դուրս յեկավ, նրա հագին կար կինամոնագույն մահուդե բաճկոն, չերտավոր բումազեյից ժիլետ, վորի տակից դուրս եր ցցվում քաթանե շապիկը լայն մաշված օձիքով. վոտներին ուներ գուլպա և յերկաթե ճարմանդներով (չափրաստներով) մաշիկներ, իսկ գլխին յեռանկյունի գլխարկ: Այս բոլորն աղքատիկ եր, բայց միշտ մաքուր: Հետո նրա բաճկոնին փոխարինել եր բլուզը, մաշիկներին՝ կոշիկները, իսկ գլուխը հիմա զարդարում եր փռուգիական կարմիր գլխարկը* ազգային կոկարդով*):

Տոբիի ուսին եր գցված մի լայն ժապավեն՝ մեջտեղը գոմշի կաշուց, վորի վրա վառ փայլում եր մի մետաղե շերտ՝ թմբուկի փայտիկների համար շինած օղակներով:

Տոբիի հետ միասին շուկա յեր դուրս գալիս Մոնշալեյը, մի մոխրագեղնագույն գանգրահեր շուն՝ աջ աչքի վերևը մի սև խալ: Իսկ Տոբիի ուսի վրա ծանր-ծանր նստած եր լինում մի կաչաղակ—Ռոմպոննետտ անունով:

Այս անփոփոխ ուղեկիցների հետ, սայլակն առջևից վլորելով՝ Տոբին սովորական ժամին յերևաց Մորեր հրապարակում 1792 թ. հուլիսյան մի շոգ առավոտ: Այդ պահից ել սկսում ենք մեր պատմությունը:

Նա հրապարակի մի ծայրից անցավ մյուսը՝ բարևներ փոխանակելով հարևանուհիների և մշտական հաճախորդների հետ, սայլակը գլորեց շատրվանի մոտ և սկսեց խճերի վրա դարսել ապրանքը:

Իր պատրաստությունները նա դեռ չեր վերջացրել, վոր սրճավաճառ կինը նրա համար նախաճաշ բերավ:

— Բարև՛, Տոբի: Սուրճի տեղ յես ելի բուլյոն եմ բերում քեզ համար: Բուլյոնն ել բոլորովին աղքատիկ է,—առանց մսի ինչ բուլյոն դուրս կգա: Իսկ սուրճ հիմի վոչ մի տեղ չի ճարվում, շաքարն ել ենքան թանգացել է, վոր միայն հարուստները կարող են գնել,—ասաց նա հառաչելով և Տոբիին մեկնեց գոլորշին բարձրացող բուլյոնի գավաթն ու մի կտոր հաց:

*) Փռուգիական գլխարկը բրդե կարմիր գլխարկ է, բարձր, դեպի մի կողմ թեքված: Հին ժամանակներն այդպիսի գլխարկ դնում եյին ազատագրված ստրուկները: Ֆրանսիական հեղափոխության ժամանակ դա դարձավ ազատության նշանաբան:

*) Ազգային կոկարդը յեռագույն կոկարդ է, վորի գործածությունը չափազանց տարածված եր հեղափոխության համակրող մարդկանց մեջ: Կոնվենտի (1792 թ. ֆրանսիական Ազգային ժողովի) ժամանակ դա պարտադիր դարձավ բոլոր քաղաքացիների համար, նույնիսկ ժամանակավորապես Ֆրանսիայում գտնվող օտարյերկրացիների համար: Թագավորի պաշտպաններն ել եյին կոկարդ կրում, բայց սպիտակ գույնի:



— Շնորհակալություն, Բլանշար հորաքույր,—պատասխանեց Տոբին՝ գավաթը նրա ձեռքից առնելով:—Դուք հիմի սուրճ ու շաքար չեք ճարի, սպեկուլյանտները բոլոր պաշարը թաքցրել են:

— Հա՛, հա՛,—խոսակցությանը խառնվեց հարևանուհին:—Դրա համար եր, վոր անցյալ շաբաթ ջարդ ու փշուր արին հարուստ Ռիշարի խանութը Սեն-Դընի փողոցում: Մինչև վոր դրանց ցույց չտան, ինչպես ցույց տվին արիստոկրատներին,—չքավորները կարիքից չեն ազատվի:

— Ժողովուրդը խանութը ջարդ ու փշուր չարեց—առարկեց Տոբին: Ամբոխը Ռիշարին ստիպեց վաճառքի հանել իր թաքցրած ամբողջ շաքարը սովորական գնով: Ծիծաղից թուլանալու բան եր. ծերուկն այնքան եր վախեցել, վոր խանութում դես ու դեն եր ընկել՝ հայրենասերներին ինքը ցույց տալով, թե վորտեղ են թաքցված շաքարի պարկերը:

— Տմ՜դն է նրան...

— Ռիշարի նմանները սարսափելի չեն: Դրանք ամբոխի հենց առաջին սպառնալիքից ենպես են վախենում, վոր պատրաստ են ամեն ինչ իրանք իրանց ձեռքով տալ: Խոշոր առևտրականներն են, վոր հանեբիցը դժվար է գալ:

— Հրեն թերթում գրել եյին,—մեջ բերեց Բլանշար հորաքույրը,—վոր յեկեղեցիներում գտել են միլիոնավոր լիվր շաքարի ու սուրճի պարկեր:

— Են: Տերտերներին ենտեղից դուրս են քշել յերևի միայն նրա համար, վոր յեկեղեցիները ծախեն ուրիշ կողոպտիչների,—տաքացած ասաց Տոբին:—Եդ սպեկուլյանտներն իրանց անվանում են հայրենասերներ *), բայց դրանք կողոպտում են ժողովրդին արիստոկրատներից ու տերտերներից վոչ պակաս:

— Ճիշտ է, Տոբի՛,—հառաջեց Բլանշար հորաքույրը:—Շուտով ապրելն ել անհնարին կդառնա. տայժմ սուրճն ու շաքարը չկա, շուտով հացն ել չի լինի:

— Վնաս չունի, Բլանշար հորաքույր: Ժողովուրդը չի թողնի, վոր բանն եդտեղ հասնի: Հենց հիմի յել, ամեն կողմից պետիցիաներ (դիմումներ) են տալիս Ազգային ժողովին**) և քաղաքային խորհրդին: Սպեկուլյանտներին կստիպեն բոլոր ապրանքները վաճառել սովորա-

*) Այստեղ «հայրենասեր» խոսքը չպետք է հասկանալ սովորական իմաստով—հայրենիքը սիրող: Ֆրանսիական հեղափոխության ժամանակ «հայրենասեր» եյին կոչվում նոր Ֆրանսիայի բոլոր քաղաքացիները, հին կարգերի թշնամին, հեղափոխության ջինվորները, անկախ իրանց ազգությունից:

**) Ազգային ժողով եր կոչվում ժողովրդական ներկայացուցիչների ժողովը Ֆրանսիայում, վորպիսի ներկայացուցիչներն օրենքներ դնելու լիազորություն ունեյին:

կան գներով։ Ակումբներում եդ մասին ձաղուց են խոսում։ Տեսեք ինչ են գրում... Դե կորի՛ր, Մոնշալե՛յ։

Մոնշալեյը, վոր համառորեն քաշքշում եր Տոբիի փեշը, վիրավորված հեռացավ։ Մի քանի ակնթարթ նա հանգիստ նստեց, բայց հետո աղերսագին վնգստաց. Տոբիի դեռ ձեռք չտված նախաճաշի հոտը գրգռում եր նրա հոտառությունը։

Տոբին բաց արավ թերթը, վորպեսզի կանանց համար կարդա այն պետիցիան (դիմումը), վոր տվել եր Նիզակների*) սեկցիան Ազգային ժողովին։ Բայց շունն այնպես եր անհամբեր մռմռում, վոր նրան ստիպեց թողնել և՛ ընթերցանությունը և՛ բոլորին հուզող խնդրի մասին խոսակցությունը։

Ընթերցանությունը հետաձգելով՝ Տոբին սկսեց նախաճաշել։ Նա նստեց շատրվանի յեզրին և կանչեց Մոնշալեյին, իսկ ինքը ձեռքն առավ բուլյոնի գավաթը։

Ուրախությունից ճկճկալով՝ շունը Տոբիի մոտ վազեց և մոտը նստեց. միայն աչքի փայլը, ռունգների թեթև դողոցը և պոչի անհամբեր հարվածներն եյին մատնում նրա սոված լինելը։

Տոբին յերկար չտանջեց շանը. նախաճաշի հետ Բլանշար հորաքրոջ բերած կապոցից Տոբին վոսկորներ թափ տվավ։ Քաղցած շունն ագահաբար հարձակվեց դրանց վրա։

Կաչաղակն ավելի պակաս եր կարգապահության սովորած. նա չեր թողնում, վոր Տոբին ուտի, թևերը թափահարում եր, կտուցը գավաթի մեջ եր խոթում, մինչև վոր Տոբին նրան հացի փշրանքներ տըվավ։ Փշրանքները կտցահարելով և դեռ էլի քաղց զգալով՝ Ռամպոնեոտը թևերը թափահարեց ու թռավ՝ շուկայում ավելի համեղ նախաճաշ ճարելու։

Նախաճաշելով՝ Տոբին կանգնեց, թմբուկն ամրացրեց և զարկեց՝ գնորդներ հրավիրելու համար։ Մոնշալեյն ափսոսանքով թողեց արդեն բոլորովին կրծոտված վոսկորները։ Նա միացավ Տոբիին՝ աշխատանքն սկսելու համար պատրաստ։ Թմբուկի առաջին իսկ զարկին վերադարձավ և՛ Ռամպոնեոտը, նա յել չեր մոռացել իր պարտականությունները։

Առևտուրը թույլ եր։ Այդ աղքատ թաղում ամենքն ել քիչ փող ունեյին։ Թռչունների և վանդակների թունդ յերկրպագուներ եյին մայրերի հետ անցնող փոքրիկները, բայց գնորդներ քիչ կային։

*) Հեղափոխությունից հետո Փարիզը 48 սեկցիաների յեր բաժանվել։ Բոլոր սեկցիաների ներկայացուցիչները կազմում եյին ամբողջ Փարիզի ինքնավարության որգանը Փարիզյան Կոմմունան, վորին գլուխ եր կանգնած Ընդհանուր խորհուրդը—նրա կառավարական որգանը։ Հեղափոխական շարժման զարգացման մեջ փարիզյան սեկցիաներն ակտիվ դեր խաղացին։



Տոբին ել ավելի բարձր խփեց թմբուկը։ Շուտով նա շրջապատվեց ամբոխով։ Շուկայի սովորական հաճախորդները բոլորն ել գիտեյին, վոր թմբկի արագ զարկով Տոբին ժողովրդին կանչում ե լսելու իր նոր ոյինբազությունը։

— Ե՛յ, հայրենասերներ,—գոչեց Տոբին, յերբ տեսավ, վոր ամբոխը շատացել ե։—Ուշադրություն դարձրեք ես կարմրակատարին,— և Տոբին տեղից վեր բարձրացրեց վանդակի մեջ թռչունը։—Թե՛ գեղեցիկ ե սա, թե՛ բարեհամբույր, ազատության մեջ թե՛ կայտառ ե, թե՛ յերգեցիկ, բայց վանդակում տեսեք ինչպես ե փշաքաղվել—կարծես իսկ և իսկը մեր պաշտելի թագավորը լինի, յերբ հունիսի 20-ին փարիզեցիները գնացել եյին մոտը*)։

Ամբոխի մեջ հնչեց ծիծաղը։

— Տեսեք ինչքա՛ն ե սիրում մեր փռուգիական գլխարկը,—շարունակեց Տոբին՝ խրախուսված հասարակության ծիծաղից։

Տոբին ել ավելի բարձրացրեց վանդակի կարմրակատարին, իր գլխից քաշեց հանեց փռուգիական կարմիր գլխարկը և կարծես թըռչունին վողջունելով՝ փեղույրը տարուբերեց վանդակի առաջ։ Կարմրակատարը վախեցած թրթռաց, ձողից ցած թռավ և յերկչոտությամբ թաքնվեց վանդակի մի անկյունում։

— Իսկ կարմրակատարը կարո՞ղ ե Լյուդովիկոսի պես գոչել. «կեցցե՛ ազգը»,—հարցրեց ամբոխի միջից մի մարդ։

— Վո՛չ, դեռ չի սովորել։ Բայց դրա տեղակ սա այնքան շատակեր չի, ինչքան Լյուդովիկոսը. նա մեզնից տարեկան յերեսուն միլիոն ֆրանկ**) ե պոկում նրա համար, վոր տարին մի անգամ գոռում ե՝ «կեցցե՛ ժողովուրդը»։ Բայց ես կարմրմրակատարը թեև լուռ ե, բայց դրա տեղակ ամբողջ ընդամենը տաս սուխ հատիկ ե ուտում։

Ամբոխը պատասխանեց քրքջոցով։

Տոբին կարմրակատարի վանդակը տեղը դրավ։ Դրա փոխարեն նա գլխից վեր բարձրացրեց մի ուրիշ վանդակ։ Այդ վանդակում փակված եր մի սիրուն աղավնի. նա մեղմ ճիչում եր ու պճնվում՝ գլուխը գեղեցիկ թեքելով։

— Հայրենասերներ, ահա մի գեղեցկուհի՝ կարմրակատարին սավական։ Գեղեցիկ ե հրեշտակի պես, հանգիստ ե գառնուկի պես, քընքուշ ե, ինչպես վոր սազ կգա աղավնյակին։ Վանդակում նստում ե հանգիստ, չի շարժվում, բայց հենց վոր դռնակը բանաս...

Յեվ Տոբին քիչ բաց արավ վանդակի դռնակը։

*) 1792 թ. հունիսի 20-ին Փարիզում հսկայական ցույց կայացավ, վորը սաստիկ վախեցրեց պալատականներին և թագավորին։

**) Ազգային ժողովը 30.000.000 ֆրանկ եր նշանակել թագավորին իր անձնական ծախսերի և պալատականների պահպանության համար։

Աղավնին ցատկեց դեպի դռնակը և ճողերին խփվելով թփրտաց՝ աշխատելով դուրս թռչել: Նրա ձայնը կոկորդում զայրագին հեծկլտաց, պոչը բացվեց, կտուցն սկսեց կատաղորեն խփել: Դուռը բոլորովին բացվեց: Աղունակը գլուխը դուրս հանեց, ապա ամբողջովին դուրս թռավ վանդակից և թևերի մի հարվածով թռավ բարձր օդի մեջ:

— Վոնց չէ, հենց են է թռար... ինչքան էլ վոր ազատությունը սիրելիս լինեք, սիրուհի, այնուամենայնիվ վանդակում էլ ավելի հանգիստ կլինեք: Ցած համեցեք: Իսկի մեր ամենաողորմած թագուհի Մարի-Անտուանետն էլ չկարողացավ Վարեննից*) դենը թռչել, մինչդեռ նա ձեզնից մի քիչ էլ ավելի ճարպիկ է,

Տորին բռնեց թելը, վորի մի ծայրը վանդակին էր ամրացված, իսկ մյուսը թռչունի վոտքին: Թռչունը թպրտաց, թևերը թափահարեց, գես-գեն ընկավ, բայց թելն անողոքաբար ցած էր քաշում նրան:

Ամբոխի քրքիջի և հավանության արտահայտող բացականչությունների տակ աղունակը նորից տեղավորվեց վանդակում:

— Ո՞վ կառնի, ո՞վ կառնի իբրև հիշատակ «Վետո ընտանիքը»**), հազվագյուտ դեպք է: Ե՛յ, հայրենասերնե՛ր,—գոչում էր Տորին:

Երկու թռչուններն էլ իսկույն գնվեցին:

Դրանով ներկայացումը չվերջացավ:

Հիմա հերթը հասավ շանը... Բայց իր սիրեցյալի համարը ցուցադրելուց առաջ, վորպեսզի հասարակությունը չցրվի, Տորին ֆլեյտի վրա մի ուրախ յերգ նվագեց: Ամբոխն իսկույն նրան ձայնակցեց:

Պողո՛ս, Պետրո՛ս, Մաթո՛ս, Հուգո՛,
Նույնիսկ դու, ով սուրբ Հիսուս,
Տեսեք, տեսեք, ինչ վատ է դա
Վարվել ձեզ հետ էդ ֆրանցուզ:

*) Յերբ հեղափոխական շարժումն սկսեց աճել, Լյուդովիկոս 16-րդը վորոշեց իր ընտանիքով փախչել Փարիզից իրեն հավատարիմ զորքերի մոտ, վորպեսզի սվինների օգնությամբ իր կամքը թելադրի ֆրանսիացիներին: Սահմանադրությանը հավատարիմ մնալու հրապարակական հայտարարություններով նա կարողացել էր քնացնել ժողովրդական հսկողությունը, և 1791 թ. հունիսի 20-ին նրան հաջողվեց գաղտնի դուրս գալ Փարիզից իր ընտանիքով: Բայց Վարեննի քաղաքում նա բռնվեց և պահակներով Փարիզ վերադարձավ:

Վարեննի փախչելը բաց արավ թագավորի և նրա պալատականների իսկական նպատակները, ցույց տալով նրանց քաղաքականության ամբողջ յերկերեսանիությունը, վորի հետևանքը յեղավ հանրապետական գաղափարների աճումը:

**) 1791 թվականի սահմանադրությունը թագավորին իրավունք տվավ մերժելու Ազգային ժողովի դեկրետները, վորոնք առանց իր սանկցիայի ուժ ունենալ չէին կարող,—այսպես կոչված «Վետո»-յի իրավունքը: Լյուդովիկոս 16-րդի կողմից այդ իրավունքի իրագործումը հեղափոխական Ֆրանսիայի համար կարևոր դեկրետները մերժելու համար ժողովրդի մեջ հուզմունքի պայթյուն առաջացրեց, վորից հետո Լյուդովիկոս 16-ին և Մարի-Անտուանետին սկսեցին «Վետո ընտանիք» կոչել:



Յերեսնապատիկ սուրբ լինեք
Մինչ գառնիկ, գառնիկից էլ յետ,
Բայց այժմ անվախ ծաղրում ենք մենք
Ձեր սրբությունն ախտաժետ:
Բարձրացրել եք վայնասունը,
Վերջ չունի ձեր աղետը
Շուտ կկորի ձեր անունը:
Կորե՛ք:
Ես և գեկլերտը,
Յերգը յերգված է:

— Վաղը Ֆրանսիան հիմն պատերազմի յե պատրաստվում,—բացականչեց Տորին՝ դիմելով շանը:—Մոնշալե՛յ, հո դու յել վախկոտ դուրս չե՞ս գա:

Շունը ցասումով գլուխը ճոճեց:

—Ուրեմն գործի անցիր...

Մոնշալեյը կանգնեց հետևի թաթերի վրա, իսկ առաջին թաթերով բռնեց Տորիի տված փայտը: Թմբուկը թնդաց: Շունը քայլել սկսեց՝ փայտը լրջորեն կրծքին սեղմած:

— Ուշադրությո՛ւն: Հայրենասերներին դիմավորել,—հրամայեց Տորին:

Շունը հրացանն «ի պատիվ» վերցրեց:

— Արիստոկրատների վրա հարձակվել:

Շունն առաջ նետվեց՝ հրացանը հորիզոնական կերպով բռնած:

Հասարակությունը բուռն կերպով անդադար ծափահարում էր:

Վարժությունները հաջորդում էին իրար: Մինչ այդ Ռամպոնետը թռչելով անցնում էր հասարակության շարքերը՝ կտուցին մի փայտե դավաթ բռնած, վորի մեջ էյին ածում հանդիսատեսներն իրանց լումաները:

Ներկայացումը վերջացած էր:

Տորին գավաթից մի բուռ մանր փող հանեց: Ապա չգնված վանդակները նա արագորեն դրավ սայլակը. հանձնեց Բլանշար հորաքրոջ հսկողությանը, իսկ ինքն իր արտիստներին — շունն ու կաչաղակը — հետը վերցնելով՝ գնաց քաղաքը շրջելու:

ԳԼՈՒԽ II.

## ՓԱՐԻԶՆ ԱՂՄԿՈՒՄ Է

Արդեն ժամը յերկուսն էր: Ֆրանսիայի մայրաքաղաք և սիրտը — Փարիզը թնդում էր անհանգիստ և զվարթ:

Մարդկանց խմբերը հավաքվում էին պատերին կպցրած կառավարական աֆիշների առաջ, կաֆեներում, այգիներում: Անցորդների

տրանքն էին խծկվում լրագրավաճառները՝ խլացուցիչ ձայնով կանչելով հրատարակությունների անունները և վերջին դեպքերը:

Տորին դանդաղ առաջ էր գնում փողոցներով՝ ավելի ու ավելի մոտենալով քաղաքի կենտրոնին: Հավատարիմ շունը հետևում էր նրան քայլաքայլ, իսկ Ռոմպոնետոն անշարժ նստած էր տղայի ուսին: Տորին թմբկահարությամբ մոտենում էր մարդաշատ կաֆեներին: Հնչեղ ձայնը խլացնում էր ամբոխի աղմուկը, ամբոխի, որ միշտ արձագանքում էր ամեն մի նոր լուրի, մերթ կատակող, մերթ կոչական, որ հրավիրում էր ժողովրդին կռվելու ազատության թշնամիների դեմ:

Հավասարության պալատի մոտ Տորին հասավ ամբոխի յերթին: Սալահատակ փողոցով գնացող մարդիկ զինված էին նիզակներով. մի քանի հոգի տանում էին պլակատներ կպցրած ձողեր: Նրանցից մեկի վրա գրված էր.

Յերբ հայրենիքը վտանգի մեջ է,
Պատրաստ են բոլոր սանկյուլոտները*)

Մյուսի վրա.

Աղետներից հոգնած ժողովուրդն ասում է.
Ազատություն
Կամ մահ:

Յեվ այս —

Ազատ ու անվարտիք՝
Պահպանենք գոնե մեր ցնցոտիք:

Իսկ առջևը յերկար ձողի վրա ծածանվում էր պատռված մի վարտիք:

Այդ մարդիկ մայրաքաղաքի բանվորական թաղերից մեկի պատգամավորներն էին, վորոնք գնում էին Ազգային ժողով խնդրագիր (պետիցիա) տալու:

Տորին կանգ առավ, ուղղվեց, ինչպես զորահանդեսում են անում, պատգամավորությանը դիմավորեց թմբկահարությամբ:

Պատգամավորներից մեկը ճանաչեց նրան:

— Արի մեզ մոտ, տղա՛ս, — կանչեց նա Տորինին: — Թմբկահարությամբ գնալն ավելի ուրախ կլինի:

Տորին իսկույն միացավ պատգամավորությանը:

— Եվ ո՞ւր, յեղբայրնե՛ր, — հարցրեց նա:

— Ազգային ժողով խնդրագիր տալու:

— Ի՞նչ եք պահանջում:

*) «Սանկյուլոտ» էին կոչվում յերկար անդրավարտիք հագնողները: Մինչդեռ ունևոր դասակարգերը հագնում էին կարճ, մինչև ծնկները հասնող անդրավարտիք և յերկար գուլպաներ, «Սանկյուլոտ» անունով հասկացվում էր չքավոր դասակարգը: Այդ բառը համապատասխան է «գզլված» խոսքին:



— Պատիժ ազգի դավաճաններին և սպեկուլյանտների սանձահարում:

Թմբուկը քայլերգ խփեց: Պատգամավորությունն էլ ավելի աշխույժ քայլեց սալահատակ փողոցի քարերի վրայով:

Անցորդները փողոցում կանգ էին առնում, նայում քայլող բանվորներին: Ձողի վրա ծածանող վարտիքն ընդհանուր ուշադրություն էր գրավում:

— Անվարտիք լրբե՛ր, — գոչեց մեկը մի շքեղ կաֆեյի լուսամուտից:

Վորպես դրան պատասխան՝ դրոշն ավելի բարձրացավ:

Վողջույնները և չարասիրտ կանչերն ուղեկցում էին յերթը մինչև արքունական ռեզիդենցիան (պալատը): Այնուհետև Ազգային ժողովը տանող ճանապարհն անցնում էր պալատը շրջապատող պարտեզի մոտով:

Ծառաշարքին կախված էր յեռագույն ժապավեն, վորը ցույց էր տալիս արքայական կալվածների սահմանը:

Յերբ առաջին անգամ կախում էին այդ ժապավենը, վրան գրել էին. «Նրանք, վորոնք փշրեցին բռնակալության շղթաները, թող պահեն այս հասարակ ժապավենը»: Այդ ժամանակվանից այդ մակագրությունը հաճախ փոխվել էր, բայց ժապավենը մնացել էր անձեռնմխելի. դա պահպանում էր թագավորին ավելի լավ, քան Շվեյցարական գվարդիայի*) գնդերը, մինչև վոր հետագայում ժողովուրդն ապստամբվելով՝ տրորեց թե ժապավենը, թե պահակը, թե հենց իրան թագավորին:

Հիմա Տորին անցնելիս նկատեց, վոր մակագրությունը նորից է փոխվել:

— Տեսե՛ք, ժապավենի վրա էլի նոր մակագրություն է, — գոչեց նա: — Կարդացե՛ք: Լա՛վ է:

Ժապավենի ամբողջ յերկարությամբ գրոտված էին այս ահեղ, նախազգուշացնող բառերը. «Ժողովրդի բարկությունը զսպվում է ժապավենով, թագավորի թագը կախված է մի թելից»:

Առաջները յերևաց Մանեժի շենքը:

Ահա և մուտքի լայն կտուրը:

— Մոնշալե՛յ, նստիր, — հրամայեց Տորին խելոք շանը: — Պահպանի՛ր Ռոմպոնետոյին և թմբուկը:

Ռոմպոնետոն Տորիի ուսից թռավ մոտիկ ծառի ճյուղի վրա, իսկ Մոնշալեյը սուս ու փուս նստեց սանդուղքի առաջ գետնին դրված թմբուկի մոտ:

*) Թագավորի անձնական պահակը, վոր բաղկացած էր վարձկան զինվորականներից:

Պատգամավորությունը ներս թափվեց լայն գավիթը։ Նրան այստեղ դիմավորեցին վերակացուները։

— Ժողովրդական ներկայացուցիչներին խնդրագիր տալու համար յեկած պատգամավորությունն է,— պարզ արտասանեց Տորին՝ ցույց տալով սանկյուլոտական դրոշի տակ խռնված պատգամավորներին։

— Դու էլ ես եստեղ, փոքրիկ,— ժպտաց վերակացուներից մեկը։— Ամեն տեղ հասնում ես։ Վազիր ամբիոնը, իսկ պատգամավորությունը յես կբերեմ ցանկապատի մոտ։

Ժամանակ չկորցնելով՝ Տորին լայն սանդուղքով վազեց վեր, հասարակության հատկացված բեմը։

Ամբոխը պատի նման կանգնած եր։ Արմունկներով յեռանդուն կերպով հրհրելով՝ Տորին հասավ վանդակապատին և դահլիճը տնտղեց։

Ներքևում ծփում եր գլուխների, մեջքերի կինամոնագույն, կանաչ, կապույտ, վարդագույն, դեղին ֆրակների, սերտուկների, կամզոլների, ցցված ժաբոների, վզի պլուխների, լայն վզկապների և բաց վզերի մի ծով։ Գույների այս ծովի մեջ կորչում եր միակ անշարժ փայլուն մի կետ — նախագահի ամբիոնի կանաչ մահուդը։

Յերկար դահլիճի յերկու կողմերում ամֆիթատրոնի պես շարված եյին պատգամավորների նստարանները։ Շատ քչերն եյին տեղները հանգիստ մնում։ Պատգամավորները խմբվում եյին, մտնում դահլիճ, դուրս գալիս։ Յելքի մոտ ցանկապատի յետևում կանգնած եյին անհամբեր խմբերով պատգամավորությունները և առանձին խնդրատուներ։ Նախագահի ամբիոնի դիմաց բարձր խոսում եր մի հռետոր։

Միշտ հանգիստ ու հանդիսավոր վերակացուները սև ֆրակներով և վիզներին արծաթե շղթա՝ անաղմուկ անցնում եյին պատգամավորների նստարանների միջանցքով, նախագահի ամբիոնից վազում եյին ցանկապատի մոտ, ցանկապատից հռետորների բեմի մոտ, այստեղից վերին ամբիոնը, գնալիս պատվիրելով.

— Լռություն պահեցեք, քաղաքացիներ։ Տեղներդ գրավեցեք, քաղաքացի պատգամավորներ։

Սակայն ծափահարության տակ հռետորն իջավ բեմից։

Նախագահն ինչ-վոր բան ասաց, վերակացուները դես-դեն ընկան։ Նրանցից մեկը վազելով ցանկապատի մոտ՝ կանչեց այն մարդուն, վորին խոսք եր տրված։

Ցանկապատին մոտեցավ բարձրահասակ, թիկնեղ մի տղամարդ կապույտ կամզոլը (կուրտիկը) հագին, յեռանկյունի գլխարկով՝ չափից դուրս մեծ ազգային կոկարդ կպցրած, մետաքսե գուլպաներով և արծաթե ճարմանդներ ունեցող մաշիկներով։ Ձեռքի լայն շարժումով նա գլխարկը հանեց՝ բաց անելով շպարված (պուդրա քսած) կեղծամը, և ծանր գլուխ տվավ որենսդիրներին։



Հռետորական ձեռվ ձեռքն առաջ մեկնելով, հայցողն սկսեց՝ համաչափորեն և հանգիստ արտասանելով յուրաքանչյուր բառ.

— Քաղաքացի որենսդիրներ։ Վերջերս սեկցիա սեկցիայի հետևից գալիս են եստեղ՝ ձեռքներում մարդու քաղաքացու իրավունքների դեկլարացիա (հրապարակական հայտարարություն), վորպեսզի որենք պահանջեն գաղութային ապրանքների ամբարողների դեմ։ Այսոր յես քաղաքացի յեմ, ունեմ վորոշ բնակատեղի, ընտանիքի հայր եմ, յեկել եմ ձեզ մոտ, վորպես զի ինքս մատնանշեմ ինձ վորպես այն մարդկանցից մեկին, վորոնք հնարավոր են համարում ազատորեն վարվել իրանց սեփականության հետ։

— Յես, քաղաքացի որենսդիրներ, դժբախտ Սան-Դոմինգո կղզում*) մեծ գաղթավայրերի նախկին սեփականատեր եմ։ Իմ կալվածներն ամայացված են, տները այրված, բայց իմ վերջին բերքը, վոր նավերն են բեռնված յեղել նախ քան անկարգությունները, բարեբախտաբար ամբողջովին ստացել եմ։

— Յեվ այսպես, յես հայտարարում եմ բացե իբաց, վոր մինչև հուլիս ամիսն ստացել եմ յերկու միլիոն լիվր շաքար, մի միլիոն լիվր սուրճ, հայրուր հազար լիվր յեղակ և յերկու հարյուր հիսուն հակ բամբակ։

— Ապրանքներն այստեղ են գտնվում, Փարիզում, իմ տանը և խանութներում, բայց նրանք յերբեք չեն թագցնվելու. ազնիվ քաղաքացին ամաչելու կարիք չունի նրա համար, վոր նա ընտիր ապրանքից շահ է ստանում։

— Այժմ այդ ապրանքներն արժեն ութ միլիոն ֆրանկ, իբրև սովորական ընթացքի համաձայն մոտ ապագայում դրանք կարժենան տասնուհինգ միլիոն։

— Յես շատ եմ ցավում նրանց վրա, վորոնք սեփականության սրբազան իրավունքին ձեռնամուխ են լինում և այնքան քիչ են հարգում ժողովրդի ներկայացուցիչներին, վոր այստեղ խնդրում են միջոցներ ձեռք առնել ազնիվ սեփականատերերի դեմ։ Իսկ յես վստահելով Ազգային ժողովին՝ իմ սեփականությունը նրա պաշտպանությանն եմ հանձնում։

Դահլիճում խուլ տրտունջ բարձրացավ։ Պատգամավորները սառած մնացել եյին իրանց տեղերում։ Վոմանք փսփսում եյին, շփոթված

*) Որենսդիր ժողովի գործիչների մտքովը չեր անցնում, վոր անհրաժեշտ է գաղութների ընիկներին ես տալ այնպիսի իրավունքներ, վորպիսին մշակվում եյին բուն Ֆրանսիայի քաղաքացիների համար. սահմանադրությունը գաղութներին չեր վերաբերում։ Գաղութներում սկսված ազատագրական շարժումն Անտիլյան կղզիներում հսկայական չափերի հասավ։ Սանդոմինգո կղզու ապստամբությունը յերկարատև պայքարից հետո ճնշվեց արտասովոր խստությամբ, բայց դրանից կանգ չառավ ընիկների ազատագրական շարժումը։

իրար էին նայում, իրարից խորհուրդ էին հարցնում, թե ինչպես վերաբերվեն այդ չլսված անպատկառ ճառին։ Ուրիշները գոչում էին.

— Դա ձիլ է։ Ո՞վ է թողել խնդրատվին խոսելու։ Կրկնեցե՛ք, ձիլ է դա։

Կապույտ կամզոլը հագին մարդն ուղիղ կանգնեց, կուրծքը դուրս ցցեց և հայտարարեց.

— Քաղաքացինե՛ր, յես ինքս կասեմ, թե ով եմ. Յես Ժոզեֆ Ֆրանսուա Եյլրա Նեգոցիանտն (խոշոր առևտրական) եմ, ակտիվ քաղաքացի, հայրենասեր և Փարիզի Ազգային գվարդիայի սպա, ապրում եմ Շարոնն փողոցում, համար 158 բիս (կրկնակի)։

Դրանից հետո քաղաքացի Եյլրան բարձրացրեց ձայնը և շարունակեց իր ճառը.

— Այդպես ուրեմն, յես հայտարարում եմ թե՛ օրենսդիր ժողովին, թե՛ նրան ունկնդիր ամբողջ Յեվրոպային, վոր յես չեմ ցանկանում վաճառել այն ապրանքը, վորի սեփականատերն եմ հանդիսանում։ Յես դիմում եմ հասարակական ուժին իմանալու համար, թե նա վորքա՞ն է կարող պաշտպանել այն քաղաքացիների սեփականությունը, վորոնք հայտարարում են իրանց ցանկությունը՝ պահելու իրենց հավաքածը։

Այս ճառի ընթացքում հասարակությունն ամբիոններում հազիվ էր զսպում իր զայրույթը։ Լսվում էին այսպիսի ձայներ.

— Դավաճա՛ն։

— Խլեցե՛ք նրա կոկարդը։

— Նա կեղտոտում է հայրենասերի կոչումը։

Իսկ կանացի ձայները գլի կանչում էին.

— Մարդասպա՛ն։ Թալանչի՛։

Ամենքը վեր ցատկեցին իրանց տեղերից։ Պատգամավորներից վոմանք գոռում էին՝ զայրացկոտ շարժումներ ուղղելով դեպի ցանկապատը, վոմանք էլ հանգստացնում էին նրանց՝ աշխատելով չափավորել նրանց յեռանդը. Նախագահը ամբողջ ուժով զանգահարում էր։

Չնայած ընդհանուր հուզմունքին և իրարանցումին, քաղաքացի Եյլրան շարունակում էր խոսել։ Նրա հուժկու բասը խլացնում էր բոլոր ձայները։

— Այսպես ուրեմն, բարեհաճեցե՛ք, պարո՛ն նախագահ, կարգադրել իշխանություններին, վոր խանութներս շրջապատեն բավականաչափ պահապաններով։ Պահպանության ծախքերը յես կվճարեմ։ Մանավանդ յես պահանջում եմ, վոր այդ կարգադրությունն արվի ավելի առաջ, քան կսկսվեն վիճաբանությունները խնդրագրերի շուրջը։

Պատվելի հայրենասերը վերջացրեց իր ճառը, վերակացվին տվավ խնամքով ծալված թերթը — իր կարդացած խնդրագիրը — և նույնպես ծանր-ծանր գլուխ տվավ ժողովին։



Յեվ հենց վոր լռեցին հաստ բասի թնդյունները, ամբողջ դահլիճով անցավ մանկական մի սուր ձայն.

— Լապտերից կախե՛լ սպեկուլյանտին*)։

— Լապտերից կախե՛լ սպեկուլյանտին.— կրկնեց տրիբունան (ամբիոնի վրա գտնվող ժողովուրդը)։

Տորին սառած մնացել էր տրիբունայի (ամբիոնի) սանդուղքի մոտ՝ ջղաձգաբար մատները խրած ճաղաշարի (перила) թավշի մեջ։ Նա գունատ էր, նրա շրթունքները դողում էին, աչքերը փայլփլում էին բարկությունից։

Տորի այդ բացականչությանն արձագանքեց ամբողջ տրիբունան։ Ամեն կողմից բարձրացավ աղմուկ, աղաղակ, թրխկոց։ Վերակացուները վեր վազեցին։

Տորին իսկույն սթափվեց և զգաստացավ։ Ամբոխի մեջ սպրդվելով՝ նա դուրս յեկավ դահլիճից, կողքի սանդուղքներով ցած վազեց և դուրս պրծավ Մանեժից։

Մոնշալեյն սպասում էր նրան կարի տակ այն տեղում, ուր Տորին թողել էր նրան։ Շունը ծուլորեն փռվել էր գետնին և արևի տակ տաքանում էր։ Իր տիրոջ քայլերի ձայնը լսելով՝ Մոնշալեյը վայրկենապես վեր ցատկեց և ուրախ հաչոցով փաթաթվեց նրա վոտներին։

— Մոնշալե՛յ, հետևի՛ր ինձ,— հրամայեց Տորին։

Նա տեղավորեց իր թմբուկը, սուլելով կանչեց Ռամպոնեոտին, վոր անմիջապես նրա ուսին թռավ, և իր արտիստների հետ առաջ շարժվեց։

Մանեժի շենքից մի քանի քայլ հեռանալով՝ Տորին կանգ առավ։

— Մոնշալե՛յ, ազնվակա՛ս, հարազա՛տս,— դարձավ նա շանը՝ նայելով նրան աղաչանքով և փաղաքշանքով,— ցույց տուր, վոր դու իսկական բարեկամ ես. այսոր մի ծառայություն արա բարի հայրենասերներին։

Մոնշալեյը նստեց յետևի վոտների վրա։ Նա անթարթ նայեց Տորինին՝ կարծես հասկանալով նրա խնդրքի ամբողջ լրջությունը, նրա ականջները շարժվում էին, իսկ պոչը ջղայնորեն գետնին էր խփվում։

ԳԼՈՒԽ III.

## ԼԱՊՏԵՐԻՑ ԿԱԽԵԼ ՍՊԵԿՈՒԼՅԱՆՏՆԵՐԻՆ

Չափազանց աղմկալի նիստն ընդհատվեց, վորպեսզի հանգստանան թե՛ պատգամավորները, թե՛ հասարակությունը։

*) Բաստիլիան վերցնելուց նրա պաշտպաններից յերկուսին կախեցին լապտերից։ Դրանից հետո «Լապտերից կախե՛լ» բացականչությունն ամբոխի համար դարձավ արիստոկրատներին պատժելու կոչ։

Տոբին իր արտիստների հետ կանգնել եր շենքից վոչ հեռու ճեմելիքում։ Ցրվող պատգամավորներին տեսնելով՝ աչքով արավ շանը և թմբուկը զարկեց։ Մոնշալեյն ականջները սրեց։

Վերջապես Մանեժի դռները լայն բացվեցին. այնտեղից ամբոխը դուրս խուժեց։ Ճեմելիքը լցվեց տրիբունների և այն պատգամավորությունների հասարակությամբ, վորոնք իրանց խնդրագրերը ժողովի առաջ կարդալու ժամանակ չեյին ունեցել։

Մանեժից դուրս յեկավ նաև սանկյուլոտների պատգամավորությունը. նրանց խնդրագրի ընթերցումը հետաձգված եր հետևյալ նիստին։

Տոբին հրաման արձակեց։

Մոնշալեյը կանգնեց հետևի թաթերի վրա, փայտը կրծքին սեղմեց և քայլեց թմբկահարության տակ։

Վոմանք կանգնեցին նայելու ժրաջանությամբ քայլող շանը։ Շուտով Տոբիի շուրջը հավաքվեց ամբոխը։

«Ժամանակն ե սկսել», — մտածեց Տոբին։

— Մոնշալե՛յ, յեկ եստե՛ղ, — հրամայեց նա։

Մոնշալեյը կանգ առավ։

Տոբին գետնին փռեց գույնզգույն կարտոններ վրան տառեր տպված։ Ապա դարձավ ուշադրությունը լարած շանը։

— Մոնշալե՛յ, քաղաքացիներին ցույց տուր, թե 1789 թվականից սկսած ժողովուրդն ում դեմ ե կռվում։

— «Արիստոկրատների», — կարդաց արտիստներին շրջապատող հասարակությունը շան ընտրած կարտոնի վրա և հավանությամբ ծափահարեց։ Տոբին ստվարաթղթերը խառնեց։

— Մոնշալե՛յ, ժողովուրդն ինչ եր անում իր թշնամիներին։

— «Լապտերներից կախել արիստոկրատներին» — դուրս բերավ շունը։

— Մոնշալե՛յ, 1792 թվականին ով սկսեց ոգնել արիստոկրատներին։

Մոնշալեյը հաստատ, առանց կանգ առնելու, կարտոններն այնպես դասավորեց, ինչպես վոր սովորեցրել եր Տոբին. նա հիշեց ծաղկավոր քառակուսիների այն կարգը, վորոնք կազմում են «սպեկուլյանտները» բառը։

— Ապրի՛ շունը։

— Բրավո, Մոնշալե՛յ, — գոչում եյին ամբոխի միջից։

Բայց դա բոլորը չեր։ Տոբին լռեցրեց ծափերը և կրկին դարձավ շանը, վորը պատրաստվում եր հասարակությանը գլուխ տալու։

— Մոնշալե՛յ, ուշադրությո՛ւն։ 1792 թվականին սանկյուլոտներն ինչ են անելու կեղծ հայրենասերներին, ժողովուրդը թալանող սպեկուլյանտներին։



Կ 607
39



Гос. Публ. Библиотека ССРА им. А. Мясникяна

Մոնշալեյը մռմռում էր, փրթկացնում, տնքում։ Կարտոնները շարժվում եյին նրա թաթերի զգույշ հարվածների տակ, կազմում եյին վանկեր, վանկերը դառնում եյին բառեր — և վերջապես՝

— «Լապտերից կախե՛լ սպեկուլյանտներին», — բարձր կարդաց ամբոխը և կատաղի ծափահարություններ արավ։

Այդ ժամանակ հետին շարքերից լսվեց ինչ-որ մեկի բարկացած ձայնը։ Առաջ էր գալիս յեռանկյունի գլխարկով մի բարձրահասակ մարդ։ Նա կատաղած էր, հանդիսականներին կոպտաբար հրհրելով նա բացում էր իր ճանապարհը դեպի Տոբին։ Նրա ձեռքում վոսկրե գլխով հաստ փայտ կար. նա ճոճում էր փայտը՝ սպառնադին փնթփնթալով։

— Սպասի՛ր, լակոտ... յես քեզ ցույց կտամ...

Հանդիսատեսները նրան չճանաչելով՝ յետ-յետ եյին քաշվում.

— Պարոն Եյլբա՛ն, — ճանաչեց նրան Տոբին, յերբ այդ հուզված մարդը հասավ առաջին շարքերը։

— Չես սխալվել, անպիտա՛ն յերեխա։ Բայց վոչ թե պարոն, այլ քաղաքացի Եյլբան։ Յեվ յես քեզ ցույց կտամ, թե ինչ կնշանակի ամբոխին դրդել ազնիվ հայրենասերի դեմ։ Գնա՛նք ինձ հետ։

Նեգոցիանտը ձեռքը յերկարացրեց, վորպեսզի բռնի Տոբիի ոձիքից, բայց չհաջողվեց. ամբոխից մի քանի հոգի նրա ձեռքից բռնեցին և յետ քաշեցին։

Նեգոցիանտն այնքան էլ վախկոտներից չէր։ Գաղութներում յերկար տարիներ մնալով՝ նա սովորել էր հրամայել հազարավոր ստրուկների։ Հաճախ էր նա մտրակը ձեռքում և ատրճանակը գոտկում ման յեկել պլանտացիաները (տնկարանները), ուր նրան ատող հազարավոր մարդիկ իրանց մեջքն եյին ծռում ուժից վեր աշխատանքում։

Այս անգամ հարգելի պլանտատորը (տնկարանատերը) մոռացել էր, վոր գտնվում է վոչ թե իր գաղութներում, այլ այն ֆրանսիացիների մեջ, վորոնք արդեն դեն եյին նետել ազնվականների իշխանությունը և պատրաստվում եյին թոթափելու սեփականատերերի լուծը։

Պարոն Եյլբան կարողացավ դեն շպրտել իրան բռնող մարդկանց և փայտը բարձրացնել Տոբիի վրա, բայց տասնյակ ձեռներ բռնեցին նրան։ Այստեղ շունն էլ զգալով, թե ինչ վտանգ է սպառնում Տոբիին, մի ակնթարթում ցատկեց նեգոցիանտի վրա և ատամները պինդ խրեց նրա վոտը։

Նեգոցիանտը գոռաց։ Նա գազազած թրպրտում էր ամուր ձեռներում, վորոնք բաց չեյին թողնում նրան, և միաժամանակ վոտներով խփում էր ձեռք չքաշող շանը։

— Լապտերից կախե՛լ դրան, լապտերից կախե՛լ սպեկուլյանտին, — գոռում էր ամբոխը։

Նեգոցիանտի բախտից, նրան ոգնության հասավ Մանեժի պահակախմբից ազգային գվարդիականների մի ջոկատ։ Զինվորները նրան



խլեցին ամբոխի ձեռքերից, իսկ ամբոխին սվինների սպառնալիքի տակ ստիպեցին նահանջել։

Փառաշուք նեգոցիանտն այժմ ամենավողորմելի տեսք ուներ։ Նրա հագուստը պատառվել էր, գուլպայի վրա ծակ էր բացվել, վորտեղից յերևում էր շան ատամներից վոտի վրա գոյացած արյունահոս սպին։

— Նրանք ուզում եյին ինձ սպանել, — անկապ-անկապ գոռում էր նա ազգային գվարդիականներին։ — Գնդակահարեցե՛ք լակոտին... Յես լավ հայրենասեր եմ... Նա գոռում էր. «Լապտերից կախե՛լ...»

Ջոկատը վարող սպան հրաման տվավ. զինվորները շարժվեցին, վոր բռնեն Տոբիին։ Բայց ամբոխն ահեղ պատի պես կանգնեց՝ յետևում թագցնելով փոքրիկ հայրենասերին։

— Ճանապարհ տվե՛ք, քաղաքացինե՛ր, — գոռաց սպան։ — Այդ տղան պետք է կալանավորվի։ Պարետային վարչությունում ամեն ինչ կպարզաբանեն։

— Առ քո սպեկուլյանտին և նրա հետ ջհաննամը գնա, — գոչում եյին ամբոխի միջից։

Սպան էլ ավելի խիստ կրկնեց իր պահանջը։ Ամբոխը պատասխանեց բարկացած աղաղակներով և էլ ավելի խտացավ՝ պաշտպանելով Տոբիին։

Այն ժամանակ հրաման արձակվեց։

— Կրակի պատրաստ։

Ամբոխի միջից նետված մի քար կպավ սպայի ուսին։ Նա կատաղությունից կարմրատակեց և ձեռքը բարձրացրեց, վոր հրացանաձգություն սկսի։

Բայց այդ ժամանակ ամբոխի և զինվորների արանքում յերևաց աննկատելի կերպով մոտեցած մի մարդ, կայնեզը, մինչև աչքերը քաշած գլխարկով։ Նա կարճահասակ էր, տկար, աղքատիկ հագուստով, բայց նրա յուրաքանչյուր շարժումի մեջ զգացվում էր հաստատակամություն և ուժ։

— Ժողովրդի բարեկա՛մը, ժողովրդի բարեկա՛մը, — կոչեց մեկն ամբոխի միջից։

Դա իսկապես վոր Մարատն էր*), ժողովրդի բարեկամն ու առաջնորդը, ինչպես անվանում էր նրան կարիքից և իրավազրկությունից ճնշված ամբողջ Ֆրանսիան։

---

*) Ժան-Պոլ՝ Մարատը Ֆրանսիական հեղափոխության գործիչներից չքավոր դասակարգի մեջ ամենաժողովրդականացածներից մեկն էր։ Սուր դիտողության շնորհիվ Մարատը շատ շուտով հասկացավ խոշոր և միջին բուրժուազիայի ձեռքով ղեկավարող Ազգային ժողովի քաղաքականության դասակարգային ատտառը և անցավ ստորին դասակարգերի կողմը, վորոնց շահերը նա յեռանդագին պաշտպանում էր իր «Ժողովրդի բարեկամը» թերթի էջերում։ Վոչ միայն արիստոկրատիայի, այլ և բուրժուազիայի դեմ վարվող կիսամիջոցներ չընդունող պայքարը Մարատին առանձնապես ատելի յեր դարձրել դեմոկրատիայի բոլոր թշնամիների աչքում, վորոնք ամեն մի միջոցով հալածում եյին նրան և վերջապես նրան սպանեցին. 1793 թ. հունիսի 13-ին նա սպանվեց իր տունը մտած արիստոկրատուհի Շառլոտա Կորդեյի ձեռքով։

Նրա հայտնվելը չափավորեց սպայի յեռանդը: Մարատի ներկայությամբ նա չհամարձակվեց զենք գործածել անզեն ժողովրդի դեմ: Մինչև ամբոխը հուզված պատմում եր Մարատին, թե ինչն է ընդհարում առաջացրել ազգային գվարդիայի հետ, սպան աննկատելի կերպով տարավ զինվորներին. նա նեգոցիանտին խորհուրդ տվավ նույնպես քաշվել: Նյլրան շուռ յեկավ, վոր հեռանա:

— Գլխարկս, գլխարկս,—հանկարծ գոռաց նա:—Սրանք թռցրել են գլխարկս, քաղաքացի սպա:

Ճիշտ վոր շքեղ կոկարդ ունեցող նրա յեռանկյունին գլխին չեր, գլխեցը գլորվել եր, ընկել կավի տեղում: Ամբոխից մի կին գետնից վերցրեց գլխարկը, ընդհանուր հավանության տակ կոկարդը պոկեց, գլխարկը նետեց նեգոցիանտի յերեսին՝ գոչելով.



Մարատ

— Առ՛, ճարպոտ խրտվիլակ, ու կորիր:

Նյլրան գլխարկը գլուխը կոխեց, շուռ յեկավ և արագ քայլեց ճեմելիքով: Այդ ժամանակ ամբոխը քաշվեց և Մարատին ճանապարհ տվավ Տոբիի մոտ գնալու: Փոքրիկ հերոսը կանգնել եր ժողովրդի բարեկամի առաջ շփոթված և ուրախ:

— Ո՞վ ես, փոքրի՛կ,—դարձավ նրան Մարատը:

— Տոբի—թռչնորսն եմ: Հայրենասերների համար յես ներկայացումներ եմ տալիս արտիստներիս հետ միասին,—պատասխանեց Տոբին՝ ցույց տալով շանը և կաչաղակին:

— Դու քաջ տղա յես և լավ հայրենասեր: Նա, ով քեզ վրա փայտ բարձրացրեց, ժողովրդական գործի թշնամի յե և դավաճան: Նա արժանի յեր կախվելու: Նրա և նրա նմանների դեմ պետք ե նորից ձայն բարձրացնել 22-ից հետո արի կորդելյերների մոտ*),—դու մեզ կպատմես այդ սպեկուլյանտի մասին: Ցտեսություն, Տոբի: Ցտեսություն, յեղբայրներ:

Մարատը փաթաթվեց պատմուճանի (պլաշչի) մեջ և արագ հեռացավ:

Տոբին յերջանիկ եր. նրա հետ խոսել եր Ժողովրդի բարեկամը և վոչ միայն խոսել եր, այլև կանչել եր կորդելյերների մոտ:

Մարատը Տոբիի համար հերոս եր, աներկյուղ, հզոր, անկաշառ:

*) Կորդելյերների ակումբն ամենահեղափոխական և դեմոկրատական ակումբն եր, վոր իր անունն ստացել եր այն վանքի անունից, վորտեղ զետեղված եր: Ակումբի ամենագործունյա անդամներն եյին Դանտոնը. Դեմուլենը, Մարատը, Ռոբեսպյերը, Լեժանդրը և ուրիշները: Այդ ակումբի կոչով եր Փարիզը շարժվել Տուիլըրիի պալատի վրա և գահազուրկ արել Լյուդովիկոս XVI-ին:



Մարատին միշտ հալածում եյին, փնտրում եյին, վոր բանտ նստեցնեն, ստիպեն լռել, բայց նա բռնվողը չեր:

Մարատն աշխատում եր, գրում, լույս եր ընծայում իր թերթը, ճառեր արտասանում, դիմակազերծ անում դավաճաններին, կոչ անում ժողովրդին պաշտպանելու իր իրավունքները,—և բացի միքանի բարեկամներից, վոչ վոք չգիտեր, թե վո՞րտեղ է նա թաքնվում, վո՞րտեղ է տպագրում թերթը, վո՞ր անկյունից է հնչում նրա ձայնը:

«Գուցե հենց հիմա յել վորոնում են նրան, վոր կալանավորեն»,—մտածում եր Տոբին, և նրա սիրտն անհանգիստ բաբախում եր:

— «22-ը: Ինչու՞ նա ինձ ակումբը կանչեց 22-ից հետո»:

Հանելուկը շուտով լուծվեց:

Տոբին չնկատեց, թե ինչպես անցավ ամբողջ ճեմելիքը և դուրս յեկավ փողոց:

Ամբոխը ցրվել եր: Նա մենակ եր. կողքից վազում եր շունը: Նա քսվում եր Տոբիի վոտներին և մեղմ մռռում եր՝ աշխատելով իր վրա դարձնել նրա ուշադրությունը: Կաչաղակը բարկությամբ փետուրները ցցած՝ նստած եր Տոբիի ուսին:

Խեղճ արտիստները քաղցած եյին. հիրավի արդեն յերեկո յեր, բայց վոչ նրանք, վոչ ել Տոբին առավոտվանից բան չեյին կերել:

Յեվ Տոբին խիստ քաղց զգաց: Նա շոյեց կենդանիներին նրանց սիրտ տալու համար և քայլերն ուղղեց տան կողմը:

Քաղաքը վառում եր ճրագները: Փողոցների կրպակներում վառել եյին կավե ճրագներ, վորոնք աղոտ լույս եյին սփռում դարսված ապրանքի—կոկարդների, ժապավենների, բրոշյուրների, թռուցիկ թերթիկների վրա: Վատ լուսավորված փողոցներով դեռուզեն եյին գնում անցորդները, ցերեկվա նման այստեղ-այնտեղ եյին հավաքվում քաղաքացիների խմբեր՝ իրար հրելով և վիճելով:

Կաֆեյի ճրագները պայծառ վառվում եյին՝ լույսի փնջեր գցելով փողոցի և անցորդների վրա:

Փողոցից կարելի յեր տեսնել մարդկանցով լի դահլիճները, սեղանների վրա կանգնած ճառող հռետորների և յերբեմն ձեռներ, վորոնք բարձրանում եյին ամբոխից վեր՝ ծափահարության կամ սպառնալիքի ու զայրույթի շարժում անելու համար:

Բայց այժմ ամբոխը մի տեսակ զուսպ եր, կենտրոնացած, լուռ, քան ցերեկը: Չեր լսվում վոչ աղմուկ, վոչ ծաղր, վոչ յերգ: Մարդիկ հավաքվում եյին, իրար մի քանի խոսք ասում և ցրվում, վիճողներն իրար վրա չեյին հարձակվում կատաղաբար. Նույնիսկ անցնող կառքերի անիվների և ձիերի սմբակների ձայնն ավելի խուլ և համաչափ եր թվում:

Կարծես մի ինչ-վոր բան ծանրացած եր բոլոր սրտերի վրա և մաշում եր բոլոր կրքերը:

Միայն անհանգիստ լրագրավաճառներն էին վազվզում փողոցներով՝ դեռ տպարանական ներկի հոտը տվող թերթիկները շարժելով, և նրանց զիլ ձայները կանչում էին ամեն կողմից.

— Ֆրանսիայի թերթ.

— Մոնիտեր.

— Ցերեկոյան հրատարակություն.

— Հայրենիքը վտանգի մեջ է.

— 22-ին կամավորների ընտրությունն է։

Լրագրավաճառներին շրջապատում էին. լրագրերն իրար ձեռքից խլխլում էին։

Հենց տեղնուտեղը բաց էին անում թարմ թերթիկները և կարդում.

«ՓԱՐԻԶ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ»

*1792 թ. հուլիսի 19, ազատության 4-րդ տարին։*

Քաղաքային վարչությունը վորոշում է.

վոր Օրենսդիր ժողովի հուլիս 11-ի աձանագրությունը, վորը հայտարարում է հայրենիքը վտանգի մեջ, կհրապարակվի կիրակի հուլիսի 22-ին և յերկուշաբթի հուլիսի 23-ին քաղաքային վարչության սպաների և նոտաբլների միջոցով.

վոր նույն օրը կկատարվի այն քաղաքացիների հրապարակական ցուցակագրություն, վորոնք կներկայանան զեպի սահմանն ուղարկվելու համար»։

22-ին հասնելու յեր այն օրը, վորին այնպիսի անհամբերությամբ սպասում էին բոլոր ֆրանսիացիները։ Ժողովրդական ներկայացուցիչները կոչ էին անում զենք կրելու ընդունակ բոլոր քաղաքացիներին դուրս գալ հայրենիքի ազատության պաշտպանությանը։

Դրանից յերեք տարի առաջ ժողովուրդը կռվի յեր դուրս յեկել արքայական իշխանության դեմ։ Ամբողջ Ֆրանսիան բաժանվել էր յերկու անհաշտ թշնամական բանակի։ Մի բանակն իր դրոշի վրա գրել էր — «Ազատություն, Հավասարություն և Յեղբայրություն կամ մահ», իսկ մյուսը համառորեն պաշտպանում էր թագավորի, ազնվականության և հոգևորականության հնավանդ արտոնությունները։

Առաջինները կոչվում էին հայրենասերներ և կրում էին Փարիզ քաղաքի յերեք գույներն ունեցող կոկարդ, յերկրորդները կոչվում էին ռոյալիստներ (արքայականներ) և կրում էին մարտական ճերմակ դրոշ։

Պետական Բաստիլիա բանտի հետ միասին իրար հետևից կործանվում էին նախկին պետական կարգի հիմքերը։ Հիմնադիր ժողովը հանդիսավոր ակտով վերացրեց ազնվականության և հոգևորականության ավատական իրավունքները և հրապարակեց «Մարդու և քաղաքացու



իրավունքների դեկլարացիա», վորի առաջին տողերում գրված էր. «Մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրավունքներով»։

Հիմնադիր ժողովն ուզում էր դրանով բավականանալ։ Խոշոր բուրժուազիան ուզում էր ապահովել միայն իր համար և՛ ազատություն, և՛ քաղաքացիական իրավունքներ։ Նրա ճնշման տակ մշակված օրենքները բոլոր քաղաքացիներին բաժանում էին յերկու կարգի. մի մասը ստանում էր օրենքներ մշակելու և տեղական վարչություններում մասնակցելու բոլոր իրավունքները, իսկ մյուսները՝ չքավորները, զրկված էին այդ իրավունքներից։

Այդպիսով այն ժողովուրդը, վորի ձեռքով էր ստացված ազատությունը, հեռացված էր պետությունը կառավարելուց, իսկ ժողովրդի հաղթության պտուղը խլել էր բուրժուազիան։

Ժողովրդի անբավականությունը տեսնելով՝ նա սկսեց հենարան փնտրել թագավորի մոտ, վորի դեմ քիչ առաջ մահու և կյանքի պատերազմ էր մղում։ Բուրժուական պատգամավորներն իրենց դարձրին օրենսդիրներ և ժողովրդի վիճակը անորինողներ, բայց թագավորին թողեցին «վետո»-յի — օրենսդիրների մշակած օրենքն ընդունելու կամ մերժելու իրավունքը։

Ժողովուրդը չէր մոռացել այդ դասը, խաբեբաների դեմ նա գաղտնի դայրույթ էր պահում, իսկ թագավորին և թագուհուն ծաղրանքով անվանեց պարոն և տիկին «Վետո»։

Այդ ժամանակվանից յերկու բանակի փոխարեն Ֆրանսիան բաժանվեց բազմաթիվ թշնամական բանակների։

Թագավորը, նրանից հետո և՛ թագուհին ազնվականությանը յերդվել էին նոր օրենքներին հավատարիմ լինել, բայց իրանք զինվում էին ժողովրդի դեմ։

Թագավորը, մանավանդ թագուհի Մարի—Անտուանետը, շարունակում էին հարաբերություն պահպանել Ֆրանսիայից փախած արքայազունների և ազնվականների հետ, վորոնք օտարերկյա թագավորների հովանավորությամբ ռազմական ուժեր էին հավաքել Ֆրանսիայի դեմ։ Ռոյալիստներն զգալով խոշոր բուրժուազիայի պաշտպանությունը և հայրենասերների մեջ յեղած յերկպառակությունը՝ ավելի բացարձակ և հանդգնորեն էին գործում։

Հակահեղափոխական բանակը պատրաստ էր խուժելու Ֆրանսիայի սահմանները, բայց դանդաղում էր, վորովհետև ավստրիական կայսրը և պրուսական թագավորը սիրտ չէյին անում Ֆրանսիային պատերազմ հայտարարելու։

Ազգային ժողովը վերահաս վտանգից վախեցած՝ վորոշեց ավստրիական կայսրին պատերազմ հայտարարել, վորպեսզի հակառակորդի դեմ արշավանք սկսի, ժամանակ չտալով նրան իր բոլոր ուժերը հավա-

քելու: Այդ բանում պատգամավորներին պաշտպանում էին պալատականներն ու մինիստրները՝ վորպես թե հայրենասիրությունից դրդված, բայց իրոք հույս ունենալով, վոր Ֆրանսիան կհաղթվի և կվերականգնվի թագավորի և ազնվականության իշխանությունը:

Պատերազմը հայտարարվեց: Հենց առաջին ճակատամարտերը հաստատեցին պալատականների և արքայական մինիստրների դավաճանության մասին յեղած կասկածները. զորքերը փախչում եյին, դավաճան գեներալները դիրք դիրքի հետևից եյին հանձնում: Հակահեղափոխությունը արշավում եր Ֆրանսիայի վրա:

Այն ժամանակ Ազգային ժողովը հայտարարեց. «Հայրենիքը վտանգի մեջ է». նա կանչում եր բոլոր ֆրանսիացիներին պաշտպանելու ազատությունը:

Ֆրանսիան տենդագին պատրաստվում եր պաշտպանվելու ոտարերկրացիների ներխուժումից, իսկ Փարիզը պատրաստվում եր նաև հաշիվ տեսնելու դավաճանների և մատնիչների հետ:

Այդ փոթորկալից տարվա հուլիսյան շոգ որերին Փարիզն որեցոր սպասում եր «Հայրենիքը վտանգի մեջ է» դեկրետը ժողովրդին հայտարարելուն և կամավորներից հեղափոխական բանակ կազմելն սկսելուն: Դրա հետ միասին չքավոր դասակարգն էլ ավելի մեծ վճռականությամբ հարձակվեց գանգատներով հարուստների վրա և յերկրի համար այդ սարսափելի ժամանակն իրանց սպեկուլյացիայով քաղց և յերկպառակություն գցողների վրա:

---

ԳԼՈՒԽ IV.

## ՔԱՐՏԱՇԻ ՏՂԱՆ

Տոբին ուշ տուն հասավ:

Սանդուղքի յերեք-չորս աստիճանները տանում եյին այն շենքը, վորը ծառայում եր և՛ վորպես խանութ և ննջարան: Աջ ու ձախ յերկար սեղանների վրա դարսված եյին զանազան ապրանքներ—հին ու նոր իրեր, զգեստ, կտորեղեն, յերկաթի և ժապավենների փաթեթներ: Դարակների վրա դրված եյին մանրունքի արկղիկներ: Նկարազարդված վարագույրը ծածկում եր իր յետևում հասարակ լայն մահճակալը:

Այդ մութ և խոնավ սենյակի խորքում մի ապակիներ գցած դուռ բացվում եր դեպի նեղ միջանցքը, վորը տանում եր դեպի մի ուրիշ սենյակ և խոհանոցը:

Փեղեցիկ մի փոքր պարտեզ շրջապատում եր տունը՝ նրան փողոցից բաժանելով, իսկ խորքում տան առաջ բացվում եր լայն բակը:



Տոբին սրահը տարավ և մի անկյունում դրավ իր սայլակը, վանդակներն ու արկղիկները:

Մոնշալեյն ու Ռումպոնետը նետվեցին խոհանոց: Մոնշալեյն ուրախ հաչոցով վազեց ուղղակի տաշտի մոտ նստած պառավի մոտ:

Տոբին աղմուկով վազեց պառավի մոտ և պինդ համբուրեց նրան:

— Բարև՛, նանի: Շատ սպասեցիր... Լա՛վ, լա՛վ, մի՛ բարկանա...

— Եյի տեսնես փողոցներն ես չափչփել, վոր են կոկորդ պատռողներին ականջ դնես, հա՞:

— Փողոցները չեմ չափչփել, այլ յեղել եմ ժողովում, և վոչ թե կոկորդ պատռողներին եմ ականջ դրել, այլ ժողովրդական հռետորներին:

— Դե, լավ... ելի լավ է, վոր գոնե յերեկոյան տուն ես գալիս: Ազնիր ինձ ես հավը մաքրենք:

— Խնճո՞ւյք ես սարքում,—բացականչեց Տոբին:

— Ի՞նչ խնճույք, մի հավ է, են էլ ենքան պառավ, վոր էլ ձու չեր ածում: Բայց համեղ բան կլինի. տես ի՛նչ չաղն է: Կիրակի որը ճաշին կտապակեմ:

— Ճաշին չէ, նանի: Ավելի լավ է ընթրիքին:

— Թող ընթրիքին լինի: Բայց ինչո՞ւ:

— Վորովհետև կիրակի յես վողջ որը քաղաքում եմ լինելու:

Պառավը նորից հոնքերը կիտեց:

— Դու ելի ինձ մենա՞կ ես թողնելու: Գոնե կիրակի որն ուզում եյի քեզ հետ ճաշել, իսկ հիմի...,

Տոբին նրան չթողեց խոսքը վերջացնի:

— Վրաս մի բարկանա,—քնքշորեն դարձավ նա պառավին:—Կիրակի որը ժողովրդական ներկայացուցիչների կոչը հայտարարվելու յե ժողովրդին: Բոլոր հրապարակներում պատրաստություն են տեսնում. ամբիոններ են շինում ծածկերով, ծաղկաշղթաներով և դրոշակներով: Թնդանոթներ պետք է արձակեն: Թափորին զորքեր են ուղեկցելու: Դա զմայլելի տեսարան կլինի: Վողջ Փարիզը փողոց դուրս կգա:

— Դու էլ ես ուզում մոտիկ տալ:

— Ո՜, մենք աշխատելու յենք: Հասկանո՞ւմ ես: Արտիստներիս հետ յես կգնամ թափորի յետևից և ամեն տեղ ներկայացումներ կտամ, իսկ յերեկոյան քո գողնոցը կթափվի ծանր սուսերի մի անձրև:

Պառավը բարկությունը գութի փոխեց:

— Դու հասկացող տղա յես,—ասաց նա:—Հա՛, պետք է խոստովանվեմ, վոր դու գլուխ ունես: Ա՜խ, յեթե միայն դու ուսումդ շարունակեյիր... Յես ենքան եյի ուզում, վոր քեզ նոտարի գրագիր շինեմ մի որ...

Տոբին նրա հոգևորդին եր:

Մարդը մեռնելուց հետո Մոնտարժին վորոշեց վերցնել դաստիարակելու մի վորբի—իր մարդու քրոջ վորդուն: Նա մի քիչ կրթություն

տված նրան։ Տասնուհինգ տարեկանում նրա սանը մեծ առաջադիմություն արավ, միայն թե չարության մեջ։ Հետո նա միանգամայն չքացավ տնից, իսկ վշտացած պառավը աշխատեց մոռանալ նրան։

Պառավը նրան տեսավ մի քանի տարուց հետո վորպես ֆրանսիական գվարդիայի զինվոր։

— Հա՛, ավազա՛կ,— գոչեց պառավը՝ տեսնելով նրան իր տան շեմքում։— Պեպինների ցեղից է վոր կա։ Դրանք բոլորն էլ դատարկ մարդիկ են յեղել։ Դե՛ յե՛կ յերեխա մեծացրու, չարչարվիր դրանց համար։ Զե՛, յես էլ եդ տեսակ հիմարություն չեմ անի։

Բայց հետո նա ստիպված յեղավ փոխել իր վորոշումը։

1781 թ. նոյեմբերին Մոնրուժ յեկեղեցու մոտով անցնելիս նա պատահեց մի խումբ քարտաշների, վորոնք պատգարակի վրա տանում էյին իրանց ընկերներից մեկի մարմինը։ Խեղճ քարտաշի վրա աշնան հեղեղներից պոկված մի ժայռ եր ընկել։

Քարտաշներն իրանց ընկերոջ այլանդակված դիակի վրա հարդ էյին թափել, ծածկել էյին նրան բլուզներով, իսկ դեմքը փաթաթել էյին թաշկինակով։

Հորաքույր Մոնտարժին կանգ առավ։

— Ո՞վ է դա,— հարցրեց նա քարտաշներից՝ ցույց տալով դիակը,— տեղացի բանվորների՞ց է։

— Վո՛չ,— պատասխանեցին նրան,— սա յեկվոր մարդ է, չենք իմանում՝ Լորենի՞ց է, թե՞ Բելգիայից։

— Ընտանիք թողե՞լ է։

— Չորս տարեկան մի յերեխա ունի։

— Իսկ կի՞ն։

— Կինը վաղուց է մեռել, հենց էնտեղ, իր հայրենիքում։ Հանգուցյալը վորդու հետ նոր էյին յեկել, ամառվա վերջին, Ուազի վրա գտնըվող քարահանքերից։

— Բա յերեխային ո՞ւմ եր պահ տալիս գործի գնալիս։

— Տղան մնում եր այն պանդոկապանուհու մոտ, ում մոտ վոր Ֆրանսուան կերակրվում եր։ Հրես սա յե, յերեխան էլ հետն է։

Քարտաշները պատգարակը ցած դրին։

Պանդոկապանուհին մոտ յեկավ. նա ձեռքից բռնած բերում եր մի թարմ, կապուտաչյա, շիկահեր գանգուրներով փոքրիկ տղայի։

— Աստվա՛ծ իմ,— բացականչեց նա, յերբ բանվորները բաց արին հանգուցյալի արյունոտ յերեսը։— Դա հո իմ ճաշո՛րդն է... Խե՛ղճ Ֆրանսուա...

Մանուկը դողում եր ամբողջ մարմնով... Քարտաշներից մեկը խըստությամբ բարձրացրեց նրան և ասաց.

— Համբուրի՛ր հորդ... վերջի՛ն անգամ։



Վախեցած տղան դուրս պրծավ բանվորի ձեռքից և լալով հեռու կացավ պատգարակից։

— Թողե՛ք դրան, թողե՛ք,— մեջ ընկավ Մոնտարժի հորաքույրը։

Նա յերեխային բարձրացրեց և փորձեց հանգստացնել նրան։

— Հիմի ի՞նչ պիտի անի այս փոքրիկը,— հարցրեց նա։

Վոչ վոք չպատասխանեց։ Նա իր հարցը նորից կրկնեց անհամբերությամբ, համարյա բարկացած։

— Ո՞վ է իմանում...— պատասխանեց պանդոկապանուհին։— Վոչվոք չի իմանում, թե վորտեղ է Ֆրանսուայի ընտանիքը։ Նա վոչ վոքի բան չի ասել վոչ իր ազգականների, վոչ իր հայրենիքի մասին։ Նա իրան հեռու յեր պահում և միշտ տխուր եր։

— Նա դժբախտ է յեղել...— ասաց Մոնտաժի հորաքույրը։

Նա դարձավ յերեխային, վորը սեղմվում եր իրան.

— Անունդ ի՞նչ է։

— Տոբի,— կմկմեց տղան։

— Իսկ հո՞րդ անունն ինչ եր։

— Ֆրանսուա։

— Ֆրանսուա... իսկ հետո՞։

Փոքրիկը ինչ վոր ազգանուն թե մականուն ասաց քթի տակ — Լյուրո, թե Լորյե — վոչ վոք բան չհասկացավ։

— Դու վո՞րտեղից ես յեկել հորդ հետ։ Մի՛ վախիր, սիրելի՛ս... միայն աշխատիր միտդ բերել։

— Նա յեկել է...

— Բա միտդ չի՞ են գյուղի անունը, վորտեղ առաջ ապրում էյիր։

Յերեխան չկարողացավ վոչինչ հիշել։

— Շա՛տ բան իմացա, հա՜յ...— փնթփնթաց բարի կինը։— Դե հիմի քեզ ի՞նչ անենք։

Նա համբուրեց յերեխային, նրա ձեռքը դրավ մի քանի արծաթ փող և տվավ պանդոկապանուհուն։

— Հո չի կարելի փողոց շպրտել ես բղեղին,— ասաց Մոնտարժի հորաքույրը։— Յես սրան կվերցնեյի, բայց ի՞նչ անեմ. ախր վողջ օ՞րը յես ճանապարհներին եմ թրև գալիս։ Չու՛, Շեկո՛։

Եշը ճանապարհ ընկավ։ Բայց մի քանի քայլ անելով՝ Մոնտարժի հորաքույրը կանգնեցրեց էշին։

— Դուք յերեխային մտիկ կտաք, չէ՞,— նորից գոչեց նա պանդոկապանուհուն։— Յես էլի կգամ։

Ամբողջ օրը նա իրան համոզում եր. «Չէ՛, չէ։ Էլ սիրտ չունեմ ուրիշի յերեխա պահելու»։

Բայց հենց նույն յերեկոյան տուն գնալիս նա մտավ Մոնրուժ և գնաց պանդոկապանուհու մոտ։

— Հը՞, — հարցրեց Մոնտարժի հորաքույրը, — բան իմացա՞ք հանգուցյալի մասին։

— Վոչինչ չիմացանք։ Վողջ սենյակը քարուքանդ արինք, վոչ մի կտոր թուղթ չգտանք, — պատասխանեց պանդոկապանուհին։

— Իսկ ո՞ւր է բզեզը։

— Թռած է։

— Գիտե՞ք ինչ... ինձ տվեք նրան։ Ինձ մոտ կպահեմ, մինչև ազգականները կգան հետևից։

Պանդոկապանուհին ուրախությամբ տվավ փոքրիկին Մոնտարժի հորաքրոջը, և վերջինս յերեխային տարավ իր տունը։

Տոբիի հետևից վոչ վոք չեկավ։ Մանուկը մնաց Մոնտարժի հորաքրոջ մոտ։

— Ինձ տատիկ կասես, — ասաց նա Տոբիին։

Սկզբում «տատիկ» բառը լսելիս Մոնտարժին խիստ հուզված եր զգում իրան։

Նա Տոբիին իր հետ տանում եր գյուղերն իր սայլակով, վոր լիքն եր լինում կտորներով և մանրունքի տուփերով։ Տոբիի հետ խոսելիս Մոնտարժի հորաքույրը մոռանում եր հոգնածությունը և իր թափառական կյանքի դժվարությունները։

Նա մոտ հիսուն տարեկան եր, բայց իրան յերբեք այնքան առույգ, աշխույժ և ուժեղ չեր զգացել։ Ինչ վոր նա հիմա անում եր, նրա ամբողջ աշխատանքը և ջանքերը Տոբիի համար եյին։

Ուսման մասին մտածելու ժամանակը հասավ։ Տոբին արագ կերպով սովորեց կարդալ, գրել և հաշվել։ Բայց դպրոցը նրան հոգնեցնում եր, նա ձանձրանում եր այնտեղ։ Ամեն առավոտ նա նախանձով եր նայում գյուղերը շրջելու համար գնացող տատիկի սայլակին։

Խեղդիչ ու ճնշող պատերից նա ձգտում եր դեպի ազատ դաշտերը։ Կայտառ, ամրակազմ տղան շուտով դարձավ դունատ և թառամած յերեխա։

— Ի՞նչ է ցավում, — հարցնում եր նրան Մոնտարժին տուն վերադառնալիս։

— Բան չկա, — անփոփոխ լսվում եր միևնույն պատասխանը։

— Հիվա՞նդ ես։

— Վո՛չ։

— Բա ի՞նչ ես ուզում։

— Ինձ հետդ վերցրո՛ւ...

— Հը՛, թափառաշրջիկ... Բա դպրո՞ցը։

Նա ստիպված յեղավ զիջել յերեխային։ Նրանք նորից սկսեցին միասին շրջել գյուղերը։ Մի քանի որից հետո Տոբին նորից դարձավ աշխույժ և ուրախ, իսկ թշերը ծածկվեցին կարմրությամբ։



Մինչդեռ Մոնտարժին ապրանքներն եր դարսում իր զանգակի ձայնից դուրս յեկած գեղջկուհիների առաջ, Տոբին վազում եր անտառ։ Շուտով նա ծանոթացավ շրջանի բոլոր անտառապահներին և նրանց յերեխաների հետ բարեկամացավ։ Շարժուն, համբերատար, հետաքրքրվող, նա ուզում եր թափանցել անտառի բոլոր գաղտնիքների մեջ։ Նա մտնում եր հեռու խորքերը, թափառում եր բոլոր ճանապարհներում և շավիղներում, ապա վերադառնում, և Մոնտարժի հորաքույր միշտ գտնում եր նրան ճանապարհին, նախորոք պայմանավորված տեղը։

Անտառներում թափառելուց Տոբին բերում եր ծաղիկներ, կրիաներ, ծիծեռնակի բներ, թռչնիկներ։ Մի անգամ նա բերավ մի շան լակոտ, վոր նվիրել եր անտառապահ Վիլեժին։ Դա մի գանգրահեր շնիկ եր խելոք դնչով, յերկարամազ, աջ աչքի վերևը խալ։ Տոբին նրան անվանեց Մոնշալե։

Մի քանի ժամանակ հետո Տոբիի հանդիպումը մի շրջիկ կրկեսի, վորտեղ աշխատում եյին սովորեցրած կենդանիներ—շուն, ձի, սպիտակ այծ, — վորոշեց շան վիճակը։ Մոնշալեյն սկսեց պատրաստվել արտիստական ասպարեզի համար։ Շան առաջադիմությունը չափազանց ուրախացնում եր Տոբիին։ Շունն իսկապես խելոք եր և արագորեն սովորեց բոլոր պարզ վարժությունները։

— Լա՛վ է, շա՛տ լավ է, — ասում եր նրան Տոբին։ — Յեթե դուք այդպես ժրաջանությամբ պարապեք, ձեզ բաց կթողնեն Փարիզի փողոցները, և դուք ամբողջ քաղաքը կզարմացնեք։

Այն որերը, յերբ Մոնտարժի հորաքույրը տանն եր մնում եշին հանգիստ տալու համար, Տոբին քաղաք եր վազում։ Նա ուղեվորվում եր Լուքսենյան զորանոցները։ Յերաժշտությունը, զինվորներին, զենքը նա այնպես եր սիրում, վոր կարող եր ամբողջ ժամերով նայել վարժություններին, իսկ թմբկահարների դպրոցին նա քայլ առ քայլ հետևում եր։

Գնդի յերաժշտներից մեկը նրան սրնգի վրա նվագել սովորեցրեց. յերիտասարդ մի թմբկահար սովորեցրեց նրան թմբուկի վրա քայլերգ, հավաք, ռազմական սիգնալներ (ազդանշան) խփել։

Տոբիի ճաշակն անհանգիստ եր անում նրա նանիին։

— Դու արդեն տասներկու տարեկան ես, — ասում եր նա Տոբիին։ — Ժամանակն է վորոշել, թե ի՛նչ պիտի անես։ Ի՞նչ ես ուզում դառնալ։

— Անտառապահ կամ զինվոր... — պատասխանեց Տոբին։

Պառավն անհամբերությամբ ընդհատեց նրան։

— Զինվո՞ր, — բացականչեց նա։ — Աստված իմ, և դու ուզում ես թողնել ինձ են անառակ Բատիստի նման։

— Չե՛, յես քեզ չեմ թողնի։ Յեթե յես զինվոր դառնամ, նրա համար չեմ դառնա, վոր Փարիզում թրև գամ։ Յես ձիով կճանապարհոր-

դեմ, կտեսնեմ զանազան յերկրներ, և վորպես Ովերնի գնդի *) զինվորներն Ամերիկայում՝ կկռվեմ ազատության համար:

— Ախր չէ՞ վոր դու ասացիր, վոր ինձ չես թողնի…

— Հա՛: Դու էլ ինձ հետ կգաս… գնդի հետևից…

— Խելքդ թռցրե՞լ ես, ի՞նչ է… ես տարիքոտ եմ:

Բայց Տոբին սուս չէր անում:

— Իսկի՛ մի վախի: Կտեսնես, նանի, թե ինչ լավ կապրենք:

Ապա տեսնելով վոր տատիկը սրտնեղված է, Տոբին սկսում էր նրան հանգստացնել:

— Մի՛ տխրի: Չէ՞ վոր սա դատարկ խոսքեր են: Յես ուրիշ բանի մասին եմ մտածում… Քեզ պիտի զարմացնեմ:

Տոբին վորոշեց աշխատել տատիկի համար, ինչպես տատիկը մինչև այդ աշխատել էր Տոբիի համար:

Տոբիի ծրագիրն արագ հասունացավ. Նա վորոշեց ներկայացումներ տալ Փարիզի փողոցներում: Տոբին ինքը վարպետորեն զարկում էր թմբուկի վրա և սրինգ էր նվագում: Մոնշալեյ շունն արդեն բավական վարժեցված էր. այդ որերը բռնված կաչաղակը, վորի անունը Տոբին դրել էր Ռամպոնետտ, դարձավ շրջիկ խմբի պրիմադոննան (առաջին դերը խաղացողը):

Քաղաքից դուրս զբոսնելիս Տոբին առիթը չէր բաց թողնում լրացնելու իր խմբի կազմն անտառում բռնած թռչուններով: Նա նրանց ընտանեցնում էր, սովորեցնում, ապա մի քանի ներկայացումներից հետո վաճառում և նրանց տեղ նորերը գնում: Սովորեցրած թռչունների յերկրպագուները քիչ չէյին: Տոբին առանց հանգստանալու աշխատում էր՝ մերթ անտառում թակարդներ դնելով, մերթ Փարիզի փողոցները դղրդացնելով իր աղաղակով.

— Վարժեցրած թռչուննե՛ր, սովորեցրած թռչուննե՛ր: Ա՛յ, ա՛յ կորե՛կ: Ժապավեննե՛ր:

Հրապարակներում Տոբին ներկայացումներ էր տալիս: Նա թմբուկով կանչում էր ժողովրդին, Մոնշալեյը դասավորում էր գունավոր կարտոններ, իսկ Ռամպոնետտը թռչում էր հանդիսատեսների շարքերը փայլուն գավաթիկը կտցի մեջ:

*) Ովերնի գունդն Ամերիկայում մասնակցեց անկախության համար մղված պատերազմին: Այդ գնդի հետ պատերազմին մասնակցում էր ֆրանսիական հեղափոխության ապագա գործիչ Լաֆայետը:



ԳԼՈՒԽ V

# Ի ԶԵ՛Ն, ՔԱՂԱՔԱՑԻՆԵ՛Ր

Տոբիի ներկայացումները Փարիզի փողոցներում շարունակվում էյին մի քանի ամիս ավելի ու ավելի մեծ հաջողությամբ: Բայց յերբ յեկավ ամառը, Տոբին ցավով սրտի զգաց, վոր ժողովուրդն իրենից սառել է:

Փողոցներն ավելի էյին կենդանացած, քան յերբևիցե: Բայց բոլորն շտապում էյին ինչ-վոր տեղ, իսկ յեթե կանգ էյին առնում, այն էլ միայն նրա համար, վոր բարձրաձայն և գրգռված զրուցեն՝ Տոբիին անծանոթ խոսքեր նետելով: Նա իրան օտար էր զգում այդ ամբոխի մեջ, վորն այլևս չէր հավաքվում իր թմբուկի կոչ անող դռռոցից:

Դա 1789 թիվն էր — ժողովրդական հուզմունքների սկզբի տարին:

Անվանի քաղաքացիները հավաքվում էյին քաղաքային խորհրդարանում. բանվորները, արհեստավորները — քաղաքի բոլոր չունևորները դուրս էյին թափվում փողոց և լցվում Որլեանի դուքսի պալատը, վորի մուտքը բաց էր ժողովրդի համար:

Հուլիսի 11-ին ժողովրդական առաջնորդներից մեկը — Կամիլլ Դեմուլենը*) պալատի պուրակում հավաքված բազմահազար ամբոխին ուղղեց հետևյալ կոչը — «Ի զե՛ն, քաղաքացինե՛ր»:

Նրա մի ձեռքում կար ատրճանակ, մյուսով նա պոկեց կաղնի ծառից մի տերև և ամրացրեց իր գլխարկին**): Ամբոխն էլ իրան զարդարեց կաղնու տերևներով:

Տոբին այդ ժամանակ պալատի մոտ էր: Նա լսում էր ամբոխի կողմից բազմաթիվ անգամ կրկնվող կոչը: Ընդհանուր շարժման հետևելով՝ նա յել իր յեռանկյունի գլխարկը զարդարեց կաղնու տերևով և պալատից դուրս թափված ամբոխի հետ Փարիզի փողոցներով առաջ շարժ-

*) Կամիլլ Դեմուլենը յերևելի հռետոր էր և ֆրանսիական հեղափոխության գործիչ: Նա կորդելյերների ակումբի հիմնողներից մեկն էր, «Հեղափոխությունը Ֆրանսիայում և Բրաբանտում» ժողովրդականացած թերթի խմբագիրն էր և հանրապետական շարժման սկսողներից մեկը: Հանրապետական ռեժիմ հաստատելուց և ժիրոնդիստական կուսակցության քայքայումից հետո Դեմուլենը հեղափոխությունը վերջացած էր համարում և սկսեց պայքար մղել արմատական և աթեիստական (անաստված) Փարիզյան Կոմմունայի դեմ: Այդ պայքարը նրան Դանտոնի և իրենց կողմնակիցների հետ միասին հասցրեց էշաֆոտի (գլխատման):

**) — Ի՞նչ գույն եք ուզում,—դարձավ Դեմուլենն ամբոխին,—կանա՞չ, վոր հույսի գույն է, թե՞ կապույտ, վոր ազատ Ամերիկայի գույնն է:

— Կանաչ,—պատասխանեց ժողովուրդը: Յեվ Դեմուլենն իր գլխարկին ամրացրեց կաղնու տերև:

Հետագայում ապստամբված ժողովուրդը հրաժարվեց կանաչ գույնից, վորովհետև դա դ'Արտուա կոմսի—թագավորի յեղբոր գույնն էր. դրա փոխարեն Փարիզ քաղաքի ազգային գույները-կապույտն ու կարմիրը դարձան, վորոնց շուտով միացրին սպիտակ գույնը: Յեռագույն դրոշակը փոխարինեց թագավորական ճերմակ դրոշակին:

վեց։ Նա ամրոցի մեջն էր և՛ այն ժամանակ, յերբ արքայական դրագունները պաշարեցին անզեն ամբոխին, մերկ թրերով հարձակվեցին նրա վրա և ստիպեցին ցրիվ տալ։

Նա տեսավ թրերով կտրտված և ձիերից ոտնահարված մարդկանց մարմինները և սարսափով տուն փախավ։ Նրա ականջներում հընչում էր ամբողջ Փարիզում տարածվող կոչը — «Ի զե՛ն»։

Տանը Տոբիին սպասում էր ծայր աստիճանի վախեցած տատիկը։ Տոբիի նման նա յել չէր հասկանում, թե ինչ է կատարվում. նրան սարսափեցնում եյին գրգռված ամբոխը, աղմուկը և հրաձգությունների արձագանքը։

— Տոբի՛, դո՛ւ յես, — նետվեց նա դեպի թոռը։ — Վնասված չե՞ս հո։

— Նանի՛, — քիչ էր մնում լաց լիներ Տոբին։ — Նրանք կոտորածով ամբոխի մեջ մտան։ Վողջ փողոցն արյուն է... Ինձ մոտ ընկնում եյին մարդիկ։ Նրանք աղաղակում եյին. «Ի զե՛ն»... Գլխարկիս կաղնու տերևեմ կպցրել, — անկապ մրմնջում էր Տոբին։

— Ի՞նչ տերև, — բացականչեց Մոնտարժի հորաքույրը։

Նա խլեց Տոբիի գլխարկը, դուրս հանեց վառ կանաչ տերևը և ուզեց դուրս շպրտել։

— Տերևը թո՛ղ, նանի՛, թո՛ղ։ Ձեռք մի՛ տուր, — աղաչեց Տոբին։

Վորքան էլ վոր վախեցած էր Տոբին, բայց և այնպես զգում էր, վոր ամբոխի հետ կապված է. նա չգիտեր, թե ժողովուրդն ինչ է ուզում, բայց զգում էր, վոր նա իր բարեկամն է, իսկ դրագունները — թշնամիներ։ Նա այնտեղից փախավ, բայց կաղնու տերևը և իր տեսած արյունն անխզելի կապով իրան կապում եյին մյուսների հետ։

Տատիկը վոչինչ չէր ուզում լսել։ Յերկար խնդրելուց հետո միայն նա համաձայնեց զեն չքցել տերևը և թաքցրեց այն իր փալասների մեջ, վորպեսզի վոչ վոք չգտնի խռովարարներին պատկանելու այդ նշանը։ Իսկ Տոբիից խոստումն առավ, վոր նա փողոց չի՛ դուրս գա։

Տոբին ի՜նչ սարսափելի որեր անցկացրեց տատիկի հետ միասին փոքրիկ տնակի կտրի տակ։

Շունը, կաչաղակը, թռչունները — բոլորը մոռացվել եյին։ Տոբին ամբողջ օրը ման էր գալիս սենյակում՝ չիմանալով թե ինչ անի, ինչ գործի կենա։ Նա կամ նստում էր մահճակալին գունատ, մռայլ, անխոս, կամ մոտենում էր լուսամուտին ականջ դնելու հեռավոր աղմուկին և ապստամբված քաղաքի տրտունջին։

Հուլիսի 12-ի առավոտյան ժողովրդական հավաքի զանգահարություն լսվեց։ Նախ զանգահարեցին քաղաքի մի ծայրում, ապա մյուսում, և շուտով ամեն կողմից հնչեց զանգահարությունը։

Ծաղաղ մրապաղաղ հնչյունները լողում եյին քաղաքի վրա, տարածվում եյին բոլոր անկյունները, աղաղակում եյին, փողոց եյին



կանչում։ Զանգահարությունը չէր ընդհատվում, ամբողջ օրը նա հնչում էր։

Այդ զանգահարության տակ Փարիզը զինվում էր։ Ամբողջ քաղաքում զենք եյին փնտռում։ Խլել եյին զենքը բոլոր զինագործներից, բոլոր պահեստներից և զինանոցներից, ամբոխի առաջ բացվել եյին քաղաքային խորհրդի ներքնահարկը և մառանները։ Բայց դա քիչ էր. այդքան զենքով չէր կարելի զինել բոլոր ցանկացողներին։ Այն ժամանակ բոլոր արվարձաններում սկսեցին աշխատել դարբնոցները, այնտեղ նիզակներ եյին կռում։ Յերկու որում Փարիզի դարբինները հիսուն հազար նիզակ տվին։ Նիզակը դարձավ ազատության խորհրդանշանը։

Ամբողջ գիշերը և հետևյալ որը քաղաքը շարունակում էր յեռալ։ Մութ փողոցներով շրջում եյին պահակախմբեր, վորոնց կարելի յեր յուրաքանչյուր քայլափոխում հանդիպել։ Զորքերը չեյին համարձակվում կրակել գիշերն անգամ չցրվող խմբերի վրա. արքայական զորքերի հրամանատարը ոգնական զորքի յեր սպասում, վոր ապստամբությունը ճնշի։ Ժողովուրդը զինվում էր։

Հուլիսի 14-ի առավոտյան հավաքի զանգահարությունն էլ ավելի ուժգին ղողանջեց։ Ամբոխը խուժեց հաշմանդամների տան զինանոցը։ Այնտեղ կար 30.000 հրացան և թրեր, թնդանոթներ, ռազմամթերք։

Այն ժամանակ հնչեց աղաղակը. «Դեպի Բաստի՛լիա»*)։

Այդ առավոտ Տոբին իր սենյակից լսեց թնդանոթների հեռավոր վորոտը։ Ապակիները դղրդացին։ Թնդանոթաձգությունը չէր դադարում։

Մոնտարժի հորաքույրը թնդանոթների առաջին իսկ զարկին ուժասպառ ընկավ աթոռին։

— Չէ՞ վոր բոլորիս կկոտորեն... Աստվա՛ծ իմ։ Աստվա՛ծ իմ, — բացականչում էր նա։ Ապա նա տնից դուրս նետվեց փողոց՝ ասես ոգնություն խնդրելու հարևաններից։

Փողոցը դատարկ էր։ Վոչ վոք չկար։

Տները կողպված եյին։ Ովքեր վոր կարող եյին զենք կրել, Բաստիլիայի մոտ եյին։ Ծերերն ու մանուկները թաքնվել եյին իրանց նեղլիկ բնակարանների անկյուններում։

Տատիկը վերադարձավ սենյակ։ Տոբին աչքերը չռած նստել էր՝ թնդանոթի ամեն մի կրակոցից ցնցվելով։ Յերկար ժամերի ընթացքում նրանցից վոչ մեկը չէր խանգարում լռությունը։

Ապա կրակոցները հանդարտեցին։ Խորին լռություն տիրեց։

Ժամը հնգի մոտ մուտքի դուռը բացվեց և փայտե մաշիկների ծանր հարվածներ լսվեցին։

*) Մի բերդ, վորտեղ քաղաքական հանցավորներն եյին պահվում։

Պառավն ու տղան նստեցին դռան մոտ։ Այնտեղից նրանք լսեցին հարևանուհու ձայնը՝

— Բաստիլիան ընկավ։ Ժողովուրդը հաղթեց։

Ցեվ հարևանուհին վազեց առաջ։

Տոբին և տատիկը վոչինչ չեյին հասկանում։ Բաստիլիան, հին բերդը, անառիկ, խրամատներով շրջապատված, սոսկալի սև սարի պես Փարիզի ուղիղ կենտրոնում ցցված,— ինչպես կարելի յեր վերցնել այն։ Ինչքա՞ն մարդ է ուրեմն այդտեղ կոտորվել։

Նրանք շուտով տեսան և՛ նրանց, վորոնք վերցրել եյին այդ իսկապես վոր անառիկ բերդը։ Փողոցներն սկսեցին լցվել։ Բանվորները վառոդից սևացած, արյունոտված, փոշու և քրտինքի մեջ կորած վերադառնում եյին տուն։ Շատերը վիրավոր եյին. վոմանց ձեռքերն եյին վիրակապած, վոմանց գլուխները. ծանր վիրավորներին տանում եյին պատգարակների վրա։

Փողոցը թնդում եր։ Վազելով անցնում եյին զինված մարդիկ։ Նրանք մտնում եյին իրանց տները մերձավորներին իմաց տալու, ուրախալի լուրը հաղորդելու և նորից յետ վազելու։

Փարիզի շուրջը կանգնած եյին արքայական զորքերը, վորոնք միայն հրամանի եյին սպասում, վոր դուրս գան և կռիվն սկսեն։ Մյուս կողմից, քաղաքային խորհրդարանում և քաղաքի բոլոր ծայրերում զինված ժողովրդի ջոկատներ եյին կազմակերպվում, վոր կազմում եր







ազգային զվարճախաղ: Տղամարդկանց և կանանց խմբերը, վորոնք զինվել եյին այն ամենով, ինչ վոր ձեռքներն եր ընկել, բռնել եյին բոլոր փողոցներն ու հրապարակները: Քաղաքը ռազմական ճամբար եր դարձել:

Փողոցի ծայրերում բարիկադներ եյին կառուցում: Այդ մասին լուր տարածվեց ամբողջ թաղում:

Մոնտարժի հորաքույրը հարևանուհիների հետ կանգնած եր իր տան շեմքին: Տոբին նոր միայն սթափվելով՝ մոտեցավ տատիկին: Նա կանգ առավ՝ ականջ դնելով կանանց խոսակցությանը:

Մոտներովն անցավ Բաստիլիայից վերադարձող բանվորների մի ջոկատ: Բլուզը հագին մի ջահել տղա ջոկատից բաժանվեց և վազեց դեպի Մոնտարժի հորաքրոջ մոտ կանգնած կինը:

— Ժա՛ն, — բացականչեց կինը:

— Յես եմ, մայրիկ: Վողջ և առողջ եմ... Մենք հաղթեցինք, — պատասխանեց տղան՝ համբուրելով մորը:

— Դու ել չե՞ս գնալու: Գնանք տուն... կլվացվես, կհանգստանաս...

Մայրը փարվեց վորդուն՝ դեպի տուն քաշելով նրան:

— Դեռ չի կարելի: Գիշերվա դեմ մենք հարձակվում ենք սպասում. քաղաքին են մոտենում արքայական գնդերը: Ցտեսություն, մայրիկ:

Յեվ յերիտասարդ բանվորը մորը քնքշորեն համբուրելով՝ վազեց իր ջոկատի յետևից:

Կինը լուռ լալիս եր. նրա այտերով խոշոր կաթիլներով արցունքներ եյին հոսում:

— Նանի, — համարյա շշուկով ասաց Տոբին՝ մոտենալով հորաքրոջը: — Բա՛ց թող գնամ ենտեղ...

— Վորտե՞ղ «ենտեղ»...

— Նրանց հետ ելի:

— Ե՛, խելքդ թռցրե՞լ ես, ինչ ե: Մա՛րշ սենյակը: Հենց դու եյիր պակաս...

— Յես չեմ կարող փակված նստել: Սենյակում սարսափելի յե...

— Իսկ գնդակներն ու ռումբերը սարսափելի չե՞ն:

— Միևնույնն ե: Յես ուզում եմ բոլորի հետ լինել:

— Ենտեղ մեծերն են. քեզ նման պստիկն ի՞նչ պիտի անի ենտեղ:

Մոնտարժի հորաքույրը Տոբիին վճռականորեն դարձրեց դեպի դուռը և ներս հրեց նրան:

— Ներս գնա, տակից գլխից ել մի՛ դուրս տուր: Մի ես հերոսի՜ն տեսեք: Ե՛նտեղ, մեծերի մոտ ե ուզում գնալ... — դիմեց նա հարևանուհուն:

Կանայք լուռ եյին: Տոբին սենյակը վերադարձավ: Մութ, խոնավ, թվում ե թե գերեզման ե: Նրա մարմնով դող անցավ:



«Թռչանոցով դուրս գամ... տատիկը չի տեսնի», — անցավ մտքովը:

Տոբին արագապես պտտեց այն փալասների կույտերը, վորոնց մեջ եր թագցրել տատը կաղնու տերևը: Նա այդ տերևը գտավ և ամրացրեց գլխարկին: Ապա զգուշությամբ դուրս պրծավ միջանցքով թռչանոց, այնտեղից բակը, փողոց և շտապ սկսեց վազել այն կողմը, ուր գնացել եյին բանվորների ջոկատները:

Բարիկադ եյին շինում այն յերկար փողոցի վերջում, վորից դաշտն եր սկսվում: Այդտեղ եր մաքսատան շենքը, ուր արքայական աստիճանավորները մաքս եյին առնում քաղաք մտնող և այնտեղից դուրս յեկող սայլակներից: Մաքսատներն ամենքին ատելի եյին: Բարիկադի համար նյութեր փնտռելիս ժողովուրդն ամենից առաջ հարձակվեց մաքսատան շենքի վրա:

Նիզակով զինված միքանի տասնյակ մարդ ու կին խորտակեցին շենքը. կտուրը պոկեցին, պատերը քանդեցին:

Տոբին դեռ հեռվից տեսավ փողոցի մեջը թափված՝ խճերի մեջ աղյուսներ, գերաններ, ձողուններ, տախտակներ:

Ամբոխի մեջ նա ճանաչեց իր հարևան բանվորների, արհեստավորների, մանր առևտրականների ծանոթ դեմքեր:

Նրանց մեջ վազվզում եյին և Տոբիի հասակակից յերեխաներ. նրանք կտրատում եյին ցանկապատները, ծանրոցներ եյին քարշում, աղաղակում, յերգում եյին:

Տոբին վճռականապես մոտեցավ շինվածքին:

— Յես ուզում եմ ձեզ ոգնել, — դիմեց նա այնտեղ կանգնածներին:

— Եդ դո՞ւ յես, Թռչնո՛րս, — ձայն տվավ մի յերիտասարդ փականագործ, վորը մի ահագին գերան եր քաշ տվել բարիկադի մոտ: — Ստեղ անցիր, ազատության համար կռվողների շարքում կանգնիր: Բայց տե՛ս, եստեղ ենպիսի թռչուններ են ոդում թռչում ու յերգում, վոր դու, Թռչնո՛րս, յերբեք չես տեսել:

— Յես չեմ վախում, — հպարտ պատասխանեց Տոբին:

— Կեցցե՛ս, Թռչնո՛րս: Գնա ե՛նտեղ... — և փականագործը ցույց տվավ դաշտը: — Ենտեղից ավազի քսակներ են բերում պատնեշի համար: Բահդ վերցրու գնա՛:

Տոբին վերցրեց քիչ հեռու ընկած բահերից մեկը և դաշտ վազեց:

Աշխատանքը յեռում եր: Գերանները, տախտակները, աղյուսները, սայլերը տնից տուն կտրում եյին ճանապարհը: Սայլակներով ավազի քսակներ եյին կրում: Բարիկադը մեծանում եր: Տոբին բահով աշխատում եր, քսակները բարձած սայլակներն եր բերում, թափում և հանգստյան րոպեներին գործի մարդու պես քրտինքը ճակատից սրբում: Իրիկնադեմին նա տուն յեկավ: Շենքում նրան հանդիպեց

տատը: Նա պատրաստվել եր իր Տոբիին զինավորելու դաժանորեն, նրան փակելու և այլևս արդեն իր մոտից բաց չթողնելու:

Բայց յերբ Տոբին յերևաց աշխուժացած, փայլփլող աչքերով, աշխատանքից և վազքից կարմրատակած, մի տեղից ճարած կոտրված ապարավոր նիզակն ուսին,—տատի առաջուց պատրաստած բոլոր ահեղ խոսքերն ոդը ցնդեցին, կորան:

Տոբին ռումբի պես թռավ տատի մոտ, գրկեց նրան և արագ-արագ վրա տվավ.

— Նանի, չբարկանաս: Մենք բարիկադ շինեցինք... այ, եսքան հա: Յես բոլորի հետ միասին աշխատում եյի: Զինվորները չեն համարձակվի մեր դեմ դուրս գալ: Մենք կհաղթենք, կտեսնես...

Տատը վոչինչ չպատասխանեց:

Մի կտոր հացի կեղև ճանկելով և տատին պատվիրելով, վոր չվրդովվի, Տոբին յետ վազեց դեպի բարիկադը:

Գիշերը, այն ժամանակ, յերբ տատը կողքից կողք եր դառնում անկողնում և տանջվելով ականջ եր դնում լռության մեջ՝ ամեն մի րոպե սպասելով, վոր հրես թնդանոթների վորոտը կլսվի,— Տոբին մրից սևացած՝ բոլոր ուժով ընկել եր փուքսի վրա, փչում եր քուրայի կրակը: Նա աշխատում եր դարբնոցում, ուր ամբողջ գիշերն առանց հանգստանալու մրից սևացած մարդիկ Տոբիի նման կռում եյին տեգեր և թափում եյին գնդակներ: Տոբին ամբողջ ժամանակ նրանց հետ եր, յերբ կործանում եյին Բաստիլյան, յերբ ժողովուրդը պատրաստվում եր յետ մղել արքայական զորքերի հարձակումը և քաղաքային խորհրդարանի վրա տնկում եր յեռագույն դրոշակ, վորը դարձավ հեղափոխական ժողովրդի դրոշը: Տոբին ժողովրդի հետ եր Թագավորին հանդիպելիս, յերբ մեռնելու չափ վախեցած Լյուդովիկոսը Վերսալից յեկավ Փարիզ և վորպես ժողովրդին հավատարիմ մնալու նշան՝ իր գլխարկին յեռագույն կոկարդ կպցրեց*):

Այդ բոլոր որերին Տոբին միայն յերբեմն եր տուն վազում, վորպեսզի միամտացնի տատին և մի քանի գդալ տաք-տաք արգանակ կուլ տա:

Հաղթությունից հետո նա տուն վերադարձավ:

---

*) Փարիզ գալով՝ Լյուդովիկոս 16-րդն արտահայտեց իր հպատակությունը ժողովրդի կամքին: Ազգային ժողովը պետական կառուցվածքի նոր ձև սահմանելու ձեռնարկեց: «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիով», այդ հանդիսավոր ակտով ժողովին արտահայտեց ժողովրդավարության և որենքի առաջ ամենքի իրավահավասարության գաղափարը: Օգոստոսի 4-ի գիշերը կայացավ այն պատմական նիստը, վորի մեջ վերացվեցին ճորտատիրական իրավունքը, ժառանգության դատարանը, ազնվականության և հոգևորականության գույքային և հարկային արտոնությունները:



Խոհանոցի դուռը բանալով՝ Տոբին տեսավ սեղանի առաջ նստած մի անծանոթ մարդ: Անծանոթը բարձրահասակ եր, թիկունքը լայն, բրդոտ բեխերով, բերանում ուներ ծխամորճ, իսկ հագին ֆրանսիական գվարդիայի զինվորի համազգեստ:

— Հա՛, սա յերևի հենց նա յե, թռչնորս և ազատության պաշտպանը,— վորոտաց գվարդիականը՝ նկատելով Տոբիին խոհանոցի դռներում:— Ապա մի յեկ եստեղ:

Տոբին տարակուսանքով նայեց տատին, վոր ոջախի մոտ եր: Հյուրն ըստ յերևույթին այնքան ել նրա սրտովը չեր. նա գրգռված դես ու դեն եր շարժում կճուճները, խառնում եր յեռացող կերակուրը, պնակներն իրար եր չխկացնում և ամբողջ ժամանակ մրթմրթում եր քթի տակ:

Այդ բանն անծանոթին այնքան ել չեր շփոթեցնում:

— Մի՛ վախիր, յես չեմ կծում,— քրքջաց նա՝ նկատելով Տոբիի հայացքը:

Տոբին մոտեցավ:

— Բաստիլի—անհնազանդ տղի մասին յերևի լսած կլինես, չե՞,— հարցրեց անծանոթը:

— Այո, տատիկը պատմել ե...— պատասխանեց Տոբին

— Դե հենց յե՛ս եմ եդ Բաստիլը: Իսկ դու Տոբի՛ն ես: Թաթդ տուր տեսնեմ, փոքրիկ:

Բաստիլի մոտ եր դրված նրա յեռանկյունի գլխարկը: Տոբին նրա վրա նկատեց յեռագույն կոկարդ:

— Դուք ե՞լ եք ժողովրդի հետ,— հարցրեց նա Բաստիլին:

— Բա ի՞նչ,— պատասխանեց նա — ֆրանսիական գվարդիան իրան չի խայտառակել, սատանան տանի*):

Բաստիլը խորհրդավոր ձևով մխացրեց ծխամորճը: Ապա նա Տոբին իր ահագին ձեռների մեջ հավաքեց և նստացրեց իր ծնկանը:

Նրանից ծխախոտի հոտ եր փչում, նրա բեխերը ցցված եյին, բարձր ձայնը խլացնում եր,— այս բոլորն անդուրեկան եր Տոբիի համար, բայց և այնպես նա վստահություն զգաց դեպ այդ խոշոր, աղմկարար մարդը, վորն այդպես անսպասելի կերպով հայտնվել եր:

— Նանին ելի ինչպե՞ս ե... մրթմրթո՞ւմ ե,— փսփսալով հարցրեց Բաստիլը:

Տոբին մռայլվեց. նա պատրաստ եր տատին պաշտպանելու: Բայց Բաստիլը թույլ չտվավ նրան խոսել:

— Յես ել եմ նրան սիրում,— բարկացկոտ ե, բայց բարի յե: Ինձ չի սիրում, հա՞,— մեղմ հարցրեց նա Տոբիին:

---

*) Ժողովրդի կողմն անցած ֆրանսիական գվարդիայի միջամտությունն զգալի չափով ոժանդակեց ապստամբության հաջող յելքին:

— Նա շատ բարի յե,— տաք-տաք ասաց Տոբին:
— Նանի՜ն:
Բայց այստեղ խոսքի մեջ խառնվեց ինքը հորաքույր Մոնտարժին:
— Կերե՛ք, յերեխե՛րք,— ասաց նա նրանց:— Քաղցած կլինեք...
Արգանակի գոլորշի արձակող կճուճը սեղանի յեր դրված:
Ճաշի ժամանակ նորից խոսք բացվեց վերջին օրերի անցքերի մասին: Մոնտարժի հորաքույրն անբավականությամբ եր լսում:
— Ե՛հ, դուք ե՛լ... Ձեներդ կտրեցե՛ք... Չեմ ուզում լսել եդ մարդասպանությունների մասին,— ընդհատում եր նա կամ Տոբիին կամ Բատիստին:
Տոբին աղերսաբար նայում եր տատին:
Բատիստը շարունակում եր պատմել.
— Ուզում եյին ֆրանսիական գվարդիան ժողովրդի դեմ զինել: Զինվորներին կանգնեցրին: Հրամայել եյին մարտական փամփուշտներ վերցնել: Վո՜նց չե — մենք հրաժարվեցինք: Յերեք հոգու բանտարկեցին, իսկ ամբողջ գունդը վերադարձրին զորանոցները: Զորանոցները շրջապատեց գերմանական արքայական գունդը, 14-ին զանգահարություն ենք լսում: Ժողովուրդը մռնչում ե: Աղմուկ—«դեպի Բաստիլի՜ա»: Մերոնք գոռում եյին. «Տղե՛րք, առա՛ջ»: Հրացանները վերցնում ենք հրացանակալներից, լիքը փամփուշտներն ածում քսակներս ու հա՜յդե զորանոցից: Գերմանական արքայական գունդն սկսում ե հրաձգություն, մենք ել իրանց հասցնում ենք սվիններով: Դուրս ենք գալիս Բաստիլիայի մոտ: Թեժ եր եղել. Թնդանոթները գոռում են, բերդի ծակերից շվեցարիացիները կրակում եյին առանց վրիպելու: Չորս կողմն արյուն ե: Մեր թնդանոթաձիգները թնդանոթները բերին: Սկսեցինք Բաստիլիան ռմբակոծել: Դելոնեն սպիտակ դրոշակ բարձրացրեց: Կամուրջն իջեցրին — ժողովուրդը թափվեց բերդը: Ժողովրդին թանգ նստեց Բաստիլիան,— վերջացրեց Բատիստն իր պատմությունը:
Բատիստի յերևալը հորաքույր Մոնտարժեյի խաղաղ տան ամբողջ կյանքը հեղաշրջեց: Ֆրանսիական գվարդիան ցրիվ տրվեց. Բատիստն սպասում եր, վոր իրան նոր կազմվող գնդերից մեկը կուղարկեն: Իսկ առայժմ նա ապրում եր հորաքրոջ տանը և վորպես իսկական զինվոր՝ կուշտ ուտում եր, խմում եր զուտ գինի և ծխամորճը բերանից չեր հանում: Հյուրասիրության փոխարեն նա հոգում եր և՛ հորաքրոջ և Տոբիի մասին:
Առավոտները Բատիստը գործով դուրս եր գալիս, հոգում եր նշանակում ստանալու մասին: Նա հաճախում եր և՛ քաղաքական ժողովները, ականջ եր դնում խոսակցություններին և վեճերին:



Ճաշից հետո նա կպցնում եր ծխամորճը, բանում քաղաքից հետը բերած թերթը և սկսում կարդալ: Ժամանակ առ ժամանակ ծխի քուլաների միջից լսվում եյին նրա ձայնի թնդյունները.
— Ճի՛շտ ե, ճի՛շտ ե: Մենք վերջ կտանք եդ պալատական պնակալեզներին, ազնվականներին ու տերտերներին: Բաստիլիայի մոտ արյունը զո՛ւր չի թափվել:
Տոբին շուտով մտերմացավ Բատիստի հետ: Նրա ճառերում Տոբին նկատում եր նույն հուզիչ խոսքերն, ինչ վոր փողոցում. ազատություն, հավասարություն, մարդու և քաղաքացու իրավունքներ... Բայց փողոցում Տոբիին վարակում եր ընդհանուր վոգևորությունը. իսկ այստեղ, Բատիստի հետ խոսելիս, նա նաև գիտակցում եր այդ խորհրդավոր բառերի բուն իմաստը:
Նոր մտքերը, նոր դեպքերն անդրադարձան նաև այն ներկայացումների վրա, վոր Տոբին նորից սկսեց տալ Փարիզի փողոցներում իր արտիստների հետ:
Մոնշալեյը մի քանի օրում սովորեց շարել այն խայտաբղետ կարտոնները, վորոնք կազմում եյին հետևյալ նոր բառերը. «Կեցցե՛ ժողովուրդը», «Արիստոկրատներին կախե՛լ լապտերներից»: Իսկ Տոբին հովվականի փոխարեն յերգում եր այս հայրենասիրական յերգը.

Ո՛վ մեր գվարդիա դու պողպատակուռ,
Դու խորտակում ես բիրտ բռնությունը.
Ապստամբվելով՝ ազգըն ընդհանուր
Քեզնում ե գտել պաշտպանությունը:

Յերբ հայրենիքի սիրով մենք վառված,
Մահից անյերկյուղ մարտի դուրս յեկանք,—
Բռնակալության ամրոցի դիմաց
Առաջնորդեցիր դու մեզ անվտանգ:

Դո՛ւ Բաստիլիա, անձնատուր յեղիր,
Մեզ ատելի յե բանտից տեսքը չար.
Չես հպատակվի,—մենք մեր թափով ժիր
Քեզ կդարձնենք գետնին հավասար:

Առաջին անգամ մենք քեզ կհաղթենք,
Ահեղ կլինի մեր զարկն անվեհեր,
Քեզ չեն փրկել վոչ դարավոր այդ նենգ
Պատերըդ, վոչ ութ քո աշտարակներ:

Դրանից հետո Տոբին օրեցօր փողոց եր դուրս բերում միշտ նորանոր յերգեր: Նրա հնչեղ, ուրախ ձայնի և թմբկահարության վրա հավաքվում եյին տասնյակ ունկնդիրներ:
Այդպիսով ամբողջ Փարիզը ճանաչեց Տոբիին:

ԳԼՈՒԽ VI.

# ՀԱՅՐԵՆԻՔԸ ՎՏԱՆԳԻ ՄԵՋ Է

Բատիստը նորից յերկար ժամանակով չքացավ: Ֆրանսիական գվարդիայի զինվորներից կազմված կամավորական գնդի հետ նա գնաց Փարիզից: Յերբեմն նրանից կարճ նամակներ եյին ստացվում Ֆրանսիայի հեռավոր քաղաքներից, վերջին անգամ հյուսիսային սահմանից, ռազմաճակատից:

Տորիի համար նշանակալից՝ Եյլբայի հետ կռվելու հետևյալ օրը տատն ու Տորին սեղան եյին նստում, յերբ հանկարծ խանութում լսվեց մի ծանոթ ձայն.

— Բարև, հորաքույր Շառլոտա: Բարև՛, Տորի: Լավ ժամանակ եմ յեկել: Թարմված գետնախնձորի հոտ... Մի աման էլ ինձ համար դիր, հորաքույր:

— Ո՛, Բատի՛ստ... — փնթփնթաց Մոնտարժի հորաքույրը:

Բատիստը յերևաց խոհանոցի դռանը: Տորին վազեց դեպի նա և նրա վզին փաթաթվեց:

— Բատի՛ստ: Դու ուսադիրներ ունես... Դու վաշտապե՞տ ես:

— Վաշտապետ եմ, — պատասխանեց Բատիստը: Ուսադիրները յես ձեռք եմ բերել ծառայությամբ, սատանան տանի:

— Չէ՛ մի չէ՛... — թերահավատությամբ ձայնը յերկարացրեց Մոնտարժի հորաքույրը:

Բատիստը ծիծաղեց:

— Ելի ինչպես չեք սիրում ինձ հա՞, հորաքույր Շառլոտա:

— Սիրում եմ, սիրո՜ւմ... Մի տես ինչ է դարձե՜լ... Ե՛, նստիր ճաշիր... Բայց ինչո՞ւ յես յեկել Փարիզ:

— Գեներալն է ուղարկել: Հատուկ հանձնարարություն կա: Գումարտակներից հարյուր հիսուն հոգի յեն վերցրել նորակոչիկներին սովորեցնելու և հետախուզների կազմ պատրաստելու համար: Գեներալը հրամայել է դրա փոխարեն ընտրել 150 առողջ, արագաշարժ և հավատարիմ մարդիկ կազմը լրացնելու համար: Ինձ է հանձնարարված եդ ընտրությունը:

Բատիստի հագին կար մուգ ձիթենիագույն բաճկոն, նույն գույնի կիպ նստած անդրավարտիք, արծաթե կոճակներով ճերմակ ժիլետ և ուսադիրներ: Առաջվա յեռանկյունու փոխարեն գլխին դրած եր փոքրիկ գլխարկ վառերով և ազգային կոկարդով:

Նա ուտում եր առաջվա ախորժակով, բայց հիմա քիչ եր խմում:

Ճաշից հետո, յերբ Պեպինն առաջվա նման նստել ել լրագրերը ձեռքին և բարձրացրել ծխի քուլաներ, Մոնտարժի հորաքույրը մոտեցավ նրան:



— Լսի՛ր, Բատի՛ստ, — ասաց նա, — խոստացի՛ր, վոր յերեխի գլուխը չես լցնի պատերազմի մասին մտքեր: Նա իմ մինուճարն է. իմ վողջ յերջանկությունը նա յե: Յեթե նա ինձ թողնի...

— Եվ վո՛չ մի խոսք, — ընդհատեց նրան Բատիստը: — Զինվորի խոսք եմ տալիս, հորաքույր Շառլոտա: Յես ձեզ շատ վիշտ եմ պատճառել... Հիմի բավակա՛ն է: Յեթե Տորին ուզե ռազմաճակատ գնալ — կընդդիմանամ: Թո՛ղ նա ձեր ծերության նեցուկը լինի, կարող եք նրա վրա հույս դնել: Վոսկի սիրտ ունի.

— Ո՛, — բացականչեց Մոնտարժի հորաքույրը՝ սրբելով աչքերում յերևացող արցունքները, — քո սիրտն ել է վոսկի: Համբուրի՛ր ինձ, Բատի՛ստ:

Կապիտանը հավատարիմ եր Մոնտարժի հորաքրոջը տված խոսքին: Յերեկոյան, քնելուց առաջ, Տորին սկսեց կապիտանին հարցուփորձ անել ռազմական կյանքի մասին:

— Հա՛, — խոսակցության ժամանակ ասաց կապիտանը, — Ծա՛նր է զինվորական կյանքը: Ամեն մարդու բան չի: Մեզ մոտ մի թմբկահար տղա կար Ելի Լորան — լավ տղա յեր. չդիմացավ, յերկու շաբաթվա մեջ անկողին ընկավ: Բայց վո՛նց եր ուզում ֆրոնտ գնալ: Վախում եմ՝ ել վեր չկենա: Պետք է նրա տեղակ ուրիշին նշանակել:

— Բատի՛ստ, — վախվխելով սկսեց Տորին, — բայց յես չե՞յի կարող նրա տեղը բռնել: Դա ինձ համար ինչպիսի՜ յերջանկություն կլիներ — քո գումարտակի առաջը թմբուկ զարկել:

— Իսկի յել գլխովդ եդպիսի միտք անց չկացնես, — ընդհատեց նրան կապիտանը: — Իսկ հորաքույրը: Ո՞ւմ մոտ պիտի թողնենք նրան: Նա դարդից կմեռնի: Յես ենտեղ,, դու եստեղ:

— Այո՛, այո՛, — շշնջաց Տորին: — Յես արդեն մտածել եմ: — Դու իրավացի յես:

Տխուր մտքերը յերկար ժամանակ Տորիին չեյին թողնում քնելու:

Բայց չնայած վոր գիշերն անքուն եր անցկացրել, Տորին առավոտը ժամը վեցին արդեն վոտի վրա յեր: Մոնշալեյը դուռը ճանկռտում եր: Ռամպոնեոն կչկչում եր լուսամուտի մոտ. Բակից լսվում եյին թռչունների յերգեցողություն և հավերի կրկչոց: Գոմում Ժարիկո եշը զռռում եր.

Տորին բացավ լուսամուտը և դուրս նայեց դեպի բակը:

— Վոչ մի ամպ չկա, — ուրախ ասաց նա, հրաշալի օր կլինի: Բարի լույս, նանի՛: Դու արդեն բանի՞ յես:

Արագ հագնելով՝ Տորին վազեց բակը պառավին օգնելու — բակն ավլելու, եշին մաքրելու, հավերին ու թռչուններին կեր ածելու:

Կապիտան Պեպինը նույնպես վեր կացավ: Վորպես հին զինվոր, նա սկսեց պահանջկոտ ճշտապահությամբ հագնվել:

Հեռավոր թնդանոթաձգությունն ստիպեց բոլորին ցնցվելու։

— Լսո՞ւմ ես, Բատիստ, — բակից գոչեց Տոբին։ Առաջին թնդանոթային հարվածն է։ Նոր կամուրջից։ Ահա և պատասխանը։ Դա զինանոցից է։ Բայց մենք դեռ կարող ենք նախաճաշել, եթե կհասնենք։ Թափորը Գրեվյան հրապարակից դուրս կգա ժամը ութին միայն։ Մենք միասին կգնանք, չէ՞։

— Այո, մինչև Նոր կամուրջը։ Նոր կամուրջի վրա պետք է հանդիպենք գնդապետին. մենք կմիանանք զորաբանակի պատգամավորությանը։

Մոնմարտի հորաքույրը մոտեցավ լուսամուտին, վորպեսզի նորից հիշեցնի Բատիստին իր տված խոստումը։

— Բոլորը հիշում եմ, հորաքույր, — պատասխանեց կապիտանը։ — Տոբիի հետ խոսել եմ. նա հասկանում է և կգնա։

Ժամը յոթ և կեսին կապիտանն ու Տոբին Նոր կամուրջի մոտ էին։ Չնայած վոր դեռ վաղ էր, բայց և այնպես ամբողջ գետափը լցված էր ժողովրդական մասսաներով։

Հուլիսի 22-ին մարդկային հեղեղներ թափվեցին հսկայական քաղաքի յերակներով։ Համաչափ ընթացքով նրանք անցնում էին հրապարակները, ուր կազմում էին գլուխների ալեկոծվող ծով։ Ամբոխը զուսպ էր և արտաքուստ հանգիստ։ Նա չշտապելով փողոցներով առաջ էր անցնում համաչափ հոսուն զանգվածով, ինչպես հալված մետաղը և հոսում շառավղներով։

Նոտր-Դամի*) աշտարակների վրա ծածանեց սև դրոշակ։ Մի ահագին յեռագույն դրոշ էր կախված քաղաքային խորհրդարանի աշտարակի ծայրից դեպի գլխավոր մուտքի դռները. ամբողջ յեռագույն տարածության վրա մակագրված էր.

«Քաղաքացինե՛ր, հայրենիքը վտանգի մեջ է»։

Քաղաքային խորհրդարանի աշտարակի ժամացույցն ութը խփեց։ Նոր կամուրջի վրա լսվեց թնդանոթային համազարկ. Թափորն առաջ շարժվեց։

Տոբին գնում էր կապիտան Պեպինի հետ. սովորականի պես նա վերցրել էր թմբուկը, իսկ կողքից վազում էր Մոնշալեյը։

Մորտիլյերի փողոցի անկյունում կապիտանը տեսավ իր գնդապետին ուրիշ սպաների հետ։ Կապիտանը գնաց դեպի նա, վորպեսզի այդ օրվա համար հրամաններ ստանա։

Տոբին հեռու սպասում էր։ Գնդապետի հետ խոսելով՝ կապիտանը կանչեց Տոբիին.

— Ցտեսություն մինչև յերեկո, Տոբի։ Ժամը ութին տանը կլինեմ։

*) Նոտր-Դամը հին մայր-յեկեղեցի յե Փարիզում։



Յեվ նա ուղևորվեց մյուս սպաների մոտ զորաբանակի պատգամավորությանը միանալու համար։

Տոբին առաջ շարժվեց։

Գրեվյան հրապարակում, գետափերին և քաղաքային խորհրդարանի մոտ թափոր էր կազմակերպվում։ Ազգային գվարդիայի վեց գումարտակ խառնում և իրանց տեղն էին բռնում։

Թափորը յերկու մասի բաժանվեց. յուրաքանչյուրի գլուխն էր կանգնած հեծելազորի մի ջոկատ, յերաժշտախումբ, հետո գալիս էր հրետանին (թնդանոթաձիգ զորքը) — վեց թնդանոթ, վորոնք զարդարված էին ազգային գույներ ունեցող ժապավեններով, դրանց հետևից գնում էին ձիավորներ պլակատներով, վորոնց վրա գրված էր. «Ազատություն, հավասարություն, սահմանադրություն, հայրենիք»։ Ապա ձիերի վրա գնում էին քաղաքային վարչության սպաները յեռագույն շարքերով զարդարված, և մեկը ձեռքում յերկար նիզակ բռնած, վորից կախ էին ընկած ժապավեններ։ Ծածանվող ժապավենների վրա ժողովուրդը կարդում էր նույն բառերը, ինչ վոր քաղաքային խորհրդի դրոշի վրա. «Քաղաքացինե՛ր, հայրենիքը վտանգի մեջ է»։ Քաղաքային վարչության աստիճանավորներից հետո գալիս էր թնդանոթաձիգների յերկրորդ ջոկատը վեց թնդանոթներով. ազգային գվարդիականների շարքերը և հեծելազորը փակում էր թափորը։

Թափորը, վոր պետք է անցներ քաղաքի հարավային թաղերը, ձգվեց Լեպելետյեյի և Իվլի ափերով։

Քաղաքային վարչության սպան նշան տվավ, և թափորն առաջ շարժվեց։

Սենայի հովիտն առավոտվանից պատող թեթև ամպը ցրվեց։ Արևը ջերմ լուսավորում էր՝ ճառագայթները թափելով գետը և գետափը։ Խոսակցությունները լռեցին։

Ամբոխի աղմուկի փոխարեն ամբողջ քաղաքում տարածվեց վողջունող մարտկոցների թնդյունը, թնդանոթների վորոտը փողոցներում, թմբուկի զարկը, սմբակների թրխկոցը և տասնյակ հազար վոտների համաչափ դոփյունը։

Տոբին անցավ առաջ ազգային գվարդիայի թմբկահարների մոտ։ Նա խառնվեց նրանց շարքի մեջ՝ նրանց հետ միասին քայլաչափ թմբուկ խփելով։

Հին տների լուսամուտներից կանայք և յերեխաները ճանապարհ էին դնում թափորը, «Կեցցե՛ ազգը» աղաղակով։ Ձիաների դոփյունից և թնդանոթների ծանրությունից գետինը դողում էր։

Թափորը հասավ Տուռնելլ հրապարակը։ Դրա հետ միաժամանակ մյուս փողոցից հրապարակում յերևաց մի դրոշ, վորի մակագրությունն էր — «Խաղաղություն ժողովրդներին — պատերազմ բռնակալներին»։

Դա մարսելցիների ջոկատն էր*)։ Ամբոխը յետ քաշվեց՝ ճանապարհ տալով նրան։ Դրոշը դուրս յեկավ հրապարակը և կանգ առավ Թափորի դիմաց։

Քաղաքային վարչության մի սպա դուրս յեկավ շարքերից։ Նա մոտեցավ այն տեղին, ուր մի ժամանակ կանգնած էր 1791 թվականին ավերված բերդ — բանտը, և յերեսը դարձնելով դեպի Թափորը՝ բարձրացրեց իր նիզակը։

Ընդհանուր լռության մեջ հնչեց թմբուկի չոր դռոցը։ Մի յերկրորդ քաղաքային վարչության սպա դուրս յեկավ շարքերից և մոտեցավ առաջինին։ Նորից մի նիզակ բարձրացավ օդում։ Թմբուկները լռեցին։

Քաղաքային վարչության սպան կարդաց.

— «Ազգային ժողովը սահմանում է օրենսդիր մարմնի հետևյալ ակտը.

«Բազմաթիվ զորքեր են մոտենում մեր սահմաններին. բոլոր նրանք, վորոնց սարսափ է պատճառում ազատությունը, զինվում են մեր սահմանադրության դեմ։

«Քաղաքացիներ, հայրենիքը վտանգի մեջ է։

«Նրանք, վորոնք պատիվ կունենան վորպես առաջիններ դուրս գալու իրանց համար ամենաթանկագինը պաշտպանելու համար, թող միշտ հիշեն, վոր ֆրանսիացիներ են և ազատ են.

«Վոր իրենց համաքաղաքացիները հայրենիքում պահպանում են իրանց մերձավորների և նրանց գույքի անվտանգությունը.

«Վոր ժողովրդից ընտրված ներկայացուցիչներն արթուն հըսկում են.

«Վոր բոլորը սառնասիրտ կորովով, վոր հատուկ է իսկական ուժին, սպասում են օրենքի սահմանած ազդանշանին։

«Յեվ հայրենիքը կփրկվի»։

Ամբոխն ալեկոծվեց։

— Կեցցե՛ ազատությունը:

Այն կողմից, ուր դրոշակի տակ կանգնած էյին մարսելցիները, լըսվեց հետևյալ յերգը.

*) Մարսելցիները Հարավային Ֆրանսիայի Մարսել քաղաքի ֆեդերատներ (դաշնակիցներ) էյին։ Վորպես պալատի կողմից պետական հեղաշրջում առաջ բերելու պատրաստության պատասխան՝ Ազգային ժողովը 1792 թ. ամառը վորոշեց սահմանադրության պաշտպանության համար դաշնակից գավառներից 20.000 հայրենասերներից բաղկացած բանակ ժողվել Փարիզի տակ։ Չնայած վոր այդ դեկրետի դեմ թագավորն իր «Վետո»-ն էր հայտարարել, այնուամենայնիվ գավառն արձագանքեց այդ կոչին, և ամեն կողմից սկսեցին դեպի Փարիզ դիմել ֆեդերատները։ Հետագա անցքերի մեջ նրանք աչքի ընկնող դեր խաղացին։



Հառա՜ջ, վորդիք հայրենիքի,
Հասավ արդեն օրը փառքի,
Բարձրացրել է մեր դեմ խըրոխտ,
Բռնակալի դրոշն արյունոտ,
Լսու՞մ եք մեր դաշտում վայրի
Մռընչյունը զինվորների.
Գալիս են նրանք խեղդելու մեր
Զավակներ ու մեր ընկերներ։
Ի զե՛ն, քաղաքացի՛ք, կազմեցե՛ք ձեր վաշտեր,
Հառա՜ջ, հառա՜ջ, կեղտոտ արյամբ վողողենք մեր դաշտեր*)։

Այժմ յերգում էր ամբողջ հրապարակը։ Թվում էր, թե վոչ միայն մարդիկ, այլ և տները, փողոցները — ամբողջ քաղաքն էր յերգում արյան և յերկաթի այս յերգը։

Թափորն առաջ շարժվեց։ Նորից ծանր-ծանր վորոտացին թնդանոթները, թնդացին թմբուկները, զողանջեցին շեփորները։

ԳԼՈՒԽ XII.

## ՍԵՆ-ԺԱԿ ԹԱՂԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՄԱՎՈՐԸ

Յերբ Թափորը ցրվեց, Տոբին անցավ քաղաքում թափառելու, վորպեսզի տեսնի, թե ինչպես էր կատարվում կամավորների ցուցակագրումը։

Կամավորները ցուցակագրելու համար հրապարակում շինված ամբիոնների մոտ էր շտապում յերիտասարդությունն ամեն կողմից։ Քաղաքային վարչության սպաները և աստիճանավորները դեռ չնստած և ցուցակագրելու համար հաստ գրքերը բաց չարած՝ ամբիոնը շրջապատվեց անհամբեր ամբոխով։ Ամեն մեկը ձգտում էր առաջ անցնել, վորպեսզի առաջիններից լինի։ Ազգային գվարդիան հազիվ իր զսպում ամբոխին՝ կարգ պահպանելով։

— Բոլորիդ մի անգամից չի կարելի։ Քաղաքացիներ, հերթ պահպանեցեք։ Հո չե՞նք կարող ամբողջ Փարիզը մի րոպեյում ցուցակագրել, — ամբիոնից գոչում էյին աստիճանավորները, բայց նրանց խրատական ձայները չէյին կարող զսպել ամբոխին։

*) Այս յերգը — «Մարսելյեզը» հորինեց 1792 թ. Ստրասբուրգում հայրենասեր սպա Ռուժե դը-Լիլ, յերբ տեղեկություն ստացվեց, վոր Ավստրիային պատերազմ է հայտարարված։ Սկզբում դա կոչվում էր «Ռազմի յերգ»։ Ամբողջ Ֆրանսիայում տարածվելով՝ դա Փարիզ փոխադրվեց մարսելցի ֆեդերատների միջոցով և այնուհետև կոչվեց «Մարսելյեզ»՝ դառնալով XIX դարի բոլոր հեղափոխությունների ամենաժողովրդական յերգը։

Տոբին չէր մոռացել իր կասկածները և Բատիստի հետ խոսելուց հետո արած վորոշումը։ Բայց ելի, յերբ նա տեսավ ամբիոնները պաշարող յերիտասարդ ամբոխը, յերբ լսեց վոգևորության աղաղակները, նա տխրեց և ծանր թվաց նրան. նա չէր կարողանում ազատվել այն տհաճ զգացողությունից, վոր կարծես թե նրա վրա յեն դարձած բոլոր հայացքները և կարծես թե ամբոխի միջից յուրաքանչյուրը նրան հարցնում է. «Կատարե՞լ ես արդյոք քո քաղաքացիական և հայրենասիրական պարտքը»։

Տոբին վերջին տարիներում առաջին անգամ իրան զգաց մենակ, ամենքից խորթացած, ամենքի համար անպետք։ Իսկ յերբ նա մոտեցավ Մոբեր հրապարակին և ամբիոնի մոտ տեսավ ծանոթ դեմքեր, այդ զգացումն անտանելի դարձավ։

«Ա՜խ, յեթե կարողանայի յես էլ ցուցակագրվե՜լ», մտածեց Տոբին։ Բայց այդ մասին մտածելն էլ ավելորդ եր։ Բատիստն ասաց. «Դու էստեղ, յես էնտեղ»։ Տոբին պարտավոր եր յենթարկվել, բայց վորքան դժվար եր դա։

Մի անորոշ ձգտումի յենթարկվելով՝ Տոբին մոտեցավ ամբիոնին։ Ամբիոն ամեն կողմից պատած եր յեռագույն կտորով և խայտաբղետ վրանի տեսք ուներ. առջևից զարդարում եյին դրոշակները, ծաղկաշղթաները և կաղնու տերևների պսակները, իսկ անկյունների չորս կողմերից կախ եյին տրված յերկար ժապավեններ։ Ամբիոնի մեջտեղը, թմբուկների վրա դրված յերկար սեղան-տախտակի առաջ, վորի վրա դրված եյին ցուցակագրելու գրքերը, նստած եյին քաղաքային վարչության սպաները և աստիճանավորները։

Կամավորներին վրանի մոտ եյին թողնում խումբ-խումբ տասներկու — տասնուհինգ հոգով։ Նրանք բարձրանում եյին ժապավեններով և ծաղիկներով զարդարված սանդուխքով, ազգային գվարդիականները հրացանները «պատիվ» եյին բռնում. ապա նրանք շարքով կանգնում եյին ամբիոնի ծայրում։ Սեղանի մոտ յուրաքանչյուրն ասում եր իր անունը, և ընդունվածները կամավորի տոմս եյին ստանում։ Ամբոխը նրանց յուրաքանչյուրին դիմավորում եր վողջույնի աղաղակներով։ Բարյերի (դերան—արգելակի) հետևն սպասող հայրերը, մայրերը, կանայք խրախուսում եյին նրանց աղաղակներով և ձեռքի շարժումներով։

Սեղանին եյին մոտենում նույնիսկ ալեհեր ծերունիներ։ Լսելով աստիճանավորների «դուք ձեր հասակն անց եք կացրել»՝ խոսքերը, նրանք բողոքում և վրդովվում եյին։ Նրանցից վոմանք գոչում եյին.

— Մենք դեռ պի՜նդ ենք։ Մենք զրկանքներից չենք վախում։

Իսկ յերբ վոչ մի բան չէր օգնում, նրանք առաջարկում եյին սովորեցնել յերիտասարդությանը։





Տասնուհինգ տարեկան պատանիները վոտների ծայրերի վրա էյին բարձրանում, վոր ավելի բարձրահասակ յերևան և մերժում չլսեն: Յերբ նրանց աջողվում էր կամավորի տոմս ստանալ, նրանք ուրախ-ուրախ ցած էյին վազում ամբիոնից՝ իրանց սպասող հարազատներին գոչելով.

— Պատրաստ է, գրվեցի՜: Կեցցե՛ ազատությունը:

— Ի՜նչքան մարդ է ցուցակագրվում...— լսեց Տոբին մոտը գտնվող մի մռայլ մարդու ձայնը: Յեթե ցուցակագրումն այսպես մի որ էլ շարունակվի, Փարիզում էլ մարդ չի մնա՝ բացի արիստոկրատներից:

— Փարիզի համար էլ կբավականացնի,— խոսողին պատասխանեց նրա ուղեկիցը: — Ո՜հ, այ կուտեն հա՜ էդ արիստոկրատները, յերբ ժողովուրդն ամեն կողմից նրանց վրա կգնա: Թող մի տղերքը զենք ստանան, մենք կիմանանք, թե ինչ կանենք:

Տոբին ականջ էր դնում խոսակցությանը: Բայց այդ ժամանակ նա լսեց Բլանշար հորաքրոջ ձայնը, վոր հեռվից կանչում էր.

— Տոբի, բարև՜: Դու է՞լ ես յեկել ցուցակագրվելու:

Տոբիի դեմքը կարմրատակեց: Չիմանալով թե ինչ պատասխանի, նա մտավ ամբոխի մեջ: Բլանշար հորաքույրը նկատեց Տոբիի շփոթությունն ու փախուստը և կատարյալ տարակուսանքով նայեց նրա հետևից:

Տոբին մի անգամ էլ մտիկ տվավ սեղանի առաջ շարքով կանգնած յերիտասարդությանը և մտածեց: «Մինչև անգամ ազգանուն էլ չունեմ, վոր ասեմ: Վոչ ծնողներ ունեմ, վոչ ծննդավայր — յես ամենքի համար խորթ եմ»:

— Ինձ հո չե՞ս փնտրում.— հանկարծ լսեց Տոբին կանացի մի ուրախ ձայն: Նրա առաջ կանգնած էր տասնուվեց տարեկան մի աղջիկ, վորին նա հաճախ էր պատահում այդտեղ շուկայում: — Արի: Յես քեզ համար ժապավեններ եմ պատրաստել: Դու ինչպես սիրուն կլինես թմբուկով գնդի առաջ քայլելիս:

Աղջիկը բռնեց նրա ձեռից:

— Յես քեզ հետ եմ,— ասաց նա: — Յես ուզում եմ առաջինը համբուրել քեզ, յերբ դու կիջնես ամբիոնից:

— Թո՛ղ ինձ,— գոչեց Տոբին: Նա թափահարելով ձեռն ազատեց և գլխապատառ սկսեց վազել՝ հրհրելով ամբոխին:

Տոբին ուղեվորվեց դեպի Սեն-ժակ արվարձանը: Նա փողոցով արագ էր գնում՝ առանց դես-դեն մտիկ տալու:

Դեպի Ցոսսե փողոցը ծռվելով՝ նա լսեց մարսելյեզի հնչյունները: Բայց խոսքերն անծանոթ էյին: Տոբին ականջ դրավ: Մանկական ձայներ յերգում էյին.



Կյանք ենք մտնում, յերբ ննջեցին
Մարտում ընկած հայրերը մեր.
Մեռածները կտակեցին
Մեզ կռվի որինակներ:

Դա մարսելյեզի նոր քառյակ էր՝ յերեխաների համար գրված: Տոբին այդ դեռ չգիտեր և դրանից կատարելապես հուսահատվեց: Չէ՞ վոր նա այնպե՜ս հպարտանում էր նրանով, վոր ամեն մի նոր յերգը ինքն է առաջինը փողոց բերում: Իսկ այդտեղ նա խայտառակված էր:

Մի քանի րոպեյից հետո Տոբին հասավ մանկական մարսելյեզ յերգողներին: Հիսուն հոգու չափ մանկական մի ջոկատ ուղեկցում էր վեց ջահել տղաների, վորոնց ձեռներին նիզակներ կային. Նրանցից հնգի գլխարկները զարդարված էյին կամավորների տոմսակներով: Վեցերորդը, մի բարձրահասակ գունատ յերիտասարդ, նույնպես նիզակ ուներ ձեռին: Նա ոդն էր գցում նիզակը՝ թռչելիս բռնելով, պտտում և կոկորդը պատռելով գոռում.

— Նրանք ասացին, վոր յես չեմ կարող ինը վոտնաչափանոց նիզակ բանացնել: Դատարկ բան է. յես խաղացնում եմ նիզակը:

Տոբին կանգ առավ՝ հայացքով ուղեկցելով ուրախ թափորը:

— Զգուշացե՜ք: Զգուշացե՜ք,— հանկարծ լսեց նա համարյա ականջի տակ մի վորոտալի ձայն:

Տոբին մի կողմ քաշվեց: Նրա աչքովն ընկավ անկյունից անակընկալ կերպով դուրս պրծած մի պալատական վոսկեզօծված կառք: Ամենայն արագությամբ սլանում էր կառքը փողոցով: Ուժեղ աղնվացեղ ձիերը վազում էյին, անիվները դղրդում, կառապանը նստարանից բոռում էր. «զգուշացե՛ք»: Ինչ — վոր դժգոհվածների մի խմբի առաջ նա չուզեց կանգնեցնել մեջը «մեծ մարդ» նստած կառքը և քիչ մնաց կամավորներին ուղեկցող մանուկների խմբի մեջն ընկներ:

Բայց նիզակավոր յերիտասարդները ժամանակին կարողացան բռնել և կանգնեցնել փռացնող և անհանգիստ ձիերին:

Մի ակնթարթում ամբոխը շրջապատեց կառքը: Կառապանն սպառնաց մարդկանց բարձրացրած մտրակով, սպասավորները կառքի հետևի և առաջին մասերից գոռում էյին կոկորդները պատռելով.

— Ճանապա՛րհ տվեք նորին պայծառափայլության կառքին:

Ինքը պայծառափայլությունը — մետաքսե, վոսկեկար կուրտիկը հագին մի ջահել մարդ — ճչում էր կառքից.

— Ժա՛ն: Ելյե՛ն: Ցրի՛վ տվեք այս լրբերին: Շո՜ւտ, պալմա՛: Ինձ սպասում է նորին մեծությունը:

Վոչ կառքից լսվող ճիչերը, վոչ սպասավորների գոռոցները չէյին օգնում. ամբոխը կառքից դուրս քաշեց նորին պայծառափայլությանը:

Հազիվ թե նա ազատվեր ամենախիստ պատժից, յեթե ամբոխի մոտ վազող Տոբին չգոչեր.

— Կացե՛ք, տղե՛րք։ Առաջ նորին պայծառափայլության մի պտույտ տանք։ Քա՛շ տուր ես տիկնիկին կառքի հետևի մասը։

Ամբոխին դուր յեկավ այդ առաջարկը։ Փայլուն մետաքսե կուտ-տիկը յերևաց բռունցքների մեջ, ապա նրան բարձրացրին, և նա թպր-տաց ամբոխից վեր։ Յերիտասարդ պալատականին քաշեցին կառքի մոտ, դրին հետևի մասում և ամուր կապեցին, վորպեսզի չփախչի։ Կառքը թափվեցին յերեխաները, սկսեցին վեր-վեր թռչել փափուկ բարձերի վրա, իսկ արդեն ընկճված կառապանի յերկու կողմը նստեցին յերկու յերիտասարդ՝ նիզակները ձեռներին։

— Քշի՛ր, — գոռացին ամբոխի միջից։

Կառքը դղրդոցով գլորվեց մանուկների ուրախ ճիչերի ու սուլոց-ների և ամբոխի գոչյունների տակ։ Հետևում որորվում եր վախից սըր-տաճաք յեղած արիստոկրատը։

Կառքը շուտով աչքից ծածկվեց։ Ամբոխը ցրվեց։

Տոբին նորից մենակ մնաց։ Գլխիկոր նա ուղևորվեց դեպի Սեն-Ժակ արվարձանը։

Արվարձանի փողոցները նույնպես խռնված եյին ժողովրդով։ Այս-տեղ ել եյին հնչում փողերը, խփվում թմբուկները. ամբոխը աղաղակ-ներով վողջունում եր կենտրոնից վերադարձող կամավորներին։

Տոբին քարշ յեկավ պատերի տակով՝ աշխատելով աննկատելի կեր-պով տուն հասնել։ Բայց Սեն-Ժակ փողոցում ամբոխը նրա ճանա-պարհը փակեց։

Թաղի բնակիչները վորոշել եյին, վոր իրանց հարկավոր է ցուցա-կագրող սեփական բյուրո ունենալ։ Նրանք իրանք ամբիոն շինեցին, սանդուղք բերին, տախտակ դրին և քաղաքային վարչության սպային կանչեցին ցուցակագրելու համար։ Յերբ Տոբին մոտենում եր, զարդա-րողները վերջացնում եյին իրանց աշխատանքը և ամրացնում եյին վերջին ծաղկաշղթան «հաղթել կամ մեռնել» պլակատին։ Ատաղձա-գործը հարմարեցնում եր շարժող սանդուղքը. նրանով բարձրանում եր հենց նոր յեկած աստիճանավորը մի ահագին գիրք ձեռին։

Տոբիին ճանաչեցին։

— Տոբի՛, — գոչում եյին ամեն կողմից։ — Տոբի։ Մենք յերաժշտություն կունենանք։ Բարձրացիր ամբիոնը. դու կկանչես հայրենասերներին։

Նրան շրջապատեցին, բռնեցին, տարան ամբիոնի մոտ։ Նա չեր ընդդիմանում՝ բոլոր սրտով ուրախացած և իր վիշտը մոռացած։

— Մոնշալե՛յ, հետևի՛ր ինձ, — հրամայեց նա և թռավ վերև։

Շունը կանգ առավ ամբիոնի մի ծայրում և Տոբիի հրամանով ուղիղ կանգնեց հրացանով կանգնած զինվորի պես։



Քաղաքային վարչության սպան աստիճանավորների հետ նստեց սեղանի առաջ։

Տոբին թմբկահարեց. նրա կողքի վրա ամբիոնի մոտ շար ընկան մի քանի յերիտասարդներ։

— Մի րոպե՛, — կանգնեցրեց նրանց սպան և դարձավ Տոբիին. — Իսկ դու, թմբկահա՛ր, ուզո՞ւմ ես կամավոր գրվել։

— Այո, իհարկե՛, — ակամա բացականչեց Տոբին.

— Այն ժամանակ առաջինը գրվելու պատիվը քեզ է պատկանում, — ավելացրեց սպան։

Տոբին նոր միայն հասկացավ, վոր խոստումը խախտել է։

Բայց արդեն ուշ եր։

— Ազգանունդ ի՞նչ է, — շարունակեց սպան։

— Տոբի։

— Դա անունդ է։ Իսկ ազգանո՞ւնդ։

Տոբին շփոթված կանգնել եր՝ չիմանալով, թե ինչ պատասխանի։ Աստիճանավորներից մեկը թեքվեց դեպի սպան և ականջին փսփսաց

— Նա իր ընտանիքը չի ճանաչում։ Նա մի գտնված յերեխա յե. Բայց նրան կարելի յե ցուցակագրել միայն անունով, այստեղ բոլորը նրան ճանաչում են. նա լավ հայրենասեր է։

— Լա՛վ, — համաձայնեց սպան և առաջին տոմսակը գրելով՝ տվավ Տոբիին։ — Ահա՛ քո տոմսակը, քաջ տղա։ Գլխարկի՛դ ամրացրու և քայլե՛րգ խփիր Սան-Ժակ արվարձանի առաջին կամավոր Տոբիի պատվին։

Տոբին դարձավ դեպի ամբոխը՝ քայլերգ խփելով։ Հանկարծ նա մահաչափ գունատվեց, թմբուկի փայտիկները քիչ մնաց ձեռներից դուրս պրծնեյին։

Նա տեսավ Մոնտարժի հորաքրոջը։

Պառավը կանգնած եր ամբիոնի ստորոտում։ Նա նայում եր Տոբիին շանթահար, աղաչական տեսքով։ Ծերացած շրթունքները դողում եյին մրմնջալով.

— Տոբի՛ն։ Ո՛, Տոբի՛ն։

Տոբիի աչքի առաջով մութ ամպ անցավ։

— Նանի... — հազիվ կարողացավ պատասխանել նա, — յես չեյի ուզում...

Պառավը չեր լսում նրան։ Նա դարձավ և հեռացավ։ Տոբին նրան հայացքով ուղեկցում եր։ Նա ամբիոնից տեսնում եր նրա տմբտմբա-ցող գլուխը, կնճռոտված պարանոցը, գլխակալի տակից դուրս յեկած ալևոր մազերի փնջերը, կորացած մեջքը, կենսազուրկ կերպով ցած ըն-կած ուսերը։ Պառավը լալիս եր։

Յեվ Տոբիի սիրտը ճմլվեց, աչքերն արտասվակալեցին։ Նա կծում եր շրթունքներն արցունքը պահելու համար. ամբիոնը շրջապատող կամավորների առաջ նա ամաչում եր իրան յերեխա ցույց տալ։

— Տոբի՛, վողջույն խփիր, — ասաց այդ ժամանակ ատրճանավորներից մեկը։ — Վողջո՛ւյն Ժան Սովեստրին Աղա փողոցից։ Վողջո՛ւյն Ժորժ Պյուլլոյին Ֆելյատինից։ Վողջույն քո բարեկամ Բարթելեմի Սոլեին Պրե դ'Ավոկայից։ Ահա արդեն տասնյոթերորդն է — բանը լա՛վ է գնում...

— Տոբի, — շարունակեց ատրճանավորը։ — Եկի մի մարշ բոլոր քաջ կամավորների համար։

Ցեվ Տոբին խփում եր թմբուկը։ Նա պատրաստ եր ամբողջ որը խփելու, միայն թե տուն չդառնար։

Գրքում ցուցագրվել եր քառասուն հոգի։ Սկսում եր մթնել։ Քաղաքային վարչության սպան ասաց ատրճանավորին.

— Մինչև վաղը։ Ցես կգնամ քաղաքային խորհրդարան։ Այնտեղ կայանալու յե ջահերի տոն կամավորների պատվին։

Ցեվ նա փակեց գիրքը։ Ցուցացակագրումը վերջացած եր։ Տոբին դիմեց դեպի սանդուղքը՝ տխուր մտածելով, վոր մի քանի րոպեյից նա պետք է հանդիպի տատին։ Հանկարծ մի ծանոթ ձայն կանչեց Տոբիին։

Տոբին դարձավ դեպի ձայնը։ Ամբոխի առաջ կանգնած եր կապիտանը։ Տոբին արագությամբ ցած վազեց։

— Ո՛, — մրմնջաց նա՝ վազելով կապիտանի մոտ. — յեթե իմանայիք...

— Ի՞նչ է պատահել քեզ, — զարմացավ կապիտանը՝ նայելով պատանու հուզված դեմքին։ — Քեզ ինչ բան է եդքան հուզմունք պատճառել։ Մոնշալեյին կորցրե՞լ ես գուցե։

Բայց Մոնշալեյն այդտեղ եր և հաջոցով իմաց տվավ իր մասին։

— Չե՛, Մոնշալեյն եստեղ է։

— Բա ել ինչ է պատահել քեզ։

Տոբին պատմեց, թե ինչպես կամավորի տոմսակ ստացավ և ինչպես տեսավ տատիկին։

— Հը՜մմ... — յերկարացրեց կապիտանը։ — Բանը լուրջ է։ Շատ լուրջ է... Բարեբախտաբար յես եստեղ մեղք չունեմ։ Դու կհաստատես։ Բայց Շառլոտա հորաքույրը... ինչ մեծ ցավ է։ Ամեն բանում, ինարկե, մեղավոր է դուրս գալու դատարկապորտ Պեպինը։ Զփախչե՛մ յես, հը՞։

— Ո՛, մի՛ թողնիր ինձ, — աղաղակեց Տոբին։

— Լավ։ Ուրեմն հանգի՛ստ։ Ամենից առաջ պարտականությունը։ Մի՛ կարծիր, թե յես վախենում եմ։ Ցես առաջ կգնամ։ Ինձ վրա կթափվի առաջին հարվածը։ Բայց հետո՞։ Կա՛ց, յեղբա՛յրս, — ծրագիր ունեմ.

— Ի՞նչ ես անելու։

— Լռե՛լ շարքերում... խսկույն զեկույցը կպատրաստեմ։

Տան շեմքում նա կանգ առավ։

— Ցես քեզ փողոցում կսպասեմ, — առաջարկեց Տոբին։



— Չե՛, յետեվիցս յե՛կ և հրամանի սպասիր։ Ցերբ յես կասեմ՝ «Նա եստեղ է, Շառլոտա հորաքույր», — դու ներս կմտնես։ Ընկիր նրա վզովը։ Համբարձի՛կ, ողջ։ Ուշադրությո՛ւն։ Պառլամենտյորնե՛ր (բանակցողներ), հառա՜ջ։

Կապիտանը մտավ խոհանոցը։

Տոբին կուչ յեկավ խանութի մի անկյունում խառնշտորված փայտաների կույտերի մեջ։ Նա լսում եր, թե ինչպես եր Բատիստն ասում

— Ցես մեղք չունեմ, զինվորի խո՛սք։ Տոբին կհաստատի։ Ներեցե՛ք նրան, հորաքույր։ Նա մեղավոր չի։ Բոլորովին մեղավոր չի։ Մի րոպե ուշքը տանուլ ե տվել. ուրիշներին ե հետևել։ Տղան շատ ե զգայուն։ Բայց դեռ ամեն բան կորած չի — լսեցե՛ք ինձ։

Պառավը չեր պատասխանում։

— Հը՛մ, հը՛մ, բայց ելի հարկավոր է հասկանա՛լ ախր, — յերկարացնում եր անաջողակ պառլամենտյորը՝ զգալով, վոր արդեն սպառել է իր ամբողջ պերճախոսությունը։

Մոնտարժի հորաքույրը համառորեն լռում եր։

Կապիտանը գլուխը միանգամից կորցրած՝ վերադարձավ Տոբիի մոտ։

— Վո՛չ մի բառ, — ասաց նա։ — Կասես չի յել լսում... Նստել է անշարժ, աչքերը կանգ են առել. այտերով հոսում են արցունքները։ Սոսկալի՛ յե։

Տոբին դողում եր։

— Ո՛, — արտասանեց նա, — յես յերբեք եսպիսի վիշտ չեմ տեսել... յերբե՛ք։

— Շատ լուրջ է։ Շատ...

Կապիտանը մտախոհվեց։ Յերկար լռությունից հետո նա նորից խոսեց.

— Տես ինչ եմ մտածել։ Գնդապետը առավոտը տեսել է քեզ։ Դու կարող ես իմ գումարտակում փոխարինել թմբկահարին։ Ցես առաջ չե եյի ասում, հիմի հա յեմ ասում։ Դու կուղեկորվես ինձ հետ։ Ցեվ յես կհոգամ քեզ համար։ Պատերազմը մինչև վեց ամիս կվերջանա, են ժամանակ — մարշ տուն. հայրենիքին պարտքդ տված կլինես, եվ տատիկիդ չես թողնել։ Համաձա՞յն ես։

Տոբին յերկար ժամանակ կշռադատում եր կապիտանի առաջարկությունը. Նա արմունկները խրել եր ծնկների արանքը, ձեռներով յերեսը ծածկել և խորը մտածմունքի մեջ ընկել։ Բատիստը լուռ ծխում եր։

Խոհանոցից լսվեց հորաքույր Մոնտարժիի ձայնը.

— Ցեկեք ճաշե՛ք։ Հե՛յ, դո՛ւք...

Բատիստը բարձրացրեց Տոբիին և հրեց դեպի դուռը՝ ականջին փսփսալով.

— Հիմի — ավինակովի։ Ա՛րշ։

Բայց Տոբին սիրտ չարավ։

Պառավը նստել էր մութ անկյունում՝ սեղանից հեռու։ Նա նստել էր ձեռքերը կիտած, վոչ մի անգամ չնայեց վոչ կապիտանին, վոչ Տոբիին։

— Կերե՛ք, դո՛ւք... — միայն փնթփնթաց նա. մագաղաթի պես չորացած նրա այտերը, ծնոտը, շրթունքները դողում եյին։

Տոբին նստած էր Բատիստի դիմաց։ Աշխատում էր ուտել, բայց վոչինչ չէր կարողանում կուլ տալ։

— Ա՛յ քեզ բա՛ն, — բացականչեց հանկարծ կապիտանը։ — Եվ ինչքան հիմար ենք յեղել... Տո՛, սրանից էլ պարզ բա՞ն. յես կերթամ քաղաքային վարչությունը, ատրճանավորների մոտ, բարեկամներիս մոտ կասեմ. «յեղբայրս ծառայել չի կարող, չի կարելի նրան խլել Մոնտարժի հորաքույրից։ Հասկացա՞ք։ Նա նրա միմնուճարն է... Միակ օգնականն է»։ Տոբիին կջնջեն ցուցակից։ Յես զինվոր եմ, խոսքիս կհավատան։ Ենպես չէ՞։ Յես գնում եմ։

Նա վեր կենալով՝ սկսեց գլխարկը փնտրել։

— Ո՛, — բացականչեց Տոբին կատարյալ հուսահատությամբ — նրանք կասեն, թե յես վախկոտ եմ։

Բայց հանկարծ վորոշեց.

— Միևնույնն է։ Գնա՛, Բատիստ։ Թո՛ղ ինչ ուզում են ասեն։ Նանի՛, ներե՛ր ինձ, յես քեզ չեմ թողնի։

Յեվ Տոբին նետվեց դեպի պառավը։

Այն ժամանակ խոսեց հորաքույր Մոնտարժին։

— Մնացե՛ք, — հրամայեց նա կապիտանին։ — Յես չեմ ուզում, վոր իմ յերեխան վախկոտ համարվի։

— Նանի՛, — հեկեկում էր Տոբին։

Նրա արցունքները տեսնելով՝ պառավը չկարողացավ իրան պահել՝

— Ուրեմն դու սիրում ես ինձ։ Բայց ելի սիրում ես, — խոսեց նա։ — Դու չեյի՞ր ուզում ինձ թողնել։ Բատիստ, մի՛ գնա։ Լաց մի՛ լինի, Տոբի։ Ամեն բան լավ կլինի։ Թող քոքը կռվի՛ ես պատերազմի։ Բայց յես ձեզ չեմ թողնի։ Յես մի պլան ունեմ։

— Վորո՛տ ու կայծա՛կ, — բացականչեց կապիտանը՝ գլխարկը դեն նետելով։ — Դուք վոսկի սիրտ ունեք, Շառլոտա հորաքույր։

Նա չգիտեր պառավի ծրագիրը, բայց նրա համար պարզ էր, վոր այժմ ամեն բան կլուծվի բոլորի բարօրությամբ։

Նա մոտեցավ սեղանին. մի բաժակ գինի ածեց և դիմեց պառավին.

— Ձեր կենացը, Շառլոտա հորաքույր։ Բանակի հաղթության կենացը։



ԳԼՈՒԽ VII.

## ՓՈԹՈՐԿԻՑ ԱՌԱՋ

Ինչպես հրամայել էր Մարատը — 22-ից հետո — Տոբին մոտեցավ կորդելյերների վանքի սև պատերին։ Նիստերի դահլիճը մտնելն այնքան էլ հեշտ բան չէր։ Այդ որը ժողովրդի հավաքն ավելի մեծ էր, քան սովորաբար. մարդկանց խմբերը կանգնած եյին բակում և միջանցքում, իսկ դահլիճի դռան մոտ պատի պես եյին նրանք խտացած։ Տիրող հուզմունքը պարզ ցույց էր տալիս, վոր ինչ-վոր մի անցք ալեկոծում էր մասսաներին։ Ընդհանուր ժխորի մեջ լսվում եյին հատ-հատ ֆրազներ — «Նա փախել է՝ գյուղացու շորերով»։ — «Իսկ ավստրուհի՞ն»*)։ — «Նա հետն է»։ «Ճիշտ չէ, նրան պահապաններն են ճանաչել.» — «Լապտերներից կախե՛լ դավաճաններին»։ —

Թագավորի փախուստի լուրը յերեկոյան դեմ տարածվեց ամբողջ քաղաքում։ Ասում եյին, վոր թագավորը գյուղացու շոր հագած դուրս է յեկել պալատից և դիմել դեպի մեծ ճեմելիքի մոտ գտնված շարժական կամուրջը։ Բարեբախտաբար պահակները ճանաչել են նրան. Լյուդովիկոսն այնքան հաստ ու դանդաղաշարժ էր, վոր հեշտ էր նրան ճանաչելը։ Պահապաններն աղմուկ բարձրացրին։ Այն ժամանակ թագավորն ինչքան վոտներումն ույժ ուներ՝ փախավ յետ պալատը։ Նա կարողացավ աննկատելի կերպով ընկնել իր սենյակները և շորերը փոխել։ Քաղաքային վարչությունից յեկած սպաներին նա հայտարարեց, վոր պարկում ուղղակի զբոսնելիս է յեղել, իսկ պահապանները հիմարաբար աղմուկ են բարձրացրել։

Մինչև պարզվել էր, վոր թագավորը վոչ միայն չի փախել, այլև պալատից դուրս չէր յեկել, Փարիզը հուզվել էր։ Տեղ-տեղ զանգեր եյին քաշել. ժողովուրդը վազելով հավաքվել էր ակումբներում և սեկցիաներում, վորպեսզի լուրն ստուգի։ Մինիստրությունն շտապել էր տարածված լուրերը հերքող աֆիշա բաց թողնել։

Այդ աֆիշայի մի օրինակ Տոբիի ձեռքումն էր. Նա շարժում էր այն իր գլխից վեր և գոչում.

— Յեղբայրնե՛ր, թագավորը չի՛ փախել։ Հաստափոր Վետոն նստած է պալատում.

— Իսկ ավստրուհի՞ն։

— Ո՞վ է ստորագրել աֆիշան։

— Ի՞նչ է գրված եդտեղ, — հարցնում եյին ամեն կողմից։

*) Փարիզն «ավստրուհի» անվանում էր թագուհի Մարի-Անտուանետին, վորին ժողովուրդն առանձնապես ատում էր։ Նա ավստրիական Ֆրանց I կայսրի աղջիկն էր և իր ազգակցական կապերն օգտագործեց Ավստրիային գրգռելու, վորպեսզի վերջինս պատերազմ նախապատրաստի հեղափոխական Ֆրանսիայի դեմ։

— Ստորագրել և ներքին գործերի մինիստրը,— պատասխանում էր Տոբին։

— Ճանապա՛րհ տվեք փոքրիկ հայրենասերին,— գոչեցին մի քանի հոգի Տոբիի մոտ։

— Թողեք դահլիճը գնա։

— Թո՛ղ աֆիշան կարդան,— ամեն կողմից լսվում էին բացականչություններ։

Տոբիին իսկույն դրկեցին մեկի ուժեղ ձեռները, ապա մյուսներինը, յերրորդներինը... Նրան բարձրացրին, և ամբոխի գլխի վրայով փոխադրեցին առաջ։ Միջանցքով նրան անց կացրին ձեռների վրա և հանձնեցին դահլիճը։

Մոմերի թարթող լույսը աղոտ լուսավորում էր ձվաձև դահլիճը, հռետորի ամբիոնը և նախագահության ամբիոնն ու որորվող ստվերներ էր գցում ամբոխի, պատերի և կամարների վրա։ Այստեղ ամեն ինչ որորվում էր, հոսում, իրար հյուսվում։ Միքանի նստարաններ դարձված էին, մի քանիսի վրա կանգնել էին. բարձր կամարաձև լուսամուտների խոռոչներից դուրս էին նայում իրար սեղմված մարդկանց խմբեր։

Միջանցքից դահլիճ էին հասնում այսպիսի աղաղակներ.

— Աֆիշա՜ն։ Ինչի՞ մասին է։ Ո՞ւմն է։

Աղաղակները խեղդեցին և ընդհատեցին տրիբունայում կանգնած հռետորի ճառը։ Նա նշան տվավ, և դահլիճում կանգնողներն ամբիոն բարձրացրին թափահարվո՛ղ Տոբիին։

Գզգզված, ճմլված, խեցգետնի պես կարմիր, բայց գոհ և հպարտ Տոբին վոտի կանգնեց։

— Աֆիշան հենց նոր է լույս տեսել. հիմի փակցնում են քաղաքում,— ասաց նա՝ աֆիշան մեկնելով հռետորին։

Նա վերցրեց և բացավ։

— Լռեցե՛ք, լռեցե՛ք,— չորս կողմը լսվեցին ձայներ։

Բոլորը լռեցին։

Հիմա Տոբին կարողացավ շուրջը նայել։ Ամբիոնը տնտղելով՝ նա նրա խորքում տեսավ Մարատին։ Ժողովրդի բարեկամը նստարանին հակառակ նստած էր և կռացած՝ արագ-արագ մի բան էր գրում։

Յերբ ընթերցումն սկսվեց, Մարատը գլուխը բարձրացրեց և խոսողին ականջ դրավ։ Նրա հայացքն ընկավ Տոբիի վրա։ Նա ճանաչեց նրան և ժպտալով՝ կանչեց իր մոտ։

— Հա՜, եդ դո՞ւ յես, փոքրիկ հայրենասեր,— դիմեց Մարատը նրան մոտեցող Տոբիին։— Լավ ես արել, որ յեկել ես։ Պատմիր տեսնենք քո թշնամու մասին... անունն ինչ էր։



— Եյլբա,— ասաց Տոբին։

— Հա՛, հա՛։ Յես հարցրել եմ նրա մասին, բայց բանից դուրս յեկավ, որ նա չքացել է։ Արդյոք Փարիզո՞ւմ է թագնված, թե՞ ծլկվել է, բայց եդ սողունն՝ ինչպես յերևում է՝ մի տեղ թագնվել է։ Նեղոցիանտի հետևում պետք է կարծել, որ խռովարարների մի ամբողջ խումբ է թագնված։ Յեթե նա մենակ լիներ, իրան այնպես հանդուգն և գրգռիչ կերպով չէր պահի։ Համենայն դեպս յեթե վորևե բան իմանաս, հաղորդիր ինձ։

— Յես չեմ կարող նրան հանդիպել. շուտով Փարիզում չեմ լինի։

— Ո՞ւր ես գնալու։

— Յես կամավոր եմ գրվել,— հպարտությամբ պատասխանեց Տոբին։ Յես նշանակված եմ կամավորների 13-րդ գունդը վորպես թմբկահար։

Մարատը գրգռված ընդհատեց Տոբիին։

— Բոլո՛րն են յենթարկվել այդ խենթության, բոլո՛րը,— բացագանչեց ժողովրդի բարեկամը։— Ի՞նչ կույրեր են։ Ինչպե՞ս է, որ վոչվոք չի ուզում տեսնել, որ կամավորներին տանում են սպանդանոց, որ նրանք գնում են ծառայելու մատնիչ-արիստոկրատների իշխանության տակ, որ այս ամբողջ կամավոր հավաքելը միայն թագավորին և պալատական ամբողջ վոհմակին է ձեռնտու։ Կամավոր հավաքելը Փարիզից դուրս կնետի տասնյակ հազար հայրենասերներ, հականեղափոխական գնդերի մեջ բաժան-բաժան կանի, ուր նրանք անզոր կլինեն ծառայելու ընդհանուր գործին։ Վոչ վոք չի ուզում հասկանալ, վոր իսկական հայրենասիրական պատերազմը վոչ թե այնտեղ է, այլ այստեղ։ Փարիզում հաղթելով՝ ժողովուրդը կքանդի դավադիրների բոռային բունը և միայն ա՛յն ժամանակ իր թիկունքն ապահովելով՝ կարող է յետ դարձնել կոալիցիայի (դաշնակցած պետությունների) հարվածը։ Խենթեր։ Նրանք չեն ուզում այդ հասկանալ... Արիստոկրատները նորից խաբեցին ժողովրդին և նրան ստիպում են ծառայել իրանց նպատակներին։

Տոբին շշմել էր Մարատի զայրացած ճառից։ Նա այդպիսի դիմավորում չէր սպասում։

— Ապա ինչ անել — շշնջաց նա՝ փորձելով իրան պաշտպանել,— միթե պետք է թողնել բանակն առանց պակասը լրացնելու և թույլ տալ, որ պրուսացիները ջարդե՞ն։

— Իհարկե վո՛չ,— առարկեց Մարատը։— Բայց ռազմաճակատ գնալիս պետք է հաստատ միտը պահել բոլոր հրամանատարների արժեքը և իմանալ, որ թշնամին վոչ միայն բանակի դեմն է, այլ և նրա ներսը։ Դե, լա՛վ, փոքրիկ,— հանգիստ ասաց Մարատը՝ տեսնելով Տոբիի վրդովված դեմքը,— լավ հայրենասերն ամեն տեղ էլ օգտակար կլինի։ Վնասակար է միայն կուրությունը... փարիզեցիները պետք է զին-

վորների աչքերը բանան, վորպեսզի տեսնեն, թե ովքեր են իրանց հրամանատարները։ Միտք պահիր այս, փոքրիկ։ Դեհ, ցտեսություն։ Ազատության լավ զինվոր յեղիր։

Մարատը ձեռքը մեկնեց Տոբիին և նրան հրաժեշտ տալով՝ նորից նստեց աշխատելու։

Տոբին խոր մտածմունքի մեջ՝ իջավ ամբիոնից և գնաց դեպի դուռը։ Միջանցքում առաջվա պես միմիանց հրում ու բոթում եյին։ Վոմանք ներս եյին խցկվում դահլիճը, վոմանք այնտեղից դուրս եյին գալիս. լուսամուտների մոտ եյին ժողովվում աղմկող խմբեր։ Միջանցքը թնդում եր տասնյակ ձայներից և սալաքարին խփվող կոշիկների տոփյունից։

Մարդկային ալիքը Տոբիին նետեց մի խումբ մարդկանց մոտ, վորոնք աչքի եյին ընկնում իրանց շարժունությամբ, արագ խոսելով և ձեռների կտրուկ շարժումներով։ Դրանք Մարսելից յեկած ֆեդերատներ (դաշնակիցներ) եյին։

— Ո՞ւր եք գնում, յեղբայրներ, — կանչեց նրանց մեկը։

— Ցելխյան դաշտերը։ Այնտեղ Սենտ-Անտուանի սեկցիան մեզ մեծարում է հայրենասիրական հանդեսով, — պատասխանեց մարսելցիներից մեկը։

Շրջապատողներին դուր յեկավ մարսելցիների պատվին տրվող հանդեսին մասնակցելու միտքը։

— Հայդե՛, տղերք, Ցելխյան դաշտերը, պատվելու մարսելցիներին, — գոչեցին մի քանի կողմից։

Մարսելցիներին միացողներն աղմկալի խմբով դուրս յեկան մենաստանից և ճանապարհ ընկան։

Տոբին ուղևորվեց նրանց հետ։

Չնայած անձրևին՝ փողոցները լիքն եյին մարդկանցով։ Ակումբների, թատրոնների, կաֆեների մոտ հավաքվում եյին՝ ինչպես միշտ՝ աղմկալի խմբեր։

Փողոցներով անցնում եյին ջոկատներ, պատգամավորություններ։

Մարսելցիներն արագ գնում եյին Ցելխյան դաշտերը։ Կարուսելի հրապարակում նրանք հասան կամավորների մի խմբի, վոր վերադառնում եր Մարսյան դաշտից վարժությունն կատարելուց հետո։ Նրանք գնում եյին՝ յերգի նվագի տակ պարելով։

— Ես ինչ հիմար բան են յերգում, — բացականչեց Տոբին՝ լսելով յերգի բառերը։ Ես ծույլերին իսկական յերգ սովորեցնենք։ Յերգեցե՛ք ինձ հետ։

Յեվ Տոբին, նրա յետևից և նրա ուղեկիցները զլեցին 90 թվականի յերգը, վոր հորինված եր հենց Մարսյան դաշտում, յերբ նույնպես անձրևի տակ ժողովուրդն այնտեղ յերդվում եր սահմանադրությանը հավատարիմ լինել։



Մինչև վոսկորներս թրջվել եմ, թրջվել եմ, թրջվել,
Բայց ելի ուրախ եմ, թեթև.
Մինչև վոսկորներս թրջվել եմ, թրջվել,
Գլխից մինչ վոտներս ջրում մխրճվել·
Բայց դատարկ բան է դա,
Թեկուզ գա թող կայծի անձրև,
Գլուխս պատասխան կըտա,
Դրանով կարող եմ յես միայն հըրճվել
Վոր մինչ վոսկորներըս թրջվել եմ, թրջվել եմ, թրջվել։

Սկզբում ժողովուրդը, ապա նաև կամավորները միացան յերգին և պարելով՝ ել ավելի աշխույժ առաջ շարժվեցին։

Շուտով յերևացին Ցելխյան դաշտերի ճրագները։ Ճաշարանների և կաֆեների լապտերները պայծառ փայլում եյին և լույսի փնջեր եյին նետում մութ ճեմելիքը։

Մարսելցիները քեֆ եյին անում մի ահագին ճաշարանում։ Հայրենասիրական տոնն ըստ յերևույթին արդեն վաղուց եր սկսվել, վորովհետև Տոբին դեռ հեռվից լսեց ձայների ժխոր, յերգեր և աղաղակներ։ Ուրիշ լուսամուտներից և կաֆեներից նույնպես յերգեր, յերաժշտություն եր լսվում։ Աղմկալից եր մանավանդ ժողովրդական ճաշարանի կողքի փարթամ կաֆեյում — բուրժուական փայլուն յերիտասարդության ռոյալական ժողովատեղում։ Այնտեղ ըստ յերևույթին ճառեր եյին ասում։ Փողոցում լսվում եյին այսպիսի գոչյուններ — «Կեցցե՛ թագավորը», «Կեցցե՛ Լաֆայետը», «Մա՛հ խռովարարներին»։

Տոբիի առաջևից գնացող յերկու մարսելցիները կանգ առան. Նրանցից մեկն ուզում եր մի բան գոռալ վորպես պատասխան, բայց մյուսը պահեց նրան։

— Թո՛ղ գռռան, — ասաց նա, — շատ չի մնացել նրանց մինչև կոկորդները պատռելը։ Գնա՛նք։

Բայց նրանց չաջողվեց հանգիստ անցնել։ Կաֆեյում նկատեցին սանկյուլոտների անցնող խումբը. լուսամուտից դուրս նայեցին մի քանի մարդիկ ազգային գվարդիայի համազգեստով. դրանք Ս. Թոմաս թաղի գրենադերներ եյին։ Յերկու մարսելցիներին տեսնելով՝ նրանք գոռացին.

— Ֆեդերատներին դո՛ւրս վռնդել Փարիզից։ Ծեծե՛լ մարսելցիներին։

Յեվ դրա հետևից լուսամուտից թափվեցին շշեր, ձեռնափայտեր, աթոռներ։ Մարսելցիներին աջողվեց ժամանակին յետ քաշվել։ Վորպես պատասխան՝ փողոցից դահլիճը թափվեցին սալահատակից վերցրված քարեր։

Գրենադերները դուրս թռան կաֆեյից և մերկացրած թրերով ընկան սանկյուլոտների վրա։

— Մարսելցինե՛ր, մեզ մո՛տ յեկեք, ոգնեցե՛ք, — բարձրացավ աղաղակը։

Բարեբախտաբար կոչը ժամանակին լսվեց։ Մարսելցիները ճաշարանից դուրս ցատկելով՝ իրանց ընկերներին ոգնության հասան։

Մարսելցիներն ու գրենադերները կանգ առան իրար դեմ։ Մարսելցիներն ավելի շատ էյին, բայց նրանք զինված էյին վոչ բոլորը և այն էլ միայն թրերով, իսկ գրենադերների մոտ կային և՛ թրեր, և՛ ատրճանակներ։ Մի քանի վարկյան յերկու կողմից էլ անվճռականության մեջ կանգ առան։

Հանկարծ այն կաֆեյից, ուր քեֆ էյին սարքել գրենադերները, լսվեց մի հրազարկ, հետո յերկրորդը, յերրորդը... Այն ժամանակ ամեն ինչ խառնվեց։ Գրենադերներն ու մարսելցիները ձեռնամարտի բռնվեցին։ Յերևացին թրերը, ձեռնափայտերը, դագանակները։ Գրենադերները դեռ չէյին կարողացել ատրճանակները գործի դնել՝ վոր մարսելցիները նրանց զինաթափ արին։

Տոբին ընկավ տուրուդմբոցի հենց մեջտեղը։ Նրան մի կողմից մյուս կողմ նետեցին, մինչև վոր ամբոխի միջից դուրս գցեցին գզգզված, շփոթված, քիթը ջարդված և ուսը ճմլված։

Գրենադերները թուլանում էյին. մի քանի հոգի արդեն շարքից դուրս նետվելով՝ գետին էյին փռված։ Կաֆեյից նրանց դուրս վռնդեցին և ուզեցին պաշարել, բայց նրանք դուրս պրծան և սկսեցին փախչել դեպի Տյուիլյերի։

Տոբին այդ նկատեց։

— Բռնոտեցե՛ք դրանց, բռնոտեցե՛ք, — գոչեց նա։ — Նրանք պալատից ոգնություն կբերեն։

Մարսելցիները նրանց յետևից ընկան, Տոբին վազում էր առջևից և աղաղակում.

— Բռնեցե՛ք արիստոկրատներին։

Նա տեսավ, թե ինչպես գրենադերները վազելով հասան ամրոցը շրջապատող խրամատին։ Շարժական կամուրջն ոդում դանդաղ լողալով իջավ։ Գրենադերներն ամբողջ խմբով առաջ սլացան և թաքնվեցին դռների հետևում։ Կամուրջը նորից բարձրացավ։

Յերբ մարսելցիները խրամատին հասան, գրենադերներն արդեն ամուր պատերի և իրանց յերախները դուրս ցցած թնդանոթների պաշտպանության տակ էյին։

— Իջեցրե՛ք կամուրջը, — գոռում էյին մարսելցիները։

Բայց պատի հետևում ամեն ինչ անշարժ էր և խաղաղ։ Վոչ վոք ձայն չհանեց։ Բարձրացված կամուրջը սևին էր տալիս բարձրում։



ԳԼՈՒԽ IX.

# ԱՐՇԱՎԱ՛ՆՔ

— Կորե՛ք, կորե՛ք յերկուսդ էլ։ Ինձ մի՛ խանգարեք էստեղ, — ամեն առավոտ Մոնտարժի հորաքույրն այնպես էր տնից դուրս անում կապիտանին և Տոբիին։

— Ախր մենք ժամը յոթին պիտի գնանք, բայց հիմի դեռ վեցն է, — անհամարձակ փորձում էր վիճել Տոբին։

— Մինչև հինգ րոպե յես էստեղ քո իղն ու թողը չտեսնեմ, — իրենն էր պնդում պառավը։

— Շառլոտա հորաքույր,—խառնվում էր այդտեղ կապիտանը,—դե բա՛ց արեք ախր, տեսնենք էդ ինչ եք պատրաստում էդտեղ։ Մենք ձեզ ինչո՞վ ենք խանգարում։

— Զահլաս մի՛ տար։ Միևնույնն է, չեմ ասի։ Ժամանակին կիմանաս։ Լավ կանե՛ս յերեխին մոտիկ տաս։ Յերեկ նա քաղաքից ելի անպետան նկարներ էր բերել։ Բոլորը քո շնորքն է, փո՛ւչ։

Յեվ պառավը բարկացած՝ ուղղակի կապիտանի քիթը կոխեց Տոբիի բերած ծաղրանկարով մի թերթ։ Նրա վրա պատկերացված էր մի հովիվ, վորը բռնել էր Լյուդովիկոս XVI-ի գլուխն ունեցող մի չաղ խոզի վզի պարանից. նկարի տակ կար հետևյալ մակագրությունը. «Յես աղքատացել եմ քեզ չաղացնելով։ Վերջի վերջո հիմի յես ինչ անեմ քեզ»։

Ծաղրանկարը տեսնելով՝ կապիտանը քրքջաց, վորով Մոնտարժի հորաքրոջը բոլորովին կատաղեցրեց։

— Դե կորե՛ք վերջապես,—գոռաց նա և նրանց գլխարկները ձեռների մեջ կոխելով՝ դուրս արավ դռնից։

Կապիտանին և Տոբիին տնից դուրս անելով՝ Մոնտարժի հորաքույրը վազեց սրահը, դուրս գլորեց իր սայլակը և սկսեց ուշադրությամբ մոտիկ տալ։ Նա տնտղեց անվի շրջանակները, լծափայտերը, խորքը, ծածկը, հառաչեց, տնքտնքաց, բայց յերևի քննությունից գոհ մնաց։

Ապա նա մոտեցավ էշին։ Անասունը բարձր զռռոցով դիմավորեց նրան՝ գլուխը տմբտմբացնելով և մի վոտից մյուսի վրա փոխնիփոխ կանգնելով։

— Կապված ես մնացել, հա՞, ժարիկս։ Գոմից զահլեդ գնացե՞լ է,—ասաց պառավը՝ քնքշորեն շոյելով էշին։ — Դե՛հ, հիմի պատրաստվիր — ենպիսի՜ բան ունես անելու, վոր որումդ չես արել։

Էշին կեր ածելով և մեջքը նորից սրբելով ու շոյելով, պառավը տուն դարձավ։ Այստեղ նա մեծ աշխատանք ուներ կատարելու. հարկավոր էր խանութում թափված փալասներից ջոկել այն ամենը, ինչ վոր պիտանի յեր, Տոբի համար համազգեստ պատրաստելու, պետք էր կարել, կարկատել, հարմարեցնել։

Պառավը ամբողջ օրը դես ու դեն էր ընկած տանը, տակնուվրա յէր անում փալասները, տուփերը, արկղները: Նա նման էր մի զորավարի, վորը ճակատամարտից առաջ վերադասավորում է իր զորքերը և վերջին անգամ հաշվում է մտքում, թե արդյոք բոլո՞րն է արված, ամեն բան իր տե՞ղն է, վորևէ բան չի՞ մոռացված:

Այդ բոլոր օրերը Փարիզը տենդային դրության մեջ էր: Տների աղմուկը, վողջույնների վորոտը, թմբուկների թնդյոցը, աղաղակները՝ յերգերը, պարերը, վորոնց մեջ էր ծնվում հեղափոխական բանակը, փոխարինվեցին գործնական առօրյայի լարվածությամբ:

Կամավորների ցուցակագրումը շարունակվում էր: Նրանք, վորոնք դեռ ցուցակագրվելու ժամանակ չէյին ունեցել կամ նոր էյին վորոշել ցուցակագրվել՝ ընդհանուր վերելքից վոգևորված, դիմում էյին դեպի զինվորագրական կայանները: Նրանց անունները մտցվում էյին հատուկ ցուցակների մեջ առանց թմբկահարության, առանց ժապավենների, առանց դրոշակների, առանց ամբոխի ովացիաների (մեծարանքի):

Նախկին ցուցակագրվածները ժապավենները գլխարկներից վերցնելով և տոնական զգեստը բլուզի փոխելով՝ գնում էյին հավաքատեղիները վարժվելու:

Կոմունայի գրասենյակը, սեկցիաները, բոլոր հիմնարկությունները լցված էյին խնդրատուներով: Հարկավոր էր բոլորին բավարարել, բոլորին բացատրել, բոլորին ուղարկել, ուր պետք է. ամենքն շտապում էյին. աստիճանավորները չէյին հասցնում, խառնվում էյին:

Ցուցակագրության առաջին յերկու օրը միմիայն Փարիզը 20.000 կամավոր տվավ. նրանցից կազմում էյին փարիզյան գումարտակները՝ Բայց շատ շատերը գնալը հետաձգում էյին՝ սպասելով բոլորից նախազգացվող դեպքերին: Տասն օրվա ընթացքում Փարիզից ընդամենը ութ հազար հոգի գնաց Սուասոն և Շալոն, ուր ժողովվել էյին հենց նոր կազմված գումարտակները:

Յեկավ վերջապես կապիտան Պեպինի զորամասի դուրս գալու օրը՝ Մինչև այդ, նա կարողացել էր կամավորներից ընտրել 150 ամրակազմ տղաներ, վարժեցնել և կարգապահություն սովորեցնել նրանց: «Հարբեցողներին—դուրս, շատախոսներին,—դուրս, կռվարարներին—դուրս, թալանչիներին — դուրս»,— այսպես էր ասում կապիտանը հավաքատեղիներում կամավորներին դիտելիս: — «Ինձ զինվորներ են պետք»: Յեվ նա կարող էր հավատացած լինել, վոր յերեք-չորս ամսից հետո 13-րդ գունդը պարծենալու յե իր ընտրած յերիտասարդությամբ:

Կամավորների մեծամասնությունը բլուզով էր և փռուգիական փեգույրներով, իսկ մեջքներից կապված էր ճանապարհորդական քսակ քիչ-շատ ճերմակեղեն մեջը: Միայն քառասունչորս հոգի յէր զինված հրացաններով, այն էլ այդ հրացանները տերհաստանոցները նոր էյին բաց



թողել փորձի համար և ուղարկվում էյին բանակը փորձելու համար: Այդ քան հոգին զորաբաժնի գլուխն էյին: Մնացածները զինված էյին, ինչով վոր կարելի յէր յեղել.—նիզակներով, հին թրերով, սրերով:

Մեկնելու օրը Տոբին զարթնեց՝ յերբ հազիվ էր լույսը բացվել: «Եսօր մեկնելու յենք», մտածեց նա: Այդ միտքը նրա ամբողջ էյությունը միանգամից լցրեց աշխույժ ուրախությամբ: Նա վեր թռավ անկողնից, հագնվեց և վազեց տատիկին փնտռելու:

Արևակալած բակը դատարկ էր: Սրահը փակ էր, վոչ էշի զռռոցն էր լսվում, վոչ թռչունների ծլվլոցը, վոչ հավերի կչկչոցը... «Ի՞նչ է պատահել: Միթե՞ տատիկը քնով է անցել»,—մտածեց Տոբին: Պառավը վոչ բակումն էր, վոչ տանը:

Բատիստը նույնպես վեր կացավ անկողնից:

— Տարօրինակ բան,— դարձավ նրան Տոբին,— տատիկը վոչ մի տեղ չի յերևում: Բան հո չի՞ պատահել նրան:

— Հը՛մ, հը՛մ,— անհանգստությամբ մռմռաց կապիտանը:

Բայց այդ ժամանակ փողոցի կողմից դուռը շրխկաց, և խանութը մտավ տատիկը:

— Հեյ, դուք, քնատներ, վերջապես վե՞ր եք կացել,— կանչեց նա:

Տոբին ու կապիտանն իրար նայեցին. տատիկն ուրախ էր, կարծես թե նրան չէր սպասում հրաժեշտը:

— Յես արդեն պատրաստ եմ,— ուրախ-ուրախ ասաց նա:

— Պատրա՞ստ եք: Ի՞նչ բանի յեք պատրաստ, հոլաքույր,— վարանելով հարցրեց Բատիստը:

— Ի՞նչպես թե ինչ բանի: Ճանապարհ ընկնելու, էլ ինչի՞,— վճռականորեն հայտարարեց պառավը:

Կապիտանն ու Տոբին իրար մտիկ տվին: Պառավը բռնեց նրանց ձեռներից և փողոց դուրս բերավ:

Տան առաջ կանգնած էր սայլակը, մաքրված, ծածկը բարձրացրած. էշը լծված էր սայլակին, Մոնշալեյը պտտվում էր շուրջը, իսկ Ռամպոնետը ծանրուբարակ նստել էր անրափոկին:

— Վոչինչ չեմ հասկանում...— դեռ տարակուսում էր կապիտանը:

— Հիմի յե՞լ չես հասկանում, վոր յես գալիս եմ ձեզ հետ:

— Դո՞ւք: Անկարելի յե... Միանգամայն անկարելի յե,— բողոքեց կապիտանը: Վոչ վոքի չեն թողնում բանակը:

— Իսկ խահավաճառուհինե՞րը (մարկիտանտ կանայք), նրա՞նց էլ չեն թողնում բանակը: Մտիկ արա տես...

Քեռակինը կապիտանին տարավ սայլակի մոտ: Ներսում, կարգով-սարքով դարսված էյին կապոցներ, տուփեր և փոքրիկ տակառ—այստեղ կար այն ամենը, ինչ հարկավոր է զինվորին արշավանքում, ասեղից մինչև գինու փլյադան:

— Ա՛յ թե ինչ էյիր թաքցնում մեզնից էսքան ժամանակ։ Հորաքույր, — սիրելիս, դու յո՛լ ես մեզ հետ...

Տոբին ուրախությունից պառավի շուրջն էր ցատկոտում։

Բայց կապիտանը մռայլ էր։

— Դուք չգիտեք, թե ինչ բան է պատերազմը։ Ցուրտ, քաղց, քամի ցեխ, անձրև, — դուք չեք դիմանա։ Ո՛չ, անկարելի յե։ Ուղղակի անկարելի՛ յե, — պնդում էր նա։

Որքան էլ նա աղաչում էր Մոնտարժի հորաքրոջը տանը մնալ վերջինս համառորեն պնդում էր իր ասածի վրա։ Վերջապես կապիտանն ստիպված յեղավ զիջել։ Նա պառավին թույլ տվավ ուղեկցվել զորամասի հետ և խոստացավ գունդը հասնելուց նրա համար թույլտվություն ձեռք բերել գնդի հետ գնալու որպես խահավաճառուհի։

— Ա՛յ, կտեսնես, Բատիստ, ընկերներդ ինձնից գոհ կմնան։ Յես գնդում ավելորդ չեմ լինի, զինվորներն էլ, սպաներն էլ ամեն ուզածները կստանան՝ — համոզում էր կապիտանին Մոնտարժի հորաքույրը։

— Լա՛վ, ի՞նչ արած, գնա՛նք, հորաքույր, — անձնատուր յեղավ կապիտանը։ — Արշավանք գնալ ես ուզում, թո՛ղ լինի։ Բայց յես մեղավոր չեմ... թե դժվար լինի, տուն կգաս։

Լուսամուտների փեղկերը մեխվեցին, տան դուռը, դարպասը կողպվեցին, հարևաններին, բարեկամներին հրաժեշտ տվին։ Մոնտարժի հորաքույրը, կապիտանը և կամավորների 13-րդ գնդի նոր համազգեստով Տոբին ճանապարհ ընկան։

Մարսյան դաշտում նրանց արդեն սպասում էր արշավանքային զորասյուն կազմած ջոկատը։ 13-րդ գնդի նոր զինվորների կողմից ընտրված կապրալները և սերժանտներն իրանց տեղերում անշարժ կանգնեցին։

Տոբին նույնպես իր տեղը բռնեց ջոկատի առաջ։

Չորս կողմը կանգնել էր ճանապարհ գցողների խումբը։ Դաշտում քայլող կամավորների մի քանի գումարտակներ ընդհատեցին իրանց վարժությունը, վորպեսզի հրաժեշտ տան իրանց ընկերներին.

Կապիտանը տնտղեց շարքերը։ Ապա թուրը շարժեց։

— Քայլո՛վ... մա՛րշ, — հրամայեց նա։

Տոբին փայտիկներով զարկեց թմբուկի մաշկին։

ԳԼՈՒԽ X.

## ԹՄԲԿԱՀԱՐՈՒԹՅԱՄԲ

— Յես գոհ եմ ձեզնից, ընկերնե՛ր։ Զինվոր — քաղաքացու նշանաբանը — հայրենասիրությունը և կարգապահությունը — լավ եք յուրացրել։ Դուք վստահ եք ինձ վրա, չէ՞։ Դուք ինձ ճանաչեցիք հիմի...



Դուք ինձ հետ մարտի կգնաք։ Միշտ ուշադրություն դարձրեք հրամանին։ Շուտով մենք կընկնենք խաղողի յերկիրը։ Են ժամանակ հիմարություններ չանեք, տղերք։ Մենք Ֆրանսիայի քաղաքացիներ ենք, վոչ թե թալանչիներ և հարբեցողներ։ Առաջինը, ով յերևա... ենպիսի դրության մեջ... դուք հասկանում եք... կբանտարկվի և միայն հաց ու ջուր կստանա. կրկնվելու դեպքում յես նրան զեկույցի մեջ ցույց կտամ վորպես կասկածելի հայրենասերի, իսկ յերրորդ անգամ նա կհայտարարվի անուղղելի և հայրենիքին ծառայելու անարժան։ Են ժամանակ նրա մազերը, բեղերը, հոնքերը կածիլվեն, մեջքին տալով նա կվռնդվի դեպի Բրաունշվեյգցին... հասկանալի՞ յե։ Լա՛վ։ Թըմբկահա՛ր, արշավա՛նք խփիր։

Այս խոսքերով դիմեց կապիտան Պեպինն էր արշավանքի վեցերորդ օրը։ Զինվորները քմծիծաղ էյին տալիս. նրանք գիտեյին, վոր կապիտանն առիթ չի ունենալու իրագործելու իր սպառնալիքը։

Տոբին սկսեց քայլերգ խփել, բայց այնպես յեռանդուն, վոր կապիտանը նրան զսպեց։

— Զորամասը տար սովորակա՛ն քայլով, սատանի՛ տանի։ Հո ճակատամարտի չենք գնում...

Տոբին ժպտաց. դռոցը դանդաղեց։

Զորամասը ձգվեց Փարիզից Մեց տանող ճանապարհով։

Փարիզը շատ էր յետ մնացել։

Ժամանակ առ ժամանակ մերթ հանդիպում էյին կամավորների, մերթ իրանց հասնելով՝ սրարշավ անցնում էյին սուրհանդակներ՝ փրփրով պատած ձիերի վրա։ Յերբեմն ծանր դղրդոցով անցնում էյին կառքեր, հաճախ փարթամ, միշտ իջեցրած ծածկերով։ Զինվորները խեթ աչքով էյին նայում նրանց հետևից. արդյոք ազնվականներ և հարուստ բուրժուաներ չե՞ն, վորոնք Փարիզից արտասահման են փախչում։

Ճանապարհը կարծես սպիտակ ժապավեն լիներ, վոր ձգված էր հեռու կանաչ դաշտերի, արտերի, արոտների, թեք բլուրների և պուրակների միջով։

Շուտով առջևում յերևացին կտուրներ, զանգակատուն և սև ծխի քուլաներում կորած գործարանների խողովակներ։ Դա Ֆերտե քաղաքն էր։

Քաղաքի առաջ զինվորներն իրանց հավաքեցին։ Տոբին թմբուկը դռռացնելով՝ զլեց.

Որքա՜ն յերկար ստրկության դիմացանք...
Բավակա՛ն է այժմ. հընչել է ժամը։
Կեղծ ու պատիր պատկերներով, ինչ հանցանք,
Կապելով մեր աչքերը՝ տարան համը։

*Մեր դըրոշն են ազատություն և օրենք.*
*Պայքարելով՝ դըրանց մենք կըպաշտպանենք.*
*Տրամ-տամ-տամ.*
*Ձեզ վերջ կըտանք, դավաճաններ անըզգամ.*
*Թըմբուկները թունդ զարկեցեք. Տրամ-տամ-տամ:*

Զորամասը թրխկացնում էր փողոցի սալահատակը: Զինվորները զարմանքով դիտում էին կարծես մեռած քաղաքի տները, լուսամուտները, փողոցները: Նրանք արդեն սովորել էին, որ ամբողջ ճանապարհին բոլոր գյուղերում ու քաղաքներում իրանց անցնելուց բնակիչները դուրս թափվեն փողոց՝ ողջունելով մարտի գնացող կամավորներին:

Իսկ այստեղ միայն զառամ ծերերը և ծծկեր յերեխաներ ունեցող կանայք էին լուսամուտներից դուրս նայում և նրանց լուռ ուղեկցում աչքերով:

Հեռվից մի ինչ-որ տեղից լսվում էին զանգակի մի տեսակ տարօրինակ, ընդհատվող ձայներ, որ մերթ դղրդոցով և անկարգ թափվում էին իրար հետևից, մերթ հատ-հատ, մելամաղձոտ, անհանգիստ էին:

Կապիտանը հոնքերը կիտեց՝ չհասկանալով, թե բանն ինչումն է: Բայց այդ հնչյունները ոչ յեկեղեցական, ոչ էլ վտանգի զանգահարության էին նման: Նա քայլերն արագացրեց:

Զորամասն անցավ մի քանի մարդաշուրկ փողոց: Առջևը բացվեց մի հրապարակ: Այստեղից լսվում էր աղմուկ և բազմաթիվ ամբոխի աղաղակ: Յերևացին հրապարակ վազող մարդիկ:

Նրանցից մեկին կապիտանը կանգնացրեց:

— Քաղաքում ի՞նչ է պատահել, — հարցրեց նա:

— Ցած են բերում «տեր աստծու զանգուլակները», — պատասխանեց նա ծիծաղելով:

— Ի՞նչ... — ավելի շատ զարմացավ կապիտանը:

— Կոմունան վորոշել է յեկեղեցու զանգերն իջեցնել և Փարիզ ուղարկել թնդանոթներ ձուլելու համար, — բացատրեց քաղաքացին:

— Յեվ հիմի ցա՞ծ են բերում:

— Ճիշտ այդպես, քաղաքացի սպա: Ի ցավ ես սև թռչունների, — ավելացրեց նա՝ ցույց տալով անցնող տերտերի սև փարաջան: Տերտերը կզացած և լայն գլխարկն աչքերը գցած՝ արագ հեռանում էր հրապարակից. նա ծածկվեց՝ փողոցի անկյունն անցնելով:

— Դուք չե յեկել յերեկ... Ե՛հ, ինչ արած, — ամենքի սիրտը խոշ անել չի լինի, — ծիծաղաշարժ ձևով հառաչեց անցորդը:

Հրապարակը և նրան կպած մենաստանի այգիները ժողովրդով լիքն էին: Այստեղ էր շտապ հավաքվել ամբողջ քաղաքը: Յեռագույն շարֆով զարդարված քաղաքագլուխը կարգադրություններ էր անում:



Ահագին զանգը հաստ պարանների վրայով հանդարտ ցած էր սողում՝ ամեն մի հարվածի ժամանակ աղիողորմ հեծեծանք արձակելով:

Փարիզյան փողոցների աղմուկը հասել էր և՛ այդ փոքր, սովորաբար քնած գավառական քաղաքին: Հրապարակի մի քանի տեղերում հռետորները ճառ էին խոսում. այս կամ այն խմբերում վիճաբանում էին:

Յերիտասարդ տղաներն ու աղջիկները պարում էին փոշի բարձրացնելով և յերգով խլացնելով վիճողների աղաղակը:

Թմբկահարությունն ընդհանուրի ուշադրությունը գրավեց. ամբոխը լռեց. ամենքը վազեցին դիմավորելու մոտեցող զորամասին:

Կամավորների շարքերը մտան հրապարակ: Նրանց դիմավորելու էր գալիս քաղաքագլուխը՝ քայլելիս ուղղելով շարֆը:

— Կեցցե՛ սանկյուլոտների բանակը, — լսվեց ամբոխի միջից մի ձայն, որն անմիջապես արձագանքվեց ամեն կողմից:

Քաղաքագլուխը խոռությամբ շուրջը նայեց և կոկորդը մաքրելով՝ բերանը բացավ ողջունելու համար: Զինվորները նրա խոսքերը չլսեցին. իրանց կարմիր փեղույրները ծածանելով՝ նրանք պատասխանեցին ամբոխին.

— Կեցցե՛ ազգը: Կորչե՛ն թագավորն ու պրուսացիները:

Քաղաքագլուխը կաս-կարմիր կտրեց: Նա հարցական կերպով նայեց կապիտանին, նրա սպայական փայլուն ուսադիրներին: Կապիտանը հանգիստ ժպտում էր:

Այն ժամանակ քաղաքագլուխը չոր կերպով կապիտանին հայտնելով, թե ինչ տներում կարող են իջնել հանգստանալու համար, ինքը հեռացավ:

— Կապիտա՛ն, — դարձավ Պեպինին կապրալ Բրիսարը, վորը մի կարճ ու հաստլիկ փարիզեցի յեր, ուրախ ցցված քթով և միշտ ժպտացող աչքերով: — Զինվորները թույլտվություն են խնդրում քաղաքացիներին օգնելու, վորպեսզի տեր աստծուց ցած քաշեն նրա զանգուլակները:

— Ազա՛տ, — հրամայեց կապիտանը: — Հրացանները խաչաձևեցեք (в козлы) և ցրվեցեք:

Զինվորները կատարեցին հրամանը: Ամբողջ խմբով նրանք վազեցին դեպի զանգակատունը:

Կապրալն առաջինը վեր բարձրացավ: Բռնելով այն պարանից, վորից կախված էր ահագին զանգը, նա գոչեց.

— Բռնեցե՛ք, տղե՛րք: Ցած թողեցեք նորին սրբազնությանը:

— Սոզա՛, հաստափո՛ր — հարեց կապրալի մոտ կանգնած մի յերիտասարդ բանվոր.

Զանգը ծանր-ծանր ցած իջավ և ընկավ ահագին սայլի վրա, վորին լծված էին չորս ուժեղ ձիեր:

ԳԼՈՒԽ XI.

## ՆԵԳՈՑԻԱՆՏԸ — ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿ

Զորամասին բնակարան տրվեց քաղաքի ծայրում: Մոնտարժի հոբաքրոջ սայլակի առաջ բացվեց այն հյուրանոցի դարպասը, վորի վրա կար «Դեպի Ֆրանսիացի Թնդանոթաձիգը» ցուցանակը՝ նախկին «Արքայական Թագ»-ի փոխարեն: Կապիտանը և Տոբին նույն հյուրանոցում իջան:

Մինչ անհանգիստ պառավը տնտեսական գործերով եր զբաղված, կապիտանը պատշգամբում նստեց ծխամորճն ատամներում, իսկ Տոբին սուլեց Մոնշալեյին և նրա հետ փողոց վազեց:

Քարտաշ-բանվորները, ջրաղացաքար սրողները տուն եյին դառնում կաշվե գոգնոցներն ուսներին գցած:

— Մի ներկայացում չտամ ետեղ, հ՞ը,—գոչեց Տոբին կապիտանին: —Հարմար ժամանակ է, յես էլ նոր «Նոմեր» ունեմ:

— Սկսիր: Յես ոթյակում եմ նստել,—պատասխանեց կապիտանը:

Մի քանի րոպեյից Մոնշալեյն արդեն քայլում եր հետին վոտների վրա իր հրացանով: Ռամպոնետոը թասով ժողոված հանդիսականների շարքերով: Տոբին թմբկահարում եր:

Ունկնդիրները բաղկացած եյին գլխավորապես բանվորներից, կանանցից և մանուկներից, վորոնք դուրս եյին վազել հարևան տներից թմբուկի ձայնի վրա:

Քիչ հեռու, փոստային կայարանի մոտ մի քանի հոգի գլուխ եյին անում վերակացվի հետ. հանրակառքը մինչև այդ ժամանակ կայարան չեր հասել. արդեն յերեք ժամ ուշացել եր: Փարիզում ինչ պիտի պատահած լիներ: Յերեկ յերեկո կառապանն ասում եր. «Ոդում մրրկի հոտ կա»:

Կուշտ ընթրելուց հետո, պանդոկից դուրս յեկան 13-րդ գնդի կամավորները: Նրանք էլ մոտեցան ներկայացումը դիտելու:

Հասարակության մեջ մեծ աջողություն ունեցող մի շարք «նոմերներից» հետո, Տոբին գոչեց.

— Ուշադրությո՛ւն: Նոր նոմեր, վոր խսկի Փարիզն էլ դեռ չի տեսել. «Ֆնքույշ նամակ, կամ գերմանական թագավորն ինչպես է խոսում ֆրանսիական ազատ ժողովրդի հետ»:

Նա գրպանից հանեց մի թերթ: Ապա ձեռքերը տարածեց, թշերն ուռցրեց, աչքերը վայրագորեն չռեց և սկսեց բարձրաձայն կարդալ ֆելդմարշալ դուքս Բրաունշվեյգացու*) նամակի բառերը՝ ուղղված

*) Բրաունշվեյգացի—Լյունեբուրգցի դուքսը պրուսական և ավստրիական միացյալ զորքի սպարապետն եր (գլխավոր հրամանատարը): Նրա մանիֆեստը, վոր թելադրել եյին նրան եմիգրանտները, Լյուդովիկոս XVI-ի գիտությամբ Փարիզում տարածվեց հուլիսի վերջին և ոգոստոսի 10-ի ապստամբության անմիջական պատճառներից մեկը յեղավ:



ֆրանսիական ժողովրդին (այդ նամակը Փարիզում տարածվեց հուլիսի վերջին):

— «...Քաղաքների, գյուղաքաղաքների և գյուղերի այն բնակիչները, վորոնք կհամարձակվեն դիմադրություն ցույց տալ նորին կայսերական և նորին արքայական մեծությունների զորքերին և հրացան կարձակեն նրանց վրա, տեղնուտեղը կպատժվեն ռազմա-դաշտային դատարանի ամբողջ խստությամբ, իսկ նրանց տները կկործանվեն կամ կայրվեն». — ճչում եր Տոբին՝ սպառնալով մերթ հրացանի վրա կռթնած Մոնշալեյին, մերթ իրան շրջապատող մարդկանց: —«Փարիզ քաղաքին և նրա բոլոր բնակիչներին առաջարկվում է անհապաղ և առանց հետաձգելու յենթարկվել իրանց թագավորին»:

Այդ նամակն ըստ յերևույթին Ֆերսեն չեր հասել դեռ ևս: Բանվորները զարմացած լսում եյին և իրանց զայրույթն արտահայտում ընթերցանությունն ընդհատելով նորին մեծություններին ուղղվող յեռանդուն անեծքներով:

«Նորին կայսերական և արքայական մեծությունները—շարունակեց Տոբին—զինվորական դատարանով մահվան պատժի սպառնալիքի տակ և առանց վորևէ վիճողության՝ ամեն մի դիպվածի պատասխանատվությունը գցում են բոլոր աստիճանավորների վրա: Բացի այդ, նորին մեծությունները յերաշխավորում են իրանց կայսերական և արքայական խոսքով, վոր նրանք, վորպես օրինակ, այնպես վրեժխնդիր կլինեն Փարիզից, վոր այն յերբեք չի մոռանա այդ. նրանք Փարիզը կենթարկեն ռազմական եվակուացիայի (տեղահանման) և բնաջնջումի»:

Այստեղ Մոնշալեյը կատաղածի պես հարձակվեց Տոբիի վրա, նրա ձեռներից դուրս կորզեց թերթը և ատամներով ու ճանկերով պատառ-պատառ արավ:

Ծափահարությունների վորոտը վողջունեց այդ յեռանդուն դատաստանը:

Տոբին աջողությունից գոհ՝ իր արտիստների հետ դարձավ հյուրանոց: Տատիկը նրան վաղուց եր կանչել ոգնելու իրան:

Արդեն մթնեց. հասարակությունը դեռ ելի չեր ցրվում և քննարկում եր ֆելդմարշալի գրությունը:

Կանգնածներին մոտեցավ մի թափառաշրջիկ.

— Ընկերնե՛ր,—դիմեց նա նրանց աղիողորմ ձայնով: —Ոգնեցե՛ք դժբախտ հիվանդ զինվորիս: Ամբողջ օրը ճանապարհ եմ յեկել... հոգնածությունից վայր եմ ընկնում... Յես քաղցած եմ...

Մի կին վազեց տուն, վոր հիվանդ զինվորի համար ուտելիք բերի: Կամավորները զինվորին նստեցրին հյուրանոցի առջևը դրված նստարանին:

Դա քառասուն հինգ տարեկանի չափ մարդ եր, շատ բարձրահասակ, բայց հոգնածությունից և հիվանդությունից կորացած: Նրա անդրավարտիքը պատառոտված եր, ինչպես և համազգեստը, վորի կոճակները բաց եյին և տակից յերևում եյին շապկի ծվենները: Գլուխը թաշկինակով կապած եր. վոչ սռնապաններ (գետրիներ) ուներ, վոչ յերկարավիզ գուլպա. վոտների մատները դուրս եյին պրծել կոշիկներից:

Կռացած, յերկու ձեռներով ծնկները գրկած, աչքերը փակ, Թափառաշրջիկը քրթմնջում եր.

— Յես այնպե՜ս եմ հոգնել... Յես այնքա՜ն թույլ եմ, վոր չեմ կարող մի կտոր հաց կուլ տալ:

Ամենքը խղճում եյին թշվառին:

— Վորտեղի՞ց ես գալիս, ախպե՛ր, — հարցրեց նրան մի կամավոր:

— Սեդանից, Ռեթելի և Ռեյմսի վրայով:

— Դու ծառայում եյիր:

— Այո: Ժամանակս լրացավ: Յես հիվանդայա և ուզում եմ... տուն հասնել...

— Հեռո՞ւ յե տունդ...

— Ենտեղ ե... Շարտրի կողմը:

— Քեզ պիտի ոգնեյին: Վկայական ունե՞ս:

— Ինձ կողոպտել են: Ավազակները խլել են ամեն ինչ: Նրանք թռցրել են նույնիսկ «պատրոնս»*):

— Բաս թղթեր չունե՞ս, հա՞... — յերկարացրեց մյուսներից ավելի թերահավատ մի կամավոր: — Ներկայումս դա վտանգավոր բան ե:

— Միթե՞ յես մեղավոր եմ, — լացակումած ձայնով պատասխանեց Թափառաշրջիկը: — Յես վոչ թղթեր ունեմ, վոչ փող, վոչ շոր, վոչ ճերմակեղեն — ավազակները բոլորը խլել են: Ռեթելում ինձ փախած զինվոր կարծեցին: Յես բանտ ընկա: Հետո իմացան, վոր յես ազնիվ զինվոր եմ, — բաց թողեցին: Կամաց-կամաց տուն եմ գնում՝ վողորմությամբ ապրելով: Յես ինձ բանտարկողներին չեմ մեղադրում. հիմի ենքա՜ն փախստական զինվորներ կան ճանապարհներին:

— Փախստական զինվորնե՞ր: Մեր կողմերն եդպես բան չի յերևում... — զարմացավ մի բանվոր:

— Շուտով նրանք ձեզ մոտ ել կերևան: Սահմանում գտնվող գյուղերը փախչում են: Զինվորները բան չեն ստանում, նրանց համազգեստները ցնցոտիներ են դարձել: Վոմանք տուն են փախչում, մյուսներն անցնում են թշնամու կողմը սպիտակ կոկարդ կպցնում գլխարկներին: Եմիգրանտները նրանց ամեն բան տալիս են, ինչ վոր ուզում են, և նրանցից վոսկի չեն խնայում: Կապույտների*) մեջ խռովություններ կան:

*) «Պատրոն»-ը զինվորագրվածի արձակման թուղթն ե:

**) Այսպես եյին կոչվում կամավորներն իրանց համազգեստի գույնի համեմատ



— Կամավորների՞ մեջ:

— Այո, կամավորների մեջ: Նրանք նույնպես պատառոտած ու քաղցած են, ինչպես և հին զինվորները: Մատակարարները ծախսարարներից թուղթ փող չեն ընդունում: Ո՛հ, ինչքան վատ ե մեր բանը — ի՜նչքան վատ: Ինձ նման իսկական հայրենասերները հուսահատության մեջ են: Ամեն որ հարյուրավոր վախկոտներ ցած են դնում իրանց զենքերը. նրանք ծախում են իրանց համազգեստը և փախչում գյուղերը: Գերմանացիների հարվածին դիմադրել չենք կարող: Զինանոցները դատարկ են. մենք վոչ թնդանոթաձիգ զորք ունենք, վոչ ռումբեր... Ամսիս վերջը դեռ չհասած՝ ավստրիացիները, պրուսացիները և եմիգրանտներն իրանց ձեռքը կգցեն Մեցը, Սեդանը և Ռեյմսը. Ռուսական թագուհին ուղարկելու յե հարյուր հիսուն հազար զինվոր. անգլիացիները կխլեն մեր նավահանգիստները. Փարիզը կկողոպտեն և կայրեն:

— Դա լի՜րը ստախոսություն ե, — լսվեց մի բարկացած ձայն:

Կապիտանը պատշգամբից բոլորը լսում եր: Նա ցած վազեց և խոշոր քայլերով կիպ մոտեցավ Թափառականին, վորը չկարողացավ թաքցնել իր վախը:

— Վե՛ր կաց, — հրամայեց կապիտանը: Թափառաշրջիկը վեր ցատկեց:

— Ցո՛ւյց տուր քո «պատրոնը»: Հա՞... լսեցի. քեզ կողոպտել են: Մի լապտեր տվեք ինձ:

Թափառաշրջիկն աշխատեց իրան պաշտպանել:

— Ինձ կողոպտող ավազակների մեջ յերևի փախած զինվորներ կային, — ասաց նա: Նրանք իմ «պատրոնից» կոգտվեն՝ վորպեսզի իշխանությունները չնեղացնեն իրանց:

— Դու հնարագետ ես: Ի՞նչ ե անունդ:

— Մորեսկո:

— Վո՞րտեղացի յես:

— Ֆրանկովիլից, Շարտրի մոտից:

— Շարտրից... բայց խոսում ես գասկոնցու պես: Տեսնե՛նք...

Այդ ժամանակ լապտեր բերին: Կապիտանն սկսեց տնտղել Թափառաշրջիկին. խնամված դեմք, քնքույշ մորթ, ականջները չծակված... Ուրեմն գյուղացի չի:

— Ձեռներդ ցույց տուր:

— Ձեռնե՞րս, — թոթովում եր Թափառաշրջիկը:

— Ձեռներդ ցո՛ւյց տուր:

Թափառաշրջիկը յերկչոտությամբ մեկնեց ձեռը:

— Ձեռներդ հին զինվորի ձեռներ չեն: Եդ եդպես: Վո՞ր գնդից ես:

— 89-րդ գծային գնդից:

— Ենտեղ գասկոնցի համարյա չկար: Հը՛մ... Հը՛մ... հետո՞: Վո՞ր գումարտակից:

— Առաջին։
— Վո՞րտեղ եր լինում։
— Սեդանում։
— Սուտ ես ասում. Սեդանում յերկրորդն եր լինում։ Ադյուտանտի անունն ի՞նչ եր։
— Չեմ հիշում... Մոռացել եմ։
— Չե՞ս հիշում։ Եդպես։ Եդպես։ Իսկ համազգեստի կոճակները տեսեք. եդ գնդինը չեն, սատանի՛ն տանի։ Լապտերը պահիր տեսնեմ։
Կապիտանը լապտերը դրավ մի կամավորի ձեռք։ Ապա արագ շարժումով ձեռը մեկնեց դեպի Թափառաշրջիկի գոտին։
Նա յետ քաշվեց և նստարանին կպչելով ընկավ։
— Ո՛, — լաց յեղավ նա, — դուք է՛լ եք ինձ փախստական զինվոր և լրտես կարծում... Լա՛վ։ Արեք ինչ վոր ուզում եք։ Յես արդեն ենքան ցավ ու փորձանք եմ տեսել, վոր կյանքից զզվել եմ։ Բայց կգա մի որ, կապիտան, վոր դուք կցավեք դժբախտ զինվորի հետ եդպես անգութ կերպով վարվելու համար։
— Մի լար... — ընդհատեց նրան կապիտանը հանգստացուցիչ ձայնով։ — Յես խղճում եմ քեզ... Կե՛ր, խմի՛ր ու ճանապարհդ գնա։ Վոչ վոք չի կարող ասել, թե 13-րդ գնդի սպան հիվանդ զինվորին բաց է թողել առանց փողի, առանց հագուստի, առանց ճերմակեղենի։
— Տոբի՛, — բարձր կանչեց կապիտանը։
Թափառաշրջիկը վախից ազատվելով՝ նստեց նստարանին և սկսեց ուտել բերած կերակուրը։ Տոբին իսկույն վազեց յեկավ կապիտանի կանչին։ Կապիտանը նրա ականջին մի բան փսփսաց։ Տոբին յետ վազեց տուն և մի րոպեյում դարձավ՝ ձեռին անդրավարտիկ և շապիկ բռնած։
— Դե՛հ, ընկե՛ր, — դարձավ կապիտանը Թափառաշրջիկին, — հագուստդ փոխի՛ր։ Շո՛ւտ։
Թափառաշրջիկը գունատվեց. նրա շրթունքները դողացին։
— Շնորհակալություն, կապիտան, — քրթմնջաց նա։ — Յես ճանապարհին կփոխեմ շորերս...
— Վո՛չ, հիմի...
— Եստեղ հո չի լինի... Ամենքի աչքի առաջ...
— Են ժամանակ տո՛ւնը մտիր։ Վե՛ր կաց։
Թափառաշրջիկը վեր կացավ։ Լապտերի լույսն ընկավ դեմքին։ Տոբին մոտեցավ՝ սուր մտիկ տալով նրան։ Նա յերկար նայում եր այնքան ծանոթ թվացող դիմագծերին։ Դե, իհարկե՛, նույն ուժեղ բարձրահասակ պատկերն է, նույն խոշոր գծերով դեմքն է, բայց լղարած, ցեխի բծերով և փոշու խիտ շերտով անճանաչելի դառնալու չափ այլանդակված։



— Բատխա՜։ Սա նա չե... Եյլբա՛ն։ Նեգոցիա՛նտը, — գոչեց Տոբին։
Դա իսկապես վոր Եյլբան եր, բայց այնպես վողորմելի, կեղտոտ, բզկտված, վոր դժվար եր նրան համարել այն գիրուկ նեգոցիանտը, վորն աներկյուղ դուրս եր յեկել պաշտպանելու իր «վոտնահարված իրավունքները»։
Եյլբան հենց վոր լսեց իր անունը, իսկույն մի կողմ նետվեց։
— Բռնեցեք դրան, — գոչեց կապիտանը։
Բայց այդ ժամանակ նա՝ չնայած իր ուժասպառ տեսքին՝ Եյլբան իր հունարը ցույց տվավ։ Քիչ առաջ, վոր այնքան թշվառ ու թույլ եր, նա հիմա ապշեցուցիչ ճարպկությամբ և ուժով աշխատում եր դուրս պրծնել։ Իր վրա հարձակվող Բրիսսարի փորին գլխի հարված հասցնելով՝ նրան տապալեց, կապիտանին գետին գլորեց, բռունցքը, գլուխը, վոտները բանի դնելով՝ կատաղած յեզան պես բոլորին դեսդեն շպրտտեց, դուրս պրծավ ամբոխի միջից և բոլոր ուժով փախավ դեպի գետը։
— Բռնեցե՛ք դրան, — գոչում եր կապիտանը՝ գետնից վեր կենալով։ — Նա փող ունի. գոտին լիքն է*)։ Նա լրտե՛ս է։
Եյլբայի հետևից ընկան։ Բայց նա արդեն կտրեց անցավ կամուրջը և թռավ դեպի գետի ձախ ափի այգիներն ու արտերը։ Տոբին բոլորից առաջ եր վազում։ «Բռնի՛ր, բռնի՛ր» աղաղակների մեջ հեռվից լսվում եր Մոնշալեյի հաչոցը։
Ճանապարհի պտույտին, ուր ճանապարհը բոլորում եյին ցանկապատերը, Եյլբան և Տոբին աչքից կորան։
Հետապնդողները կանգ առան ականջ դնելու։
— Յետևիցս յեկե՛ք։ Եստե՛ղ, — հասավ նրանց Տոբիի ձայնը։
Այդ կանչի վրա սլանալով՝ հետապնդողները յեկան դեպի գետի մի ճյուղը։
Կապիտանը նորից կանգ առավ։ Վոչ մի հնչյուն չեր լսվում — վոչ Տոբիի ձայնը, վոչ մի դոփյուն, վոչ թփերի խշխշոցը։
— Նա յեղբորս ջուրն է գցել, — խեղդված ձայնով ասաց կապիտանը։ Նրա ճակատին պատեց սառը քրտինք։
— Սո՛ւս, — շշնջաց մի կամավոր։ — Կարծես շան հաչոց է գալիս։ Այնտեղ... Թփերի հետևը, ձախ կողմը։
Բոլորը լռեցին։ Իսկապես թփերի հետևից լսվում եր ջրի ճողփյուն և շան հաչոց։
«Տոբի՛, Տոբի՛» կանչելով՝ կապիտանը տեղից նետվեց և թփերը կոտրատելով՝ վազեց հաչոցի վրա։
— Բատխա, մի՛ վախի... Յես եստեղ եմ, — լսեց նա Տոբիի ձայնը։

*) Այդ ժամանակներում ճանապարհորդները սովորաբար շորի տակ կաշվե գոտիներում եյին պահում իրանց փողը։

Թփերի հետևից դուրս յեկավ Տոբին՝ տրորված, դողդողալով, ցեխում կորած. Ջուրն առվի պես վազում եր վրայից։

— Ցես լողացա... բ՛ռ՛ռ...

— Իսկ լրտեսն ինչ յեղավ։

— Փախավ... Մոնշալեյը կծոտեց նրա վոտները։ Ցես չկարողացա նրան պահել։ Նա ինձ վերցրեց ջուրը գցեց, բայց ինքն ել չկարողացավ իրան պահել և շրմփաց հետևիցս։ Լավ է վոր ձկան նման լողալ գիտեմ։ Յերբ յես ջրից գլուխս հանեցի, նա արդեն ջրից դուրս եր գալիս այն ցեխը խրված ծառի մոտից։

— Փախավ անպիտանը... Լավ է վոր դու գոնե վողջ ես մնացել։ Նա կարող եր քեզ խեղդել։ Ե՛յ, տղերք,— դիմեց կապիտանն իրան և Տոբիին շրջապատած կամավորներին։— Թփերը պտտեցե՛ք, ամբողջ գետափը։ Լրտեսին պետք է ճարել ինչպես ել վոր լինի։

— Դեռ սպասեցե՛ք, պարո՛ն Եյլրա, մի որ մենք դեռ ձեզ կպատահենք։

Տոբին զայրույթից դողում եր. իր փոքրիկ բռունցքով նա սպառնում եր տարածությանը։

Կապիտանը փնթփնթում եր.

— Հը՛, բանդի՛տ... Ձեռքից դուրս պրծավ...

Քառորդ ժամից հետո կապիտանը Տոբիի հետ մոտենում եր հյուրանոցին։ Փոստի կայարանի մոտով անցնելիս նրանք նկատեցին, վոր ամեն կողմից այդտեղ եյին վազում տղամարդիկ ու կանայք և խմբ ողակի պես շրջապատել եյին Փարիզից հենց նոր յեկած փոստի կառքը՝ Ամբոխի մեջ ասում եյին.

— Փարիզում հեղափոխություն է... Ժողովուրդն ապստամբվել է։

Կապիտանը մոռացած լրտեսին և Տոբիի լողանալը՝ վազեց դեպի կայարանը։ Յերկու ազգային գվարդիականներ լապտերները ձեռներին նայում եյին նոր յեկած բուրժուաների անցագրերը, վորոնք առաջին հրազարկերից վախեցած՝ փախել եյին Փարիզից։ Մի կարճ հասակով կին, լայն պատմուճան հագած, գնդի պես գլորվում եր հանրակառքից դեպի ամբոխը և նորից դեպի հանրակառքը, ուր քննում եյին նրա արկղներն ու հակերը։ Կարճ ձեռները թափահարելով՝ նա վրա յեր տալիս՝

— Ես ինչքան ժողովուրդ կա... Ամեն կողմից գալիս են։

«Ուրեմն սկսվե՛լ է։ Հիմի պետք է զգույշ լինել»,— մտածեց կապիտանը։ Նա ամբոխի մեջ գտավ Տոբիին և յետևից տարավ հյուրանոց։

— Տոբի՛,— հրամայեց նա,— վերցրու թմբուկը, հավա՛ք խփի՛ր։ Զորամասը պետք է ժողովել։ Ես հո վոտից գլուխ թաց ես... յես ել մոռացել եյի։ Առաջ վազի՛ր շորերդ փոխի՛ր։

Տոբին յերկար սպասել չտվավ։ 13-րդ գնդի կամավորները շուտով սկսեցին շտապ հավաքվել թմբուկի ձայնի վրա։ Վազելով յեկան և



նրանք, վորոնք Եյլրային հետապնդելու եյին գնացել։ Նրանք հուսահատության մեջ եյին. բոլոր թփերը տակնուվրա եյին արել, բայց մթության մեջ չեր աջողվել փախստականի հետքը ճարել։

— Հիմի մեր ցավը դա չի,— պատասխանեց կապիտանը նրանց տրտունջներին։— Բանն ավելի լուրջ է։ Փարիզում ապստամբություն է։ Կռիվները կարող են Փարիզից գավառ անցնել։ Շա՛րք կանգնեցե՛ք։

Քառորդ ժամից հետո ջոկատը մտնում եր քաղաքի գլխավոր հրապարակը։ Փարիզի ապստամբության մասին ամբողջ քաղաքը գիտեր, և հրապարակը լցված եր հուզված ամբոխով։

Քաղաքային խորհրդի լուսամուտները պայծառ լուսավորված եյին։ Շենքի առաջ շար եր ընկել ազգային գվարդիայի մի գումարտակ։

Ամբոխը խռնվում եր քաղաքային խորհրդի դիմացը գտնվող յերկհարկ մի տան մոտ։ Այնտեղ եր գտնվում Յակոբենների տեղական ակումբը*)։ Կատարվող դեպքերը ցնցել եյին ամբողջ քաղաքը։ Ամենքն զգում եյին, վոր անհրաժեշտ է գործի կպչել։ Շատերը հրապարակ յեկան զինված։

Յակոբենները նիստ ունեյին։

Զորամասն ակումբի մոտ կանգնեցնելով՝ կապիտանը ներս մտավ։ Այդ ժամանակ փողոցում աղաղակներ լսվեցին.

— Փարիզի՛ց։ Փարիզի՛ց։ Ճանապա՛րհ տվեք։

Փոշու մեջ կորած մի ձիավոր իր համար ճանապարհ եր բանում ամբոխի մեջ։ Նա հասավ ակումբի շենքին, ձիուց ցած թռավ, վազեց վեր և մի րոպեյից հետո յերևաց պատշգամբում։

— Քաղաքացինե՛ր,— դիմեց նա ժողովրդին։— Փարիզն ապստամբվել է, վորպեսզի թույլ չտա սահմանադրության և ազատության դեմ պալատականների մտածած պետական հեղաշրջումը գլուխ բերելու։ Հայրենասերների զորասյուներ են կանգնած Տյուիլրիի դեմ ֆեդերատների և բանվորների գլխավորությամբ։ Տյուիլրին պաշտպանում են շվեյցարական գվարդիան, ազգային գվարդիայի յերկու գումարտակ և ազնվականները։ Զորատես անելուց հետո թագավորը համոզվել է, վոր չի կարող դիմադրել։ Լյուդովիկոս Վերջինն իր ընտանիքով փախել է պալատից և թագնվել ազգային ժողովարանում։

Յակոբենների նիստը վերանորոգվեց։

Հրապարակում իրար եյին պատմում ապստամբության մանրամասնությունները, վոր լրաբերը հաղորդում եր ակումբում։

Քաղաքային խորհրդարանից աննկատելի կերպով դուրս եյին գալիս քաղաքային վարչության անդամները։ Նրանք ականջ եյին դնում

*) Հեղափոխական ամենաազդեցիկ ակումբը։ Դա գտնվում եր Փարիզում, իսկ գավառական քաղաքներում բազմաթիվ բաժանմունքներ ուներ։ Ակումբի անունը նրանից եր առաջացել, վոր նա գտնվում եր Ս. Հակոբի մենաստանի շենքում։

ամբոխի խոսակցությանը և ապա աննկատելի կերպով անհետանում էյին հրապարակին կից մութ նրբանցքներում։

Ակումբից դուրս վազեց կապիտանը։

— Հանդարտ, — հրամայեց նա իր զորամասին։

Նրա յետևից դռնից դուրս յեկան ակումբի բոլոր անդամները։ Կապիտանի ջոկատը շրջապատեց նրանց։ Նրանց յետևից իրար մոտեցան զինված բլուզավոր մարդիկ։

Ամենքը շարժվեցին դեպի քաղաքային խորհրդարանը։ Ազգային գվարդիան սվինները դեպի նրանց ուղղեց։ Կապիտան Պեպինն առաջ գալով՝ պահանջեց, վոր թույլ տրվի ազատ անցնել։ Ազգային գվարդիայի սպան մերժեց։ Մինչ անդի էյին ունենում բանակցությունները, քաղաքային խորհրդարանում վորոնում էյին քաղաքագլխին, բայց բոլոր դահլիճները, առանձնասենյակները դատարկ էյին. քաղաքագլուխը և քաղաքային վարչության անդամները բոլորը փախել էյին։

Քաղաքային գվարդիան, վոր այլևս պաշտպանելու բան չուներ, շարքերը բացավ։

Տոբիի թմբուկը թնդաց։ Ֆերոե քաղաքի Հեղափոխական Կոմմունայի անդամները մտան քաղաքային խորհրդարանի շենքը։

Քիչ ավելի ուշ մի յերկրորդ սուրհանդակ սլանում էր քաղաքով՝ կանգ առնելով հրապարակում, ուր ամբողջ գիշերը կանգնած էր ամբոխը, նա բարձրաձայն գոչեց.

— Թագավորի շվեյցարական գվարդիան կրակ է բացել հայրենասերների զորասյունների դեմ։ Վեստերմանը*) ժողովրդին հարձակման առաջնորդեց։ Արյունահեղ մարտից հետո ժողովուրդը գրավեց պալատը՝ Թագավորի պաշտպանների մի մասը բանտարկված է, մյուս մասը կոտորված։ Ազգային ժողովը գահավիժել է Լյուդովիկոս XVI-ին։ Կեցցե հանրապետությունը։

Յեվ նա սլացավ առաջ։



*) Վեստերմանը օգոստոսի 10-ի ապստամբության ղեկավարներից մեկն էր։ Ինքը հասարակ զինվոր էր, բայց Տյուիլըրիի մոտ կռիվների ժամանակ յերևան բերավ ռազմական փայլուն ընդունակություններ։



ԳԼՈՒԽ XII.

# ԲԱՆԱԿԸ ԶՈՐԱՏԵՍՈՒՄ

—...Բայց դուք չեք դավաճանի ժողովրդին։ Վաղը...

— Տոբի, յեկ տուն, — Տոբիի ճառն ընդհատեց Բատիստը։

— Իսկույն, խոսքս միայն վերջացնեմ...

— Վոչ մի խոսք այլևս։ Յեկ տուն։

Տոբին կանգնած մի խումբ զինվորների մեջտեղը, հուզմունքից շընչասպառվելով՝ ճառ էր արտասանում։

Նրա շուրջը և քիչ հեռու կանգնած էյին զինվորների խմբեր կամավորական կապույտ և սպիտակ գնդերի սև, կանաչ, կինամոնագույն համազգեստներով։ Նրանք իրար վրա հայհոյանք էյին թափում. մի կողմից աղաղակում էյին — «Արքայական վարձկաններ։ Մատնիչներ», իսկ մյուս կողմից վոչ պակաս յեռանդով պատասխանում էյին՝ «Թավարարներ, սրիկաներ», և ծաղրական՝ «Հեյ, դուք, ազատության սիրեցյալ զավակներ»։

Բատիստը Տոբիի անհնազանդությունից չարացած՝ խոշոր քայլերով մոտեցավ նրան, բռնեց ձեռից և տարավ իր յետևից։

— Բատիստ, — բացականչեց Տոբին։ — Ի՞նչ է պատահել։ Ինչու բարկացար։

Նա շփոթված և զարմացած էր։ Իրանում մեղք չեր տեսնում. նա այն էր ասում, ինչ վոր նրա տեղ կասեր և՛ կապիտանը. դրանում նա համոզված էր։

— Մի՞թե յես անիրավացի էյի, — շփոթված ու զարմացած հարցրեց Տոբին։

— Ձենդ։ Իսկ ճառերն ինչի համար են... — կտրուկ ասաց կապիտանը,

— Բայց ախր մեզ ուզում են մատնիչներ դարձնել...

— Դրա մասին հետո։

— Վո՞նց թե հետո։ Մի՞թե դու հրամանը չգիտես. ամեն տեղ կախված է։

Տոբին գրպանից հանեց մի ճմլված թերթ և մեկնեց կապիտանին։

— Աֆիշա՞ն էլ պոկել ես։ Լա՞վ ես։ Մա՜րշ հետևից։

Կապիտանը յետ մղեց իրան մեկնած աֆիշայով ձեռը և ավելի արագ քայլեց դեպի տուն։ Տոբին վազելով հազիվ էր հասնում նրա հետևից։

Կապիտանը վստահ էր գնում Սեդանի իրան ծանոթ փողոցներով։ Միայն յերեկ յերեկոյան էր այդտեղ բերել իր զորամասը, կամավորներին ներկայացրել գեներալին, վորը հավանել էր նրա ընտրությունը. ամբողջ 150 հոգին ճանապարհը կտրել էյին՝ վորպես զբոսանք։ 13-րդ

գնդի նոր զինվորները բաշխվել էյին վաշտերին. սերժանտները հոգում էյին, վոր հագցնեն և զինեն նոր մարդկանց, իսկ զինվորները բարեկամաբար դիմավորելով փարիզեցիներին՝ հարցեր էյին տեղում նրանց գլխին այն մասին, թե Փարիզում ինչ է կատարվում:

Կապիտանը Տորէին և Մոնտարժի հորաքրոջը տեղավորեց մի փոքրիկ տնակում, ուր նա վաղուց էր արդեն բնակվում: Հենց այստեղ էլ նա հիմա բերավ Տորէին:

Մոնտարժի հորաքույրը աչքերը չռեց, յերբ տեսավ մռայլ Բատիստին և նրա հետեից յեկող շփոթված Տորէին:

— Ի՞նչ է պատահել, — հուզված հարցրեց պառավը:

Կապիտանը նրան չպատասխանեց:

— Նստիր եստեղ, — դիմեց նա Տորէին: — Մինչև վերադառնալս դուրս չգաս: Հորաքույր, տնից դուրս չթողնե՛ք ես ղոչաղին: Ձեր պատասխանատվության տակ է...

— Բատիստ, — աղերսեց Տորէն: — Ախր յես ինչ եմ արել, է: Միթե յես իրավունք չունեյի ընկերներին ասելու, վոր գեներալ Լաֆայետը դավաճան է և մեզնից դավաճանություն է պահանջում:

— Բոլորն ընկեր չեն: Բանակում հարկավոր է զգուշություն և ամենից առաջ կարգապահություն: Նստիր եստեղ: Թող մեծերն անեն ինչ վոր պետք է:

Կապիտանը խստորեն դարձավ և գնաց դեպի դուռը: Այդ ժամանակ դուռը բացվեց, և ռումբի նման սենյակը ներս թռավ Բրիսսարը:

— Կապիտա՛ն, — նետվեց նա դեպի Բատիստը: — Մենք չենք յերդվելու: Յեվ վոչ միայն մենք, բոլոր զինվորներն էլ չեն ուզում դավաճաններ լինել:

— Ձեզ յերդվելու, — չոր և հրամայական ձայնով պատասխանեց նրան Բատիստը: — Առայժմ լռել և սպասել ինձ: Բանակից վոչ մի տեղ դուրս չգա՛լ: Հասկացա՞ք:

Յեվ նա դուրս յեկավ սենյակից:

Բրիսսարի բերանը բաց մնաց՝ կապիտանի խստությունից ապշած:

— Եդ ինչ է, ցնորվե՞լ է, ինչ է, — դիմեց նա Տորէին՝ ուշքի գալով:

Տորէն միայն ուսերը թոթվեց:

— Նա ինձ հեռացրեց զինվորներից, վորոնց յես համոզում էյի չերդվել, և հրամայեց սենյակից վոչ մի տեղ դուրս չգալ:

— Եդ ինչ է յեղել ձեր մեջ, — մեջ ընկավ Մոնտարժի հորաքույրը — ելի տակից-գլխից դուրս ես տվել, հա՞:

— Ի՞նչ տակից-գլխից, յերբ ուզում են մեզ ստիպել յերդվելու թագավորին: Տեսնես Լաֆայետն ուզում է զորքերը տանել Փարիզի վրա, ինչ է... Ա՛ռ, տե՛ս, նանի՛:



Տորէն բաց արավ թերթիկը և մեկնեց պառավին:

— Կորիր քո թղթերով: Չեմ ուզում եդպես բաներ կարդալ...

— Տես, Բրիսսար, — չէր հանդստանում Տորէն: — Տես ես ինչ է գրած եստեղ. «Ժողովը ապստամբված ամբոխի ստրուկն է...,» «սահմանադրությունը պղծված է...», «Բռնացողներ...», «Որենքի դրոշի տակ մնացեք...», «Յերդում եմ հավատարիմ լինել սահմանադրությանը և թագավորին...»: Ախր սատանան գիտե, թե ինչ է սա: Թող կապիտանն անի իր սրտի ուզածը, բայց յես չեմ լռելու:


Լաֆայետ

Բրիսսարը վեր ցատկեց աթոռից և վճռական քայլով դիմեց դեպի դուռը:

— Յես էլ եմ քեզ հետ գալիս, — հայտնեց Տորէն:

— Չհամարձակվես դուրս գալ, — նրա վրա գոռաց Մոնտարժի հորաքույրը: — Բատիստը հրամայել է քեզ տանը նստել, դու էլ նստիր: Նա քո հրամանատարն է: Մի սրա՛ն տեսեք, յերկու մատ յերեխան բան պիտի սովորեցնի գեներալին... Փարիզի փուչերը վիրավորել են թագավորին, թող գեներալն էլ նրանց ցույց տա: Նրանց հախն է:

— Ա՜խ, նանի, դու մի գլուխ քոնն ես ասում... Թե գեներալը, թե թագավորը — դավաճաններ են, — բարկացած ասաց Տորէն:

Չնայած տատի ընդիմադրությանը՝ նա ելի սենյակից դուրս պրծավ Բրիսսարի յետեից:

* * *

Փարիզյան կամավորները Սեդան ընկան այնտեղ կատարվող դեպքերի ամենայեռուն ժամանակը:

Տասնեւինն հազար հոգուց բաղկացած բանակի հրամանատար գեներալ Լաֆայետն արդեն օգոստոսի 12-ին փարիզյան դեպքերի մասին հաղորդագրություն ստացավ: Չնայած վոր փարիզյան հեղափոխական կոմիտեն հենց հեղաշրջման որը հրաման էր արձակել փակել փարիզյան ուղեփակները և առանց հատուկ անցագրերի վոչ վոքի բաց չթողնել, այնուամենայնիվ Լաֆայետի ադյուտանտին աջողվեց Փարիզից դուրս պրծնել: Նա առաջինը հաղորդեց գեներալին Տյուիլրին վերցնելու, թագավորին բանտարկելու և բանակը Ազգային ժողովի կոմիսարներ ուղարկելու մասին, վորոնք պետք է տեղեկացնեյին բանակին կատարված հեղաշրջման մասին:

Լյուդովիկոսին գահընկեց անելու վերաբերյալ Ազգային ժողովի վորոշումին ընդիմանալու վճիռը Լաֆայետն արավ անմիջապես։ Օգոստոսի 13-ին Լաֆայետը Սեդանի քաղաքային վարչությանն ուղարկեց մի նամակ, վորով պահանջում եր բանտարկել Ազգային ժողովի կոմիսարներին, վորոնք այդ ժամանակ պիտի գային։ «Բոլոր բարի քաղաքացիները պետք ե գիտենան, — գրում եր նա, — վոր օգոստոսի 10-ին բռնություն ե յեղել գործ դրված Ազգային ժողովի վրա. նրա այն անդամները, վորոնք գալու յեն, ոժանդակողներ են այն խռովարարներին, վորոնք դավաճանել են սահմանադրությանը և թագավորին։ Հանուն օրենքի, պատերազմի շահերին համապատասխան և իմ անձնական պատասխանատվությամբ, հրամայում եմ կալանավորել այն անձերին, վորոնք իրանց անվանում են Ազգային ժողովի կոմիսարներ»։ Կալանավորումը կատարվեց միանգամայն գաղտնի։ Զինվորները այդ մասին վոչինչ չգիտեյին, ինչպես չգիտեյին նաև իրանց հրամանատարի այլ խռովարար արարքների մասին։

* * *

Յերեկոյան դեմ կապիտանը տուն դարձավ։

— Տորին ո՞ւր ե, — հարցրեց նա Մոնտարժի հորաքրոջը։

— Են Բրիսարի հետ փախավ։ Տեսնես վո՞նց են լեզուներին զոռ տալիս իրանց նման փուչերի մոտ, — պատասխանեց պառավը։

— Իսկ դու ինչո՞ւ բաց թողեցիր նրան։

— Յես նրան ի՞նչ կարող եմ անել։ Դու ինքդ ես յերեխի կապը կտրել, մոտն ինչ հիմարություններ ասես վոր դուրս չես տվել, հիմի քե՛զ տաս։

— Լա՛վ, յես նրան ցո՛ւյց կտամ, — հենց միայն այդ պատասխանեց կատաղած կապիտանը։ Նա դուրս յեկավ և ուղևորվեց դեպի գնդի ճամբարը։

Ինչպես ամբողջ քաղաքում, ճամբարում ես հուզմունք եր թագավորում։

Լաֆայետի հետ թագավորի՞ կողմը, թե՞ Փարիզի հետ յերկրի կողմը և ժողովուրդ — բանակը պետք ե վճռեր այդ։

Վորսորդների 13-րդ գունդը բաղկացած եր լավ հայրենասերներից՝ հին զինվորները, զինվորագրվածները, կամավորները, համարյա ամբողջ սպայական կազմը հաստատ գիտեր, թե ինչ վորոշում պիտի անել՝ Իսկ մնացած բոլոր զորամասե՞րը, մշտական գնդե՞րը։ Բանակում ռոյալիստորեն տրամադրված զորամասերը քիչ չեյին։ Արիստոկրատ սպաները, վորոնք չեյին կարողացել փախուստ տալ, դեռ վճռական ազդեցություն ունեյին բոլոր հեծյալ գնդերում և մասամբ հետևակ գնդերում։ Լաֆայետը կարող եր հաստատապես հույս դնել համարյա ամբողջ հեծ-



ծելազորի և մի քանի հետևակ գնդերի վրա։ Նրա հաշվով այդ գնդերն իրանց հետևից պետք ե տանեյին ամբողջ բանակը։

Առավոտվանից սկսած Սեդանում նիստ ունեյին գումարտակային և գնդային կոմիտեները։

Գնդերն անհամբեր սպասում եյին նրանց վորոշումին. նրանցից եր կախված վոչ միայն յերկրի ազատության փրկելը, այլև կամավորների ու մշտական գնդերի զինվորների մեջ բռնկվելու պատրաստ ընդհարումների առաջն առնելը։

13-րդ գնդի զինվորները դեռ հեռվից տեսան մոտեցող կապիտանին և նետվեցին դիմավորելու նրան։

— Կապիտան Պեպինը։ Կապիտան Պեպինը կոմիտեյից*) գալիս ե, — տարածվեց ամբողջ ճամբարում։

Ամեն կողմից վրաններից զինվորները, կապրալները, սերժանտները, սպաները վազում եյին դեպի կապիտանը։ Նրանք նեղ օղակով շրջապատեցին կապիտանին. մոտիկ կանգնածները նրան իրանց ուսերին բարձրացրին, վորպեսզի նրա խոսքերն ամենքի համար լսելի լինեն։

— Զինվորնե՛ր, — դիմեց նրանց կապիտանը։ — Գեներալ Լաֆայետի հրամանով վաղն ամբողջ գունդը կատարյալ կարգով դուրս պիտի գա զորատեսի...

— Յերդվելո՞ւ։ Վո՛չ։ Չե՛նք գնալ։

— Կորչի՛ Լաֆայետը, — գոչեցին ամեն կողմից։

— Լռությո՛ւն։ Թողեք խոսեմ։ Յերդումը կարդալուց վոչ վոք ձեռք չի բարձրացնի։ Լսեցի՞ք։ Գունդը յերդվելուց հրաժարվում ե։

— Վիվա՛տ**)։ Հրաժարվո՛ւմ ե։

— Գունդը կերդվի հավատարիմ լինել Ազգային ժողովին։

— Վիվա՛տ։

— Իսկ մյո՞ւս գնդերը, — նորից ընդհատեցին նրան զինվորների աղաղակները։

— Փարիզի, Մարնի, Այնյի, Սենի, Մերտի, Շարանտի, Վոգեզների, Արդեննի, Հյուսիսի, Ենայի գումարտակները — բոլոր կամավորական գումարտակները հրաժարվում են յերդվելուց։ Մեզ հետ են 44-րդ, 52-րդ, 94-րդ, 19-րդ, 29-րդ, 71-րդ, 98-րդ մշտական գնդերը։ Ամբողջ թնդանոթաձիգ զորքը հավատարիմ ե ժողովրդին։ Հեծելազորը կգնա յերևի Լաֆայետի հետևից։ Միայն ձիավոր վորսորդները կհրաժարվեն յերդվելուց։

— Մենք մեծամասնությո՞ւնն ենք։ Թնդանոթաձիգը ժողովրդի՞ կողմն ե։

*) Բանակում գումարտակներում գոյություն ունեյին ընտրովի կոմիտեներ, վորոնք աչքի ընկնող դեր խաղացին զորքերի հեղափոխականության ամրացման մեջ։

**) Կեցցե։

— Հիմի ա՛յ թե ինչ,— ընդհատեց կապիտանն աղմուկը։— Եստե՞ղ են կապրալ Բրիսարը և առաջին գումարտակի թմբկահարը։

Վերջին շարքերից ձայներ լսվեցին։

— Եստե՛ղ եմ, կապիտա՛ն։

— Եստե՛ղ եմ, կապիտան։

— Թողեք առաջ անցնեն։

Զինվորները յետ քաշվեցին՝ ճանապարհ տալով Բրիսարին և Տոբիին։

— Վորտե՞ղ եյիք։ Դուք կատարեցի՞ք ճամբարից դուրս չգալու և տակից-գլխից դուրս չտալու հրամանը,— հարցրեց կապիտանը։

Բրիսարը և Տոբին լուռ եյին։

— Ձեզ եմ հարցնում։ Պատասխանեցե՛ք։

— Չկատարեցինք,— լսվեց յերկչոտ պատասխան։

— Յերեք որ կալանք։

— Ինչի՞ համար։ Չե՞ վոր մենք ել զինվորներին ասում եյինք, վոր նրանք չերդվեն,— վողբագին ասաց Բրիսարը։

— Եստեղ Փարիզը չի՛, սատանան տանի, այլ բանակն ե... անհաջող ագիտացիան կարող եր վողջ գործը փչացնել։ Դուք կարող եյիք գնդերի մեջ զինված ընդհարում առաջ բերել... Շատ զորամասերում Լաֆայետին դեռ սիրում ու հարգում են, նրա հետևից կրակն ու ջուրը կնետվեն։ Եստեղ կռվում են հարկավոր յեղած դեպքում, վոչ թե տակից-գլխից դուրս են տալիս։ Ավագ ընկերներից հարցրեք։ Ուղի՞ղ ե։

— Ճշմարիտ ե, ճշմարիտ ե՝— աղմկեցին ամեն կողմից։

— Հրամանը խախտելու համար զորատեսից հետո կալանք։ Մա՛րշ։

Բրիսարն ու Տոբին, յերկուսն ել միատեսակ ամոթահար, հեռացան։

Հետևյալ որը 13-րդ գունդը վաղ առավոտից հրացաններով զորաշարժի համար կազմ ու պատրաստ կանգնած եր։ Ժամը 8-ին հնչեց հրամանը։ Գունդը ռազմական զորասյունի ձևով ձգվեց Սեդանի և Դուզի մեջտեղը գտնվող ընդարձակ հարթությունը տանող ճանապարհով, ուր գեներալ Լաֆայետն իր զորքերին զորատես եր նշանակել։

Ամեն կողմից, բոլոր ճանապարհներով, քաղաքից և շրջակա գյուղերից դեպի հարթադաշտն եյին իջնում գնդեր, գումարտակներ, մարտկոցներ և դասավորվում վորոշված կարգով։ Թեթև վազքով արշավելով՝ գալիս եյին գուսարները և ուլանները՝ իրանց յետևից փոշու ամպեր բարձրացնելով և գեղեցիկ խայտաբղետ ժապավենի պես շարվում եյին աջ զորաթևում։ Կամավորական գումարտակները տեղավորվում եյին մեկը մյուսի յետևում։ Դղրդոցով անցավ հրետանին (արտիլերիան)։

13-րդ գունդը բռնեց իր տեղը 71-րդ մշտական գնդի կուրացուցիչ արևաշող սաղավարտների և Այնե կամավորների կապույտ համազգեստների միջև։



Կամավորական գումարտակները մտնում եյին արագ քայլով, անհամբեր մանյովրներ եյին կատարում, դասավորվում եյին՝ շարքերը կորելով, միայն թե մոտեցնեյին ճակատագրական մոմենտը։ Գծային գնդերը գալիս եյին ավելի հանգիստ և ձգվում եյին նետի պես ուղիղ գծով։

Դաշտավայրի վրա հեռվում կախ ընկած ամրոցի կողմից փոշու գորշ ամպ յերևաց։ Նա լողում եր հողի վրայով, լայնանում, աճում և շուտով գլորվում դեպի անշարժության մեջ սառած շարքերը։

Գեներալ Լաֆայետը, մի գեղեցիկ, բարեկազմ, անբարտավան դեմքով մարդ, շլացուցիչ շողշողուն համազգեստով, մտնում եր զորքերին։ Նրա կողքին թամբի վրա օրորվում եր Սեդանի քաղաքագլուխը, ծեր Դը-Ռուսսոն։ Նրանց հետևից սրարշավ գալիս եյին գեներալները, շտաբի սպաներ՝ շողացնելով զենքերը, պուդմենտները և սաղավարտների վառ գույնի փետուրները, և քաղաքային վարչության սպաներ փոշեպատ կեղծամներով, սերտուկներով և կոստիկներով։

Այդ ամբողջ փարթամ հեծելախումբը (կավալկադը)՝ ձիերը զսպելով սկսեց դանդաղ անցնել ամբողջ դաշտավայրում ձգված զորքերի առաջով։ Փողերը հնչում եյին, թմբուկները դռռում։

Հրապարակի կենտրոնին մոտենալով՝ գեներալը և քաղաքագլուխը կանգ առան։

Յերաժշտությունը լռեց։ Քաղաքագլուխն առաջ դուրս գալով՝ բաց արավ իրան հանձնված մագաղաթը և սկսեց կարդալ թագավորին տալիք յերդումը։

Լաֆայետը և նրա հետևից ամբողջ շքախումբը վեր բարձրացրին ձեռները։

Զորքերի միջև հուզմունք անցավ. գեներալը դիտում եր զինվորական շարքերը։ Աջ թևը լավ ե, ձեռները բարձրացել են. հեծելազորը յերդվում ե։ Ապա — հետևակը, մեկը, յերկրորդը... հինգ գումարտակ իրար հետևից կանգնած են անշարժ, հաստատորեն, ձեռներն իջեցրած. գծային գնդերը ներկայացնում են իջեցրած և բարձրացրած ձեռների ալիք։

Ովերնի արքայական գունդը գեներալին չդավաճանեց և ձեռները բարձրացրեց, ապա նորից սաղավարտների, յեռանկյունների, կեպերի հարթ գիծ ե։

Գեներալի ամբողջ արյունը գլուխը խփեց։ Հա՛, այդպե՛ս։ Ասպանդակները ջղայնորեն ծեծում եյին ձիու կողերը։ Գեղեցիկ կենդանին գլուխն օրորում եր, փռռացնում, ռունգներն ուռցնում և վոտները վեր ու վայր անում։

Յերդումը կարդացված, վերջացված ե։ Մեռելային լռություն։ Վոչ մի բացագանչություն։ Յեվ հանկարծ մի ուժգին ձայն.

— Կեցցե ժողովրդական ժողովը։

Վորտեղի՞ց ե նա։

— Կեցցե ազատությունը։

Դա ձախ թևից ե, կենտրոնից ե… Այդ աղաղակը կրկնվում ե և թնդում ե ամբողջ դաշտովը մեկ։

Ջին մի կողմ նետվեց։ Լաֆայետը ծառս լինել տվավ նրան և շարժեց դեպի համազգեստների անշարժ պատը։ Շքախումբը հետևեց նրան։ Լաֆայետը բերանը բացավ մի բան ասելու։ Նա ձեռը բարձրացրեց՝ լռություն պահանջելով։

Հանկած 13-րդ գնդի կողքին կանգնած Այլե գումարտակի շարքերից դուրս յեկավ մի յերիտասարդ լեյտենանտ։ Հաստատուն քայլերով նա ուղղվեց դեպի գեներալը և գեներալիտետը զորքից բաժանող տարածության կեսն անցնելով՝ կանգ առավ։

— Գեներա՛լ — արտասանեց նա, և նրա ձայնը տարածվեց հեռու՝ շարքերում։ — Զինվորները, Ֆրանսիայի հավատարիմ քաղաքացիները՝ կերդվեն ազատությանը, հավասարությանը և Ազգային ժողովին հավատարիմ լինելու համար։

Լաֆայետը քար կտրեց։ Թույլ միայն մի ակնթարթ նա սառավ տեղնուտեղը, բայց այդ նրան թվաց մի ողջ չափ յերկար։ Ապա նա դարձրեց իր ձին և սանձը շարժելով՝ չափ քցած սլացավ։

Գունդերը, գումարտակները, մարտկոցները նորից անվերջ ժապավենի պես ձգվեցին ճանապարհներով՝ վերադառնալով ճամբարները՝

Մարդիկ գնում եյին մռայլված։ Զորատեսը վոչ մի բան չվորոշեց՝ Բանակը բաժանվեց յերկու անհավասար մասի։

Այդ լարված խաղաղությունն անտանելի յեր։ Տոբիի համար դա տառանձնապես ծանր եր. այդ չարաբաստիկ զորատեսի տպավորությունը քարի պես ծանրացել եր նրա հոգու վրա, հիմա յել դեռ ճամբարը հասնելուց նա պետք ե բանտ գնար։ Ի՞նչ խայտառակություն։ Մի՞թե կապիտանը չի ների նրան։

— Կարելի՞ յե յերգել, — դիմեց Տոբին կապիտանին կամացուկ։

— Փորձի՛ր… — ուսերը թոթվեց կապիտանը։

Տոբին յերգեց.

Մենք զինվորներս դաժան արքայի
Ըստիպված եյինք կռիվ տալ համառ՝
Արքայազնի և արիստոկրատի
Ոգտին մի բուռ հող խլելու համար։

Այժմ մահ, կյանքի վողջ ուրախություն
Ցեվ ինչ վոր ունի, ամե՛ն, ամեն բան,
Իր հայրենիքի, իր յերկրի սիրուն
Կտա զինվորը հանրապետական։



Յերգակցեցին, բայց վոչ աշխույժ։ Շուտով յերգը լռեց՝ խեղդվելով ծանր համաչափ վոտնաձայներից։

Իրար հաջորդեցին տարորինակ, անվերջ յերկար որեր։ Լաֆայետը դուրս չեր գալիս։ Ամբողջ որեր նա անց եր կացնում իր մեծ առանձնասենյակում՝ մերթ զեկուցումներ ընդունելով, մերթ անկյունից անկյուն քայլելով։ Նա գավառից, դեպարտամենտներից, մոտ գտնվող զոբարանակների հրամանատարներից բանբերների յեր սպասում։

Դեպարտամենտները թագավորին պաշտպան կանգնելու կոչին արձագանք չտվին։

Բաղաքից վատ լուրեր եյին գալիս։ Զինվորներն իմացել եյին կոմիսարների բանտարկության մասին։ Ցակոբինների ակումբն սկսեց ավելի աշխույժ գործել։ Զորքերի մեջ խմորումն եր կատարվում։ Բաղաքային խորհրդարանի մոտ իրար հետևից ցույցեր եյին տեղի ունենում. զինվորները պահանջում եյին ազատել բանտարկված կոմիսարներին։

Մոտակա զորաբանակներից յեկող տեղեկությունները տարորինակ և անհասկանալի եյին։ Ծեր մարշալ Լյուկները գլուխը կորցրել եր։ Լաֆայետի առաջ սեղանին ընկած եր նրա նամակը — «Կոմիսարներին բանտարկված պահեցեք։ Մի՛ թողնեք վոր իմ բանակը գա։ Ի՞նչ եմ անում զրանց։ Լյուկներ»։ Գեներալ Դիլլոնը հյուսիսից հաղորդում եր, վոր հրամայել ե զորքերը բերել՝ յերդվելու սահմանադրությանը և թագավորին։ Բայց Դյումուրյե՛ն։ Դյումուրյեն, վոր բանակած եր հենց իրանց կողքին — Վալանսյենում, հրաժարվեց յենթարկվել գեներալ Դիլլոնին և հանդիսավորությամբ ընդունեց ժողովրդական ժողովի կոմիսարներին։

Փարիզից մեկը մյուսից վատ լուրեր եյին հասնում։

Ազգային ժողովը քաղաքային վարչության հրաման եր ուղարկել անհապաղ ազատել կոմիսարներին։ Ժողովը Լաֆայետին Փարիզ եր կանչել։

Լաֆայետն սպասում եր։ Նա վորևե գործողություն սկսելուց դեռ հրաժարվում եր*)։

*) Ոգոստոսի 10-ի հեղաշրջումը 22 միացրեց բանակի գեներալներին։ Բանակների հրամանատարները — հին գեներալները — չեյին կարող դրան համակրել, բայց և իրանց այնքան ել ուժեղ չեյին զգում հեղափոխության դեմ պայքարելու համար։
Մարշալ Լյուկները գլխավոր հրամանատարն եր. ոգոստոսի 10-ից հետո նա հեռացվեց և աննշան պաշտոն ստացավ։ Գեներալ Դիլլոնը հյուսիսի բանակի հրամանատարն եր. նա յել հեռացվեց։ Այդ ժամանակ գեներալ Դյումուրյեն Դիլլոնի բանակի մի աննշան մասի հրամանատարն եր։

ԳԼՈՒԽ XIII.

## ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐՆԵՐԸ

Այդ անհանգիստ օրերին Տոբին և Բրիսարը մնում էին կալանքի տակ Սեդանի հաուպտվախտում (գլխավոր պահականոցում): Նրանք դառնությամբ նայում էին լուսամուտից փողոց, աշխատելով թեկուզ հեռվից տեսնել, թե քաղաքում ինչ է կատարվում:

Նրանք հիմա լավ էին հասկանում, թե որքան իրավացի էր կապիտանը: Նրանց — փարիզեցիների համար Լաֆայետը վաղուց արդեն գահավեժ յեղած կուռք էր: Բայց զորատեսում համոզվեցին, որ Լաֆայետը դեռ շատերի համար մնում էր սիրված հրամանատար, որի հետևից կուրորեն կգնային զինվորները, ուր էլ նա նրանց տանելու լիներ: Միմիայն հեղափոխական գումարտակների համերաշխ յելույթը զորատեսում — գեներալին ստիպեցին հրաժարվել վճռական գործողություններից:

Օգոստոսի 17-ի յերեկոյան վերջապես բանտարկյալները լսեցին միջանցքում ծանոթ վոտնաձայն, ապա խթանների զնգոց, հետո դռան ճանգռտոց և դրա հետևից կատաղի հաչոց:

— Մոնշալե՛յը, — բացականչեց Տոբին:

Դուռը բացվեց: Սենյակը թռավ Մոնշալեյը և դեպի Տոբին նետվեց այնպիսի ուժով, որ քիչ մնաց գլորի նրան: Մոնշալեյի հետևից մտավ կապիտանը:

— Դե՛հ, գերիներ, դուրս յեկեք, — ուրախ-ուրախ գոչեց նա Բրիսարին և Տոբիին:

Բանտարկյալները չզանդաղեցին: Մի քանի րոպեյից հետո նրանք արդեն փողոցում էին և կապիտանի հետ միասին գնում էին դեպի բանակը:

— Բատիստ, հիմի յես հասկանում. դու արդարացի էիր, — կամաց ասաց Տոբին:

— Հասկացե՞լ ես : Շատ ուրախ եմ: Իսկ դո՞ւ, Բրիսա՛ր, — հարցրեց կապիտանը:

Բրիսարը միայն ինչ որ լավ չլսվող բան բռռաց և հանցավորի պես գլուխն օրորեց:

— Հիմի էլ վախենալու բան չկա: Լաֆայետի քիթը լա՛վ կտրեցինք, — ասաց կապիտանը և պատմեց Լաֆայետի անգործության ու զինվորների մեջ յեղած հուզումների մասին:

Վրանների, կառքերի, խարույկների միջով անցնելով՝ կապիտանը և իր ուղեկիցները հասան 13-րդ գնդի վրանները:

Ծայրի վրանի վրայից կախված էր մի տախտակ՝ «Սեն-Ժակ թաղի կաֆե» մակագրությամբ: Այնտեղից ձայների աղմուկ էր լսվում: Դրանից միայն յերկու օր առաջ էին զինվորները խփել այդ վրանը 13-րդ գնդի խահավաճառուհու համար: Կապիտանն արդեն ձեռք էր բերել այդ կոչումը Մոնտարժի հորաքրոջ համար: Հենց առաջին օրից նրա վրանը 13-րդ գնդի և մյուս հարևան գնդի ու գումարտակների զինվորների աղմկալից ժողովների վայր դարձավ:

Կապիտանը յետ քաշեց վրանի բրեզենտը: Ձեռաց էրար կցած սեղանի շուրջը նստոտած զինվորները տեսան Տոբիին և Բրիսարին:

— Հա՛, հրես սրանք էլ յեկան, — լսվեցին ուրախ աղաղակներ:

— Նստեցիք պրծա՛ք:

— Բարև՛, թմբկահար:

— Բարև՛, Բրիսար:

— Հը՞, ցամաք հացն ու ջուրը լա՛վ էին հաուպտվախտում: Մըկների հետ ապրելը դուրեկան էր, չէ՞:

— Գնացե՛ք, ինքներդ փորձեցեք, — կծու կերպով ասաց Բրիսարը՝ բարևելով ընկերներին: — Մկները ձեզ կարոտել են:

Տոբին նետվեց դեպի Մոնտարժի հորաքույրը:

— Տոբի, սիրելի՛ս, — բացականչեց պառավը: — Ինչքա՛ն կարոտել եմ քեզ... Յերկու օ՞ր: Յես Բատիստին մի լավ հայհոյել եմ...

— Պետք չի նրան հայհոյել, նանի... Նա իրավացի էր:

— Թե քեզ լսենք — նա միշտ իրավացի յե հո... Ինչպե՞ս ես գույնդ գցել, բալի՛կ ջան:

Սեղանի շուրջը ծիծաղեցին. շփոթությունից, թե հանդիպումի ուրախությունից, Տոբին յեփած խեցգետնի պես կարմրել էր:

— Ե՛հ, էլի քրքջացին... — բարկացավ Մոնտարժի հորաքույրը: Բայց Տոբիին նայելով և տեսնելով նրա ջերմությամբ վառվող այտերը՝ ինքն էլ ծիծաղեց: — Տոբի, գնա բարևիր ընկերներիդ, — հրեց նա տղային:

Տոբին մոտեցավ սեղանին:

— Ինչի՞ համար են հաուպտվախտ նստել նրանք, — դեպի հարևանը թեքվելով հարցրեց ամենքին անծանոթ մի զինվոր: Նա վրանն էր մտել կապիտանի գալուց քիչ առաջ և թույլտվություն էր խնդրել փորը քիչ կշտացնելու. Դեռ շատ ճամբա ուներ մինչև իր զորամասը հասնելը, — ասել էր նա:

— Կապիտանը նրանց հաուպտվախտ էր ուղարկել նրա համար, որ նրանք զինվորներին համոզելիս են յեղել չենթարկվել Լաֆայետի հրամանին:

— Իսկ կապիտանը գեներալի՞ կողմն է, — զարմացավ անծանոթը:

— Ո՛չ, վո՛չ: Նա լա՛վ հայրենասեր է: Բայց այն ժամանակ զգուշությունն էր հարկավոր, իսկ դրանք ականջ չէին դրել նրա հրամանին: Բայց դու ո՞վ ես:

Անծանոթը բան չպատասխանեց։ Նա սեղանից վերկացավ, մոտեցավ կապիտանին և կամաց ասաց նրան.

— Կապիտա՛ն, ուզում եմ մի յերկու խոսք ասել ձեզ։

— Ասացե՛ք, — պատասխանեց կապիտանը։

— Այստեղ անհարմար է։ Դո՛ւրս գանք։

Նրանք դուրս ելան։ Անծանոթը դեսուդեն նայեց և համոզվելով, որ շուրջը մարդ չկա, կապիտանին տվավ մի թուղթ։

— Կարդացե՛ք, — ասաց նա։

Կապիտանը մոտեցավ հանգած խարույկին և գլուխը բարձրացնելով թուղթը կարդաց։ Դա փարիզյան կոմունայի տված անցագիր էր, որով հրամայվում էր Սեդան ուղևորվել Ազգային ժողովի կոմիսարներին աջակցելու համար։ Անցագիրը տրված էր քաղաքացի Վեստերմանին։

— Դուք Վեստերմա՞նն եք, օգոստոսի 10-ի հերո՞սը, — հարցրեց կապիտանն անծանոթին։

— Ես Վեստերմանն եմ, — պատասխանեց նա։

— 13-րդ գունդը բախտավոր է, որ դուք գտնվում եք իր շրջանում։

— Պետք չէ հայտարարել։ Ես յերեկ եմ յեկել Ազգային ժողովի կոմիսարների հետ։ Մենք ուղարկված ենք խռովությունը ճնշելու համար։ Հիմա մենք թագնվում ենք, որպեսզի պարզենք զորքերի տրամադրությունը և ագիտացիա մղենք։

— Ձեզ որևէ մե՞կն է ուղարկել ինձ մոտ։

— Այո, Յակոբիններն ինձ ձեր անունը տվին։ Չե՞ որ դուք ակումբի անդամ եք։

— Այո։ Ես միշտ պատրաստ եմ պաշտպանելու ազատությունը։

— Իսկ գո՞ւնդը։

— Բոլոր զինվորները լավ հայրենասերներ են. սպաների մեջ կան և՛ կասկածելիներ, և՛ արիստոկրատներ։ Բայց նրանք վտանգավոր չեն։ Դառնանք վրանը։

— Կարո՞ղ եմ այնտեղ հայտնել իմ ով լինելս։

— Կատարելապես. մեզ մոտ դուք միանգամայն ապահով եք։

— Ընկերնե՛ր, — դիմեց կապիտանը զինվորներին՝ վրանը մտնելով։ Մեզ մոտ է յեղբայր Վեստերմանը, նա, որ ժողովրդին առաջնորդեց գրոհելու Տյուիլրիի վրա։

— Վեստերմա՛ն։ Վիվա՜տ։ Կեցցե՛ ազգը, — գոչեցին ամեն կողմից։

Զինվորները վեր թռան իրենց տեղերից և Վեստերմանին շրջապատեցին։ Տոբին ամենից առաջ յերևաց նրա մոտ։

— Դուք իսկական հերոս եք, — հիացմունքով դիմեց նա հին զինվորին և ձեռք մեկնեց նրան։ Այդ շարժումն այնքան մանկական, միա-



միտ էր և անկեղծ, որ Վեստերմանը հիացավ։ Նա Տոբիին բարձրացրեց և համբուրեց։

— Իսկ դու հերոս կլինես, յես հավատացած եմ, — ասաց նա։

Վեստերմանին նստեցրին սեղանի առաջ և ստիպեցին պատմել։

— Եվ ի՞նչ պատմեմ... Դուք թերթում բոլորը կարդացած կլինեք, — ասաց Վեստերմանը։

— Մենք ոչինչ չենք կարդացել... Լաֆայետը բաց չի թողնում Փարիզի լրագիրները... — պատասխանեցին զինվորները։

— Նա բռնո՞ւմ է։

— Այո։ Նա վրեժ է առնում Փարիզից, որին արգելել է ռոյալիստական լրագիրները բաց թողնել։

— Նա կպատժվի դրա և ուրիշ շատ բանի համար։ Բայց այժմ կարևոր է մի ուրիշ բան... Պատմեցեք տեսնեմ, ինչ են ասում զինվորները։

Նստածներից ամեն մեկն շտապում էր հաղորդել Վեստերմանին այն բոլորն, ինչ որ գիտեր, տեսել էր, դիտել էր։

Վեստերմանն ուշադրությամբ լսում էր։

— Այո, — մտախոհ խոսեց նա, — պետք է խոստովանել, որ Լաֆայետը բանակում ուժ է։ Բայց մենք շուտով զինվորների աչքը բաց կանենք։ Թող ամենքն իմանան ճշմարտությունը։ Այն ժամանակ կտեսնենք, թե ինչ կասի այդ դավաճանը։ Ամբողջ ազգը հիմա գիտե, որ Վետոն մատնիչ և դավաճան է։ Օգոստոսի 10-ից հետո պալատում թագուհու և պալատական աստիճանավորների արկղներում արտասահմանի հետ գրագրություններ գտան։ Այնտեղ էր և՛ ծածկագրի բանալին։ Արդեն ծածկագրերը բացած միքանի նամակներից մենք համոզվեցինք, որ պալատական կամքը հիրավի գաղտնի հարաբերություններ է ունեցել մեր թշնամիների հետ։ Բացի դրանից... Թագավորն այն դրամներով, որ ազգը բաց էր թողնում նրան, էմիգրանտների հակահեղափոխական գնդեր է յեղել պահելիս։ Գտնված հաշիվներից պարզվում պալատից քիչ փող չի գնացել արտասահման։ Մի նամակում նույնիսկ ցույց է տրվում, թե փողն ինչպես պետք է ուղարկել. «Հրամայեցե՛ք, — գրում էին արքայական մատակարարին Կոբլենցից, ուր կազմվում էին էմիգրանտների գնդերը, — որ Փարիզի բանկիրներ պ. պ. Տուրտոնին և Ռավելին հանձնեն լեյբ-գվարդիայի բոլոր փողը, նրանցից վարկի նամակներ ստացեք անգլիական և հոլլանդական բանկերի վրա և ուղարկեցեք Կոբլենց»։ Հասկանո՞ւմ եք, ընկերնե՛ր, թե Լյուդովիկն ինչպե՜ս կպաշտպաներ մեզ, մինչ ինքը էմիգրանտների գնդերն էր պահում։

Վեստերմանը հանկարծ լռեց։ Նա նկատեց, որ վրանի աղմուկը շատ նոր մարդիկ է հավաքել։ Զինվորները ներս էին մտնում, ճառ-

թին ականջ դնում։ Յերևացին նաև սպայական ուսադիրներ, ուրիշ գնդերի համազգեստներ։ Վեստերմանը մի կողմ գնաց և ասաց իրան հետևող կապիտանին.

— Կապիտա՛ն, օգտագործեցեք մոմենտը։ Զինվորներին վերցրեք, գնացեք քաղաքային վարչություն, և թող ցույցն ազդեցիկ լինի։ Հրապարակեցեք կոչը և պալատի գրագրությունները։ Ակումբում շատ օրինակներ կան, մարդկանց ուղարկեցեք թող բաժանեն ամբոխի մեջ։ Յես առայժմ չեմ կարող յելույթ ունենալ։

Մոնմարժի հորաքույրն այդ ժամանակ Վեստերմանի և կապիտանի կողքին եր։ Ամբողջ ժամանակ, յերբ Վեստերմանը կարդում եր նամակները և պատմում Փարիզի մասին, պառավը գրգռված վազվզում եր վրանում, շրխկացնելով դես դեն եր գցում ամանեղենը, շշերը, կարծես նրանց վրա թափելով եր բարկությունը։ Հիմա նա այլևս չկարողացավ իրան պահել։

— Խառնակիչներ, ապստամբներ,—մրթմրթաց նա։—Ելի ժողովրդին խառնակում եք։ Թագավորին խայտառակելը բան ու գործ եք շինել։ Սուտ են էդ բոլոր նամակները։ Թքեմ ձեզ վրա. թո՛ւհ։

— Հորաքույր,— խիստ և արգոււ ընդհատեց նրան կապիտանը,— իսկույն լռեցեք։ Ել վո՛չ մի խոսք։ Լսո՞ւմ եք։

Պառավը կուչ յեկավ նրա սառը և հրամայական հայացքից։ Աչքերն արտասվակալեցին։ Վեստերմանը ձեռը դրավ նրա ուսին և ասաց.

— Այս բոլորը ճիշտ է, սիրելի տիկին։ Ֆրանսիացիների թագավորը մատնիչ է յեղել։ Նա պրուսացիներին ստիպել է կռվել հենց իր հպատակներին։ Նրա շնորհիվ ամբողջ Ֆրանսիան գտնվում է պատերազմի սարսափների և չքավորության մեջ։

Նա այդ ասաց այնքան պարզ և համոզմունքի այնպիսի ուժով, վոր պառավը միայն նայեց յերկար-յերկար հայացքով նրա աչքերի մեջ։ Ապա նա դեն գնաց և աթոռին նստեց՝ ինչ-վոր քրթմնջալով, կարծես ինքն իր հետ խոսելով՝ նա ինչ վոր ամենանվիրական մտքեր եր պարզաբանում։

Ամեն կողմից մոտ յեկող զինվորներով լցվեց ամբողջ վրանը։ Վեստերմանին թողնելով՝ կապիտանը վերադարձավ զինվորների մոտ և նրանց պահանջով կարդաց ժողովի կոչը Սեդանի զինվորներին։ Զինվորները պատասխանում եյին աղաղակներով.

— Դեպի քաղաքային խորհրդարան։ Ազատե՛լ կոմիսարներին։

Աղմկալի խմբով բոլորը դուրս յեկան վրանից։

Վրանը դատարկվեց։ Մոնմարժի հորաքույրը մնաց մենակ իր մտքերի հետ, վորոնք ծանր և անհանգիստ եյին։ Դրսից լսվում եր ամբոխի աղմուկը և վոտների ձայնը։





Իրիկնադեմին հանդարտված բանակը զարթնել էր հիմա: Վրաններից դուրս էին թափվում զինվորները: Այստեղ-այնտեղ ջահեր յերևացին: Փարիզից յեկած տեղեկությունների լուրը վրանից վրան էր անցնում, գնդից գունդ: Դեպի 13-րդ գունդն էին վազում ամեն կողմից զինվորներ:

Կոչը կարդալուց հետո նորից հնչեց աղաղակը, վորը կրկնվեց և անցավ ամբողջ բանակով: Խառնիխուռն խմբերը դիմեցին դեպի քաղաքային խորհրդարանը:

Ծխոտ ջահերի կրակները պայծառ հատիկներով ընկնում էին նեղ փողոցներում խռնված խմբերի վրա: Հնչեցին աղաղակներ.

— Կեցցե՛ ժողովը: Կորչի՛ Լաֆայետը:

Քաղաքացիները տներից դուրս թափվեցին. նրանցից շատերը միացան ցուցարարներին:

Իսկ հարևան փողոցներով արդեն արշավում էր կոմենդանտի ուղարկած հեծելազորը: Նա գնում էր այնտեղ, ուր գնում էր ամբոխը: Յերբ ցուցարարների առաջին շարքերը մոտեցան քաղաքային խորհրդարանին, հրապարակն արդեն շղթայված էր հեծելազորի յեռակի շարքերով:

Մի կողմում էր գլուխների ծովը, ջահերի լույսերը, սվինների փայլը, իսկ դիմացը փռշտացող և սմբակներով սալահատակի քարերին անհանգիստ կերպով խփող ձիերի խիտ շարքեր:

— Պահանջում ենք Լաֆայետին: Ազատե՛լ կոմիսարներին.— գոչում էր ամբոխը:

Բայց Լաֆայետը չկար: Նա ամրոցում փակված նստած էր թըմբրած, անզգայացած, իր անզորության գիտակցությունից ընկճված:

Օգոստոսի 19-ի լուսաբացին ամրոցից — բանակի շտաբից միքանի ձիավորներ դուրս յեկան: Նրանք լուռ ու մտազբաղ էին: Ձիերին խթանելով՝ նրանք վճռականապես սլացան արևելյան ուղղությամբ: Զընդունված և ծաղրված առաջնորդն իր մերձավորների հետ փախավ անհանգիստ Ֆրանսիայից: Հետևյալ օրը նա հասավ թշնամու սահմանագծին և իր թուրը հանձնեց ավստրիական մի սպայի:

Լաֆայետի փախստյան լուրն իսկույն և յեթ տարածվեց ամբողջ բանակում: Զինվորները կատաղել էին: Նա, վորին նրանք խնայում էին՝ հեղափոխության առաջներում ծառայություն մատուցելու համար, վորի հետ լուռ վիճաբանում էին վեց օրվա ընթացքում, — խայտառակ կերպով փախել էր և անձնատուր յեղել թշնամիներին:

Հրապարակում ժողոված ամբոխը խորհրդարանից դուրս բերավ Լաֆայետի գաճե կիսանդրին: Ընդհանուր հավանությամբ նրա պարանոցից կապեցին պարանը և «Մահ Լաֆայետին», «Լապտերից կախե՛լ նրան» աղաղակներով բարձրացրին լապտերին: Գաճե գեներալը դեռ



շատ օրեր էր այնտեղ ճոճվում, մինչև վոր փոշին, անձրևը, քամին տաշեցին կիսանդրին՝ աղավաղելով արիստոկրատ դեմքի լպիրշ ու նենգ գծերը:

Լաֆայետի փախուստն ազդանշան դարձավ բոլոր դեռ թագնվելու ժամանակ չունեցած արիստոկրատ սպաների համար: Կոմպանիայի (կռվի) սկզբներում բոլոր բանակներում ինն հազար հոգի էին դրանք. օգոստոսի 10-ից հետո մնաց յերեք հազար, դրանք էլ աստիճանաբար անհետանում էին՝ իրանց տեղերը զիջելով նոր դեմոկրատ հրամանատարներին:

Փոփոխություններ առաջացան նաև 13-րդ կամավորական գնդի հրամանատարական կազմում: Փախած յերեք արիստոկրատներին փոխարինեցին ընտրված զինվորներ — հայրենասեր սպաներ, իսկ կապիտան Պեպինը գնդապետի աստիճան ստանալով, ստանձնեց գումարտակի հրամանատարությունը:

Բայց բանակը թուլանում էր. զորամասերի մեջ խարթուլթյունն աճում էր: Բանակի ռազմական գլխավոր ուժը — մշտական գնդերը զինվորների թվով ավելի ու ավելի էին պակասում. զորագրվածները հրաժարվում էին նրանց շարքերը մտնելուց, կամավորական գումարտակները չէին ուզում նրանց հետ ձուլվել: Փախած սպաների և գեներալների ահագին քանակը նոր, կարող հրամանատարներով անմիջապես փոխարինել անկարելի էր: Կարգապահությունն ընկնում էր: Բանակը, վոր առանց այն էլ թույլ էր կոալիցիոն (բազմապետական) բանակի համեմատությամբ, ավելի յեր թուլանում:

Մինչ այդ պրուսացիները դանդաղ, բայց անշեղորեն առաջ էին շարժվում: Յերկու ուժեղ ամրոց, Լոնվին և Վերդենը, վորոնք պաշտպանում էին դեպի Ֆրանսիայի սիրտը — Փարիզը տանող անցքերը, պրուսացիների իշխանության տակ էին:

Ֆրիդրիխ-Վիլհելմի*) յերկաթե գնդերը — ամբողջ Յեվրոպայի ամենալավ բանակը — շարժվում էին վորպես զորահանդեսի ժամանակ, վոչ մի տեղ դիմադրության չհանդիպելով: «Կոշկակարների և դերձակների բանակը, — ֆրանսիացիների մասին ասում էին էմիգրանտները պրուսացիներին, — կրունկը ցույց կտա (կփախչի), հենց վոր տեսնի արքայական բանակի սվինները»: Նրանց ասելով՝ Ֆրանսիայի ամբողջ ազգաբնակչությունն սպասում է էմիգրանտներին և գերմանացիներին՝ վորպես անտանելի Յակոբենների լծից իրանց ազատողներին: Պրուսացիները համոզված, վոր հաղթելու յեն, կանգնած էին ֆրանսիացիների մեկ ռազմաճակատի առաջ, հուսալով, վոր յերկու շաբաթից հետո Փարիզում են լինելու, թագավորին ազատելու յեն, վերականգնելու յեն

*) Պրուսական թագավոր Ֆրիդրիխ-Վիլհելմ II: Նա ուղեկցում էր իր բանակին ֆրանսիական արշավանքի ժամանակ:

Նրա իշխանությունը և արմատախիլ են անելու Ֆրանսիայում խռովության վոգին։

Բայց Ֆրանսիական «կոշկակարների և դերձակների» բանակը նվաճողներին հանդիպեց վոչ թե ասեղներով ու բիզերով, այլ սվիններով և թնդանոթաձգությամբ։

Հարվածը պետք է յետ մղեր այն բանակը, վորին Լաֆայետն այնպիսի դավաճանությամբ լքեց։ Բանակից ազատված կոմիսարները և Վեստերմանն Ազգային ժողովից պահանջեցին անհապաղ հրամանատար նշանակել. իրանց զեկուցման մեջ նրանք հաղորդում եյին զորքերի շարքերում տեղի ունեցած կատարյալ կազմալուծման և ամենաշտապ միջոցներ ձեռք առնելու անհրաժեշտության մասին։

Հրամանատար ընտրվեց գեներալ Դյումուրյեն։ Գեներալների մեջ նա ավագը չեր, բայց միակն եր, վոր անվերապահորեն ընդունեց հեղաշրջումը, իսկ նրա բանակում դեմոկրատիզմի վոգի յեր տիրում։



Դյումուրյե

Դյումուրյեն ստացավ կենտրոնի բոլոր զորքերի հրամանատարությունը. բանակը ժողովվում եր մի ձեռքի տակ։ Հին գեներալներ՝ մարշալ Լյուկները և գեներալ Դիլլոնը հիմա յենթակա եյին իրանց կրտսեր ընկերոջը։ Հրամանատար նշանակվելով՝ Դյումուրյեն չուզեց թողնել իր բանակը։ Պրուսացիների ներխուժումը նրան չեր սարսափեցնում։ Նրա կարծիքով Սեդանի և Մեցի բանակը պետք է միայն զսպեյին և թուլացնեյին պրուսացիների գրոհը, իսկ գլխավոր հարվածը պետք է հասցվեր Բելգիայի կողմից։ Դյումուրյեն ուզում եր այդ յերկրից վռնդել ավստրիացիներին, այնտեղ հաստատել հեղափոխական ռեժիմ և ապա միայն պրուսական բանակն անջատելով՝ ստիպել նրան մաքրել ֆրանսիական յերկրամասը։ Միայն Լյունգվիի վերցնելուց հետո Փարիզը պնդում եր, վոր Դյումուրյեն պրուսացիների դեմ կատարվող գործողության կենտրոնը փոխադրի Սեդան։ Գեներալի մոտ ուղարկված Վեստերմանը նրան համոզեց յենթարկվելու ռազմական մինիստրության վորոշումին։

Օգոստոսի 28-ին Դյումուրյեն Վեստերմանի հետ յեկավ Սեդան։ Բանակը նրան չեր ճանաչում։ Լաֆայետի փախուստից հետո զինվորները վոչ մի գեներալի հավատ չեյին ընծայում։ Դյումուրյեյի զորատես նշանակելուց հետո այդ թերահավատությունը մի քիչ իջավ, բայց իսպառ չվերացավ։

Գնդերը ճիշտ այնպես, ինչպես յերկու շաբաթ առաջ, կանգնել եյին Սեդանի տակ և սպասում եյին նոր հրամանատարին։ Նա յերևաց գե-



ներալների և Ազգային ժողովի կոմիսարների խմբի հետ։ Զինվորները լավ դիտեցին նրան։

Նրանց առաջ մի փոքրիկ մարդ եր հիսուն տարեկան, պարզ հագնված, առանց նշանների, ժապավենների և շքանշանների. նա համարյա թե այլանդակ եր, բայց խելքի և յեռանդի կնիքը գեղեցկացնում եր նրա դեմքի խիստ գծերը. ճակատը լայն, քիթը վեր ցցված, խոշոր աչքերը կրակի պես վառվում եյին թուխ դեմքի վրա։ Հմուտ ձեռքով Դյումուրյեն սանձահարում եր տաքացած ձին։

— Բարև՜, ազատության զինվորներ։ Բարև՛, ուրախության զավակներ,— բարևում եր նա ամեն մի գնդի։ Զինվորները թույլ եյին պատասխանում։ Մի գումարտակի մոտ նրան պահեցին։ Դյումուրյեն դեռ չեր բարևել զինվորներին, յերբ վերջին շարքերից լսվեց այսպիսի բացագանչություն.

— Սա հո են կապիկն է, վոր պատերազմ հայտարարեց*)։

— Իսկ դուք ուզում եք ազատություն ձեռք բերել առանց կռվելու,— հենց իսկույն պատասխանեց Դյումուրյեն։

Բայց այդ պատասխանը զինվորներին չհանգստացրեց։

— Կորչի՛ դա։ Կորչե՛ն գեներալները,— հնչեցին ելի մի քանի ձայներ։

Մի ակնթարթում Դյումուրյեն ձիից ցած ցատկեց և վազեց դեպի շարքերը։

— Գռռացողները թող դուրս գան շարքերից,— հաստատակամորեն ասաց նա։

Լռություն։ Վոչ վոք չշարժվեց։

— Հը՞, վախկոտնե՛ր, — բացագանչեց Դյումուրյեն։ — Դրանք միայն անկյունից հաչել գիտեն։ Արժանի՞ յեն արդյոք դրանք ծառայելու հայրենիքին, ի՞նչ եք կարծում, զինվորնե՛ր։

Պատասխան չլսվեց։ Դյումուրյեն յետ դարձավ և թռավ ձիու վրա։ Յերբ նա արդեն հեռանում եր գումարտակից, մի քանի աններդաշնակ աղաղակներ լսվեցին.

— Կեցցե՛ գեներալը։

Սառույցը հալվում եր, բայց դեռ կոտրված չեր։

Զորատեսը շարունակվեց։

*) 1792 թվականին, յերբ Ֆրանսիան Ավստրիային պատերազմ հայտարարեց Դյումուրյեն զինվորական մինիստր եր։

ԳԼՈՒԽ XIV.

# ՃԵՂՔՎԱԾՔ

*Մենք, բարեկամներ, ուրախ ենք անհուն.*
*Սըրան ով յերգե գովասանություն։*
*Ամեն չարից մեզ կըփրկեն կարգին*
*Հանգիստ ու առատ սեղանը սուրբին։*
*Մի կաթսայից ենք ուտում ընդհանուր.*
*Կեցցե՛ կաթսայի ղողանջը զրընգուն։*
*Մի կաթսայից ենք ուտում կերակուր,*
*Կաթսա՛ն... կեցցե՛ այն, — ընդհանուր կաթսան։*
*Այսոր ճաշն այնքան առատ է յեղել,*
*Վոր անվըտանգ չենք կարող ծիծաղել*
*Իսկ խորտիկները սեղանին անվերջ,*
*Նույնիսկ փառահեղ ճենապակու մեջ,*
*Այս մեր ընդհանուր կաթսային չարժեն։*
*Կեցցե՛ կաթսայի ղողանջը զրընգուն։*
*Այս մեր ընդհանուր կաթսային չարժեն,*
*Կաթսա՛ն... Կեցցե՛ այն, — ընդհանուր կաթսան...*

Զինվորները յերգն ընդհատելով՝ խարույկի մեջ նետեցին հենց նոր բերած մի խուրձ ցախ։ Մոնտարժի հորաքույրը կաթսան յերկար գդալով խառնելով՝ լեզուն ծլծլացնում եր ու ասում.

— Ա՛յ, սուպ եմ ասում հա՛։ Համա սո՛ւպ դուրս կգա՛։

Յերկու խոնավ, անձրևային որերից հետո, որեր, յերբ նույնիսկ չեր կարելի կրակ անել, Տոբին ջերմություն վայելելով պառկած եր խարույկի մոտ։ Նա հետևում եր խարույկի շուրջը մի տեսակ ֆանտաստիկ պարով վխտացող մարդկանց. Նրա մոտ մրափում եր Մոնշալեյը։

Բանակի վրա իջել եր գիշերը։ Բանակի կրակի դեպի աջ ու ձախ հեռուները գնացող անվերջ գիծը ճեղքում եր խավարը։

*Սիրել ուզենա թե գեղեցկուհին,*
*Չի սիրել հիմար աղայի տղին*
*Իրան կոտրատող դասի.*
*Յերիտասարդին կըգերադասի,*
*Վոր ուտում է մեր ընդհանուր ճաշից։*
*Կեցցե՛ կաթսայի ղողանջը զրընգուն։*
*Վոր ուտում է մեր ընդհանուր ճաշից։*
*Կաթսա՛ն... Կեցցե՛ այն, — ընդհանուր կաթսան...*

յերգում էյին զինվորները։

*Իսկ թագադըրված անարգ տականքը*
*Քաղցած, թագցնելով իր ափսոսանքը՝*
*Ուղիղ դեպի բանտ կերթա անպայման՝*
*Նախանձելով իր սըրտի մեջ նըրան,*



*Ով վոր ընդհանուր ճաշից է ուտում։*
*Կեցցե՛ կաթսայի ղողանջը զրընգուն։*
*Ով վոր ընդհանուր ճաշից է ուտում։*
*Կաթսա՛ն... Կեցցե՛ այն, — ընդհանուր կաթսան.*
*Թող միաձուլվե՛ն վողջ ազգերն իրար.*
*Կըդառնանք մենք մի ընդհանուր աշխար.*
*Յեվ պատերազմը մոռացած ահեղ՝,*
*Մենք կըժողովվենք բոլորըս մի տեղ*
*Կերակրըվելու ընդհանուր ճաշով։*
*Կեցցե՛ կաթսայի ղողանջը զրընգուն.*
*Կերակրըվելու ընդհանուր ճաշով.*
*Կաթսա՛ն... Կեցցե՛ այն, — ընդհանուր կաթսան։*

Տոբին վեր կացավ և մոտեցավ կաթսային։ Մոնշալեյը զարթնեց։ Նա իրան թափահարեց և ուզեց գնալ Տոբիի յետևից, բայց հանկարծ ականջները խլշեց, գունչը ձգեց և սկսեց թունդ հաչել։ Բանակի կողմը գտնվող պուրակի կողմից մեկը մոտենում էր խարույկին։

— Ո՞վ է յեկողը, — գոչեց Բրիսսարը։

— Բարեկամներ, — մթության միջից պատասխանեց մեկը։

Ցածրահասակ մի մարդ, պատմուճանի մեջ փաթաթված, մոտեցավ խարույկին։

— Բարև՛, զինվորնե՛ր, — վողջունեց նա խարույկի շուրջը նստածներին։

Մի քանի հոգի վեր թռան. նրանք ճանաչեցին Դյումուրյեյին։ Մյուսները նստած մնացին։ Գեներալն այդ բանին ուշադրություն չդարձրեց։

— Եդ ձեր կաթսայում ի՞նչ կա։ — Դյումուրյեն կռացավ կաթսայի վրա և կենտրոնացած՝ հոտ քաշեց։ — Համեղ է... Հյուր կընդունե՞ք։

Պատասխանի փոխարեն Տոբին զրպանից մի գդալ հանեց և տվավ գեներալին։

— Շնորհակալություն, — ասաց նրան Դյումուրյեն։ — Տես ի՛նչքան փոքր է։ Քանի՞ տարեկան ես։

Տոբին կրակից կարմրած՝ իր տարիքից էլ ավելի փոքր էր յերևում և բոլորովին յերեխա յեր թվում իր բաց շիկահեր գանգուրներով, վորոնք դուրս էյին յեկել կամավորական թեք դրված գլխարկի տակից։

— Տասնուվեց, — համարյա վիրավորված պատասխանեց նա Դյումուրյեյի հարցին։

— Յեվ արդեն ազատությունն ես պաշտպանում իսկական հայրենասերի նման...

— Մեր թմբկահարը լավ հայրենասեր է։ Ո՞ւր էր թե դրա նմանները շատ-շատ լինեյին, — արձագանքեց զինվորներից մեկը։

— Ուրեմն դու՛ մեզ մարտի կառաջնորդես։ Տես, հարձակման նվագը արագ-արագ կփչես, որ թշնամու վրա ուրախ-ուրախ գնանք, — շարունակեց Դյումուրյեն։

— Իմ թմբուկի ղռոցն ամբողջ Փարիզը ճանաչում է։ Ետևից էլ երբեք չեմ մնա, — հպարտ պատասխանեց Տոբին։

— Ինչպես չէ, հարձակո՛ւմ... հենց ե՛դ եր... Մենք ետեղ կանգնած ենք, ու գերմանացիներն էլ մեր դիմաց, և միայն խարույկների կրակով ենք գիշերներին իրար աչքով անում, ուրիշ ոչինչ, — փնթփնթաց մի հին զինվոր։

— Համբերությո՛ւն, տղե՛րք, համբերությո՛ւն։ Դատարկ ձեռքով գերմանացուն չես կարող հաղթել, — աշխույժ առարկեց Դյումուրյեն՝ արգանակ կուլ տալով և յեռանդով ձեռները թափահարելով։ — Հիմա գերմանացիները մեզնից ավելի ուժեղ են։ Դուրս գալ ճակատ առ ճակատ — նշանակում է կործանվել։ Բայց մենք գերմանացիներին կխաբենք։ Նրանք իր ժամանակին կպարեն մեր գնդակների տակ։ Զուր հո չի՛, որ մենք ազատության զինվորներ ենք։

Զինվորները հավանության աղմուկ բարձրացրին։ Նրանցից միայն մեկը — մորուքավոր Շամբուրսին եր մռայլ նստել։

— Լա՛վ կկռվենք եսպիսի կոշիկներով փոսի ջրերը չփչրփացնելով, — մրթմրթաց նա՝ իր կտրտված, տակը պոկված կոշիկները ցույց տալով։

Դյումուրյեն նայեց և հոնքերը կիտեց։

— Յե՞րբ են տվել, — հարցրեց նա։

— Ամիսուկես առաջ, — պատասխանեց Շամբուրսին։

— Ա՛յ, անպիտա՛ն մատակարարներ, — բացականչեց Դյումուրյեն։ — Յես գրել եմ Փարիզ, որ եդ կաշի քերթողների շնորհիվ մենք կարող ենք կռիվը տանուլ տալ։ Անպետք, փթած ապրանք են ուղարկում միայն։ Բայց հիմի մինիստրությունը դրանց կսանձահարի։

Ճամբարում իմացան, որ բանակի հրամանատարը կամավորների մոտ է և նրանց հետ ընթրում է։ Զինվորները խիտ պատի պես շրջապատեցին խարույկը։

— Պետք է նրանց շտապեցնել, որ կոշիկները շուտ ուղարկեն, — ասաց մեկը խմբի միջից։

— Այս կողմերում շուտով կսկսվեն հեղեղները։ Շուտով մի տեղից մյուս տեղը գնալն էլ շատ կդժվարանա, — արձագանքեց մյուսը։

— Անձրևը մեր դաշնակիցն է։ Գերմանացիներին մենք ցեխերում կխեղդենք։ Վո՛նց որ տեսնում եմ ձեր խոսելուց, դուք Բելգիացի յեք՝ հա՞, — դիմեց Դյումուրյեն խոսողին։

— Բելգիական լեգիոնի կամավոր եմ։



— Հա՜... Թողեք դեռ մի ևս գերմանացիների հետ մեր հաշիվը վերջացնենք, նրանից հետո կգնանք Բելգիայի համար էլ ազատություն ձեռք բերելու։

— Կեցցե՛ գեներալը, — բացականչեց բելգիացին։ Մյուսները ձայնակցեցին։

Դյումուրյեն ձեռները թափահարեց։

— Ո՛չ թե գեներալը, այլ կեցցե ազատությո՛ւնը, — գոչեց նա։

Ամենքին սիրելի «ազատություն» բառը հրթիռի պես ճամբարի վերը սլացավ։

— Ճանապա՛րհ տվեք։ Ճանապա՛րհ տվեք, — լսվեց այդ ժամանակ հետին շարքերից։

Ճամբա բանալով դեպի խարույկն եր գալիս գնդապետ Պեպլինը։ Նրա հետևից յերկու զինվոր հաց եյին բերում։

— Կամավորների հրամանատա՞րն եք, — հարցրեց նրան գեներալը, յերբ գնդապետը մոտեցավ խարույկին։

— Այո, գեներա՛լ, — պատասխանեց նա՝ ձգվելով բանակի հրամանատարի առաջ։

Դյումուրյեն ձեռը մեկնեց նրան և նստեցրեց իր կողքին։

— Գնդապե՛տ, զինվորները գանգատվում են, որ դուք նրանց կռվի չեք տանում։ Ինչո՞ւ յեք դանդաղում, — կատակով և շինծու խստությամբ գոչեց Դյումուրյեն։

— Ձեր հրամանին եմ սպասում միայն, գեներա՛լ, — պատասխանեց Պեպլինը։

Դյումուրյեն ժպտաց։ Ապա նա խոսեց ուրիշ տոնով — մեղմ և լուրջ։

— Ի՞նչպես է ձեր գնդում։ Հրացանները, փամփուշտները բավականաչափ են։

— 150 հոգի հրացան չունեյին, այժմ միայն 25-ը չունեն։

— Վնաս չունի. կռիվներից հետո, կլինվեն։ Սպանվածների հրացաններն անցնում են կենդանիներին, ոչ մեկը չպիտի կորչի։

— Լսում եմ, գեներա՛լ։ — Զինվորներին հրաման է տրված։

— Մթերքներով ապահովվա՞ծ եք։

— Հացն ուշանում է. օրեկան պաշարն ստացվում է ճշտապահությամբ։

— Համազգեստնե՞ր։

— Դեռ կստանան։

— Կոշիկնե՞ր։

— Կարծում եմ, որ մինչև առաջին անձրևը հազիվ դիմանան։

— Հենց իսկույն զեկուցում գրեցեք։

— Լսում եմ, գեներա՛լ։

— Ինչո՞ւ գլխարկները տարազով չեն։ Բոլոր կամավորները փեդուլյրներ են կրում, իսկ ձերոնք գլխարկներ։

— Թույլտվություն եմ խնդրում պահպանելու գլխարկները։ Գնդի կորիզը ֆրանսիական գվարդիայի զինվորներն են։ Բաստիլիայի վրա գլխարկներով են գրոհել նրանք։ Մենք սիրում ենք այդ գլխարկները։

— Յեթե այդպես է, թողեք մնան։

Խոսակցությունը վերջացավ։ Զրուցակիցներն ըստ յերևույթին իրարից միանգամայն գոհ մնացին։ Գեներալից գոհ մնացին նաև զինվորները. խարույկի մոտ պարզ խոսակցությունը համակրություն առաջ բերավ դեպի նա, դեպի պատերազմի հեղինակը, դեպի արքայական մինիստրն ունեցած անվստահությունը փարատված եր։

Դյումուրյեն գիշերը մնաց խարույկի մոտ։ Պատմաճանուճ փաթաթվելով՝ նա մեկնվեց գետնին յերկու զինվորների մեջտեղը։ Նա չեր ուզում վերադառնալ իր շտաբը, իսկ կապիտանի առաջարկից՝ վրանում տեղավորվել՝ նա կտրականապես հրաժարվեց։ Նա պատվիրեց միայն զարթեցնել իրան այն դեպքում, յեթե շտաբից սուրհանդակներ գալու լինեն իրան վորոնելու։

Նրան չաջողվեց գիշերը հանգիստ անց կացնել։ Աչքը փակել եր թե չե, ճանապարհի կողմից դոփյուն լսվեց. շտաբից մի սուրհանդակ եր արշավում շտապ զեկուցումով։ Մարդկանց զարթնեցնելով և հարցուփորձ անելով, թե ուր է Դյումուրյեն, սուրհանդակը վերջապես գեներալի մոտ հասավ։

Դյումուրյեն տեղից վեր թռավ, քունն իսկույն փախավ։ Իրան մատուցված ծրարը պատռելով՝ նա կարդաց զեկուցումը։ Զինվորները նկատեցին, թե Դյումուրյեն ինչպիսի ջղային շարժումով թուղթը խրեց գրպանը, և լսեցին նրա տված հրամանը.

— Գեներալ Շազոյին ինձ մոտ կանչել՝ իսկույն և յեթ։

Բանբերի բերած ձիու վրա թռչելով՝ Դյումուրյեն սլացավ մառախ և մտահոգ։

Դյումուրյեյի ստացած հաղորդագրությունը հիրավի շատ անախորժ եր։

Դյումուրյեն դեռ Սեդանում եր կազմել պատերազմի ծրագիրը՝ Բնական պայմանները նրան հնարավորություն եյին տալիս պաշտպանելու Փարիզի ճանապարհը։

Պրուսական բանակի ճամբան տարածված եր Արգոննյան բարձունքը*) խիտ անտառներով ծածկված լեռներ, դժվարանց ճանապարհ-

*) Արգոնները խիտ անտառներով ծածկված բլրավոր սարահարթի փեշն և Արևմուտքում Արգոնները իջնելով կազմում են Շամպայնի հարթավայրը, իսկ հյուսիսում — Արդեններ։ Չնայած աննշան բարձրությանը՝ Արգոնները դժվարանց են մանավանդ աշնան անձրևներին։



ներով, վորոնք անանցանելի յեն դառնում աշնան անձրևներին։ Հինգ
անցք — Շեն-Պոպյուլե, Քրուա-ո-Բուա, Գրանպրե, Լե-Իլետ և
Շալադ — տանում եյին Շամպայն, վոր աշնանը ճահճի յե փոխարկ-
վում։ Դյումուրյեն հույս ուներ ձմեռն այդտեղ պահելու պրուսացի-
ներին կամ նրանց հաղորդակցության գծերը կտրելով և պրուսացի-
ներին թողնելով թշնամաբար-հեղափոխականորեն տրամադրված ազ-
գաբնակչության մեջ՝ նրանց ստիպել հեռանալու։
Գերմանացիների համար ապշեցուցիչ վճռական և արագ ընթացքով
Դյումուրյեն բանակը դուրս հանեց Սեդանից և գերմանական առա-
ջապահների աչքի առաջով բերավ տեղավորեց նոր դիրքերում։ Նա
ինքը տեղավորվեց Գրանպրեյում, իսկ առանձին զորամասերը գետ-
դեց լեռնային անցքերում։ Այդտեղ նա սպասում եր կանչված ոգնա-
կան զորքին, վորը պետք է համապատասխանություն ստեղծեր ֆրանսիա-
կան ուժերի և Բրաունշվեյգյան կոմսի բանակի թվական քանակ-
ների մեջ։
Դյումուրյեյի ճարպիկ զորախաղի շնորհիվ պրուսացիները գտնվում
եյին հինգ պաշտպանված լեռնանցքերի առջև, վորոնց ճեղքելը նրանց
վրա թանգ պիտի նստեր։
Սեպտեմբերի 7-ին սկսված հեղեղները ճանապարհները քանդեցին։
Մթերքների կանոնավոր ստացումն ընդհատվեց։ Այն ժամանակ գեր-
մանացիները և մանավանդ եմիգրանտներն սկսեցին կողոպտել գյուղերը,
քշել տավարը, անկարգություններ անել։
Գերմանացիներից փախչող գյուղացիների սայլերը բոլոր ճանա-
պարհներով դիմում եյին ֆրանսիական բանակի թիկունքը։
Գերմանական բանակը տառապում եր ջերմատենդից և փորահարին-
ների մոտ չորանալու հնարավորություն չունենալով։
Մեթոդիկ (կանոնավոր կերպով գործող) և անհողդողդ Բրաունշվեյ-
գյան կոմսը դանդաղում եր։
Դյումուրյեն աչալուրջ կերպով հետևում եր նրա յուրաքանչյուր
շարժումին՝ պատրաստ նետվելու այնտեղ, ուր կշարժվեն գերմանա-
ցիները։
Բայց սեպտեմբերի 12-ին միացյալ զորքերն անսպասելի հարված
տվին ֆրանսիացիներին. հանկարծական գրոհով նրանք ֆրանսիացի-
ներին դուրս քշեցին մի անցքից — Քրուա-ո-Բուայից՝ յետ շպրտելով
անցքը պահպանող ֆրանսիական զորամասը։ Այսպիսով պրուսացի-
ները դուրս եյին գալիս Դյումուրյեյի բանակի թիկունքը և ճեղքելով
անցնում Փարիզ տանող ճանապարհը։
Հենց Քրուա-ո-Բուան կորցնելու լուրն եր այն հաղորդագրությունը,
վոր բերվեց բանակի հրամանատարին 13-րդ գնդի խարույկի մոտ։

— Ձեր գնդապետը հանձն էր առել անցքը պաշտպանելու մի բուռ մարդկանցով, — քիչ հետո գոռում էր Դյումուրյեն իր շտաբում սպասող սուրհանդակին։ — Իսկ հիմա մենք պաշարված ենք... Ծուղակի մեջ են գցել մեզ... Գնդապետը դրա համար պատասխանատվության կենթարկվի։ Տեսնենք, տեսնե՛նք...

Յեվ նա կռացավ քարտեզի վրա։ Սպան մեղապարտի պես լուռ էր՝ անաջողության ծանրությունն զգալով։

— Ավստրիացիներն ի՞նչ ուժեր ունեն, — հարցրեց Դյումուրյեն նորից դիմելով սուրհանդակին։

— Լե-Լու կամավորները և հուսարներն են։

— Ուժեղ հետևակ չունե՞ն։

— Վոչ, գեներա՛լ։

— Արտիլերիան նույնպես ուժեղ չէ։

— Զորս թնդանոթ ունեն, գեներա՛լ։

— Լա՛վ։ Սխալը կուղղվի։

Այդ ժամանակ մտավ գեներալ Շազոն։

— Ահա և դուք, գեներա՛լ, — վողջունեց նրան Դյումուրյեն։ — Ավստրիացիները գրավել են Քրուա-ո-Բուան։ Նրանք իրարից կտրել են մեր ուժերը։ Ինչ էլ վոր լինի, պետք է այդ անցքը վերջնականապես մեր ձեռքը գցենք։ Յես հույս ունեմ ձեզ վրա։ Մի քանի լավ գնդեր վերցրեք և ճանապա՛րհ ընկեք։ Թշնամու վրա գրոհ տվեք մինչև նրա օգնություն ստանալը։ Այնտեղ հիմա յերևի միայն առաջապահ զորքն է։ Աղմուկ չանե՛ք... Հասկացա՞ք։ Լեռնային ճանապարհները մի կողմ թողեցեք. այնտեղ կարող եք «ճերմակ պատմուճաններին» հանդիպել։ Գնացեք Ենի ափերով, բարձրացեք մինչև Վուզյե, զինվորներին հանգստացրեք և ուղղակի գրոհեցեք Քրուայի վրա։

— Իմ հեծելազորը քիչ է...

— Վերցրեք հինգ էսկադրոն, նրանք թշնամուց կմաքրեն մատչելի տեղերը։ Քրուային մոտենալով՝ թնդանոթաձգություն սկսեցեք խճուղու և անտառի ծայրի ուղղությամբ։

— Լսում եմ։ Յես կվերցնեմ Սենի, Ուազի և Արդեննյան գումարտակները, վերջին գումարտակը ծանոթ է այդ տեղերին։

— Վերցրեք նաև կամավորների — 13-րդ գնդի մի գումարտակ։ Նրանք դիմացկուն կլինեն։ Ճանապարհվեցե՛ք։ Վաղը յես պետք է լավ լուրեր ստանամ։ Ինձ նման դուք էլ եք յերդվել հաղթել կամ մեռնել․ Զմեռնե՛ք, ծերուկ։ Ձեզնից է կախված ամբողջ կամպանիայի աջողությունը։

Սուրհանդակները ցրվեցին բանակում մեկնելու հրաման այն զորամասերի, վորոնք մտնում էին գեներալ Շազոյի տրամադրության տակ։



13-րդ գնդի առաջին գումարտակում ամեն ինչ շարժվեց։ Խարույկների լուսով ծալում էին վրանները, ժողովում էին արշավանքային պայուսակները, ստուգում էին հրացանները։

Մոնտարժի հորաքույրը վեր թռավ, հենց վոր լսեց շտապ հավաքվելու աղմուկը։ Նա վազեց գնդապետի մոտ։

— Բատիստ, ի՞նչ է, ճանապարհվո՞ւմ ենք, — հարցրեց նա՝ մտնելով գնդապետի վրանը։

— Այո՛, հորաքույր։ Դատարկ բան է, հարևան գյուղը զբոսանքի յենք գնում։ Լուրջ բան չկա։

— Բայց ինչո՞ւ էսքան շտապ։

— Հրամանն էդպես է։ Չգիտեմ... Տոբիին ասացեք, վոր նա էլ պատրաստվի։

— Դու Տոբիին վերցնո՞ւմ ես։

— Հապա՞... Նա գումարտակի հետ է գնում։ Դո՞ւք... Չէ, դուք կմընաք — բեռները չեն գնում։ Անհանգիստ մի՛ լինեք, հորաքույր։ Դատարկ բան է։

Պառավը վազեց իր վրանը՝ ցրտից փաթաթվելով։ Գիշերվա դեմ բարձրացած սառը քամին լավ բան չէր խոստանում։ Յերկնքում ժողովվում էին քուլա-քուլա սև ամպերը՝ թագցնելով վոչ շատ առաջ պայծառ շողացող աստղերը։

Վրանը ժողովրդով լիքն էր։ Զինվորները վազել յեկել էին փորները կշտացնելու՝ գնալուց առաջ և իրանց սրվակներն ողի լցնելու։ Նրանք խոսում էին առաջիկա գործի մասին։ Մի քանիսն արդեն գիտեյին Քրուա-ո-Բուայի գրավման մասին։ Շամբուրսին կամավորներին ասում էր.

— Է՛յ, ղոչաղներ, պատրաստվեցե՛ք։ Բաղնիս է լինելու։

— Իսկ դու գիտե՞ս, թե ո՞ւր ենք գնում — հարցրեց մի կամավոր։

— Քրուա-ո-Բուան յետ վերցնելու։ Ավստրիացիները գրավել են անցքը և յետ շպրտել մեր պատվարը։

Մոնտարժի հորաքրոջ լեղին ջուր կտրեց։ Ահա այն րոպեն, վորի հասնելուց նա այնպես վախենում էր. Տոբին գնում էր այնտեղ, ուր կռվում և մեռնում են։

Բայց ահա և՛ Տոբին... Նա վրանը ներս թռավ աղմկալից, հուզված։

— Նանի՛, ճանապարհվո՛ւմ ենք, — գոչեց նա։

Նա ուզեց պառավին հրաժեշտի վրա գրկել, բայց պառավը բռնեց նրա ձեռքից և տարավ վրանի խորքը։ Այդտեղ նա Տոբիին նստեցրեց, վոտները հանեց, ճարպ քսեց, տաք գուլպա և գամաշներ հագցրեց։ Նրան համբու-ամեն կողմից դիտեց նրան և նոր միայն բաց թողեց։ Ցե-րևով՝ պառավը զգաց, վոր արցունքները հոսում են իր այտերով։ Հաստատուն քայլերով յետ դարձավ րեսը դարձնելով՝ աչքերը սրբեց։

զինվորների մոտ և սկսեց աշխատել նրանց մոտ հոգածու մոր պես օգնելով նրանց։

Կապրալները և սերժանտները վրանից վրան էին վազում զինվորներին ժողովելու։ Վորքան կարելի յեր՝ հանդարտ, առանց աղմուկների, առանց թմբուկի, մթության մեջ շարքերը կանգնեցվում էին։ Յերկրորդ և յերրորդ վաշտերը պատրաստ էին, առաջինը մոտենում էր, չորրորդը քիչ ուշանում էր։ Գումարտակի հրամանատարը զայրանում էր։ Վերջապես գումարտակը ժողովվեց։ Հրաման տրվեց, և մութ զանգվածը տեղից շարժվեց։ Խոսակցությունները լռեցին։

Ահա և Վուզյեյի ճանապարհը։ Նրանով արդեն շարժվում էր հեծելազորը։ Դրագուններն անցան, ապա հետևակը — Արդեննյան գումարտակը, Սենի հետախույզները, Փարիզյան 3-րդը և վերջապես զորասյուն կազմեց կամավորների գումարտակը։

Անձրևը մաղում էր։ Զինվորները սարսռալով կուչ էին գալիս հյուսիսից թռչող քամու թափերից։

Գիշերվա ժամը յերկուսին մոտ հեղեղ յեկավ, մրրիկ բարձրացավ։ Փոթորիկը թռչում էր ծառերի վրա և յեղեգնի նման թեքում նրանց գետին։ Անձրևն անխնա ծեծում էր՝ վոչ մի րոպե չընդհատվելով։ Ճանապարհը շուտով ջուրը տարավ։ Կոշիկները խրվում էին ցեխի մեջ, գնալն ավելի ու ավելի յեր դժվարանում։

Ապա զառիվայրերից սկսեցին գլորվել ամբողջ հեղեղատներ և վազել հովտի միջով՝ հոսող Ենե գետի մեջ։ Տալմայի մոտ ճանապարհը կտրված էր հեղեղումով։ Ստիպված յեղան ճահճով անցնել նախքան Բերժերիի մոտ դուրս գալը և անտառը մտնելը։ Ձիերը չէին կարողանում ցեխի մեջ խրված թնդանոթները դուրս հանել։ Զինվորները համարյա մինչև ծնկները ջրի մեջ՝ միահամուռ հրելով՝ դժվարությամբ դուրս էին հանում անիվները։ Մի ամբողջ ժամ կորցնելով՝ Շազոյի զորամասը մտավ անտառը։ Վոտների տակ ցեխը չփչփում էր, քամին վոռնում ու գոռում էր։ Ձիերը խրտնում էին, ծառս լինում։

Զինվորները թրջվեցին մինչև ուղն ու ծուծը․ պատմուճաններից, գլխարկներից, յեռանկյունիներից ջուրն առվի պես հոսում էր։ Բոլորը գնում էին գլուխները ցած կռացրած և քամու թափի հետ մաքառելով։ Գլխարկները գլխներին պահելու համար զինվորները կապել էին թաշկինակներով ծնոտների տակ։

Բատխատը հայհոյելով՝ կոչ էր անում դժոխքի բոլոր ուժերին․ ամբողջ ժամանակ նա չկարողացավ վառել իր ծխամորճը։ Ժամանակ առ ժամանակ նա մոտենում էր Տոբիին։

— Հ՛ը, վո՞նց ես, տղա՛, — հարցնում էր նա։ — Ձե՞ս սառել։

Տոբիի ատամներն իրար էին զարկվում, բայց չէր ուզում ցույց տալ։

— Վնաս չունի՛, շաքար չենք, վոր հալվենք, — պատասխանում էր նա։



— Առ մի կում ռոմ կուլ տուր։

Տոբին վերցնում էր Բատխատի սրվակը և կում էր անում՝ հաճույքով զգալով, թե ջերմությունն ինչպես է տարածվում ամբողջ մարմնով։

— Լավ է, — ծպպացնում էր նա՝ սրվակը հետ տալով։

Լուսաբացին զորամասը մոտենում էր Վուզյեյին։ Մրրիկը հանդարտվում էր։ Հեղեղը դադարեց, բայց ջուրը տարած ճանապարհներով առաջ գնալը դեռ ելի դժվար էր։ Տոբին ուժասպառ էր լինում, բայց ընկերների հետ հավասար գնում էր։

Յերբ զորամասն անտառից դուրս էր գալիս, Տոբին զգաց, վոր մի ինչ-վոր կենդանի գունդ քսվում է իր վոտներին և ապա մի կոշտ ու տաք բան կպավ էր ձեռքին։ Տոբին նայեց։

— Մոնշալե՛յը, — բացականչեց նա։

Դա հիրավի Մոնշալեյն էր։ Մոնտարժի հորաքրոջից փախչելով՝ նա թարմ հետքերով վազել էր զինվորների հետևից, մինչև վոր գտել էր իր տիրոջը։ Հիմա նա ցատկոտում էր Տոբիի շուրջը, ֆռֆռկում էր և աղաչական կերպով նայում իր թաց խելոք աչքերով։ Եվ ճար չկար․ լեյտենանտը թույլ տվավ, վոր շունը մնա։ Զգալով վոր իրան չեն վռնդում, Մոնշալեյը բռնեց իր սովորական տեղը — Տոբիի յետևը — և քարշ յեկավ զինվորների հետևից։ Թրջված, մազերը ցից, ցեխում կորած, նա նման էր մի ինչ-վոր հրեշի։

Մի ժամից հետո զորամասի գլուխն արդեն մոտենում էր Վուզյեյին՝ թաղվելով բարձր ցանկապատերի յետևում։ Ժամը 9-ին գումարտակները մտան քաղաք։ Զինվորներն այնպես էին հոգնած գիշերային դժվար արշավանքից, վոր գեներալ Շազոն վորոշեց նրանց հանգիստ տալ։ Նա ժամանակը կորցնում էր, բայց իրան վարձատրում էր նրանով, վոր առավոտյան կարող էր իր մարդկանց ավստրիացիների վրա տանել թարմ և ուժեղ։

Յերեկոյան գեներալը բանակումն էր։

— Տղե՛րք, — դարձավ նա զինվորներին, — այսօր մի քիչ կքնենք։ Այս գիշեր անցյալ գիշերվանից ավելի լավ կլինի, բայց կարճ կլինի, — նախազգուշացնում եմ ձեզ։ Իսկ վաղը դուք պետք է գործ տեսնեք։

Հրամայելով հանգցնել բոլոր կրակները և կատարյալ լռություն պահպանել՝ Շազոն գնաց։

Առավոտվա ժամը 2-ին գումարտակները վոտքի էին։ Նրանք անցան կամուրջը և սև անընդհատ ժապավենի պես ձգվեցին Լիվրիի ճանապարհով։

Տեղը լավ էր ուսումնասիրված․ դուրս գալուց առաջ Շազոն Դյումուրյեյի և շտաբի պետ գեներալ Տուվենոյի հետ միասին քարտեզի

վրա կատարել էր ամբողջ ճակատամարտը: Նա հույս ուներ, որ թշնամուն անակնկալի կբերի:

Լիվրիի ճանապարհն ազատ էր. գյուղացիների ասելով՝ ավստրիացիները բռնել էին անտառի ծայրը և Լիվրիի ու Բրու-ո-Բուայի առջևի բարձունքները:

Ենի ամբողջ հովիտը պատած խիտ մառախուղով պաշտպանված յոթ հարյուր հետախույզներ առաջ սողվեցին և առանց մի զարկի վոչնչացրին թշնամու առաջավոր պահականոցները:

Արևի առաջին ճառագայթների հետ փոքրիկ բանակը ռազմական դիրքեր գրավեց. հետևակը յերկու զորասյունով ձգվեց անտառի յերկարությամբ, հրետանին պատրաստ էր կարտեչներ տեղալ խճուղու վրա, իսկ հեծյալ եսկադրոնները տեղավորվել էին նրա յերկու կողմերում: Թշնամին բռնել էր Լիվրի և Բրուա-ո-Բուա գյուղերի մոտ յեղած բարձունքները: Նրա բանակում հանգիստ էր տիրում:

Որը հաջող սկսվեց: Մի ավստրիական պահակախումբ բռնվեց խաղող գողանալիս: Թալանչիներին կապոտեցին և գերի տարան: Մի ուրիշ պահակախումբ, ուր ավստրիացի ուլաններ կային, գտնվեց մի ագարակի մառանում կիսազգաստ դրության մեջ: Զինվորների համազգեստները գինով թաթախված էին, ամեն կողմ ընկած էին տակերը դուրս հանած տակառներ, նոր ազած մսի յերկու մեծ կտոր ընկած էին հատակին գինու լճի մեջ: Վերը, ագարակի խոհանոցում ընկած էին նույնպես հարբած սպաներ: Յերբ նրանցից մեկին դուրս բերին ագարակից, վոչ վոք չէր կարողանում ծիծաղը պահել. գերված սպայի գլուխը խորասուզված էր ժապավեններով ու ժանյակներով զարդարված կանացի ճոխ չամչիկի մեջ:

Շուտով շարժվեցին և՛ ավստրիական բանակում. այնտեղ նկատեցին ֆրանսիացիների առաջխաղացումը: Ֆրանսիացիները կրակոցներին չեյին պատասխանում. գեներալի հրամանով նրանք պետք է հասնեյին բլուրներին առանց մի փամուշտ արձակելու:

Ավստրիական հետևակն իջավ ձորը և կիսաշրջան կազմեց՝ պահպանելով դեպի գյուղերը տանող անցքերը:

Շազոն սկսելու նշան տվավ:

— Տղերք, — դիմեց նա մոտ կանգնած զորամասերին, — Բրաունշվեյգցին ծաղրում է մեզ. նա ասում է, որ դուք շինված եք շուտ փշրվող ճենապակուց և մի փոքրիկ հարվածի անգամ չեք դիմանա: Ցույց տվեք նրանց, թե ինչպես է փշրվող ճենապակին դիմանում կրակին:

— Ո՜, նա կդիմանա, — պատասխանեց փարիզյան գումարտակի հրամանատարը: — Բայց, գեներա՛լ, մինչև կռվելը մեզ պետք է լուռ մնա՞նք:

— Վո՛չ հիմա կարող եք յերգել:



Փողերը հնչեցին:

Գործը լավ կգնա, կգնա, կգնա...

յերգեցին կամավորները: Գումարտակներն առաջ շարժվեցին գյուղի
վրա գրոհելու: Թշնամու առաջապահ զորքերը դարձան և յետ գնացին:
Ճակատամարտն սկսվեց: Ցերգի, փողերի հնչյունները, Թմբուկի
դռոցը խառնվեցին հրացանազարկերի և թնդանոթների գոռոցի հետ:
Կես ժամից հետո աջ թևում հետևակը թունդ գրոհով ավստրիացիներին դուրս մղեց Լիվրիից: Ձախ թևում թշնամին պաշտպանելով
ամեն մի թիզ հող՝ նահանջում էր Բրուա-ո-Բուայից: Փարիզեցիները, կամավորները և 98-րդը թշնամուն քշեցին բարձրություններից
և իրանք ամրացան այնտեղ:

— Հը՛, վո՞նց է, տղա՛, — գարձավ Բատիստը Տոբիին, յերբ գումարտակը կանգնել էր՝ դուրս գալով կրակի շրջանից: — Յերկյուղալի՞ յեր:
Յես քեզ եյի նայում — դու միշտ յետ եյիր մնում տալիս:

— Ո՛, — պատասխանեց փոքրիկ թմբկահարը, վոր առաջին անգամն
էր վառոդի հոտն առնում, — սկզբում մի տեսակ ցուրտ եյի զգում,
հետո ցիաս չուներ: Շատ տարօրինակ է: Յես յետ եյի մնում տալիս,
վոր տեսնեմ՝ Մոնշալեյը յետևից վազո՞ւմ է, թե՞ չէ:

— Շունը վազում եր յետևից:

— Այո, և դողում էր, կարծես ջերմելիս լիներ: Հենց վոր ռումբը
պայթում էր, նա ընկնում էր գետնին, հետո վեր թռչում և հաչելով
պլանում ինձ հասնելու համար: Նա ամբողջ ժամանակ գլուխը պտտում
էր՝ չգիտեմ ինչու և պոչով խփում էր, կարծես ճանճ էր քշում: Բայց
նա կռվողի կավի կրակին:

Շունն իրոք արդեն հանգստացել էր: Դունչը յերկարելով՝ նա մըշ-
մշալով ներս էր քաշում իրան անծանոթ վառոդի հոտը:
Կռիվը շարունակվում էր: Թշնամու հեծյալազորը դիմեց հակագրոհի
բայց յետ շպրտվեց: Ավստրիացիները նահանջեցին՝ կռվի դաշտում
թողնելով սպանվածներ և վիրավորներ:

Շազոն Դյումուրյեյին ուղարկեց մի կարճ զեկուցում. «Հաղթություն,
Դիրքը յետ է խլված»: Նա բանը վերջացած էր համարում: Զորքերը
մտան գյուղը և տեղավորվեցին հանգստանալու համար:

Ընդամենը յերկու ժամ հետո գյուղի կողմից լսվեց «ուռա»՝ կրա-
կոտ հրաձգության հետ միասին: Ավստրիացիները, վորոնք յետ եյին
նահանջել ոգնություն սպասելով, գրոհի դիմեցին: Գերազանց ուժերի
ճնշման տակ փոքրիկ դիմադրությունից հետո ֆրանսիացիները հեռա-
ցան: Նրանք կռվելով նահանջում եյին դեպի Վուզյե:

Զորամասերը ձգվել եյին խճուղու վրայով՝ տրտում վերադառնալով
այն ճանապարհով, վորով մի քանի ժամ առաջ կանոնավոր ձևով առաջ
եյին շարժվել՝ համոզված, վոր հաղթելու յեն:

# ՈՎ ԿԱՐՈՂ Է՝ ԹՈՂ ԳԼՈՒԽՆ ԱԶԱՏԻ՛

Դյումուրյեն միայն ուշ յերեկոյան իմացավ Շազոյի պարտության մասին. այդ լուրը բերին Քրուա-օ-Բուայից փախած զինվորները՝ ինքը Շազոն յերկար ժամանակ իր մասին տեղեկություն չեր տալիս։ Միաժամանակ շտաբում լուր ստացվեց, վոր գերմանացիները ճեղքել անցել են և՛ յերկրորդ անցքը—Շեն-Պոպյուլեն։

Բանակի դրությունը սարսափելի յեր։ Դեռ բավական չեր, վոր գերմանացիները դուրս եյին գալիս Դյումուրյեյի թիկունքը և կարող եյին նրան կտրել Բերնոնվիլի բանակից, վոր հյուսիսից շտապում եր դեպի Գրանպրե ինն հազարանոց զորաբաժնով, այլև Դյումուրյեն ինքը իրան թուլացրեց՝ աչքից կորցնելով Շազոյի ջոկատը։ Միայն Դյումուրյեյի յեռանդը փրկեց ամբողջ բանակը կորուստից։

Դյումուրյեն վորոշեց գերմանացիներից աննկատելի նահանջել դեպի հարավ-արևմուտք, Արգոնները և Սեն-Մենուլդում կանգ առնելով՝ սպասել ոգնության և պաշտպանել Շալոնի և Փարիզի ճանապարհը։ Կենտրոնի բոլոր բանակներին նա հրաման ուղարկեց անմիջապես միանալ իր հետ։

Թիկունքում պահեստ եր կազմվում։ Գյուղերի, քաղաքների բնակիչները փախչում, ցրվում եյին անտառներում՝ իրանց հետևից վոչնչացնելով ճանապարհները, ցնդեցնելով կամուրջները, ամեն մի միջոցով խանգարելով կոալիցիոն զորքերի առաջխաղացումը։

Նահանջելու պատրաստությունների ամենատաք ժամանակ Գրանպրեյում հայտնվեցին գերմանական բանակցողներ. Հոհենլոե արքայազնը Դյուվուրյեյից տեսակցություն եր խնդրում։ Մերժել չեր կարելի. դա կասկած կհարուցեր։ Դյումուրյեն իր փոխարեն ուղարկեց գեներալ Դյուվալին։ Արքայազնի պատվերով մայոր Մասսենբախին բերին բանակը։ Նա զարմացել եր ֆրանսիական գեներալի անհողդողդ տոնից և բանակում տիրող կարգից. բանդիտների մի խմբի փոխարեն, ինչպես եմիգրանտներն եյին բնորոշել ֆրանսիական բանակը, նա տեսավ իսկական բանակ և նրա գլխին փորձված հրամանատարներ՝ Շվարած նա վերադարձավ։ Այն ժամանակ, յերբ նա զեկուցում եր Բրաունշվեյգյան դուքսին և պրուսական թագավորին՝ զարմացնելով նրանց եր ամեն մի բառով, ֆրանսիական բանակը պատրաստվում եր դիրքերից հեռանալ։

Նահանջը կատարվեց լիակատար լռության մեջ։ Դա տեղի յեր ունենում գիշերը։ Մթությունը թաքցնում եր շարժումը, հրամանը հաղորդվում եր վաշտից վաշտ։ Բանակն եր հետևը թողել եր վառ խարույկներ։ Կես գիշերից հետո ամեն ինչ շարժման մեջ եր։ Լավագույն գնդերը



Դյուվալի և Շտենգելի հրամանատարությամբ սքողում եյին նահանջը՝ ռազմական կարգով կանգնելով բարձունքների վրա։

Առավոտյան ֆրանսիացիների աղմկալի բանակի տեղը գերմանացիները տեսան մարդուց դուրկ մի հարթություն, վորտեղ դեռ վառվում եյին թողած խարույկները։ Ֆրիդրիխ Վիլհելմը դուրս յեկավ ստուգելու այդ լուրը։ Նա կատաղության մեջ եր. այժմ միայն նա հասկացավ, վոր իր առաջ յեղել են մի բուռը ֆրանսիացիներ, վորոնց նա կարող եր ջարդել իր քառասուն հազարանոց բանակով, և այդ ֆրանսիացիները դուրս են պրծել իր ձեռքից։

Հենց նույն գիշերը Շազոյի բանակն ել դուրս յեկավ Վուզյեյից, բայց վոչ կես գիշերին, ինչպես հրամայել եր Դյումուրյեն, այլ առավոտվա դեմ։ Գնդերը գնում եյին միանալու Դյումուրյեյին։ Նրանք նորից դուրս յեկան այն ճանապարհը, վորի վրա անց եյին կացրել սեպտեմբերի 13-ի տանջալից գիշերը։ Այժմ գնալը հեշտ եր. հուժկու քամին չեր հարձակվում կատաղածի պես, անձրևը չեր ծեծում դեմքերը։ Բայց ամբողջ արշավանքի ապարդյուն լինելու գիտակցությունը մաշում եր բոլոր զինվորներին։ Հետախույզները դեսուդեն եյին ընկել. թշնամին կարող եր ամեն կողմից անսպասելի կերպով հարձակվել։ Առջևում անորոշություն եր։

Հետևում անտառն եր՝ տնքում։ Զինվոր-անտառապահները և ջոկատներ կազմած տեղական գյուղացիները փչացնում եյին անտառային ճանապարհները՝ նրանց վրա թափելով կտրտած ծառեր, իրար վրա կիտելով ահագին ճյուղեր, փխրունացնելով առանց այն ել ջրով փափկած գետինը։ Դարավոր ծառերն աղմուկով ու ճռնչյունով գետին եյին գլորվում։ Տխուր արձագանքը տարածվում եր ամբողջ անտառը։

Ճանապարհին ամեն քայլափոխում պատահում եյին գյուղացիների սայլեր։ Գյուղացիներն իրանց հետ տանում եյին այն ամենը, ինչ կարող եյին. պարկերով հացահատիկը, տակառներով գինին։ Թափված եյին փետուրե վերմակների, բարձերի, տնային պիտույքների խայտաբղետ կապոցների հետ միասին։ Սայլերի կողքով գլխիկոր գնում եյին տղամարդիկ, կանայք, մանուկներ։ Սայլերի վրա որորոցներում լալիս եյին ծծկեր յերեխաները։ Ուժասպառ յեղած ձիերը ցեխից հազիվ հազ եյին հանում լիքը բեռնավորված սայլերը։ Կովերը, մաքիները, վոչխարները բառաչում ու մայում եյին, խոզերը խռխռում, հոտը քշողների մտրակները շրխկում եյին։

Ժողովրդական թշվառության այդ տեսարանն ավելի յեր մեծացնում զինվորների մտատանջության ծանրությունը։

Վոյից դուրս գալուց Շազոյի զորաբանակի առաջավոր մասերը տեսան հեռվում իրանց առջև Դյումուրյեյի բանակի վերջին շարքերը։ Բայց մյուս կողմից, գերմանացիների գրաված գյուղերի կողմից ինչ-

վոր հեծելազոր էր շարժվում։ Մերթ ծածկվելով, մերթ հայտնվելով բլուրների վրա՝ նա ավելի ու ավելի յեր մոտենում։

— Պրուսացինե՜ր։ Պրուսացինե՜ր, — ձայն տարածվեց շարքերում, յերբ զինվորները նկատեցին հեռվում պրուսական ուլանների խայտաբղետ նշանները։

Շազոն շտապ հաստատեց դիրքերը, տեղավորեց արտիլլերիան, հետևակը, առաջ շարժեց իր եսկադրոնները։

13-րդ գունդը կանգնեց գյուղի հետևի դաշտում։ Պեպինն անցավ շարքերը՝ զինվորներին խրախուսելով։

— Դե՜հ, տղե՛րք, պի՛նդ կացեք։

— Պատրաստ ենք, — պատասխանեցին զինվորները, բայց Թույլ, ակամա։

— Գերմանացիներին յետ մղենք, այնուհետ կհանգստանանք, — ասում էր Բատխատը։

Նա մոտեցավ Տորինին։ Թմբկահարը կանգնած էր իր տեղը՝ դեպի հեռուն լարված մտիկ տալով։ Ձեռներում սեղմել էր Թմբուկի փայտիկները՝ պատրաստվելով գրոհի նշան խփելու։

Ցեվ հանկարծ պատահեց մի ինչ-վոր անհասկանալի բան, վոր հետո էլ վոչ վոք չկարողացավ վոչ մի կերպ բացատրել։

Կամավորները նկատեցին, վոր իրանց առաջ կանգնած 71-րդ մըշտական գունդը ցնցվեց, զինվորները յետ Թափվեցին։ Բոլոր զորամասերում շարքերը կտրատվեցին, զինվորները յետ-յետ գնացին առջևը կանգնածների ճնշումից։ Առջևից մի ինչ-վոր տեղից լսվեցին աններդաշնակ հուսահատական ճիչեր, անկարգ հրաձգություն, սմբակների դոփյուն։ Ինչ-վոր մի բան կտրվեց, մարդկանց կանոնավոր շարքերում պահող ինչ-վոր Թելեր կտրտվեցին։

2-րդ գնդի հուսարները սլացան հետևակ շարքերի առաջով՝ աղաղակելով. «Մեզ դավաճանել են։ Թո՛ղ ով կարող է՝ գլուխն ազատի։ Պրուսացինե՜րը»։ Նրանք ամեն կողմ ցրվեցին՝ ամենուրեք իրարանցում գցելով։ Շազոն և մի քանի հոգի, վորոնք դեռ գլուխները չեյին կորցրել, փորձելով կանգնեցնել փախչողներին՝ մերկացրած Թրերը ձեռներին դեռ զեն եյին ընկել մահվան պես գունատված։ Նրանք բռնում եյին մարդկանց ոձիքից, ձիերի սանձերից, բայց խենԹացած հուսարները դուրս եյին պրծնում և մատնության մասին աղաղակելով՝ առաջ սլանում։

Այն ժամանակ ամեն ինչ խառնվեց։ Վոչինչ չհասկանալով, վոչինչ չիմանալով, միայն «մեզ մատնե՜լ են» գոռալով՝ գումարտակներն ու գնդերը փախչում, ցրվում եյին։ Հետևակը լեղապատառ վազում էր հեծելազորի հետևից, վորը սլանում էր այնտեղ, ուր դեռ յերևում եյին Դյումուրյեյի բանակի վերջին շարքերը։



13-րդ գնդի մոտով կատաղորեն ձին մտրակելով, սարսափից ծռված դեմքով, նետի պես սուրաց մի հուսար։ Բատխատը ցատկեց և ուզեց բռնել ձիու սանձին, բայց նա խրտնեց։ Հուսարը մտրակով զարկեց նրան և սլացավ մյուսների հետևից՝ գոռալով.

— Ով կարող է, Թո՛ղ գլուխն ազատի։

Զորս կողմից ձայնակցեցին նրան։ Բատխատն աշխատում էր կանգնեցնել իր զինվորներին։

— Կանգնեցե՛ք, դարշելինե՛ր։ Տեղից չշարժվե՛ք, — գոռում էր նա կոկորդը պատռելով։

Բայց ուշ էր։ Ամենքը փախչում եյին։ Ամբոխը Բատխատին տարավ իր հետ։

Տորին փախչում էր դաշտով՝ վոտը Թմբերին խփելուց սայթաքելով։ Առջևում, կողքերին — նրա շուրջն ամեն տեղ կապույտ, սպիտակ, կանաչ համազգեստներ և անծանոթ խենԹացած դեմքեր եյին։ Նա սայԹաքում էր՝ վոտը Թմբերին, ուրիշի վոտներին կպցնելով, կպչում էր ուրիշների մեջքին։ Թմբուկը, վոր մեջքին չէր գցել, խփելով ցավացնում էր ծնկները՝ խուլ ձայներ հանելով։

Հանկարծ Տորիի առաջ ամեն ինչ ճապաղեց, խառնվեց, որորվեց. նրա ծնկները ծալվեցին, նա գետին ընկավ։ Մեկը նրա մարմնին կպչելով սայթաքեց, ընկավ, վեր ցատկեց և Թունդ հայհոյելով՝ առաջ փախավ։ Ապա Տորին զգաց, վոր մեկն իրան բարձրացնում է, տանում, տանում, և նորից զգաց հողի մինչև վոսկորները Թափանցող խոնավությունը։

Հարյուրավոր վոտների դոփյուն։ Ապա հանգիստ, ասկալի, կենսազուրկ։ Խուլ ձայներ, սմբակների չփչփոց, մի տեղ բոլորովին մոտիկ հրացանների ճարճատյուն — և ամեն ինչ կորավ։ Մոռացություն։

Ցերբ Տորին ուշքի յեկավ, շուրջը տեսավ միայն լերկ դաշտ. չորս կողմը վոչվոք չկար։ Գլխավերևը ցած կախված եյին գորշ ամպերը և արեգակի մառախլապատ բիծը։

Տորիի ձեռքը դիպավ մի բրդբրդոտ, տաք բանի։ «Սա հո Մոնշալե՛ն է»։ Շունը մռալով քծնում էր իր տիրոջը։

Տորին ծունկ չոքեց, ապա վոտի կանգնեց։ Աչքերն ամպամած եյին, գլուխը պտտվում էր, ծնկները Թուլությունից դողում եյին։

«Ես վի՞րավոր եմ։ Ի՞նչ եմ յեղել», — հարցնում էր նա իրան։

Տորին առջևում նկատեց մի գյուղ, նրանից դենն անտառ։ Նա հիշեց իրարանցումը, փախուստը, ընկնելը։ Առջևի գյուղը Մոն էր, վորտեղով գումարտակը քիչ առաջ անցել էր։

Տորին քարշ յեկավ դեպի այնտեղ։

Գյուղը կատարելապես դատարկ էր։ Ամեն տեղ յերևում եյին նոր փախուստի հետքեր։ Դռները բաց են։ Տորին ման յեկավ ամբողջ գյուղը, բայց վոչ մի կենդանի արարած չտեսավ։

Գյուղի ծայրում մի տեղ ընկած էր յերեք թնդանոթ, չորրորդն անիվների վրա յեր։ Նրա յերախին հենել նստել էր միանգամայն լքված մի թնդանոթաձիգ զինվոր։ Թույլ կախ ընկած ձեռքում նա բռնել էր թուրը, վորի բերանն անախորժ կերպով փայլում էր։

Տորին նետվեց դեպի նա՝ գոչելով.

— Ընկե՜ր, ընկե՜ր։

Վազեց հասավ, ձեռն ուսին դրավ։

Թնդանոթի յերախից թնդանոթաձիգը սահելով՝ պարկի նման գետին գլորվեց. նա մեռած էր։

Տորինին յերկյուղը պատեց. մի յերկյուղ, վոր անհաղթահարելի յեր, միտքը, կամքը ստրկացնող, վոչնչացնող։

Հեռու, շատ հեռու շարժվում էր մի սև զանգված։ Տորին հասկացավ — դա պրուսացիներն էին։

Տորին բնազդորեն նետվեց անտառը, վորպեսզի ծառերի հետևում թաքնվի և դաշտերի դատարկության ու ճանապարհների լռության մեջ մենմենակ չմնա։

Նա թուլություն չէր զգում։ Վոտներն իրանք-իրանց գնում էին։ Գլխավերևը չարագուշակ կերպով աղմկում էին ծառերը։ Նրանց հեղեղներից սևացած բները ծանր մռայլ սյունաշարքերի պես կանգնած էին։ Չոր անտերև ճյուղերը խփում էին յերեսին։ Վոտների տակ խշխշում էին թափված փթող տերևները։

Տորին շարունակ առա՜ջ էր վազում։ Ցերբեմն նա կանգ էր առնում և խռպոտ ձայնով կանչում. «Բատիստ։ Ընկերնե՜ր»։ Պատասխան չէր լինում։ Ապա փայտիկները շոշափելով՝ Տորին թմբկահարեց։ Թմբուկի չոր ձայնը տարածվեց անտառում։

Տորին յերկար վազեց։ Վերջապես առջևը լույս յերևաց։ Տորին ճանապարհը դուրս յեկավ։ Առջևը՝ հեռվում նա տեսավ մի շարժուն կետ։ Մոնշալեյը հաչելով առաջ սլացավ, Տորին նրա հետևից։ Ավելի ու ավելի յեր մոտենում... Ահա մարդիկ էլ են յերևում. լսվում է սայլերի ճռնչյուն։ Դա գյուղերից փախչող գյուղացիներ են... Ամբողջ մի կարավան է։

— Ցեղբայրնե՜ր — միայն կարողացավ կանչել Տորին և գետին գլորվեց։

Գյուղացիներն աղաղակը լսեցին։ Սայլերը կանգ առան։ Վազեցին Տորինի մոտ։

Մի քանի րոպեյից հետո Տորին որորվում էր ճոճվող սայլի վրա՝ մարդկանցից փայփայված, հաստ վերմակի տակ տաքացած։

Անկապ թոթվելով «13-րդ գունդը... Ո՞ւր է 13-րդ գունդը», Տորին սուզվեց խոր քնի մեջ։ Նրա առաջ թռչում էին ծառերի սև զանգվածները. նրանք դեսուդեն էին վազում, խճճվում, շարքեր կազմում և



«Դավաճաններ, մեզ դավաճանել են» աղաղակով ցրվում ամեն կողմ։ Իսկ ծառերի հետևից մտիկ էր տալիս թնդանոթաձիգի մեռած դեմքը և շողում էր նրա թրի բերանը։ Տորին ճչալով զարթնում էր։ Սայլի միալար ճռռոցը նրան հանգստացնում ու որորում էր, և նա նորից էր քնում։

Քարավանը դանդաղ առաջ էր շարժվում։ Արևի մայրամուտից նա մտավ մի փոքրիկ քաղաք և հրապարակում կանգ առավ։

Ամբողջ հրապարակը լցված էր սայլերով, բեռներով, սայլակներով։ Սայլերի արանքով դեսուդեն էին վազում մարդիկ շտապ պատրաստվելով քաղաքից հեռանալու։ Մի անկյունում բարձրության վրա կանգնել էր յեռագույն շարֆով մի մարդ և իր շուրջը հավաքված մարդկանց համար կարդում էր հետևյալ կոչը.

— «Քաղաքացինե՜ր։ Թշնամին հաղթություն տարավ մեր հողամասի վրա։ Հանուն հայրենիքի և ազատության, յես պահանջում եմ մեր բանակը հաց և անասունի կեր հասցնել... Յես պահանջում եմ նույնպես, վոր ձեր անասունները և ձիերը տարվեն թիկունքը. հակառակ դեպքում՝ հայրենիքի շահի համար յես ստիպված պիտի լինեմ դատարկել ձեր գյուղերը՝ այնտեղից դուրս տանելով ամեն ինչ, վորպեսզի թըշնամու բաժին չդառնա։

«Յեթե թշնամին մոտենալու լինի, վորպեսզի անցնի այն կիրճերը, վոր յես պահպանում և ամրացրել եմ, յես կհրամայեմ կոչնակ հնչեցնել Արգոննի անտառների բոլոր անկյուններում։ Այդ ահազանգին թող ամեն մի հրացան ունեցող դուրս գա գյուղից և միանա բանակին. թող մյուսները վերցնելով բահեր, քլունկներ և կացիններ՝ թող պատնեշներ շինեն, վորպեսզի արգելեն թշնամու առաջխաղացումը։

«Միաժամանակ զգույշ ու համարձակ գործելով՝ դուք կօգնեք ազատության պաշտպանելուն, նրա թշնամիներին մահացու հարված տալուն»։

Դա Դյումուրյեյի կոչն էր։ Այդ կարդացող քաղաքային վարչության սպայի մոտ մի կույտ հրացաններ էին դրված։ Ազգային գվարդիայի մի սպա հրացանները բաժանում էր իր շուրջը խռնված տղամարդկանց։ Հրացան ստացողները մի կողմ էին քաշվում և շարք կանգնում, ուր արդեն հարյուր հոգի կար կանգնած։

Այն սայլը, վորի վրա պառկած էր Տորին, կանգ էր առել ազգային գվարդիականների զորամասից վոչ հեռու։ Տորին աչքերը բացավ և մտիկ տվավ շուրջը։ Ջերմությունը և հանգիստը վերականգնել էին նրա ուժերը. նրա խելքը գլուխն էր գալիս, աչքերն այլևս պղտոր չէին։ Տեսնելով աղմկալի ամբոխը, հրացաններով կանգնած ազգային գվարդիականներին, զորամասի մոտով անցնող՝ կացիններով զինված անտառապահներին. Տորին ավելի հանգստացավ։

«Ուրեմն ամեն ինչ չի կորել. ժողովուրդը զինվում է, դիմադրություն է պատրաստվում», — մտածեց նա։

Այդ ժամանակ կողքի փողոցից աղաղակներ լսվեցին.
—Բերո՜ւմ են։ Բերո՜ւմ են։

Ազգային գվարդիականների յերկու շարքի միջով հրապարակ դուրս յեկան մի քանի հոգի։ Նրանց շրջապատեց ամբոխը՝ բռունցքներով, ձեռնափայտերով սպառնալով։ Ամեն կողմից գոչում եյին.

— Լապտերներից կախե՜լ դրանց։

Ազգային գվարդիայի մի սպա նետվեց կալանավորներին ազատելու։

— Քաղաքացինե՜ր, — կոկորդը պատռում եր նա՝ վորպեսզի ծածկի իր ձայնով ամբոխի աղաղակը։ — Այս անպիտանները պետք ե ուղարկվեն բանակի շտաբը։ Նրանց մոտ գրագրություն ե գտնված. դա յերևի ծածկագիր զեկուցումներ են։ Թո՛ւյլ տվեք հարցուփորձ անել դրանց, հետո նրանք կստանան իրանց պատիժը։

Տոբին տեսավ այդ ամբողջ տեսարանը։ Նա սայլից իջավ և առաջ անցավ։ Այդտեղ նա կարողացավ տնտղել կալանավորներին։ Զինվորների գծից դենը կանգնած եյին աղքատիկ հագնված, կոշտերով ծածկված կոպիտ ձեռներով հինգ բանվոր։ Բայց նրանց դեմքերին ինչ-վոր անըմբռնելի անբարտավանություն կար, իսկ ձեռները հպարտորեն դրված եյին կողքներից կախ թրերի կոթերին։

— Ի՞նչ մարդիկ են սրանք, — հարցրեց Տոբին կողքին կանգնած քաղաքացուց։

— Ի՛նչ մարդիկ են, սրանք «քամվածներ» են, — պատասխանեց քաղաքացին։

— «Քամվածնե՞ր»։ Դա ի՞նչ ե նշանակում։

Քաղաքացին ծիծաղեց։

— Մեզ մոտ այդպես են կոչվում ապակուց սրվակներ շինող գործարանների ազնվական բանվորները։

— Վո՞նց թե։ Ազնվական — բանվորնե՞ր, — տարակուսանքով հարցրեց Տոբիի հետ յեկած գյուղացիներից մեկը։

— Ո՛, դրանք վաղուց աղքատացած արիստոկրատներ են, — պատասխանեց քաղաքացին։ Դրանք ետտեղ մի քանի տասնյակ հոգի յեն։ Պրուսսացիների մոտենալուց նրանցից շատերը փախան։ Եդ բանիին հետևեցին և ժամանակին սրանց բռնոտեցին։

— Եղպիսի չքավորնե՜ր... Ա՛յ քեզ կենսունակ ցեղ, — արտասանեց Տոբին։

— Կենսունակը շա՜տ կենսունակ են։ Նրանք ուրիշների հետ չեյին խառնվում։ Իրանց յերեխաներին կրթում եյին ազնվականի ձևով, իսկ մեզանից խորշում եյին։ Իսկ դու վորտեղի՞ց ես, թմբկահար, — հարցրեց քաղաքացին Տոբիին։

— Ես գունդս կորցրել եմ։ Հիմա չգիտեմ ուր գնամ, — պատասխանեց Տոբին։



— Դու Դյումուրյեյի բանակի՞ց ես։

— Այո։

— Ուրեմն դու նրանցի՞ց ես, վոր Պրուսսացիներից փախե՜լ են, — բացականչեց հարցնողը։

— Ես չեմ փախել, — վրդովվեց Տոբին։ — Բոլորը փախան հուսարների հետևից։ Ես դաշտում ընկա...

— Եդ կերևա, — առարկեց նա, — արի հետևից։

Նա բռնեց Տոբիի ականջից և քաշ տվավ նրան Ազգային գվարդիայի սպայի մոտ։ Տոբին ամոթից և վրդովմունքից իրան կորցրած՝ աշխատեց ազատվել, բայց քաղաքացու մատներն այնպես ամուր եյին սեղմում նրա ականջը, վոր նա ստիպված չեղավ կամա-ակամա ամբողջ ամբոխի աչքի առաջ խայտառակությամբ մոտենալ սպային։

— Թողե՛ք ինձ, — գոռում եր Տոբին։ — Ես վախկոտ չեմ... Ես լավ հայրենասեր եմ։ Ես չեմ փախել։

— Վո՞ր գնդից ես, — խստությամբ ընդհատեց նրան սպան։

— 13-րդ կամավորական գնդից։

— Լա՜վ գունդ ե... Բա չամաչեցի՞ր իրարանցում քցելուց։

— Ես եղպեսի բան չեմ արել։

— Իսկ ո՞վ եր գոռում՝ «մեզ մատնել են»... Դյումուրյեն հրամայել ե իրարանցում գցող բոլոր փախստականներին բանտ նետել։

— Ես միայն ասացի, վոր գունդս կորցրել եմ։

— Դա ճի՞շտ ե, — դիմեց սպան այն քաղաքացուն, վոր այնպես խիստ եր վարվել Տոբիի հետ։

— Մատնիչների վերաբերմամբ նա չի գոռացել, — խուսափելով պատասխանեց նա։

Այդտեղ մեջ ընկավ և՛ այն գյուղացին, վոր Տոբիին տեղավորել եր իր սայլի վրա։

— Մենք ես տղին ճանապարհից վերցրինք, — ասաց նա սպային։ — Նա թուլանալուց ընկել եր և չեր կարողանում գնալ։

— Լավ, թմբկահար, հանգստացի՛ր։ Բանակը Դոմմարտենում ե։ Դու այնտեղ կուղևորվես նոր կազմվող զորամասի հետ։

Տոբին վզգի առավ։ Նա իրան արդեն յերևակայել եր բանտը նետված, խայտառակված։

«Ի՞նչ կասեր Բատխտը, յեթե իմանար, վոր ինձ բանտարկել են։ Իսկ Նանի՞ն։ Ո՞ւր ե նա։ Մի նրանց շուտով տեսնեյի»... — մտածեց Տոբին։

Ջերմագին շնորհակալություն հայտնելով իրան վերցրած գյուղացիներից՝ Տոբին տեղավորվեց զորամասի աջ թևում։

Տոբին ամբողջ ճանապարհին մի բառ չարտասանեց։ Նա քայլում եր մռայլ, իր մտքերի մեջ խորասուզված, դեպի ամեն ինչ անտարբեր։

Զորամասն աշխույժ առաջ էր գնում դեպի Դոմմարտեն: Առջևից ուժեղ պահակախումբը տանում էր «քամված» արիստոկրատներին: Վորքան մոտենում էին բանակատեղիին, ճանապարհին այնքան հաճախ էին պատահում իրանց զորամասերը վորոնող միայնակ զինվորներ: Քայլող զորամաս տեսնելով՝ նրանք նետվում էին դեպի նա հարցուփորձ անելու: Վոչինչ չիմանալով բացի այն, վոր Դյումուրյեյի զորաբանակը Դոմմարտենում է, նրանք միանում էին զորամասին: Շուտով նրանում կային 300 հոգի տարբեր գնդերից և տարբեր տեսակի զենք գործածողներից բաղկացած:

Առջևում յերևացին բանակի կրակները: Հեռվից լսելի յէր հազարավոր ձայների խուլ աղմուկը: Չնայած հոգնածությանը՝ ամենքը քայլել սկսեցին ավելի աշխույժ, ձգտելով ավելի շուտ հասնել իրանց զորաբաժիններին:

Բանակում արտասովոր մի բան էր կատարվում: Անկարգ կերպով իրար էին խառնվել մարդիկ, ձիերը, սայլակները, թնդանոթները, գյուղացիական սայլերը, արշավանքային խոհանոցները, փամփուշտների արկղները և խահավաճառների սայլակները: Այսուայնտեղ վրաններ կային, բայց մեծամասնությունն ուղղակի գետնին էր քնած: Այս քաոսի մեջ վորպես հազվագյուտ կղզիներ վորոշ չափով կարգին տեղավորվել էին իրարանցման ժամանակ հաստատուն մնացած առանձին զորամասերը: Չնայած Դյումուրյեյի հրամանին գիշերելու մնալ ամենքին այնտեղ, ուր վոր գտնվելիս է յեղել մութը կոխելուց, բայց և այնպես առանձին խմբեր դեռ թափառում էին բանակում՝ վորոնելով իրանց զորամասերը:

Ազգային գվարդիականների այն ջոկատը, վորի հետ յեկել էր Տորին, կալանավորներին հանձնելով՝ գիշերելու մնաց Սենի գրենադերների և մի թնդանոթաձիգ մասի արանքի նեղ տարածության վրա:

Առավոտյան ամբողջ բանակը շարժման մեջ ընկավ: Զինվորներն ընկան ամեն կողմ: Մաս-մաս յեղած գնդերը տեղաշարժվում էին՝ միատեղ հավաքվելով: Սուրհանդակները վազվզում էին ամեն ուղղությամբ՝ շտաբի հրամանները տանելով:

Տորին մենակ, այդ ամբոխի մեջ կորած, տեղից տեղ էր անցնում՝ նայելով համազգեստներին, դեմքերին, գլխարկներին: Բայց կամավորների ձիթենիագույն համազգեստները վոչ մի տեղ չէյին յերևում:

— Տեսնո՞ւմ ես, թե ինչ է կատարվում, — պատասխանում էյին Տորիի հարցուփորձին, — եստեղ բա՞ն կիմացվի:

Բայց ելի մի քանիսը ցույց էյին տալիս մի կողմ, վորպես թե այնտեղ ինչ-վոր կամավորներ կան: Տորին վազում էր ցույց տված ուղղությամբ, անցնում էր սայլերի, թնդանոթների և ձիերի արանքով, մտնում էր ամբոխի մեջ, հասնում այս կամ այն զորամասին,



բայց և այնպես ձիթենիագույն համազգեստները չէր ճարում: Մոնչալեյը վազում էր նրա յետևից՝ յերբեմն գլուխը բարձրացնելով և օդը հոտոտելով:

Վերջիվերջո Տորին վերադարձավ քաղաք և անցավ հրապարակը, ուր տեղավորված էր շտաբը: Դեռ հեռվից նա լսեց ամբոխի աղմուկը: Մոտ գնալով՝ նա տեսավ մի տարօրինակ տեսարան:

Զինվորների մի խումբ սուլոցով, աղաղակներով, հայ-հույով յետևից էր գնում՝ լայն անցք թողնելով: Համազգեստների յերկու շարքի արանքով անցնում էին քսան զինվոր. Նրանք գնում էին արագ, ածիլված գլուխները կախ գցած, չհամարձակվելով աչքները բարձրացնել նրանց վրա, ովքեր գոռում էին. «Դո՛ւրս: Խայտառակությո՛ւն»: Դրանք այն զինվորներն էին, վորոնք դուրս էին անում բանակից նրա համար, վոր նրանք իրարանցում էին գցել, հեքիաթներ էին պատմել իրանց բանակի փախուստի մասին, այն մասին, թե պրուսացիները մոտեցել են, իսկ գեներալ Դյումուրյեն իր շտաբով փախել է:

Տորին աչքերով ուղեկցում էր այդ դժբախտ, խայտառակված զինվորներին, — ախր չէ՞ վոր քիչ էր մնացել, վոր ինքն էլ նույն վիճակին հասնի: Այդ ժամանակ ամբոխի մեջ յերևաց մի ձիթենիագույն համազգեստ և ծանոթ, պուղմենտներով փոքրիկ գլխարկ: Ուրախությունից իրան կորցրած, Տորին սուզվեց ամբոխի մեջ և կատաղորեն հրելով արմունկներով, վոտներով, ամբողջ մարմնով, իր համար ճանապարհ բացավ:

Բայց ձիթենիագույն համազգեստն անհայտացավ՝ սուզվելով կապույտ, ճերմակ և այլ համազգեստների և հասարակ բլուզների ծովի մեջ: Տորին ամբոխի միջից դուրս յեկավ և կանգ առավ՝ չիմանալով թե հիմա էլ ո՞ւր գնա: Հանկարծ նա լսեց Մոնչալեյի ուրախ վնգստոցը, և մի ձեռք իջավ իր ուսին: Տորին գլուխը բարձրացրեց:

— Բատի՛ստ, — բացագանչեց Տորին:

— Տորի՛: Վերջապե՛ս: Ո՞րտեղ էյիր կորել:

ԳԼՈՒԽ XVI.

## ՎԱՅԼՄԻԻ ԲԼՈՒՐՆԵՐԻ ՎՐԱ

Քիչ հետո Տորին նստած էր փոքրիկ մի ագարակի տաք խոհանոցում վառ օջախի առաջ և տաքացնում էր ուռած վոտները:

Բատիստը ճոճանակի պես ման էր գալիս խոհանոցում՝ քթի տակ ինչ-վոր փնթփնթալով: Մոյի շրջակայքից չարաբաստիկ փախուստի դիմելուց հետո, նա ամբողջ ժամանակ գրգռված և չարացած էր: Խայ-

տառակ իրարանցումը, վորի հետևանքը կարող էր լինել բանակի լիակատար քայքայումը, Տորիի անհետանումը, Մոնտարժի հորաքրոջ վիշտը — այս բոլորը նրա համար իսկական հարված էր, վորից նա չէր կարողանում ուղղվել։

— Խե՛ղճ յերեխա, — հառաչում էր Մոնտարժի հորաքույրը՝ լսելով Տորիի պատմությունը։ — Անտառում մենա՜կ։ Ի՞նչ սոսկալի բան։ Դու լսում ես, Բատի՛ստ։

— Հը՛մ... հը՛մ... — ձայն էր հանում Բատիստը վորպես պատասխան։

— Բատիս՛տ, — դիմեց Տորին, — ես բոլորն ինչի՞ց յեղավ։

— Ո՞վ է հասկանում... Մի ավանակ գոռացել էր, մյուսներն էլ ձայնակցել էյին։ Մենք տասը հազար էյինք, պրուսացիները մեկուկես հազար ուլան ունեյին։ Յեվ մենք փախանք նապաստակի պես։

— Վո՛նց թե։ Պրուսացիները մեկուկես հազա՞ր էյին միայն։

— Հապա՛։ Բայց դա հետո պարզվեց, հուսարներն իրարանցում գցեցին։ Կարծել էյին, թե ամբողջ պրուսական բանակն այնտեղ է։ Իրարանցումն անցավ Դյումուրյեյի արիյերգարդին (վերջնապահ զորքին)։ Բոլորը փախել էյին։ Միայն Շտենգելի և Դյուվալի զորամասերն էյին տեղներն ամուր կանգնած մնացել, և յեթե նրանք չլինեյին, ամեն բան վերջացած կլիներ։ Բայց յե՞ս ինչպես կորցրի քե՛զ։

— Յես տեսա, վոր դու կանգնացնում էյիր գումարտակի մոտով ձին քշող հուսարին։ Իսկ հետո... թե ինչ էր յեղել հետո, յես վոչինչ չեմ հիշում։

— Այո՛, այո՛ — մտազբաղ արտասանեց Բատիստը և նորից սկսեց շրջել սենյակում։

* * *

Զինվորները նստած էյին մռայլ և լուռ։ Խարույկում ճրճռում էր թաց ցախը։ Յերեկոն պարզկա և ցուրտ էր։

Խարույկի մոտով շտապ անցավ կապրալը։

— Ե՛յ, Ժերա՛ր, — կանգնեցրեց նրան խարույկի մոտ նստած մի զինվոր։ — Ի՞նչ են ասում։ Բաժինները տալի՞ս են։

— Չեմ կարողանում աջողացնել։ Ամեն տեղ էնպես խառնաշփոթություն է, վոր տեսնված բան չի, — պատասխանեց կապրալը և շուտափույթ առաջ վազեց։

— Բանը բուրդ է, տղե՛րք, — հայտարարեց Բրիսսարը։ — Փորներդ կո՛ւչ ածեցեք. վա՜ղն ենք ճաշելու։

Մեկը հայհոյեց։ Բոլորը լռեցին։

Խարույկին մոտեցավ Մոնտարժի հորաքույրը. մի յերիտասարդ զինվոր նրա հետևից բերում էր մի մեծ լիքը պարկ։

— Դե՛հ, կաթսան վրա՛ դրեք, — դեռ հեռվից կանչեց պառավը զինվորներին։ — Կարտոֆիլ եմ բերում։



— Ապրե՛ս հորաքույրը, — բացականչեց Բրիսսարը։ — Զենք կտարվի, քանի նա կա։ Տղերք, մի լավ թեժ արեք կրակը։

Բոլորն էլ աշխույժով շարժվեցին։ Վոմանք ցախ էյին գցում խարույկը, վոմանք ջուր բերին, կաթսան կրակին դրին։ Կարտոֆիլը պարկից դատարկեցին ու սկսեցին մաքրել։

— Հորաքույր, գետնախնձորը վորտեղի՞ց ճարեցիք։ Մենք վողջ գյուղը վազելով ման յեկանք, բայց բան չգտանք, — հարցրեց Շամբուրսին։

— Ել մի՛ ասի... Ի՞նչ վոր բնակիչները չեն կարողացել իրանց հետը տանել, բոլորը հափշտակել են։ Մի պառավ մարդ ընկավ ճանկս. նա դես դեն էր գցում, խոսքը փոխում էր... համա իմ ձեռքից վո՞նց կըպըրծներ։ Հետո նա չէր ուզում թուղթ փող վերցնել*), յես էլ զո՜րս դու պատվիրեցիր։ Ենպես եմ կարծում, վոր յերկար ժամանակ չի մոռանա։

— Թուղթ փող չէր ուզում վերցնե՞լ։ — Վա՛յ յես եդ գոփողին։ Քանի հրաման է յեղել եդ մասին, — վրդովվեց զինվորներից մեկը։

— Ծերն ասում էր, թե թղթադրամները կեղծ են։ Եդ էլ է ճշմարիտ. հիմի ամեն տեղ կեղծ թղթադրամ են բուրդ խոթում։

— Գերմանացիներն ու էմիգրանտներն են բաց թողնում...

— Վնաս չունի, թող բա՛ց թողնեն. դրա համար պատասխան կտան մեր ամբողջ քայքայման համար, — վճռականապես ասաց պառավը։

— Հորաքո՛ւյր, ախր չէ՞ վոր նրանք գնում են Լյուդովիկոսին ազատելու, ու հիմի դուք դրանց համար եդպես եք խոսում, — ուրախ աչքով անելով՝ ասաց Բրիսսարը։

— Դու ձենդ կտրի՛ր, ի՞նչ ես ինձ մասխարա անում, — չարացավ պառավը։ — Թագավորն աշտարակում նստած է, թող էնտեղ էլ հանգիստ նստի։

— Բրիսսա՛ր, դու կատակ մի՛ անի, — մեջ մտավ Տորին, — տատիկը շուտով էնպիսի հանրապետական կդառնա վո՛ր... հա՛... քեզնից էլ թունդ։ Դեռ հլա շուտով փռուգիական թասակ էլ կդնենք նրա գլխին։

— Քե՞զ ինչ թե կդնեմ... Հենց դնելու էլ եմ... դու լավ կանես, վոր Դյումուրյեյի աֆիշան կարդաս դեռ։ Քաղաքում պատահեցի Բատիստին, նա ինձ մի աֆիշա ավավ։

Պառավը հանեց մի ծալած թերթ և մեկնեց Տորիին։

— Տո՛ւր, տո՛ւր, նանի՛։ Լսեցե՛ք, տղե՛րք.

«Ընկերնե՛ր, — գրում էր բանակի հրամանատարը Շալոնում կազմվող գումարտակներին, վորոնք բանակի պահեստի զորամասերն էյին դառնալու, վորոնց էր հասել իրարանցումի լուրը և դեպի Դյումուրյեն

*) 1789 թվականին թղթադրամներ բաց թողեցին մինչև հեղափոխությունը կուտակված պետական պարտքերը վճարելու համար, վորոնք շուտով անարժեք դարձան, վորով աչքի ընկնող ֆինանսական դժվարություններ առաջ յեկան։

ու բանակի ամբողջ գեներալիտետն անվստահության բռնկումն եր հա-
րուցել:— Դուք վախկոտներին ընդունել եք, փոխանակ նրանց արհա-
մարհանքով նշավակելու և մահվան դատապարտելու... Իմացեք, վոր
պրուսացիների կորուստն անխուսափելի յե: Յեթե այն զորամասերը,
վորոնց յես սպասում եյի, ժամանակին գային Գրանպրե, յես այդ դեպ-
քում ես պրուսացիների առաջ կբանայի այն յերկրի անցքը, վորտեղ
նրանք ապրել չեն կարող: Հանգամանքներն իրանք են բերել պրուս-
սացիներին այստեղ:

«Յեթե այժմ ամենքը միանան իմ դրոշակների տակ և ինձ վստա-
հություն ցույց տան, յես պատասխանատու յեմ հյուսիսի այդ թա-
գավորների, այդ պայծառափայլ մեծությունների, այդ դատարկ, ձեր
կողմից վաղուց վերացված տիտղոսներով դեռ ևս իրանց զարդարող
ֆրանսիական ասպետների վոչնչացման համար:

«Նրանք կգնան Փարիզի վրա, քանի վոր այդ են ուզում: Նրանք
կգնան հաղթականորեն, բայց մենք նրանց հետևներից կընկնենք:

«Ընկերնե՛ր, յես միայն մի խոսք ունեմ ձեզ ասելու. — վստահու-
թյուն: Յեթե դա դրոշմված չէ ձեր սրտերում, ուրեմն թողեցեք մեզ,
վորովհետև այդ դեպքում մենք ձեզ չենք ընդունի»:

— Ա՛յ թե գրում է անպիտանը, — բացագանչեց ունկնդիրներից մեկը:

— Այո, թե՛ գրելում և թե՛ գործելում նա վարպետ է: Վո՛նց եր նա
կանգնեցնում փախուստը, — ասաց Շամբուրսին: — Միտնե՞րդ է, թե
վոնց մեն-մենակ նա ընկավ փախչող ամբոխի մեջ Բիոնի կամուրջի մոտ:

— Վոնց չէ, — միջամտեց Բրիսարը: — Վազում է մի կապույտ
մարդ ու կոկորդովը մեկ գոռում. «Ազատեցե՛ք ձեր գլուխը, տղե՛րք:
Դյումուրյեն փախե՛լ է: Ջարդե՛ք ուսադիրավորներին»: Մեկ էլ հան-
կարծ Դյումուրյեն հարձակվում է նրա վրա: «Կանգնի՛ր», — գոռում է:
Զինվորի բերանը հենց բաց մնաց... Այո, եդպես մարդու հետ վախենա-
լու բան չունես...

Կարդացված պրոկլամացիան միայն այստեղ չեր վոր տպավորու-
թյուն գործեց: Դյումուրյեյի յեռանդը՝ իրարանցում ղալերու ժամա-
նակ և նրա վերոհիշյալ պրոկլամացիաները վստահություն ներշնչեցին
ամբողջ բանակին դեպի իր հրամանատարը:

Այն ժամանակ, յերբ Դյումուրյեն ժողովում եր խուճապից ցրված
իր զորամասերը և գնդերը, տեղավորում եր նոր դիրքերում, Բրաուն-
շվեյգի դուքսն իր բանակն անցքերից անցկացնելով՝ արդեն իջնում եր
Շամպայնի հովիտը:

Գլխավոր ուժերը գնում եյին Շալոն՝ Դյումուրյեյի թիկունքից ան-
ցնելով: Առանձին զորամասեր էլ ավելի խորն եյին թափանցել. եմիգ-
րանտների հեծելազորը տեղական ազգաբնակչությանը դաժանորեն
պատժելով՝ հասել եր մինչև Ռեյմսի պարիսպները:



Այսպիսի կրիտիքական ժամանակ վերջապես գլուխ յեկավ բոլոր
բանակների միացումը, վորին այնպիսի անհամբերությամբ սպասում
եր Դյումուրյեն: Թե Կելլերմանը, թե Բերնոնվիլը ճանապարհին իմա-
նալով Գրանպրեյից փախչելու մասին և Դյումուրյեյին ջարդված համա-
րելով՝ կանգ եյին առել: Նրանք հասան միայն 19-ին: Ավելի ու
ավելի խորը թափանցող պրուսացիներին դիմադրություն ցույց տալու
համար Դյումուրյեն այժմ բավականաչափ խոշոր ուժեր ուներ: Նա
դիրքեր բռնեց Սեն-Մենուլդ փոքր քաղաքի առաջ Շալոնի ճանա-
պարհի յերկու կողմում:

Ֆրանսիական գնդերը կիսաշրջանաձև կանգնել եյին Վալմիի, Իվ-
րոնի և Կիզոնկուրի բարձունքների վրա՝ յերեսները դեպի Փարիզ:
Կենտրոնում, Վալմի գյուղի վերևը ջրաղացի մոտ կանգնել եր Կել-
լերմանի բանակը. աջ թևից նրան ոգնում եյին Շտենգելի զորամասը և
պահեստի համար կանգնած Բերնոնվիլի բանակը. ձախ թևից և հե-
տևից մինչև Սեն-Մենուլդ կանգնած եյին Դյումուրյեյի զորամասերը:
Ֆրանսիական բանակի հետևում բարձրանում եյին Արգոնները. Լե-
Իլետ և Շալադ անցքերն ամրացված եյին և գտնվում եյին Ֆրան-
սիացիների ձեռքում:

Սեպտեմբերի 20-ին ֆրանսիական և պրուսական բանակներն իրար
հանդիպեցին և Վալմիի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ, վորն ընդ-
միշտ մնաց պատմության մեջ:

Բրաունշվեյգի դուքսը ճակատամարտ չեր ուզում. նրա ծրագիրը
կայանում եր նրանում, վոր ֆրանսիացիներին դուրս մղի Արգոններից
և նրանց բանակն ողակելով՝ հետզհետե թուլացնի և վոչնչացնի:
Բայց ռազմական գործողությունների ամբողջ ընթացքում բանակի հետ
գտնվող պրուսական թագավորը բռնվեց ռազմական ջերմով: Իմանալով
ֆրանսիացիների տեղաշարժերի մասին՝ Ֆրիդրիխ Վիլհելմը գլուխը
կորցրեց. նա մտածում եր, վոր ֆրանսիացիները նորից դուրս կպրծ-
նեն, ինչպես Գրանպրեյում յեղավ: Նրա պահանջով պրուսական բա-
նակը փոխեց իր ուղղությունը և կանգնեց Դյումուրյեյի դիրքերի
դիմաց՝ նրա և Փարիզի արանքում: Այդ տեղաշարժը կատարվեց ծա-
ծուկ: Ֆրանսիացիներն այդ մասին իմացան սեպտեմբերի 20-ի լուսա-
բացին, յերբ ֆրանսիական պիկետները (պաշտպանողական մասերը)
ընդհարվեցին պրուսացիների առաջապահ զորամասերի հետ:

Ֆրանսիացիներն աշխուժով շարժվեցին: Փողերը, թմբուկները զարթ-
նելու ազդանշանն տվին: Զինվորները ծուլորեն եյին վեր կենում
առավոտյան խոնավությունից դողալով:

Առավոտն ամպամած եր: Ծագող արևի ճառագայթները հազիվ եյին
թափանցում ամպի խիտ վարագույրի միջով, հովտի վրա մառախուղ
եր կախված:

13-րդ գնդում առաջինը վոտքի յելած Տոբին թմբկահարում էր, վորքան վոր ուժ ուներ։

Զինվորները հավաքվում էին։ Բանակն արթնացնելով՝ Տոբին վազեց յերկրորդ վաշտում դեռ վառվող խարույկի մոտ։

— Թույլ տվեք տաքանալ, ընկերներ, — խռպոտ ձայնով ասաց նա։ — Ձեռքերս էնպես են փետացել, վոր փայտիկներն էլ չեմ կարող բռնել։

— Տաքացիր, թմբկահար, — պատասխանեց խարույկի մոտ նստածներից մեկը։ — Այ, սպասիր, էն ժամանակ լավ կտաքանաս, յերբ գերմանացիները հարձակում կգործեն մեզ վրա։ Դեհ, հոր սևերս չենք մնա, գերմանացիներին ցույց կտանք։

— Շարվիր, շարվիր, — լսվեց հրամանը։

Ամենքը վեր ցատկեցին։ Շարքերն արագ կազմվում էին։ Գնալու ժամանակ Թուրն ուղղելով՝ գնդապետը մոտեցավ գումարտակին։ Նա, վոր միշտ հանգիստ էր, այժմ ըստ յերևույթին հուզվում էր։ Տոբիի մոտով անցնելիս, նա կռացավ դեպի իր յեղբայրացուն և քնքշությամբ համբուրեց նրան։

Տոբին զգաստ կանգնեց, ու վստահ և հաստատակամորեն նայեց Բատիստի աչքերին։

Բատիստն անցավ շարքերի առաջով։

— Ընկերներ, — դիմեց նա զինվորներին։ — Այսոր վճռական ճակատամարտ է։ Միտներդ պահեցեք այս բանը։ Հաղթել կամ մեռնել։

Հնչեց հրամանը։ Սվինները ցցելով՝ շարքերը խտացան, ռազմասյուն կազմեցին։ Գունդն սպասում էր շտաբի հրամանին՝ մարտի դուրս գալու համար։

Խճուղու կողմից յեռանդուն հրաձգություն լսվեց։ Մառախլապատ ոդում խուլ լսվում էին համազարկների հնչյունները։ Դեպի շտաբը սլացավ մի սուրհանդակ հետևյալ զեկուցումով — թշնամու հեծելազորը, վոր փորձում էր խճուղին գրավել, յետ մղվեց և հեռացավ։

Շուտով հնչեցին թնդանոթները։ Գերմանացիները ռմբակոծում էին ֆրանսիական դիրքերը. ֆրանսիական մարտկոցները պատասխանում էին։

Դյումուրյեյի բանակը Սեն-Մենուլդի տակ դեռ զինված կանգնած էր։ Բավականաչափ զորամասեր դեռ առաջուց էին ուղարկվել Կելլերմանին օգնության. մնացած գնդերը կանգնած էին անշարժ՝ կարգադրությունների սպասելով։ Զինվորներն անհամբերությունից մի վոտից մյուս վոտի վրա էին կանգնում։ Թնդանոթային հեռավոր մենամարտը ջղայնացնում էր նրանց։ Թնդանոթաձգությունը դեռ ոդն էր ճեղքում, յերբ դեպի 12-րդ գունդը սլացավ մի սուրհանդակ հրամանը ձեռին։ Բոլորը լարեցին ուշադրությունները. գունդը ճանապարհ էր ընկնում։





— Մա՛րշ, — լսվեց թմբուկների դռոցը։ Շարքերը տեղերից շարժվեցին և սկսեցին համաչափ տրոփել։ 8 գումարտակ և 9 էսկադրոն գեներալ Շազոյի հրամանատարությամբ գնում էին գրավելու գեներալ Վալանսի լքած Լա-Լյուն բարձունքը։

Մանր անձրև էր մաղում։ Խոնավությունը ծծած կավը կպչում էր կոշիկների տակերին, վոտները սայթաքում էին։ Անընդհատ թնդանոթաձգությունն ավելի ու ավելի մոտիկից էր լսվում։

Խճուղին անցնելուց հետո առաջավոր զորամասերը վազեցին։ Սերժանտները խրախուսում էին իրանց մարդկանց.

— Շուտ-շուտ, տղերք։ Հառա՛ջ։

Լա-Լյունին մյուս կողմից մոտենում էին պրուսացիները։

Շազոն ուշացավ։ Շուտով մառախուղի միջից դուրս լողաց մի գորշ թեք բլուր։ Ֆրանսիացիները պատրաստ էին գրոհելու, բայց Շազոն կանգնեցրեց։ Գլուխների վրայով վզզաց կարտեչը, և Շազոն իր զորամասերը կրակի գծից դուրս հանեց։ Բարձրության համար պայքարելը չափազանց մեծ զոհեր էր պահանջում։ Լա-Լյունը մնաց պրուսացիների ձեռքում։

13-րդ գունդն իր տեղում յերկար չկանգնեց։ Ուրիշ մի քանի զորամասերի հետ նա հրաման ստացավ գնալ դեպի Վալմի Կելլերմանին օգնության։ Այնտեղ էին սպասվում գլխավոր դեպքերը։

Զինվորներն աշխուժով առաջ շարժվեցին։

Շուտով յերևաց մի Ջրաղաց։ Նրա տարածված թևերի շուրջն էյին հավաքվել ամենադիմացկուն գնդերը։

Անցնելով սայլախումբը, շարժվելով անվերջ շարքերի մոտով, 13-րդ գունդը դուրս յեկավ բլրի գագաթը և կանգնեց յերկրորդ գծում, համարյա զառիվայրի մոտ։

Ժամը 12-ն եր։ Մառախուղը ցրվում եր. ամպերը հեռանում էյին՝ բաց անելով անհունապես հեռու յերկնքի կապուտակը։ Շուտով արեգակի ճառագայթները վողողեցին ամբողջ հարթությունն ու բլուրները։

Ֆրանսիացիների աչքերի առջեն եր պրուսական ամբողջ բանակը, վոր զորաշարժ եր կատարում հարթության վրա։ Բրաունշվեյգի դուքսն իր գնդերը տեղավորում եր ֆրանսիական դիրքերի դիմաց։ Մոխրագույն համազգեստների անթերի ուղիղ շարքերը, ձուլած՝ յերկրաչափական մարմիններ դարձրած մասսայի նման, տեղափոխվում էյին կարծես շախմատի դաշտի վրա։ Սվինները, թրերը, փողույրները շողշողում էյին արևի տակ. դրոշակների, փետուրների և համազգեստների ծալվածքների բծերը միայն խանգարում էյին շարքերի մոխրագույն շերտերը։ Հետևում բռնկվում էյին թնդանոթների ծխի քուլաները և անհետանում բարձր կապույտում։

Ապա շարժումն ընդհատվեց։ Բանակը կանգնեց գրոհի համար կարգի ընկնելով։

Ցեվ հանկարծ՝ կարծես աներևույթ գավազանի նշանով բոլոր զորամասերը շարժվեցին տեղներից։ Հաստատուն կերպով, հեռավորությունները մի սանտիմետր անգամ չփոխվելով, գնդերը շարժվեցին դեպի բլուրների ստորոտը։ Պրուսացիները գնում էյին՝ կարծես զորահանդեսում լինեյին։ Այդ մոխրագույն զանգվածների առաձգական պողպատի առաջը կարծես վոչ մի խոչընդոտ չեր կարող առնել, ամեն ինչ պիտի կործանվեր նրա ճնշման տակ։

Ֆրանսիացիները ցնցվեցին։ Շարքերով հաղիվ նկատելի շփոթություն անցավ։

Տորին լսեց, վոր իր կողքին մեկն ասաց.

— Եդ վո՞նց են գալիս... Տղերք, սա ինչ բան է ախր...

Կելլերմանը կանգնած եր հենց Ջրաղացի մոտ։ Նա շփոթությունը զգաց։ Այն ժամանակ թրի ծայրին վեր բարձրացնելով իր յեռագույն փետուրներով գլխարկը՝ ամբողջ ձայնով գոչեց.

— Կեցցե՛ ազգը։

Առաջին շարքերը, ապա նրա աջ և ձախ կողմում կանգնած գնդերը ձայնակցեցին նրան։ Իվրոնի բարձունքների վրա նույնը կրկնեցին Շտենգելի գնդերը, աջ թևից Շազոյի և Վալանսի դիվիզիաները։ Փողերը հնչեցին, թնդացին թմբուկները, և ամբողջ բանակը յերգեց։



Բանը լավ կըգընա, կըգընա, կըգընա
Քո կամքի հակառակ, պրուսական թագավոր։
Բանն աջող կըգընա, կըգընա, կըգընա,
Անձրևը կըթըրջի, բայց պիտի դադարի.
Գործն ամուր է, հաստատ, փառավոր,
Եվ վոչ վոք չի կարող խանգարի։

Պրուսացիները հազիվ էյին յերկու հարյուր քայլ արել։ Ինչպես վոր միասին շարժվել էյին, այնպես էլ կանգ առան բոլորը մի մարդու պես։ Ենտուզիազմի աղաղակը կտրեց նրանց կամքը։ Հրամանատարները սառած կանգնեցին՝ վարանքով ականջ դնելով այդպիսի աշխույժ և կենսուրախ հնչյուններին։



Ազատ ժողովրդի յերգը նրանք առաջին անգամ էյին լսում։ Լոնգվիի, Վերդո՛նի, Սոենեյի, Բրուա-ո-Բուայի, Գրանպրեյի փախստականները կանգնել էյին ավինները ցցած և յերգով էյին դիմավորում թշնամուն։

Ֆրանսիացիները յերգում էյին։

Պրուսացիները սառել էյին տեղները բլուրների ստորոտից 1200 մետր հեռավորության վրա։

Իվրոնի կողմից դուրս նետվեց մի ճերմակ ամպ. արտիլլերիան կրակ եր բացել։ Թնդանոթների գոռոցով պրուսացիները խլացնում էյին իրանց համար անտանելի յերգի հնչյուններ։

Նորից սկսվեց թնդանոթային մենամարտը։ Միանգամից ձայնեցին պրուսական 58 և ֆրանսիական 40 թնդանոթները։ Ռումբերը պայթում էյին՝ ցեխի շատրվաններ ցրիվ տալով։ Գնդերը հաստատուն կանգնած էյին փոթորկոտ կրակի տակ։ Շարքերը խտանում էյին՝ հետևում էյին վիրավորներին։ Պայթյունների թնդյունին հետևում էյին վիրավորգոցելով վերքերը։ Պայթյունների թնդյունին հետևեց պայթեցին այնտեղ, ների հառաչները։ Յերկու ռումբ իրար հետևից պայթեցին այնտեղ, ուր կանգնած էյին կամավորների յերկրորդ և յերրորդ վաշտերը։

— Մեկն սպանված է, յերեքը վիրավոր,— զեկուցեցին հրամանատարին։

Ցետ նայելով՝ Տորին տեսավ, վոր հետին շարքերից դուրս էյին տանում վիրավորներին։ Նրանցից մեկը սուր ձայնով և սարսափելի գոռում եր։ Տորին ճանաչեց այն փարեզեցի պատանուն, վոր իր հետ եր յեկել բանակը։

Կելլերմանը մնում եր նույն տեղը — իր գնդերի առաջ, ձիու վրա նստած — գերմանական թնդանոթաձիգների համար լավ կենդանի նշանակետ եր։ Նրա մոտ պայթած ռումբն սպանեց նրա հեծած ձին։ Նրա

համար ուրիշ ձի բերին. Նա թռավ թամբին և անվրդով անցավ շարքերի առաջով: Զինվորներն այդ տեսան. նրանք գնահատեցին իրանց հրամանատարի խիզախությունը:

— Տես ինչ է անում Կելլերմանը: Նա իրան փորձանքի յե յենթարկում և կարող է կործանել տալ ամբողջ բանակը: Զինվորները պետք է ստիպեն նրան յետ գնալ — ասում եյին գնդերում:

Այդ մասին եյին խոսում նաև 13-րդ գնդում: Շուտով շարքերից դուրս յեկան մի քանի հոգի: Գնդի հրամանատարի թույլտվությամբ նրանք պատգամավոր գնացին Կելլերմանի մոտ: Նրանց հետ գնաց և Բատիստը՝

— Գեներա՛լ, — դիմեց նա Կելլերմանին մոտենալով: — Զինվորները համառորեն խնդրում են ձեզնից թողնել առաջին շարքերը: Հրամանատարի կյանքը չափից դուրս թանգ է:

Կելլերմանը հրաժարվեց:

— Շնորհակալություն, ընկերնե՛ր, ձեր գործի համար, — պատասխանեց նա, — բայց այսօր բոլոր հրամանատարները պետք է խիզախության օրինակ ցույց տան: Յես չեմ կարող հեռանալ:

Յեվ ձին դարձնելով՝ նա քշեց դեպի իրան յեկող Դյումուրյեյին հանդիպելու: Գեներալները կանգ առան ջրաղացի մոտ և յերկար խորհրդակցում եյին:

Դյումուրյեն այժմ տեսնում եր, թե Կելլերմանն ինչ սխալ եր գործել, վոր ճակատամարտի սկզբից չեր ամրացրել Լա-Լյունի դիրքերը՝ Պրուսացիների ներկայությունն այնտեղ Կելլերմանին հնարավորություն չեր տալիս ազատ գործելու. Նրա զորքերը չափազանց նեղված եյին փոքրիկ տարածության վրա, իսկ սայլերը, ռազմամթերքի արկղները գցում եյին հետևից ճանապարհը՝ անմիջապես կպած լինելով մարտական զորամասերին:

Բայց չափազանց ուշ եր սխալն ուղղելու համար:

Կելլերմանի դիրքի թուլությունը շուտով քիչ մնաց, վոր ամբողջ բանակը կործանի: Գերմանական մի ռումբ պայթեցրեց ռազմական զորամասերի անմիջապես հետևը կանգնած ռազմամթերքի արկղները՝ Պայթյունը սոսկալի յեր. պայթած արկղները հնձեցին Սենի և Լուարի գումարտակների ամբողջ շարքեր: Ծխի սև ամպը բռնել եր բլուրը՝ Ամեն ինչ լռեց. նույնիսկ գերմանական արտիլլերիան դադարեցրեց թնդանոթաձգությունը: Յեվ լռության մեջ տարածվեց հուսահատության և մահվան հեծեծանքը: Սալմ-Սալմի և Նասսաուի հին գնդերը ցնցվեցին և իրար անցան: Միայն Կելլերմանի միջամտությունը խուճապի առաջն առավ:

Ապա նորից գոռացին մարտկոցները:

Պրուսական գնդերը շարունակում եյին կանգնած մնալ լիակատար անշարժության մեջ: Յերեկվա ժամը չորսին դեպի Լա-Լյուն յեկան



Ֆրիդրիխ Վիլհելմը և Բրաունշվեյգի դուքսը շտաբների հետ միասին: Զինվորներն ուղեկցում եյին նրանց հայացքով՝ կարծես հարցնելով, թե դեռ յերկա՞ր են կանգնելու կրակի տակ:

Մի ժամից հետո Բրաունշվեյգի դուքսը տեղից հեռացրեց իր զորքերին: Նա վճռականապես հրաժարվեց թշնամու վրա գրոհելու բոլոր առաջարկություններից: Բանակը նա տեղափոխում եր՝ փորձելով ֆրանսիացիների անառիկ դիրքերի շուրջն անցնել:

Գորշ զանգվածները հեռացան իրանց տեղից: Զինվորները և սպաները — ամբողջ բանակն իրան հաղթահարված եր զգում հեղափոխական զորքերի խիզախությունից:

Պրուսացիները գիշերն անցկացրին բաց յերկնքի տակ: Նրանք ժամանակ չունեցան պատսպարվելու իրիկնադեմին բարձրացած փոթորկից, վորովհետև վրանների բեռները մնացել եյին հետևում:

Բրաունշվեյգի դուքսը և Ֆրիդրիխ-Վիլհելմը տեղավորվեցին Լա-Լյունում անվնաս մնացած միակ տնակում: Օջախի մոտ թույլ, ուժասպառ, ականջներին քաշած գիշերային արախչինով նստել եր ծեր դուքսը: Նա համարյա չեր լսում, թե ինչ եր ասում իրա սեղանին փռած քարտեզի մեջ քիթը խոթած պրուսական թագավորը:

Շտաբը, գեներալիտետը, բանակն ուղեկցող պալատականները տեղավորվեցին վոմանք սրահում, վոմանք բակում: Յերկար չարչարվելուց հետո ծառաներին աջողվեց կրակ անել: Փառահեղ գեներալները պատմուճաններում փաթաթված՝ մոտեցան կրակին: Նրանցից մեկը — մի քաջատեսք կավալերիստ, կարմրատակած դեմքով և խեցգետնային ուռուցիկ աչքերով, գոռում եր.

— Վոչինչ չեմ հասկանում... Վոչինչ... Սատանան գիտի, թե ինչու ծերուկ Ֆրիցը մեզ քարշ տվեց ետեղ, յեթե չի ուզում կռվել: Նրա համար, վոր ամբողջ որը հիանանք այդ հրոսակներով, լսենք նրանց բարբարոսական յերգեցողությունը, հիմի յել խարույկի վրա տապակենք մի կողքներս, մինչ մյուսը սառչում է: Ձե, յեղբա՛յր, մեծապես շնորհակալ եմ:

Մյուս պայծառափայլ անձնավորությունները ձայնակցեցին. ամենքն իրար յետևից սկսեցին գանգատվել և տարակուսանքով ուսները թոթվել: Քաղաքացիական զգեստով մի բարձրահասակ մարդ լուռ և կենտրոնացած տաքացնում եր սառած ձեռները խարույկի վրա:

— Իսկ դուք ինչ եք կարծում այսորվա մասին, պարոն Գյոթե,— դիմեց նրան մի գեներալ:

Գյոթեն պատասխանեց.

— Յես կարծում եմ, պարոննե՛ր, վոր այսոր և այստեղ նոր դարաշրջան սկսվեց մարդկային պատմության մեջ: Յերբևիցե մենք կկարողանանք ասել. «յես էլ այնտեղ եյի»:

Գեներալները տարակուսված նայեցին խոսողին։ Բաշարի կավալերիստն իր խեցգետնային աչքերը չռեց. նա էլ ավելի կարմրատակեց, ուզեց մի բան ասել, բայց բառերի փոխարեն նրա կոկորդից մի անախորժ ղլղլոց դուրս յեկավ։

Հենց այդ ժամանակ Դյումուրյեն իր գնդերը փոխադրում եր նոր դիրքեր։ Ինչպես Գրանպրեյում, այստեղ էլ տեղափոխությունը կատարվում եր լիակատար խաղաղության մեջ և թշնամուն էլ ավելի մոտիկ։

Բրաունշվեյգի դուքսը միայն առավոտյան իմացավ ֆրանսիացիների տեղափոխության մասին։ Նա հասկացավ Դյումուրյեի զորաշարժը։ Պրուսսացիներն ուզում եյին շրջապատել Դյումուրյեյին և կըտրել նրան Փարիզից, հիմա Դյումուրյեն եր պրուսսացիներին կտրել իրանց բազիսներից՝ սպառնալով ընդհատելու հաղորդակցության գծերը։

* * *

Սեպտեմբերի 20-ին Վալմիի դաշտերում ընդհարվեցին յերկու աշխարհ։ Թագավորները, դուքսերը, իշխանազունները խոնարհվեցին ազատ ժողովրդի խիզախության առաջ. նրանք կանգ առան՝ չհանդգնելով գրոհելու հեղափոխական բանակի վրա։

Նույն օրը, սեպտեմբերի 20-ին, Փարիզում բացվեց Կոնվենտը*), նա Ֆրանսիան հայտարարեց հանրապետություն, մի և անբաժանելի, իսկ 1792 թվականը հանրապետական ժամանակի առաջին տարին։

ԳԼՈՒԽ XVII.

## ԱԿԱՄԱ ՍԱՆԿՅՈՒԼՈՏ

Աշնան սառն արեգակը թաղնվում եր լերկ բլուրների հետեվում։ Սևացած դաշտերում շողշողուն չափռասաների պես փայլում եյին լճակները՝ արևի վերջին ճառագայթներից լուսավորված։ Ժամանակ առ ժամանակ լռությունն ընդհատում եր թռչունների թևերի թափահարումը՝ դաշտից բարձրանում եյին թռչունների յերամներ և սուր ճռնչյունով թռչում դեպի հեռուները։

Մի շավղով ընթանում եր մի քառորդ վաշտ հեծելազոր։ Հոգնած ձիերը ոտները թեթևորեն դնում եյին ցեխում՝ սմբակները խրելով

*) Օգոստոսի 10-ի հեղաշրջումից հետո հրավիրված Ազգային ժողովը։ Այդ անգամ ընտրություններին մասնակցում եյին բոլոր քաղաքացիներն՝ անկախ իրանց գույքային դրությունից։



հաստ կավային խմորի մեջ։ Զինվորները թույլ-թույլ օրորվում եյին թամբերի վրա։

Գյուղի ծայրում գլորված ցանկապատի վրա նստել եյին Տորեն և Բրիսսարը։

— Ի՞նչ խաղաղություն ե,— ասաց Տորեն,— կասես իսկի պատերազմ էլ չկա...

— 20-ից հետո մինչև հիմի էլ ականջներումս դեռ ձեն կա։ Պահ, ինչ սարսափելի բան եր... Լավ ե վոր անցած բան ե։

— Սպասիր, գերմանացիները յեթե նորից խծկվեն...

— Մի՛ կարծիր, էլ չեն գա։ Նրանց զինվորներն ասում են, թե բոլորն էլ հիվանդ են։ Լափելու բան չունեն. փորներն էնպես ե տակնուվրա լինում, վոր չեն իմանում, թե ուր փախչեն։

— Նրանք ստրուկներ են... Սպաները կստիպեն, նրանք էլ կգնան. ավլից յերբ կուռչեն, կրակն էլ կմտնեն։

— Իրանք սպաները խժռելու բան չունեն։ Բրաունշվեյգացին կեղև ե կրծում, իսկ մոտը կանգնած գեներալների բերանի ջուրն ե գնում։ Տարօրինակ մարդիկ են դրանց զինվորները... Պահականոցում նստած մտիկ ես տալիս, տեսնում ես՝ լարված մեքենաների նման անդադար ման են գալիս։ Մեր տղերքը կանչում են. «Ընկեր։ եստեղ յեկ»։ Հրացանները դեն ենք դնում, վոր գերմանացին չվախենա։ Բայց նա խեթ-խեթ մտիկ ե անում ու ետ յետ ու առաջ ման գալիս։ Հենց վոր մի կտոր հաց կամ ծխախոտի քսակ ես ցույց տալիս, գերմանացին իսկույն մոտ ե վազում։ Յերեկ գիշեր մի ամբողջ բանդա վազեց յեկավ։ Կուզեկուզ են գալիս, վոր սպաները չտեսնեն։ Առաջ դեռ չհավատալով կուչ եյին գալիս, մտիկ անում իմանալու համար, թե ինչ մարդիկ ենք, հացն եյին քննում՝ մինչև բերանները տանելը. ախր մեզ համար նրանց ենպիսի բաներ են ասել, թե մենք արյուն ծծողներ ենք, մարդասպաններ ենք, թալանչիներ ենք... հետո հաց կերան, ուժները տեղը բերին, ողի յել կոնծեցին ու վոնց վոր ընտանի դարձան։ Մի գլուխ ուսներիս են խփում. «Մուսյու,— բլբլում են,— իմ-քո... բարեկամներ լինենք, հա...»

Գյուղից յերգի ձայն եր գալիս. կամ կտրվում եր, կամ նորից հընչում՝ հեռուն տարածելով խմբերգը։

Տորեն վեր ցատկեց։

— Բրիսսար, գնանք, փարիզցիներն ելի կարմանյոլ են սարքել։ Հանգիստ նստել չեն կարող, ելի՛։

Նրանք արագ քայլերով դիմեցին դեպի գյուղի մյուս ծայրը։ Այնտեղ զինվորները, գյուղացի տղերքն ու աղջիկները յեռանդով յերգում եյին հենց նոր — թագավորի անկումից հետո Փարիզի հորինած կրակոտ ու յեռուն մի յերգ։

Լայն հրապարակում, քաղաքապետության շենքի դիմաց բարձրա-նում եր ազատության ծառը*) — ազգային դրոշակներով զարդարված մի մեծ յեղևնի. ծայրին դրված եր փռուգիական փեղույր։ Ազատու-թյան ծառի շուրջը և ամբողջ հրապարակում զինվորները՝ խառնված գյուղի բնակիչների հետ՝ արագ պարում եյին։ Նրանք կամ կանգ եյին առնում իրար դիմաց և յերգի չափով թունդ շարժումներով վոտները գետնին խփում, կամ պտտվում եյին թե՛ մենակ, թե՛ միասին իրար գրկում, կարծես կռիվ եյին բռնում, ապա արագ հեռանում իրարից և նորից գրկվում ընդհանուր պարի մեջ։

Մոտիկ ճամբարից յերաժշտախումբ յեկավ։ Մետաղի ղողանջյունի և գդրդոցի հետ միասին ամբոխը յերգում եր.

Պարոն Վետոն յերդվեց խորին՝
Հավատարիմ լինել յերկրին,
Կատարե՞ց նա խոստումը։ — Վո՛չ,
Նա մեզ համար հյուր է անկոչ։

Յեկեք պարենք կարմանիոլ,
Կեցցե՛ թնդանոթի թընդյուն,
Յեկեք պարենք կարմանիոլ,
Կեցցե՛ թնդանոթի հընդյուն։

Յերդվել է Անտուանետը՝
Մեզ բոլորիս ածել գետը,
Բայց ինչ տխուր պատկեր է, ա՛խ,
Ծեղճի քիթն է միայն ջախջախ։

Չափը դառնում եր ավելի ու ավելի արագ։ Պարողները խառնվել եյին գլուխ պտտեցնող հոսանքի մեջ։

Տոբին ու Բրիսսարն իրար ձեռքից բռնած՝ պարողների մեջ այն-պիսի արագությամբ եյին թռչում, վոր վերջապես գլուխները պտտվե-ցին և յերկուսն էլ գետին ընկան։ Բոլոր պարողները նրանց շրջա-պատեցին։

Ընկածները վոտքի կանգնեցին և սկսեցին նորից պտտվել պարի վազքում։

Զինվորական կոշիկները և գյուղական սաբոնները թափով գետին եյին զարկում չափ խփելով։ Փռուգիական փեղույրները խառնվելով զին-վորական սաղավարտների, գդակների և կեպերի հետ, հրեղեն լեզու-ներով նետվում եյին ամբոխի վերը։

---

*) Վորևէ բռնության լուծ թոթափելու դեպքերը հավերժացնելու համար ծառեր տնկելու սովորությունը գոյություն ուներ դեռ հին Հունաստանում։ Նոր ժամանակ-ներս դա հարություն առավ Ամերիկայում անկախության համար մղված պատերազ-մից հետո, այնտեղից էլ բերվեց Ֆրանսիա։



Կեցցե՛ ազնիվ մարսելիացին,
Որենքն, ազատությունն անձին,
Թող հասկանա թագավորը,
Վոր սանկյուլոտ են բոլորը։

Յեկեք պարենք կարմանիոլ,
Կեցցե՛ թնդանոթի թընդյուն,
Յեկեք պարենք կարմանիոլ,
Կեցցե՛ թնդանոթի հընդյուն։

Տոբին հոգնածությունից ոռոռվելով՝ շրջանից դուրս յեկավ։ Պարը շարունակվեց ավելի աճող թափով։

Տոբին կանգնեց լսելու կարմանիոլի անհանգիստ հնչյունները։

Արագ վազքով յերեք ձիավոր մտան հրապարակ։ Պարողներին տես-նելով՝ նրանք ձիերը պահեցին։ Զինվորները ճանաչեցին նրանց. Դյու-մուրյեն եր, նրա շտապի պետ Տուվանոն և ադյուտանտը։ Նրանց շըր-ջապատեցին։

— Բարև՛, ուրախության զավակներ, — վողջունեց նրանց Դյու-մուրյեն։ — Փառավոր եք պարում։ Շուտով պրուսսացիներին էլ կստի-պենք այդպես պարել։

Զինվորները ծիծաղեցին։

— Թնդանոթի վորոտի տակ նրանք այլ կերպ կպարեն, — գոչեց մեկն ամբոխի միջից։

— Նրանք ենքան էլ չեն ուզում թնդանոթի տակ պարել։ 20-ին նրանց ցանկությունը միանգամայն կորավ։ Յես կարծում եմ, վոր շուտով նրանք մեզ իրանց կրունկները ցույց կտան։ Գիտե՞ք, ընկեր-ներ, վոր նրանք սովից կոտորվում են։ Նրանց բեռները մնում են ճա-նապարհներին, իսկ գյուղերը նրանց հաց չեն տալիս։ Նրանց բանա-կում փորահարինք է տիրում։ Յեթե եդպես միքիչ էլ շարունակվի, նրանք շուտով կգնան կկորչեն։ Մենք նրանց քաղցամահ անելով կհաղ-թենք։ Հիմի գլխավորն այն է, վոր գերմանացիներին առանց կերի թողնենք։

— Ո՞վ պիտի տա նրանց կեր։ Գյուղացիներն ամեն բան թաղ-ցնում են նրանցից, — համոզված ասաց մի զինվոր։

— Եստեղ, ուղիղ է, վոչվոք չի տա... Բայց թշնամիների գրաված գյուղերից դեռ բոլորը չեն կարողացել դուրս գնալ և պաշարը դուրս տանել։ Ինձ զեկուցում են, վոր գերմանացիներն ուժով ստիպում են բնակիչներին ցույց տալ, թե վորտեղ են թաքցրել իրանց մթերքն ու կերը։ Գյուղացիները չեն համարձակվում ընդդիմանալ նրանց, վորով-հետև նրանց հաղթողներ են համարում։ Իսկ թե ով է հաղթողը, մենք եդ հետո կտեսնենք։ Գյուղացիները թե կարողանային մի շաբաթ էլ դիմանալ, յերկիրը գրավողների գնդերը յետ-յետ կհոսեյին։

— Բաս պետք է մարդիկ ուղարկել գյուղերը։ Թող նրանք գյուղացիներին ապստամբեցնեն,— գոչեց մեկը հետին շարքերից։

— Պետքը պետք է։ Միայն թե գերմանական գծով անցնելն էնքան էլ հեշտ բան չէ։ Գերմանացիները լավ են պահպանում գիծը և ամեն մի պատահողի բռնում են։

Տորին ուշադիր ականջ էր դնում Դյումուրյեյի ասածներին։ Հանկարծ նրա մտքում մի վորոշում հասունացավ։ Առաջ գնալով նա մոտեցավ Դյումուրյեյին և ասաց նրան.

— Գեներա՛լ, թո՛ւյլ տվեք յես գնամ գյուղերը։ Յես կկարողանամ ծլկվել գնալ գյուղացիների մոտ և ամեն բանի մասին պատմել նրանց՝ Յես փոքր եմ. կասեմ՝ գնում եմ հորս մոտ գյուղը, և գերմանացիներն ինձ բաց կթողնեն։

— Դու ուզում ես վորպես ագիտատոր գնա՞լ։ Հըմ... տեսնենք... Իսկ դու ո՞վ ես։ Յես քեզ մի տեղ տեսել եմ...

— Կամավորների 13-րդ գնդի թմբկահարն եմ,— հստակ կերպով ասաց Տորին։— Դուք մի գիշեր Գրանպրեյում քնեցիք մեր խարույկի մոտ, գեներա՛լ։

Դյումուրյեն ժպտաց։

— Հա՛, միտս է... հալա դու էլ ինձ արգանակ տվիր։ Սքանչելի՜ արգանակ էր... Հը՛մ... Մի ժամից յեկ ինձ մոտ շտաբը և խնդրիր, վոր քո հրամանատարն էլ ներկայանա։ Հա՛, տղե՛րք,— դարձավ Դյումուրյեն նորից ամբոխին,— գիտե՞ք, վոր գերմանացիներն ինձ հետ բանակցություններ են վարում։

— Գիտենք, գիտենք,— պատասխանեցին զինվորները։

— Իսկ դուք չե՞ք կասկածում էդ բանակցությունների վրա։ Ջե՞ վոր դուք ենքան էլ չեք հավատում ձեր գեներալներին,— քմծիծաղով դիտմամբ ասաց Դյումուրյեն և առանձին ուշադրությամբ սկսեց մտիկ տալ դեմքներին։

— Դյումուրյեյին մենք հավատո՛ւմ ենք...

— Մենք ձեզ հետ ենք...

— Դուք մերն եք, գեներա՛լ,— ձայներ լսվեցին ամեն կողմից։

Այդ ժամանակ, յերբ ամբոխը հավանության աղմուկ էր բարձրացրել՝ մի անգամ էս շեշտելով դեպի իր հրամանատարն ունեցած վստահությունը, մի զինվոր, վորը դեռ նոր էր յեկել բանակ և շորը չէր փոխել, իր գլխից հանեց փռուգիական փեղույրը և Դյումուրյեյին մեկնելով՝ ասաց.

— Դուք մերն եք, գեներա՛լ։ Դուք սանկյուլոտներին դեպի հաղթություն կտանեք։

Դյումուրյեն ժպտալով՝ վերցրեց գլխարկը։ Նա ձեռներում տրորում էր այն՝ չիմանալով ինչ անի։





— Դե՜ն գցեք գեներալի գլխարկը։ Կեցցե՜ փռուգիական փեղույրը,— գոչեցին ամբոխի միջից։

Դյումուրյեն հանեց իր գլխարկը և սկսեց անսովոր կերպով գլխին ծուռ դնել կարմիր փեղույրը։ Նա շշմել էր։

Ամբոխը գոռում էր հրճվանքից։ Մեկը գոչեց.

— Կեցցե՜ սանկյուլոտների գեներալը։

Դրան հետևեց այս յերգը.

Ազատության գլխարկը զոռ լուսաճաճանչ
Ըշտապում է ուղևորվել..., Նըրա առաջ
Ժանտ բըռնակալ ապաներըն ընկել է դող։
Նա կանչում է դեպ նոր օրեր,
Նա կըջարդե շըղթաները քեզ կապկըպող,
Ո՛վ սանկյուլոտ դու անվեհեր։

Ամբոխը յերգը կրկնեց։

Ակամա սանկյուլոտը — գեներալ Դյումուրյեն՝ իր շփոթությունն ու անբավականությունը թագցնելով՝ դուրս յեկավ ամբոխի միջից։

ԳԼՈՒԽ XVIII.

# ՏԱՏԻԿՆ ՈՒ ԹՈՌՆԻԿԸ

*Նշանակված ժամին Բատխոն ու Տոբին կանգնած էին շտաբի առաջ։ Նրանք ադյուտանտին բացատրեցին, որ գեներալն է կանչել իրանց։ Նրանց տարան ընդունարանը։*

*Մեծ սեղանի առաջ նստած էր Դյումուրյեն. նրա հետ մի թղթի վրա կռացած էին մի գեներալ և յեռագույն շարֆով բարձրահասակ մի քաղաքացի։ Սեղանի վրա մի աչքի ընկնող տեղ էր դրված և' կարմիր փեղույրը, որ զինվորները մատուցել էին Դյումուրյեյին։*

*— Դուք յեկել եք տղային Թիկունքը՝ գերմանացիների մոտ ուղարկելու գործով, — դարձավ Դյումուրյեն Բատխոյին։ — Ի՞նչ կա վոր, լավ է այդ գաղափարը...*

*Սեղանի մոտ նստած գեներալը գլուխը բարձրացրեց։ Բատխոն ու Տոբին նրան ճանաչեցին. դա Վեստերմանն էր։ Նա էլ նրանց ճանաչեց՝*

*— Հա՛, հին ծանոթներ ենք, — բացագանչեց նա։ — Ճանաչո՞ւմ եք Սեդանի զորակոչիկին։ Գեներալի համազգեստը չի՞ փոխել ինձ... Ձեզ էլ կարելի չէ շնորհավորել, — դարձավ նա Բատխոյին՝ հայացք գցելով նրա լեյտենանտ — գնդապետական ուսադիրների վրա։*

*— Աստիճանս ստացել եմ գնդի զինվորների խնդրանքով՝ առաջին գումարտակի փախած արիստոկրատ հրամանատարին փոխարինելու, — պատասխանեց Բատխոը։*

*— Բարի՛ ճանապարհ նրան ու նրա նմաններին։ Առանց նրանց բանն ավելի ուրիշ կերպ գնալ։ Ճշմարիտ չէ՞։ Հիմի Բրաունշվեյգցին էլ չես իմանում, թե ինչ լեզվով է խոսում...*

*— Շուտ ես ուրախանում, քաղաքացի՛ գեներալ, — ընդհատեց Վեստերմանին քաղաքացիական շորով մարդը — Կոնվենտի պատգամավոր Կարրան *), որ ուրիշ յերկու կոմիսարների հետ միասին ուղարկված էր բանակ։ Նա գրգռված իրանից նետեց այն թուղթը, որ նոր կարդում էր Վեստերմանի և Դյումուրյեյի հետ, և ասաց.*

*— Բրաունշվեյգցին հաշտության պայման է դնում թագավորի ազատությունը։ Դա անհնարին է։ Դուք ի՞նչ եք պատասխանել նրան, գեներալ, — հարցրեց նա Դյումուրյեյից։*

*— Պատասխանի փոխարեն յես ավելի դուքսին հանձնելու համար Կոնվենտի դեկրետը՝ հանրապետություն հռչակելու մասին, — ասաց Դյումուրյեն։ Նրա խելացի կենդանի աչքերը կանգ առան Կարրայի վրա դիտելու, թե կոմիսարն ինչպես կվերաբերվի իր պատասխանին.*

*— Գեղեցի՛կ պատասխան է։ Ազգը չի մոռանալ այդ, — բացականչեց Կարրան։*

---

**) Կարրան ազատասի 10-ի ակտիվ գործիչներից մեկն էր։*



*— Իհարկե՛ գեղեցիկ է, — խառնվեց Վեստերմանը։ — Պահանջն անիրագործելի չէ։ Բայց մի՞թե կարելի չէ համեմատել Բրաունշվեյգցու այդ նամակը նրա նախկին մանիֆեստի հետ։ Հիմա նա գրում է, թե չի ուզում խառնվել Ֆրանսիայի ներքին գործերին, իսկ այն ժամանակ՝ հիշո՞ւմ եք նրա լիրբ սպառնալիքները Փարիզը յերկրի յերեսից ջնջելու մասին։*

*— Պրուսացիներն անկասկած յերևան հանեցին իրանց թուլությունը, — հաստատեց Դյումուրյեն։ — Դա պետք է ի նկատի առնել բանակցությունների ժամանակ։ Բայց թողեք գնդապետին բաց թողնենք... Մենք դեռ ժամանակ կունենանք խոսելու պրուսական առաջարկների մասին։*

*Դյումուրյեն դիմեց Բատխոյին.*

*— Գնդապե՛տ, ձեր թմբկահարն առաջարկում է անցնել թիկունքի ձյուղերը գերմանացիների մոտ և գյուղացիներին իմաց տալ մեր աջողությունների մասին։ Դուք հնարավո՞ր եք համարում փոքրիկին ուղարկելը։*

*— Այո, գեներա՛լ։ Նա հասկացող տղա է և կարող է այդ հանձնարարությունը կատարել, — վստահ պատասխանեց Բատխոը։*

*— Այն ժամանակ նրա զգեստը փոխեցե՛ք, հրահանգներ տվե՛ք նրան, խոսեցե՛ք Տուվենոյի հետ, որպեսզի չվացուցակը (մարշրուտը) կազմի, փող տվեք նրան և ուղարկեցե՛ք։*

*— Լսում եմ, գեներա՛լ։ Վաղն առավոտ լուսաբացին նա ճանապարհ կընկնի։*

*— Ցտեսություն, փոքրիկ հայրենասեր։ Տես, զգույշ կլինես. պրուսացիները խիստ մարդիկ են։ Կվերադառնաս ողջ և առողջ։*

*Դյումուրյեն կռացավ և համբուրեց Տոբիին։*

*Փոքրիկ հայրենասերն ուրախությունից և հպարտությունից քիչ էր մնում վեր ցատկի, յերբ դուրս յեկավ շտաբից և ուղևորվեց զորաբանակը։ Բայց պատասխանատվության և իր միսիայի կարևորության գիտակցությունը նրան ստիպում էր զուսպ և լուրջ լինել։ Բայց ելի, յերբ նա մոտենում էր բանակատեղիին, իրան պահել չկարողացավ և շտապ վազեց դեպի Մոնտարժի հորաքրոջ վրանը։*

*— Նանի, — գոչեց նա՝ նետվելով պառավի մոտ։ — Յես գնում եմ գյուղացիներ գեներալի հանձնարարությամբ։ Ինձ համար շուտով գյուղացիներ ճարիր։*

*— Ո՞ւր ես գնում։ Ինչի՞ համար։ Քեզ վորտեղ են ուղարկում։ Դեռ շատ ես մանուկ... — Ո՞ւր ես գնում։ Ինչի՞ համար։ Քեզ վորտեղ են ուղարկում։ Դե տեսնեմ, — ղեկուզեն մի ընկնիր սատանայի նման։ Կարգին պատմիր տեսնեմ, — պառավը։ Բայց Տոբին խոսքերն փորձում էր նրան հանդարտեցնել պառավը։ Բայց Տոբին խոսքերն այնպես վրա տվավ, որ վոչ մի կերպ հնարավոր չեղավ նրանից բան հասկանալ։ Պառավը ձեռքը թափահարեց և այլևս չուզենալով Տոբիին*

ականջ դնել՝ սկսեց սպասել Բատիստին, վոր մնացել եր շտաբում գեներալ Տուվենոյից հրահանգներ ստանալու համար։

Վերջապես Բատիստը յեկավ։

— Գուցե դու ինձ հասկացնես, թե ինչ կա, ուր են ուղարկում յերեխին, — գրգռված հարցրեց Մոնտարժի հորաքույրը վրանը մտնող Բատիստից։

Նրանից իմանալով, թե Տոբին ուր և ինչու պիտի գնա, պառավը տեղից պոկ յեկավ և նետվեց դեպի դուռը։

— Լավ, — գոչեց նա։ — Թող գնա, բայց յես ել եմ գնում նրա հետ։ Յես ել ենտեղ պետք կգամ։

Բատիստն ու Տոբին միայն իրար նայեցին։ Մոնտարժի հորաքրոջ առաջարկն այնքան ել անմիտ չեր։ Այնպիսի խաղաղ ճամբորդներ, ինչպիսին պառավն և յերեխա թոռան հետ, չեյին կարող կասկած հարուցել նույնիսկ ամենաթերահավատ պրուսսացու սրտում։ Բատիստն իսկույն հասկացավ այդ և համաձայնեց Մոնտարժի քեռակնոջ առաջարկին։

Ամբողջ գիշեր պատրաստվում եյին։ Առավոտվան դեմ ամեն ինչ պատրաստ եր։

Լվացված սայլակը փայլում եր, նրան լծած Ժարիկոն անհամբեր գռռում եր։ Մոնշալեյը թրև եր գալիս սրա նրա նրա վոտի տակ, վնկվնկում եր և աղաչական ձևով նայում Տոբիի աչքերին՝ դեռ չիմանալով, թե իրան ել կվերցնեն, թե՞ չե։

Բատիստը վերջին անգամ ստուգեց, թե արդյոք լավ են թաքցրված սայլակում Դյումուրյեյի թուղթիկները, քննեց ճամբորդների համար ձեռք բերած թղթերը և հրաժեշտ տվավ պառավին և Տոբիին։

Մոնտարժի հորաքույրը սանձը ձեռն առավ։ Տոբին գյուղացու շորով անճանաչելի յեր. լայն շալվար, կոպիտ կուռտիկ, լայնեզր գլխարկ և սաբո։ Նա հրաժեշտ տվավ բոլոր ընկերներին, Բատիստին, ցատկեց սայլակը, սուլեց Մոնշալեյին, և սայլակը ճամբա ընկավ.

Որը պարզ եր, ճանապարհը մի քիչ չորացել եր։ Ժարիկոն հեշտությամբ եր քարշում սայլակը, վոր ճռնչում եր լավ ամրացված խճուղու վրա։

Անցնում եյին գյուղից գյուղ, վրանից վրան, բանակատեղիից-բանակատեղի։ Անընդհատ իրար եյին հետևում կանաչ, կապույտ, սպիտակ համազգեստներ։ Անդադար պատահում եյին հեծյալ և հետևակ պահակախմբեր, պահականոցներ, առանձին զորամասեր։ Ամենուրեք, ուր վոր նայում եյիր, կամ քայլող, կամ յերգելով ու պարելով հանգստացող զորքեր կային։

Հետո սկսվեցին մարդագուրկ ճանապարհները դաշտերում. Արգոնի խիտ անտառները, լեռնափեշերին կպած փոքրիկ գյուղեր, կիրճեր և դիք զառիվայրեր։





Յերկրորդ օրվա վերջը մեր ճամբորդները հասան մի մեծ գյուղ, վոր գտնվում եր անտառի հենց ծայրում։ Մյուս կողմից բլուրների վրա տարածված եյին խաղողի այգիներ, վորոնց համաչափ տունկերը գնում եյին դեպի հեռուները։ Գյուղից դենը յերևում եր զբոսավայրի ցանկապատը, իսկ քիչ հեռվում ծառերի հետևից ցցված եյին ամրոցի աշտարակները։ Անտառների հետևը, վոչ շատ հեռու, արդեն կարելի եր հանդիպել գերմանացիների։

Գիշերը մնացին գյուղապետի տանը։ Յերկար, հոգնեցուցիչ ճանապարհից հետո ջերմություն և հարմարություն վայելելով՝ Տոբին հաճույքով նստեց օճախի մոտ և կսկծող վոտները մեկնեց դեպի կրակը։ Նրա դիմաց կենտրոնացած և ծխի քուլաները ծանրորեն բաց թողնելով՝ նստեց գյուղապետը։ Մոնտարժի հորաքույրն աշխատում եր գոմում։

— Մե՞րդ ե, — հարցրեց գյուղապետը՝ գլուխը շարժելով դեպի բակի կողմը։

— Վո՛չ, տատս ե, — պատասխանեց Տոբին։

— Ո՞ւր եք գնում։

— Վուզյե...

— Գերմանացիների ճա՞նկը։ Ինչո՞ւ։

— Պետք ե... Տատս ենտեղ գործ ունի... — ակամա պատասխանեց Տոբին։

— Իսկ վո՞րտեղից ես գալիս։

— Սեն-Մենուլդից, — դիտմամբ ասաց Տոբին։

— Բանակի՞ց։ Գերմանացիների մոտ ես գնում բանակի՞ց։

Ծերուկը կտրուկ վոտքի յելավ։

— Տատիդ կանչիր գա, — հրամայեց նա Տոբիին. — դուք դենը չպիտի գնաք։

— Ուրեմն դուք հայրենասեր եք, — բացականչեց Տոբին։ Բաս յես կարող եմ ձեզ ասել, թե ինչի՞ համար ենք գնում։

Տոբին հանեց առաջուց պատրաստած և ծոցում դրած՝ Դյումուրյեյի թռուցիկը։ Ծերն անվստահությամբ մի հայացք գցեց թղթի վրա, դե-տուղեն դարձրեց և տվավ Տոբիին։

— Կարդա՛, — ասաց նա։

Երբ Մոնտորժի հորաքույրը տուն դարձավ, գյուղապետը խնամքով թաքցնում էր թռուցիկը համագյուղացիներին ցույց տալու համար, իսկ Տոբին տաքացած մանրամասն պատմում էր այն բոլորն, ինչ վոր գիտեր գերմանացիների անաջողությունների և բանակի դրության մասին։

Գյուղապետը խորին ուշադրությամբ լսում էր։ Նա հոգոց էր հանում, մշմշացնում էր և ուժգին ձեռը ձեռին էր խփում՝ ասելով.

— Գերմանացիներին կերցրե՜լ են։ Ա՛յ բա՜ն եմ ասում։ Մի եդ փարիզեցիներին տես է։

Խոհանոց մտավ տասնուհինգ տարեկանի չափ մի բարձրահասակ, առողջ, սիրուն աղջիկ։ Նրա հետ գոմի տաք հոտն ընկավ սենյակը. Նա բերում էր հենց նոր կթած կաթի դույլը։

— Լիզե՛տ, — ասաց նրան գյուղապետը, — վազիր հարևաններին մոտ։ Թող հենց հիմի գան էստեղ ու լսեն, թե ինչ բարի լուրեր է բերել մեզ էս ղոչաղ տղա՛ն։

— Իսկ ի՞նչ լուրեր են, — հարցրեց աղջիկը դույլը տեղը դնելով և մոտենալով հորը։

— Հետո կիմանաս… Շո՛ւտ վազիր։

Շուտով գյուղացիներն սկսեցին հավաքվել։ Տոբին ստիպված էր համարյա ամեն մեկին կրկնել իր պատմությունը, իսկ թերահավատ գյուղացիները շարունակ հարցեր եյին տեղում նրա վրա. նրանք դեռ չեյին համարձակվում հավատալ, վոր գերմանացիներին հաղթել են։

Շարունակ նոր մարդիկ եյին գալիս։ Ընդարձակ խոհանոցը լցված էր ժողովրդով, իսկ դուռը շարունակ բացվում էր՝ ներս թողնելով ամբողջ գյուղից հավաքվող գյուղացիներին։ Անընդհատ աղմուկ էր տիրում։

— Հերի՛ք է։ Հիմի յես կիմանամ, թե ինչ կանեմ, — հանկարծ լսվեց գյուղապետի ձայնը։

Հաստատակամորեն, կարևոր վորոշում կայացրած մարդու նման, նա դուրս յեկավ խոհանոցից և մի րոպեյից վերադարձավ՝ ձեռքում թըղթեր բռնած։

— Լսե՛ք, ա՛յ ժողովուրդ, — դարձավ նա գյուղացիներին։ — Երբ պրուսացիները գրավեցին անտառները, մի տղա ինձ տվավ էս նամակը, վոր գրել է մեր ամենավողորմած սինյորը — ամոթ չլինի ասելը



մարկիզ դը-Վիլյեն։ Են ժամանակ յես ձեզ բան չասացի — ժամանակն էնպես էր… Բայց հիմի, լսեցեք…

Ծերունին սկսեց կարդալ կմկմալով և յուրաքանչյուր բառի վրա կանգ առնելով։ Նա կոշտացած մատը տանում էր տողերի վրայով՝ մերթ աչքերին մոտեցնելով պայծառափայլ նամակը, մերթ հեռացնելով։ Վերջապես էլ չհամբերեց և թուղթը խրեց Տոբիի ձեռը։

— Ա՛ռ, կարդա, թե չէ իմ աչքերն էնքան էլ լավ չեն տեսնում, — ասաց նա։

Ամենքը կանգնել եյին շունչները բռնած։

Տոբին կարդաց.

— «Թող հայտնի լինի Մոնտորժին, իմ հավատարիմ ծառային, վոր Ֆրանսիայում շուտով կվերականգնի օրենքն ու կարգը։ Երկու շաբթում նորին արքայական և կայսերական մեծություններ ավստրիական կայսրը և պրուսական թագավորը ցրիվ կտան խռովարարներին ու թալանչիներին և գահը կվերադարձնեն մեր պաշտելի թագավորին։ Մոնտորժը և բոլոր գյուղացիները պետք է ընդունեն նոցին մեծությունների զորքերին վորպես ազատարարների, ամեն կերպ նրանց յենթարկվեն և տան, ինչ վոր նրանք կպահանջեն։ Բացի այդ, յես հրամայում եմ Մոնտորժին հավաքել իմ բոլոր գյուղացիներին և հայտարարելով իմ նամակը՝ պահանջել նրանցից, վոր անմիջապես սկսեն վերականգնել եմ Մոն-Սեն-Ժան ամրոցը, վոր թալանել են բանդիտներն ու խռովարարները։

«Ես հույս ունեմ, վոր Մոնտորժը դեռ հիշում է իրան և իր ծնողներին արած բոլոր լավությունները և հավատարիմ է մնացել իր պարտականությանը։ Երբ կարգը կվերականգնի, նրանից հետո յես կայցելեմ իմ հողերը, կպարգևատրեմ հավատարիմ ծառաներիս, իսկ խռովարարներին կհանձնեմ արդարադատության ձեռը։ Մարկիզ դը-Վիլյե»։

Խոհանոցում բարձրացավ աղմուկ, աղաղակ, վորի միջից կարելի յեր հասկանալ միայն մարկիզի հասցեին ուղղված թունդ անեծքները։

— Սո՛ւս։ Սո՛ւս, — գոռաց գյուղապետը։ — Տեսեք ինչ եմ ասում։ Ես էդ արիստոկրատ խրձիկին արդեն պատասխան եմ գրել. բայց դեռ զգուշացել եմ ուղարկելուց։ Բայց հիմի կարծես թե կարելի յե շնորհավորել մարկիզին և պատասխանել վոնց վոր պետք է։ Ա՛ռ, կարդա՛։

Մոնտորժը Տոբիին տվավ թղթի մի յուղոտված թերթ, վորի վրա խնամքով ձախուծուռ խծբծանքներ եյին դուրս բերված։

«Քաղաքացի Վիլյե, — գրում էր գյուղապետը, — գյուղացիները վոչինչ չեն արել և չեն անում առանց իմ մասնակցության։ Պրուսացիներին նրանք դուրս կանեն յեղաններով, ամրոցդ չեն շինել, ձեզ էլ խորհուրդ են տալիս գյուղում չերևալ։

Դուք և բոլոր ձեզ նմանները իմացեք, վոր յես ազգի ներկայացուցիչն եմ և ազատ քաղաքացիների վստահությունն եմ վայելում, վորի համար վորպես նշան յեռագույն շարֆ եմ կապում։ Յեթե յես ձեզ խորհուրդ եմ տալիս եստեղ չերևալ, միայն հայրենասիրությունից եմ անում։ Հետո յես ուզում եմ ձեզ ասել, վոր դուք չհամարձակվեք ինձ դրոշմել «ծառա» զարշելի բառով, վորից օգտվում են միայն ձեզ նման լրբերը։ Հերըս ու մերս մեռել են, բայց նրանք վոչ մի բանի համար պարտական չեն յեղել ձեզ, ինչպես վոր յես էլ պարտական չեմ։ Իսկ ազգից դուք միայն լապտերից կախվելու յեք արժանի։ Մոնտարժ»։

— Հա՛, հա՛, հա՛, հա՛ հա՛, — ծիծաղից թուլանում եյին գյուղացիները, մինչ Տորին կարդում եր այդ նամակը։

— Կեցցե՛ Մոնտարժը։ Հենց եդպես էլ պատասխանիր։

— Հենց լապտերի յե արժանի մարդիկը։

— Եվ վոչ ամրոցի, վոչ հողերի յերես չի տեսնի նա, — գոռում եյին ամեն կողմից։

— Ի՞նչ եք կարծում, քաղաքացինե՛ր, — դիմեց գյուղացիներին գյուղապետը — նամակն ուղարկելու ժամանակն ե, թե՞ չե։

— Ուղարկի՛ր, թող ուրախանա, — գոչեցին վորպես պատասխան։

— Լա՛վ։ Լիզե՛տ, — կանչեց գյուղապետը և կանչին պատասխանող աղջկան հրամայեց գրիչ, թանաք և թուղթ բերել։ Ինքը խնամքով կտրեց սագի փետուրը, թաթախեց սրվակից և արմունկները լայն բանալով, վոտները չռելով՝ թեքվեց թղթի վրա։ Բայց այս անգամ էլ նա փորձեց այնուամենայնիվ դիմել Տորիի օգնությանը։

— Ապա՛, նստիր մի տեսնեմ, գրագե՛տ, — ասաց գյուղապետը։ Յեվ մատը ցցելով թղթի վրա՝ նա թելադրեց. «Փարիզ։ Սեն-Ժերմեն դը-Պրե փողոցում, վոր Սեն-Ժերմեն արվարձանումն ե։ Սեփական տանը բնակվող քաղաքացի (նախկին մարկիզ) Վիլյեյին անձամբ»։

Ապա նա նամակը կնքեց գյուղապետության կնիքով և հանգիստ շունչ քաշեց.

— Դե՛հ, պրծա՛նք։ Հենց եգուց քաղաք կտանեմ։

Գյուղացիներն սկսեցին քիչ-քիչ ցրվել։ Գյուղապետը և Տորին շարունակում եյին զրուցել։

— Բայց եդ թղթերդ մի քիչ զգույշ պահիր, — ասում եր գյուղապետը Տորիին։ — Եդ մոտիկ գյուղերում յերբեմն գերմանացի պահակներ են յերևում։ Հանկարծ քեզ չբռնե՛ն։

— Հը՞մ, գերմանացիների համար յես ուրիշ թղթեր ունեմ, — պատասխանեց Տորին։

— Գյուղացիների հետ էլ զգույշ յեղիր, — պնդում եր գյուղապետը։

— Վո՞նց թե, եստեղ ձեզ մոտ մատնիչնե՞ր կան, — հուզվեց Տորին։



— Մատնիչ լինելը մատնիչ չեն, — պատասխանեց գյուղապետը, — բայց ինչ-վոր խռովարարներ են դուրս յեկել։ Թե վորտեղի՛ց են դրանք, ով և ֆրանսիացիների ջարդվելու մասին լուրեր տարածում ու պրուսական թագավորի վողորմածությունը խոստանում, յես վոչ մի կերպ չեմ կարողանում ճարել։ Ինձ մոտ գյուղում ժողովուրդը հավատարիմ ե, իսկական հայրենասերներ են։

— Իսկ շրջանո՞ւմ։

— Վոնց վոր յերևում ե, դրանք մի տեղ բույն են դրել... Ազգային գվարդիան ամեն տեղ ման ե գալիս, բայց անօգուտ։ Նրա համար՝ իհարկե՝ դժվար ե. ամեն մի թե՛ զինվորի, թե՛ սպայի ճանաչում են և նրանցից զգուշանում են։ Յես եստեղ մեկի վրա կասկածում եմ, բայց վոչ մի կերպ չեմ կարողանում բռնել։ Նա եստեղից յերեք լյո հեռու ագարակում ե ապրում։

— Գյուղացի՞ յե։

— Չե՛, ինչ գյուղացի։ Նա ծառայելիս ե յեղել մի հարկային կապալառուի *) մոտ ու յերևի մեծ փող ե վաստակել՝ ժողովրդին կողոպտելով։

— Տա՛րի, մենք ենտե՛ղ կգնանք, — ասաց Տորին։

Գյուղապետը հավանություն տվեց Տորիին.

— Իսկապես լավ կլինի ենտեղ մտնեք։ Ագարակապանը ձեզ չի ճանաչում, դուք գնում եք գերմանացիների մոտ... Տղան թող լեզուն պահի, իսկ դու, մայրիկ, կարող ես լաց էլ լինել, խռովարարներին միքիչ հայհոյել, թագավորի համար միքիչ սրտացավություն ցույց տալ... Դու էլ, չարաճճի՛, եդ ժամանակ ուշ դիր, բայց բան բաց չթողնես։

Մոնտարժի հորաքույրը համաձայնեց։

— Բայց վո՞նց պիտի գնանք ենտեղ, — հարցրեց նա։

Գյուղապետն սկսեց հասկացնել։

— Բան չեմ հասկանում, — բողոքեց պառավը։ — Ձեր անտառներում մարդ կկորչի։ Ձախ, աջ, ձախ, աջ — ե՛հ, ինչ հասկանամ։ Չե՛մ գնա։

— Հա՛յր, ինձ թող գնամ, — խոսքի մեջ խառնվեց Լիզետը, վոր ամբողջ ժամանակ ականջ եր դնում։ — Յես սրանց մի րոպեյում կհասցնեմ։

— Գլխիդ ձին քացի՞ յե տվել, ի՞նչ ե, — գոռաց վրան գյուղապետը։ — Քեզ վոչ թե մենակ ագարակում, եստեղից տաս վերստ հեռու էլ են ճանաչում։ Դու տան գործերով զբաղվիր ու տղամարդկանց բանում մի՛ խառնվիր, սա կնկա բան չի։

*) Մինչև հեղափոխությունը հարկը հավաքում եյին վոչ թե պետական մարմինները, այլ մասնավոր մարդիկ, վորոնք պետությունից գնում եյին այդ իրավունքը վորոշ գումարով։ Դրանք անգութ հարկահավաքներ եյին և մեծ կարողություն եյին դիզում այդ գործից։

— Յես ագարակում վոչվոքի աչքի չեմ յերևալ, — պնդում եր Լիզետը։ — Սրանց տեղը կհասցնեմ ու կթաքնվեմ։ Իսկ հետո յես կփախչեմ. սրանք ինձ կասեն իրանց տեսածը, եվ իրանք ինչո՞ւ յեն յետ դառնում։

— Ե, լա՛վ, գնում ես՝ գնա, — համաձայնեց գյուղապետը։ — Միայն թե շատ չմնաս ենտեղ։ Իրիկունը տանը լինես։ Լսու՞մ ես։ Ախր սա իմ մինուճարն է, — ավելացրեց գյուղապետը՝ դիմելով Մոնտարժի հորաքրոջը։ Կինս վոր մեռել է, վողջ տունը յերեխաս է կառավարում։

— Տունդ մի րոպե փուլ չի գալ, — ձեռք առավ Լիզետը հորը և չարաճճիությամբ նրա բարկությունից խուսափելու համար տնից դուրս յեկավ։

## ԳԼՈՒԽ XIX.

# ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՄԻՔԱՅԵԼԻՆ

Հետևյալ որը սայլակը յերեք ճանապարհորդներով մտավ Լ՚ա-Վալլեա ագարակի լայն բակը։ Ամեն բանից յերևում եր, վոր ագարակատերը հասարակ մարդ չե. թե քարաշեն տունը, թե աղոթատեղին, վոր ձգված եր ընդարձակ բակով, վկայում եյին հարստության և կանոնավորված կյանքի մասին։

Մոնտարժի հորաքույրը կանգնած եր բակի մեջտեղում մի հասա-ածիլված, քաղաքացու պես հագնված մարդու հետ և կառապանի տեղը նստած Տորիի վրա գոռում եր.

— Ետե՛ղ, Տորի... ա՛ջ գնա... ընը՝. լավ է։ Նորին մեծությունը մեզ թույլ է տվել ետեղ մնալ գիշերը։ Դե՛, շնորհակալություն հայտնիր բարի պարոնին է՛, քոթո՛թ։

Տորին մի՛ անհասկանալի բան փնթփնթաց։ Նա Ժարիկոյին լծից արձակեց, տարավ ընդարձակ գոմը, սայլը գլորեց սրահը և գոռաց բակովը վազող Մոնշալեյին.

— Մոնշալե՛յ։ Ետե՛ղ։ Հո՛ւշտ... Ապա՛... Թռի՛ր։

Մոնշալեյը վազելով թռավ սայլի մեջ այնպիսի թափով, վոր ցածում վերմակների մեջ թաղված Լիզետը տնքաց։ Շունը հաչեց։

— Սո՛ւս, — հրամայեց Տորին։ — Նստի՛ր։ Ջհամարձակվես տեղից շարժվել, մարդ եվ չթողնես մոտենա, — խրատաբար ասաց նա շանը։

Դեռ խոհանոցի դռնից Տորին լսեց, թե պառավը ինչպես եր վրա տալիս։

— Եվ ինչե՛ր չեմ տեսել, իմ բարի պարոն, — ասում եր պառավը։ — Ջինվորները քաղցած են, կեղտոտ, բոբիկ — մուրացկաններ են, ուրիշ



վոչինչ։ Բայց գոռում են, կոկորդները պատռում, կատաղում են, ասես սատանաներ լինեն դժոխքում։ Մեր սուրբ հայրերին բանտն են քցում, սպաների ուսադիրներն են պոկոտում... Եդ բոլորը նրանց ենտեղից են հրամայում — են ավազակները, Քրիստոս ծախողները, վոր թա-թագավորին բանտն են դրել։ Աչքերս քոռանային, ականջներս քառանային, ու յես չտեսնեյի, չլսեյի են աստծու անիծած բաները։ Վո՞նց է, վոր աստված մինչև հիմի դեռ չի պատժել նրանց։

— Նրանց բոլորին կհատուցվի, ինչի վոր արժանի յեն, — ծանրումեծորեն ասաց ագարակապանը։ — Բայց ա՛յ, մայրիկ, պատմեցե՛ք տեսնեմ, զորք շա՞տ ունեն նրանք...

— Տորի՛, — ընդհատեց ագարակապանին Մոնտարժի հորաքույրը։ — Ժարիկոյին գարի տվե՞ր։ Գնա մի քիչ եվ տուր ուտի.., Դե՛, գնա՛։

Տորին խոհանոցից դուրս յեկավ։ Նա շշմել եր։

«Միթե՞ տատիկն եդքան լավ է խաղում իր դերը, — մտածում եր նա։ — Բայց գուցե իսկապես նա իր հին յերգն է յերգում»։

Տորին հուզվում եր՝ վախենալով, վոր պառավը կարող եր ագարակապանին ինչ ասես դուրս տալ։ Յեվ ինչո՞ւ նա իրան խոհանոցից դուրս ուղարկեց։

Տորին սուսուփուս մոտեցավ դռանը և սկսեց ականջ դնել։ Խոհանոցից լսվում եր պառավի քաղցր-մեղցր փսփսուկը։ Ի՞նչ ստեր ասես չեր ասում... Ջինվորները, ասում եր նա, պրուսացիներից վախենում են՝ ինչպես կրակից. նրանք միայն գոգոռալ են իմանում, իսկ կռիվ գնալ չեն ուզում. ռումբ չկա, հաց չկա, շոր չկա... Յեվ այս բոլորն ամեն վայրկյան ընդհատվում եր հառաչանքներով. փառք աստծու, իմ պարոններն արդեն իրենց ամրոցումն են։ Փառք աստծու, մի որ է մնացել, վոր յես եվ տուն կհասնեմ։

Տորին ծիծաղը հազիվ զսպելով՝ հանդարտ իջավ սանդուղքից և վազեց սրահը։

Շուրջը վոչվոք չկար։

— Լիզե՛տ, — շշնջաց Տորին, — ամեն բան լավ է գնում։ Տատիկը ստում է, իսկ հաստափորը նրան հավատում է։

Վերմակի տակից լսվեց հազիվ հասկանալի մրմունջ։

— Շուտ լիներ — տրտնջաց Լիզետը, — մարմինս վողջ թմրել է։

— Շուտ կլինի։ Սպասի՛ր, — պատասխանեց Տորին։

Ճնշված, տխմար յերեխայի խաղաղ դեմք ընդունելով՝ Տորին յետ գնաց խոհանոցը։

Ճաշի ժամանակ դեռ Մոնտարժի հորաքույրն ելի վրա յեր տալիս արձագանգում եր ագարակապանի բարձր և հաճոյական քրքջոցով ծիծաղին, ագարակապանի, վորն սպառնում եր «Յակոբենյան աղբի» ինքնությունը կորցնել։

Իրիկնադեմին պառավը մոտեցավ խոհանոցի մի անկյունում մենակ նստած Տորին և ձեռքից բռնեց։

— Գնանք, — խստությամբ ասաց նրան։

Յեվ նրանք գնացին ագարակապանի և յերկու բանվորների հետևից։ Նրանք անցան բակը, պտտեցին ինչ որ շենքեր և մտեցան հին ծռված մի մարագի։ Շուրջը դիտելով՝ ագարակապանը մոտեցավ դռանը և իրան հետևողներին շշնջալով՝ «արագ», դռնից ներս խծկվեց։

Սկզբում Տորին վոչինչ չկարողացավ հասկանալ։ Մարագի խորքում վառվող մոմերի աղոտ լուսով նա նկատեց մարդկային կերպարանքների անորոշ գծագրություններ. ամենքը կանգնած էին անշարժ և հանդիսավոր լռություն էին պահպանում։ Հեռվում մի ինչ-վոր բան պայծառ վառվում էր վոսկու գույնով։ Տորին ուզեց առաջ անցնել, բայց Մոնտարժի հորաքույրը նրան պահեց դռան մոտ և շշնջաց.

— Ետեղ կանգնիր։

Տորին շուտով հասկացավ թե վորտեղ է և ինչու յեն բոլորը հավաքվել այդ մարագում։

Խորքից վարագույրի հետևից դուրս յեկան չորս յերեխա ժանյակե ուսնոցներով՝ ձեռներում մոմեր բռնած։ Նրանց հետևից դուրս լողաց մի ջահել տերտեր։ Նա համրաքայլ մոտեցավ ամբոխին և օրհնեց նրան։ Ամենքը յերկրպագեցին։ Մի տեղից յերգեհոնի հնչյուններ լսվեցին։ Տերտերն ու նրա հետևից բոլոր աղոթողները ծունկ չոքեցին։ Մանուկները յերգեցին։ Ապա յերգեցողությունը լռեց։ Տերտերը ծնկաչոք սուր ձայնով աղոթք կարդաց։ Աղոթողները նրա հետևից կրկնեցին։

— Ո՛վ դու, վոր յերկնային ույժերի գլուխն ես կանգնել մարտնչելու անբարիշտ ուղեղների հետ. դու, վոր քեզ անվանել ես ֆրանսիական միապետության պաշտպան. ո՛վ բոլոր հրեշտակներից և հրեշտակապետներից ամենագեղեցիկը, ո՛վ սուրբ Միքայել. թո՛ղ մեղավոր յերկիր և քո թևերի թեթև հպումով չորացրու մեր դժբախտ թագուհու արցունքները, աներևույթ դարձրու մեր օգոստափառ թագավորին և բանտից դուրս բեր։ Քո հրեղեն սրով հարվածիր Յակոբեններին։

Ջայներն ավելի ու ավելի էին բարձրանում։

— Վազի՛ր Լիգետի մոտ, — շշնջաց հորաքույրը Տորին։ — Մի ժամից ավելի կտևի ժամերգությունը։

Ծնրադրությունից չբարձրանալով՝ Տորին ծնկաչոք սողաց դեպի դուռը, դուրսը նայեց, — մարդ չկար։ Աղոթողները նրան չտեսան։ Դուռը չբանալով, վորպեսզի ճռնչոցը չլսեն, Տորին զգուշությամբ դուրս սողաց մի ճեղքից և նորից շուրջը նայեց։ Այդ ռուայալիստներն այստեղ, այս խուլ տեղն իրանց զգում էին այնքան ապահով, վոր նույնիսկ պահապաններ չէին դնում։



Պատերի մոտով զգուշությամբ անցնելով, շենքերի հետևում թաքնվելով՝ Տորին գաղտագողի հասավ սրահին։ Ելի վոչվոք չկար. ագարակապանն ու բոլոր բանվորները պարզ է՝ վոր մարագումն էին։ Շղթայված շները բաց չէին թողնված և նստած էին բներում։ Ամեն բան լավ էր.

Տորին նետվեց սայլակի մոտ։ Մոնշալեյը քունը գլխին ուզեց հաչել։

— Սո՛ւս... — փսփսաց Տորին և ձեռքով շան ռեխը ծածկեց։

— Լիգե՛տ, — քաշքշեց նա խեղճ աղջկան, վոր կես որ տանջվել էր սայլակի խորքում ամենաանհարմար դրության մեջ։ — Վե՛ր կաց։ Մարագում ժամերգություն կա։ Նրանք աղոթում են թագավորի համար։ Վազիր գյուղը։ Դեռ մի ժամ կտևի ժամերգությունը։

— Իսկ մարագը վորտե՞ղ է։

— Աղոթատան հետևում, համարյա անտառի մոտ։

— Լա՛վ։ Մի ժամից հետո ամբողջ գյուղն այստեղ կլինի։ Ոգնի՛ր ինձ։

Նա դուրս սողաց վերմակների տակից, ճլմկոտաց, նետեց իր ծանր սաբոնները և բոբիկ ոտներով վազեց բակով։

Տորին տեսավ, թե նա ինչպես անցավ դարպասի դռնակով և սըրնթաց վազեց ճանապարհով։ Այն ժամանակ Տորին վերադարձավ մարագը։

Նրա բացակայությունը չէր նկատվել։ Մոնտարժի հորաքույրն ընդհատելով անհասկանալի քրթմնջոցը՝ կարողացավ Տորին շշնջալ.

— Ամեն բան լավ է գնում։

Տերտերն աղոթք էր կարդում։ Նա թվում էր ժողովրդի թշնամիների բոլոր գաղտնի և հայտնի ժտգրությունները։ Աղոթքի խոսքերը հարվածում ու ծեծում էին աներևույթ թշնամիներին։ Ջայները հասան համարյա աղաղակի։

— Համբառնալով Ավստրիայի արծվի վերա, — լսեց Տորին, — ամբացրու քաջ եմիգրանտների սրտերը, գրավիր դեպի նրանց Ֆրանսիայի մշտական գնդերը, պառակտման սերմ նետիր մինիստրների և գեներալների մեջ, կուրացրու Յակոբեն պատգամավորներին, զինիր հոգեվորականությունն ոձի իմաստությամբ, գյուղերում բոցավառի քաղաքացիական և կրոնական պատերազմի ջահերը*)։

Աղոթքը կարդացվում էր մի տեսակ մոլեգնությամբ։ Տերտերի ճղղճղան ձայնի մեջ լսվում էր գիշատիչ կատաղություն, յերբ նա արտասանում էր վերջին բառերը.

*) Այն քահանաները, վորոնք սահմանադրությանը չէին յերդվել (իսկ այդպիսիները քիչ չէին), դեռ մինչև օգոստոսի 10-ն էին զրկվել ժամերգության կատարելու իրավունքից։ Այդպիսի չերդված քահանաները շարունակում էին գաղտնի ժամերգություն կատարել քաղաքներում, ուր ժողովները հաճախ կայացվում էին նկուղներում, և գյուղերում հին մարագներում, սրահներում և այլն։ Նրանք հակահեղափոխության մարմնացումն էին և հետագայում հյուսիսում, Վանդեյում քաղաքացիական պատերազմ հրահրեցին։

— Ո՜վ սուրբ Միքայել, ֆրանսիացի ժողովուրդը պարծենում է նրանով, վոր բաղկացած է միայն սանկյուլոտներից, — ուրեմն այդ խուժանին գլորիր այնպիսի անդունդ, վոր նա թզենու տերև անգամ չգտնի իր մերկությունը ծածկելու համար: Յեվ թող այդպես լինի:

Լռություն տիրեց: Մի տեղից հեկեկանք եր լսվում: Ապա հնչեց յերգեհոնը: Պարզ, հանդիսավոր հնչյունները խաղաղացնում եյին կըրքերը: Սկսվեց ժամերգությունը:

Տոբին հազիվ եր իրեն զսպում, վորպեսզի չգոռա, վոտները գետնին չխփի, վորևե բանով չխլացնի աղոթքի բառերը: Նրա սիրտը կատաղորեն թրթռում եր:

Ժամերգությունը շարունակվում եր: Տոբին ականջ դրավ՝ իմանալու համար, թե մարագի պատերի հետևն արդյոք չե՞ն լսվում բարեկամների վոտնաձայները:

«Ել յե՞րբ են վերջապես յերևալու նրանք», — մտածում եր նա:

Մոնտարժի հորաքույրը նույնպես հուզվում եր:

— Ժամերգությունը վերջանում է, — շշնջաց նա Տոբիին:

Տոբին աննկատելի սողաց դռան մոտ և ճեղքով նայեց: Լուսնի լույսը խաղում եր մի հրացանի փողի վրա. հենց մուտքի մոտ կանգնած եր Մոնտարժը հրացանը ձեռքին:

Տոբիին թվաց, վոր ուրախությունից շնչասպառ է լինելու: Նա սողաց պառավի մոտ և նրա ձեռքից բռնելով՝ քաշեց իր հետևից: Նրանք մարագից դուրս պրծան:

Գյուղապետը ճանաչեց նրանց:

— Հեռացե՛ք, — շատ կամաց ասաց նա: — Հիմի վոչ մինը չի պրծնի:

Նրանք հեռացան շենքերի հետևը: Այնտեղ պատին կպած կանգնել եր Լիզետը: Նա նետվեց դեպի մոտեցողները.

— Ինչպե՜ս եմ վազել: Ինչպե՜ս եմ վազել: Ախր մենք հենց նոր հասանք. միքանի րոպե յել ուշանայինք, ամեն ինչ կորած եր, — ասաց նա:

— Ազգային գվարդիականները շա՞տ են, — հարցրեց Տոբին:

— Հիսուն հոգի. բոլորը հրացանով են: Նրանք շրջապատել են...

Հրացանների մի համազարկ ընդհատեց Լիզետի բառերը: Չորս կողմն ամեն ինչ թնդաց, աղաղակեց, թրթռաց...

Տոբին նետվեց դեպի մարագը: Զինվորներն արդեն վառել եյին ջահերը. նրանց լուսով Տոբին տեսավ մարագի պատերի յերկարությամբ և մուտքի մոտ կապույտ համազգեստները: Ներսից լսվում եյին պայքարի աղմուկ, աղաղակներ, հառաչանքներ:

Միքանի րոպեյից հետո մուտքի մոտ կանգնած զինվորները յետ կանգնեցին: Կապույտ համազգեստների յերկու շարքերի մեջ սեղմված դուրս եյին գալիս կալանավորները. նրանց ձեռները կապած եյին





հետևը, և բոլորը միացած եյին մի ընդհանուր պարանով: Ի՞նչ վողորմելի տեսք ունեյին նրանք այդ ժամանակ: Ագարակապանն էլ անցավ. Նա գնում եր՝ գլուխը ցած կախած: Բոլորը կալանավորներին դուրս բերին ճանապարհը և տարան գյուղը:

Գյուղապետն ու միքանի հոգի ազգային գվարդիականներ մնացին ագարակում խուզարկություն կատարելու:

— Հը՛, աղունակներին տարա՞ն, — ասաց գյուղապետը՝ մոտենալով դարպասի մոտ կանգնած Մոնտարժի հորաքրոջը, Տոբիին և Լիզետին: Ուրախությունից նա հրճվում եր: — Տեղնուտեղը բռնվեց անկեղծ ընկերությունը: Բանից դուրս յեկավ, վոր էստեղ դրանք իսկական յեկեղեցի ունեն: Լոբերին տեսեք, գյուղից ընդամենը յերեք լյո... Ժամերգությունը դուք տեսա՞ք:

— Այո, — պատասխանեց Տոբին: — Յես զոռով դիմացա. նրանք Թագավորի համար եյին աղոթում:

— Թագավորի՞ համար, — անհամբերությամբ ընդհատեց նրան գյուղապետը: — Բայց չե՞ս հիշում աղոթքի խոսքերը: Ո՞ւմ եյին դիմում. Միքայել հրեշտակապետի՞ն:

— Այո, ֆրանսիական միապետության պաշտպանին: — Յեվ Տոբին կրկնեց միտը մնացած միքանի բառ:

— Հենց էդ է վոր կա... — ասաց գյուղապետը: — Էդ աղոթքը մի ամիս է, վոր թռուցիկներով տարածում են շրջակա բոլոր գյուղերում. հալից ընկանք փնտռելով էդ թռուցիկները գցողներին... հիմի վողջ բանդան մեր ձեռքումն է: Ո-հո-հո՜... Յես զգում եմ, վոր էստեղ հետաքրքիր բան շատ ենք գտնելու... Շնորհակալություն, Մոնտարժի հորաքույր և Տոբի: Ձեր շնորհիվ միայն բռնեցինք դրանց:

— Բա յես։ Ինչո՞ւ ինձ չես ասում «շնորհակալ եմ», — վիրավորված արտասանեց Լիզետը։

— Հա, հա, դու էլ ես ղոչաղ։

Գյուղապետը համբուրեց աղջկանը և շտապեց տուն դառնալ։

— Նանի, — ասաց Տոբին։ — Գիտե՞ս, յես առաջ վախեցա, վոր դու ամեն բան լուրջ էյիր ասում եղ ցնփորին։ Կասես առաջվա ժամանակը լիներ... Էնտեղ... Փարիզում։

— Ե՛, միտը գցեց... — անբավականությամբ մրմնջաց պառավը, — Բա ի՞նչ ես կարծում, իմ աչքերն էլ են բացվել, չէ՞։ Բանակում խելքս գլուխս է յեկել...

Իսկ մտածության մեջ նա նայում էր, թե ինչպես էյին տանում տերտերին, ագարակապանին և բոլոր կալանավորներին և զարմանքով հարցնում էր ինքն իրեն. «Սիրտս սրանց համար հո չի՞ ցավում»։ Այնքան ժամանակ չէր անցել, վոր նա յել ջերմեռանդորեն կաղոթեր թագավորի համար, թագուհու համար, ատելի ակումբների կործանման համար։ Բանակը նրան վերածնել էր։ Բանակի թշնամիները նրա թշնամիներն էյին դարձել։

Տանը, սրահում, գոմում, մարագում, ամբողջ ագարակում խուզարկություն էր կատարվում։ Ծխոտ ջահերը բակով յետ ու առաջ էյին շպրտվում։ Բներում կապած ահագին պահապան շները մռայլ մռմռոցով էյին ճանապարհ դնում իրանց մոտով վազող օտար մարդկանց։

Տոբին և Լիզետը նույնպես մասնակցություն ունեցան այդ շփոթում։ Ժամանակ առ ժամանակ լսվում էյին նրանց հրճվանքի բացականչությունները. ամեն ինչում նրանք կասկածելի բան էյին տեսնում և հաղթական կերպարանքով տանում էյին գյուղապետի մոտ։

Յերբ Մոնտարժի հորաքույրը խոհանոց մտավ, գյուղապետին տեսավ մի մեծ ճաշի սեղանի առաջ նստած՝ վրան թղթերի մի կույտ։ Գետնին ընկած էյին կտրին ճարված հրացաններ, փամփուշտներ, վառոդով լի տակառիկներ։

Մտնող պառավին տեսնելով՝ գյուղապետը վազեց առաջ և ձեռքից բռնելով տարավ սեղանի մոտ։

— Տես, տես թե ինչ գանձ ենք գտել ես անիծված վորջում, — ասաց նա և ցույց տվավ նրան թղթերի մի կույտ — էմիգրանտների և Բրաունշվեյգացի դուքսի կոչերը, թագավորի աղոթքը, կեղծ թղթադրամների խնամքով դարսած կապոցներ, նամակներ, հրամաններ։ Գյուղապետն զբաղված էր դրանցով՝ ուրախանալով և քթի տակ քրթմնջալով՝ «Լաց կլինեն աղամնյակները, փոխարենը կստանան անպիտանները»։

Տոբին ու Լիզետն անկյունում փսփսում էյին։ Մոնտարժի հորաքույրը մոտեցավ նրանց։ Լիզետը վազեց դեպի նա։



— Հորաքույր, — դավադրի նման շշնջալով ասաց նա, — ինձ վերցրեք ձեզ հետ։ Կտեսնեք, թե ինչքան օգտակար կլինեմ ձեզ, — չէ՞ վոր յես բոլոր ճանապարհները, բոլոր գյուղերը ճանաչում եմ, իսկ դուք կշեղվեք։

Տոբին աղաչական կերպով նայեց տատիկին։

— Գժվե՞լ եք, ինչ է, — թնդաց պառավը։ — Աղջկան վո՞նց կսազի ճամբաներին թափառել։ Հերդ էլ քեզ յերբեք բաց չի թողնի։

— Հերս բարեսիրտ է։ Մի քիչ կբարկանա ու սուս կանի։ Յես նրան կհամոզեմ, միայն թե դուք համաձայնեք։ Կտեսնեք, թե ինչեր կանենք։

— Ի՞նչ ես դատարկ դուրս տալիս...

— Չի՞ թողնի։ Միևնույնն է, այդ դեպքում յես կփախչեմ։ Թե դուք չեք վերցնի, յես մենակ կգնամ։ Էլ չեմ կարող հորթերի ու կովերի դարդը քաշել... Կտեսնեք այ, յես կփախչեմ...

Լիզետն այնքան կատաղեց, վոր հոր ներկայությունը մոռանալով՝ համարյա գոռում էր։ Գյուղապետը լսեց նրա ձայնը։

— Ի՞նչ կա, ինչ ես գորգոռում, — հարցրեց նա՝ մոտենալով Լիզետին։

Աղջիկը լռեց՝ չհամարձակվելով իր ցանկությունն ասել հորը։ Նա կամաց քաշեց Մոնտարժի հորաքրոջ թևը՝ խնդրելով նրա բարեխոսությունը։

— Նա ուզում է մեզ հետ գալ, — ուսերը թոթվելով՝ ասաց պառավը գյուղապետին։

— Ո՞ւր, — զարմացած հարցրեց գյուղապետը։

— Հեռու... Էնտեղ... Գյուղերը։

— Դու էլի քո հիմարություննե՞րդ ես դուրս տալիս, — գոռաց գյուղապետը և բռնեց վախեցած Լիզետի ականջը։ — Իսկ տո՞ւնը, իսկ հե՞րդ։ Ո՞ւմ հուսով ես թողնելու։ Դո՛ւրս կորի՛ր։ Դու ոչ մի տեղ էլ չես գնա։

Լիզետը հեկեկալով դուրս յեկավ խոհանոցից։

Առավոտը վաղ Մոնտարժի հորաքույրը զարթնեց ագարակի խոհանոցում և կանչեց Տոբիին.

— Վե՛ր, Տոբի՛։ Դուրսը լուսացել է, գնալու ժամանակ է։

Ոչ վոք ձայն չտվավ. Տոբին սենյակում չէր։

Պառավը հագնվեց և բակը դուրս յեկավ։ Գոմի մոտ ինչ-վոր կերպարանքներ թռան։ Պառավը մոտ գնաց. նա տեսավ Տոբիին ու Լիզետին. նրանք մի ձի լծում էյին ընդարձակ, հարմար մի տարանտասի։

— Եստեղ ի՞նչ եք շինում, — կանչեց նրանց պառավը։

— Նանի, Լիզետը գալիս է մեզ հետ, — ուրախ-ուրախ գոչեց Տոբին՝ պառավի մոտ վազելով։ — Սայլակում չենք տեղավորվի։ Գյուղա-

պետք հրամայել է ագարակից վերցնել ձի և տարանտաս... Մեզ համար չենք վերցնում, գործի համար է, ազգի համար։

— Ձին տար կապիր, ծարիկոյին լծիր, — խստությամբ ասաց պառավը։ — Լիզետը վոչ մի տեղ չի գա։ Հերը չի թողել, յես էլ չեմ վերցնել դրան։

— Հերս թողել է։ Յես գալիս եմ, գալիս։ — Լիզետն ուրախ-ուրախ թռչկոտում էր պառավի շուրջը և հրճվանքով գոչում. — յես գալիս եմ, գալիս եմ։

— Տես, սուտ մի խոսի։ Մեկ է, յես հիմի հորդ գտնելու յեմ։

— Հրես ինքն էլ։ Հայրիկ, ճշմարիտ է վոր ինձ գնալու իրավունք ես տվել, — կանչեց Լիզետը բակը մտնող հորը։

— Ե՛, ճարս ինչ... — ասաց գյուղապետը և վշտագին ձեռները տարածեց։ — Աղջիկը վողջ գիշերը զռռում էր... Ե՛, ինչ արած, թող գա...

— Բա յես ինչ անեմ, — բացականչեց պառավը։ — Բիչ էր ինձ իմ քյալլագյոզը, հիմի յել էս աղջկանն եք վզիս կապում։ Լավ, ճար չունի, մի բան կանենք, — վրա բերավ նա աշխուժով և ժպտաց Տոբիին ու Լիզետին։

ԳԼՈՒԽ XX.

## ԱՐԳՈՆՆԵՐԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ

— Դե, արագ։ — Լիզետը կառապանի տեղում խնդալի կերպով նըստած և սանձերը քաշելով՝ անտառային ճանապարհներով քշում էր ագարակապանի կուշտ, ուժեղ ձին։

Մոնտարժի հորաքույրը հարմար տարանտասի մեջ որորվելով՝ մի գլուխ հանգստացնում էր աղջկան.

— Հանդարտ, Լիզետ։ Եդպես մի քշիր։ Տարանտասը շուռ կտաս։

Բայց Տոբին գրգռում էր Լիզետին.

— Կամաց վոր գնանք, վոչ մի տեղ գնալ չենք կարող։ Մի լսիր, քշիր։

Նա ինքը վառված աչքերով, արագ ընթացքից գրգռված, անդադար զոռում էր ձիու վրա։ Նա հիանում էր անտառային օդից, թափված սաղարթի խանձահոտից և անտառային շրշյունները խլացնող տարանտասի գրգռոցից։

Սկզբում նրանք ամեն րոպե վախվխելով եյին մտիկ տալիս, թե արդյոք թշնամու պահակախմբեր կամ պիկետներ չեն յերևում։ Բայց առաջին հանդիպումներից հետո մեր ճամբորդները սիրտ առան։ Մոնտարժի հորաքույրը ներկայացնում էր այն թղթերը, վոր նախատեսությամբ տվել եյին նրան Սեն-Մենուլդում։ Իր ասելով՝ նա թոռների հետ վերադառնում էր տուն, գյուղը, գերմանացիների գծի այն կողմը։ — Տարանտասը խուզարկելուց հետո նրանց բաց եյին թողնում։ Արդեն յերեք այդպիսի խուզարկություն էր կատարվել, բայց տարանտասի մեջ, խորքում թագցրած թռուցիկներն իրենց տեղում եյին։

Մի քանի անգամ ծառերի հետևից «կա՛ց, ո՛վ է գալիս» կանչով նրանց կանգնեցրել եյին։ Դրանք գյուղից փախած և իրանց ունեցած չունեցածով, հացահատիկով լիքը սայլերով և իրանց հետ տարած անասուններով անտառներում թաքնված գյուղացիների ոբաներ եյին։

Տոբին նրանց պատմում էր պրուսացիների ռազմական անհաջողությունների մասին, թռուցիկներ էր բաժանում, վորոնք գյուղացիներին շուտով իրանց տները վերադառնալու հույս եյին ներշնչում և դեպի յերկիրը գրավողները տածած ատելությունը վառ եյին պահում.

Տարանտասն իր հետևն արդեն թողել էր բավական գյուղեր, դաշտեր, խաղողի այգիներ։ Ամայացման ինչ սարսափելի տեսարաններ եյին հանդիպում մեր ճանապարհորդներն իրանց ամբողջ ճանապարհին։

Այն գյուղերից, վորտեղի բնակիչները չեյին կարողացել ժամանակին փախչել, պրուսացիները վերցրել եյին ամեն բան, ինչ վոր կարողացել եյին։ Նրանցից հետո գյուղացիներին չէր մնացել վոչ մի հատիկ ապագա ցանքսի համար, վոչ անասուն, վոչ հաց կերակրվելու համար։ Թալանին դիմադրություն ցույց տալու ամենաչնչին փորձերն անգամ ճնշվում եյին անսովոր դաժանությամբ։ Գյուղացիները հաճախ եյին ցույց տալիս պրուսացիների մտրակներից մնացած սոսկալի կապտած սպիներ իրանց մեջքներին, սպաների բռունցքներից ուռած դեմքեր, ատամներից զրկված բերաններ։ Նրանք պատմում եյին պրուսացիների խժդժությունների մասին, և մանավանդ եմիգրանտների, վորոնք չափն այնքան եյին անցել, վոր նույնիսկ պրուսացիները հարկադրված եյին լինում յերբեմն զսպել իրենց դաշնակիցներին։

Այն գյուղերը, վորտեղից փախել էր ամբողջ ազգաբնակչությունը, ել ավելի սոսկալի տեսարան եյին ներկայացնում։ Այստեղ «սեփականության և օրենքի» մեծահոգի «պաշտպանները» իրանց հետևից թողել եյին կտրատված այգիներ, կործանված ամբարներ, սրահներ, ախոռներ, մառաններ, տներում հանած լուսամուտներ ու դռներ, փշրված վառարաններ, ջարդած կտոր-կտոր արած վողորմելի կարասիք և ամանեղենի կտորտանքներ հատակներին։ Յերբեմն պատահում եյին միանգամայն հրդեհված գյուղեր։

Բրաունշվեյգի դուքսը սրբությամբ էր կատարել իր մանիֆեստով խոստացածը։ Բավական էր պրուսական զորքն անցնելիս մի

գյուղի մոտ հրացանի ձայն, լսվեր, գյուղն իսկույն մոխրակույտի յեր փոխարկվում:

Մի գյուղ ընդմիշտ մնաց Տոբիի հիշողության մեջ:

Տարանտասն արդեն մոտենում եր Քրուա-ո-Բուայի և Շեն-Պոպյուլեյի լեռնանցքերին, ուր Դյումուրյեյի հրահանգով հատկապես կարևոր եր ազգաբնակչությանը հաղորդել միացյալ զորքերի առաջխաղացման ջարդվելու մասին. այս անցքերով եյին պրուսացիներն անց կացնում Գերմանիայից և Լորենից յեկող մթերքների բեռները և կերը: Ուստի այդտեղ թշնամին ավելի խիստ պայքար եր մղում իրան թշնամի ազգաբնակչության հետ: Բացի այդ՝ այդտեղ եյին գտնվում իշխանազն Կոնդեյի եմիգրանտական գնդերը, իսկ դրանք խնայել չգիտեյին:

Մինչև Վուզյե դեռ ամբողջ տասը լյո կար: Մեր ճամբորդները խիստ հոգնել եյին յերկար ճանապարհորդությունից և անհամբեր սպասում եյին տեսնելու, թե մոտիկ գյուղ չի՞ յերևում:

— Հորաքույր,— դիմեց Լիզետը պառավին:

— Քեզ քանի՛ անգամ եմ ասել, վոր ինձ տատիկ անվանես,— բարկացավ պառավը,— ի՞նչ կլինի, յեթե գերմանացիների մոտ ել ինձ հորաքույր ասելու լինես — տուններս լավ կշինես…

— Ել չեմ անի, չեմ անի,— հանցավորի պես արդարանում եր Լիզետը:— Հա՛, նանի՛, յեթե շատ եք հոգնել, կարող ենք մտնել Գրանշան, ենտեղից ել Բերրի կգնանք: Յերկու լյո ավելորդ պտույտ կանենք, բայց դրա տեղ հորաքույրս ենտեղ ե, մի լավ կհանգստանանք:

— Հա՛, հա՛,— ձայնակցեց Տոբին:— Յեկ հանգստանանք, նանի՛: Դրա տեղ հետո ավելի շուտ-շուտ կգնանք:

Լիզետը խճուղուց դուրս յեկավ մի շավիղ: Տարանտասն սկսեց քառուղների վրայով ցատկոտել: Շուտով առաջներն անտառն սկսեց նոսրանալ և ծառերի արանքից լույսը յերևաց:

— Երվածահոտ ե գալիս,— ասաց Մոնտարժի հորաքույրը կըռնճռվելով:

— Հա՛, ճիշտ ե, հոտ ե գալիս,— հաստատեց Լիզետը:

— Չլինի՞ թե գերմանացիները գյուղն են կրակ տալիս… Լավ են ե՛ ծավենք, թե չե կարող ենք ուղղակի կրակ գցողների ճանկն ընկնել:

Բայց Լիզետը ձիուն մտրակեց, և տարանտասն ել ավելի արագ գլորվեց դեպի գյուղը: Անցան վերջին ծառերը: Նրանց աչքի առաջ տարածված եր մի լայն հովիտ առանց բնակչության վորևե նշանի: Ամեն կողմից բլրի հետևից բարձրանում և հալվում եյին բարձրում սև ծխի շերտերը:

— Անպիտաննե՛ր: Գյուղը վառե՛լ են,— բացականչեց Լիզետը և տեղը կանգնելով՝ սկսեց ձիուն մտրակել:



Բլրի հետևում հրդեհը յերևաց: Գյուղական տները գետին եյին փըռ-
վել դեռ ծխող խանձողներով. Նրանց վրա բարձրանում եր բարկ ծուխը:
Այսուայնտեղ դեռ բոցբոքվում եր կրակը ու բարձրանում բոցը: Վոչ
մի տեղ մարդ չեր յերևում:
Տարանտասն աղմուկով անցնում եր հրդեհված փողոցով:
Տարանտասն ... Ֆրանսուազ հորաքույր: Բոլորն երվել ե:— Լիզետը Թուլա-
— Խե՜ղճ Ֆրանսուազ հորաքույր: Բոլորն երվել ե:— Լիզետը թուլա-
ցած ընկավ նստարանին: Դառնալով դեպի Տոբին՝ նա մտրակով ցույց
տվավ մի քանի ծխող գերաններ: Նրա աչքերն արտասվակալած եյին:—
Սա նրա տունն ե,— ասաց նա:
Փողոցը գնում եր դեպի գյուղի այն կողմը, վորտեղ դեռ բոց
եր յերևում: Հանկարծ Լիզետը միանգամից կանգնեցրեց ձին և ցած
.թռավ տեղից:
Մի այրվող տան առաջ նստած եր մի ծերուկ: Նրա գլուխն անկեն-
դան կռացած եր. թվում եր, թե նա չի լսում վոչ մոտեցող տարանտասի
գրգռոցը, վոչ Լիզետի աղաղակը.
— Տարդյե՛: Ո՞ւր ե Ֆրանսուազ հորաքույրը:
Ծերը լուռ եր:
Տոբին ցած թռավ Լիզետի հետևից և վազեց ծերուկի մոտ:
Քիչ հետո ծերի ուշքը գլուխը յեկավ: Իր մոտ մարդիկ տեսնելով՝
նա սթափվեց:
— Տարդյե՛, ինձ չե՞ս ճանաչում,— ասաց նրան Լիզետը:
Ծերուկը գլուխը դարձրեց դեպի նա և թոթովեց.
— Մոնտարժի աղջի՞կն ես: Վողջ այրվեց: Տեսնո՞ւմ ես, Ֆրանսուազի
տունն ել ե այրվել:
— Իսկ ինքն ո՞ւր ե:
— Ենտեղ…— Ծերը ձեռը շարժեց դեպի անտառը:— Ամեն բան
կորավ: Ամե՜ն բան:
— Իսկ դու ինչի՞ յես նստել, պապի՛,— ասաց Մոնտարժի հորաքույրը՝
իր հերթին մոտենալով ծերին:
— Յես ո՞ւր գնամ… վոչ տուն ունեմ, վոչ տեղ… Գնամ մուրացկա-
նությո՞ւն անեմ, ի՞նչ ե:
— Հո մենակ չես մնալու ստեղ… Վե՛ր, պապի՛, գնա՛նք մեզ հետ:
Ծերը գլուխն օրորեց: Ել նրանից բան չեր կարելի հասկանալ:
— Տոբի՛, Լիզե՛տ,— հրամայեց Մոնտարժի հորաքույրը,— պապին
բարձրացրեք տարեք տարանտաս: Մեզ հետ վերցնենք սրան: Աշխար-
քումս բարի մարդիկ շատ կան, մինը սրա հոգսը կքաշի, մինչև վոր
գյուղը շինեն:
Յերեխաներն ուրախությամբ կատարեցին պառավի հրամանը: Նրանք
Տարդյեյին կառք նստեցրին: Լիզետը նստեց տեղը և տարանտասը
շարժվեց:

գյուղի մոտ հրացանի ձայն լսվեր, գյուղն իսկույն մոխրակույտի յեր փոխարկվում:

Մի գյուղ ընդմիշտ մնաց Տոբիի հիշողության մեջ:

Տարանտասն արդեն մոտենում եր Բրուա-ո-Բուայի և Շեն-Պոպյուլեյի լեռնանցքերին, ուր Դյումուրյեյի հրահանգով հատկապես կարևոր եր ազգաբնակչությանը հաղորդել միացյալ զորքերի առաջիկայում ջարդվելու մասին. այս անցքերով եյին պրուսացիներն անց կացնում Գերմանիայից և Լորենից յեկող մթերքների բեռները և կերը: Ուստի այդտեղ թշնամին ավելի խիստ պայքար եր մղում իրան թշնամի ազգաբնակչության հետ: Բացի այդ՝ այդտեղ եյին գտնվում իշխանազն Կոնդեյի եմիգրանտական գնդերը, իսկ դրանք խնայել չգիտեյին:

Մինչև Վուզյե դեռ ամբողջ տաս լյո կար: Մեր ճամբորդները խիստ հոգնել եյին յերկար ճանապարհորդությունից և անհամբեր մտիկ եյին տալիս տեսնելու, թե մոտիկ գյուղ չի՞ յերևում:

— Հորաքո՛ւյր, — դիմեց Լիզետը պառավին:

— Քեզ քանի՜ անգամ եմ ասել, վոր ինձ տատիկ անվանես, — բարկացավ պառավը, — ի՞նչ կլինի, յեթե գերմանացիների մոտ ել ինձ հորաքույր ասելու լինես — տուներս լավ կշինես...

— Ել չեմ անի, չեմ անի, — հանցավորի պես արդարանում եր Լիզետը: — Հա՛, նանի՛, յեթե շատ եք հոգնել, կարող ենք մտնել Գրանշան, ենտեղից ել Բերրի կգնանք: Յերկու լյո ավելորդ պտույտ կանենք, բայց դրա տեղ հորաքույրս ենտեղ ե, մի լավ կհանգստանանք:

— Հա՛, հա՛: — ձայնակցեց Տոբին: — Յեկ հանգստանանք, նանի՛: Դրա տեղ հետո ավելի շուտ-շուտ կգնանք:

Լիզետը խճուղուց դուրս յեկավ մի շավիղ: Տարանտասն սկսեց քառուճների վրայով ցատկել: Շուտով առաջներն անտառն սկսեց նոսրանալ և ծառերի արանքից լույսը յերևաց:

— Երվածահոտ ե գալիս, — ասաց Մոնտարժի հորաքույրը կընճռվելով:

— Հա՛, ճիշտ ե, հոտ ե գալիս, — հաստատեց Լիզետը:

— Չլինի՞ թե գերմանացիները գյուղն են կրակ տալիս... Լավն ե՝ ծռվենք, թե չե կարող ենք ուղղակի կրակ գցողների ճանկն ընկնել:

Բայց Լիզետը ձիուն մտրակեց, և տարանտասն ել ավելի արագ գլորվեց դեպի գյուղը: Անցան վերջին ծառերը: Նրանց աչքի առաջ տարածված եր մի լայն հովիտ առանց բնակության վորևե նշանի: Աջ կողմից բլրի հետևից բարձրանում և հալվում եյին բարձրում սև ծխի շերտերը:

— Անպիտաննե՛ր: Գյուղը վառե՛լ են, — բացականչեց Լիզետը և տեղը կանգնելով՝ սկսեց ձիուն մտրակել:



Բլրի հետևում հրդեհը յերևաց: Գյուղական տները գետին եյին փռըվել դեռ ծխող խանձողներով. Նրանց վրա բարձրանում եր բարկ ծուխը: Այսուայնտեղ դեռ բորբոքվում եր կրակը ու բարձրանում բոցը: Վոչ մի տեղ մարդ չեր յերևում:

Տարանտասն աղմուկով անցնում եր հրդեհված փողոցով:

— Խե՜ղճ Ֆրանսուազ հորաքույր: Բոլորն երվել ե: — Լիզետը թուլացած ընկավ նստարանին: Դառնալով դեպի Տոբին՝ նա մտրակով ցույց տվավ մի քանի ծխող գերաններ: Նրա աչքերն արտասվակալած եյին: — Սա նրա տունն ե, — ասաց նա:

Փողոցը գնում եր դեպի գյուղի այն կողմը, վորտեղ դեռ բոց եր յերևում: Հանկարծ Լիզետը միանգամից կանգնեցրեց ձին և ցած թռավ տեղից:

Մի այրվող տան առաջ նստած եր մի ծերուկ: Նրա գլուխն անկենդան կռացած եր. թվում եր, թե նա չի լսում վոչ մոտեցող տարանտասի դըրդոցը, վոչ Լիզետի աղաղակը.

— Տարդյե՛: Ո՞ւր ե Ֆրանսուազ հորաքույրը:

Ծերը լուռ եր:

Տոբին ցած թռավ Լիզետի հետևից և վազեց ծերուկի մոտ:

Քիչ հետո ծերի ուշքը գլուխը յեկավ: Իր մոտ մարդիկ տեսնելով՝ նա սթափվեց:

— Տարդյե՛, ինձ չե՞ս ճանաչում, — ասաց նրան Լիզետը:

Ծերուկը գլուխը դարձրեց դեպի նա և թոթովեց.

— Մոնտարժի աղջի՞կն ես: Վողջ այրվեց: Տեսնո՞ւմ ես, Ֆրանսուազի տունն ել ե այրվել:

— Իսկ ինքն ո՞ւր ե:

— Ենտեղ... — Ծերը ձեռը շարժեց դեպի անտառը: — Ամեն բան կորավ: Ամե՜ն բան:

— Իսկ դու ինչի՞ յես նստել, պապի՛, — ասաց Մոնտարժի հորաքույրը՝ իր հերթին մոտենալով ծերին:

— Յես ո՞ւր գնամ... վոչ տուն ունեմ, վոչ տեղ... Գնամ մուրացկանություն անեմ, ի՞նչ ե:

— Հո մենակ չես մնալու ենտեղ... Վե՛ր, պապի՛, գնա՛նք մեզ հետ:

Ծերը գլուխն որորեց: Ել նրանից բան չեր կարելի հասկանալ:

— Տոբի՛, Լիզե՛տ, — հրամայեց Մոնտարժի հորաքույրը, — պապին բարձրացրեք տարեք տարանտասը: Մեզ հետ վերցնենք սրան: Աշխարքումս բարի մարդիկ շատ կան, մինը սրա հոգսը կքաշի, մինչև վոր գյուղը շինեն:

Յերեխաներն ուրախությամբ կատարեցին պառավի հրամանը: Նրանք Տարդյեյին կառք նստեցրին: Լիզետը նստեց տեղը և տարանտասը շարժվեց:

Ծերը բարեկամական կարեկցություն զգալով՝ սիրտ առավ։ Տոբիի հարցափորձին նա պատմեց, թե գյուղն ինչպես են հրդեհել։

Գերմանական զորամասերը գյուղն էին յեկել միանգամայն անսպասելի։ Գյուղացիները կարողացել էին քիչ ու միչ բան թաքցնել, անասունների մի մասը քշել էին անտառը, իսկ մնացածը զինվորները հափշտակել էին։ Տարդյեյից խլել էին ամեն բան, ինչ վոր ունեցել էր։ Նրանց գնալուց հետո գյուղացիներն, առանց ուշացնելու, հավաքել էին բոլորն, ինչ վոր պահած ունեյին, բեռնել սայլերը և գնացել անտառը։ Այնտեղ նրանք ապրել են մշտական վախի մեջ գյուղի համար։ Տարդյեն չեր կարողացել դիմանալ այդ անորոշությանը. մի անգամ վեր էր կացել յեկել գյուղը։ Հակառակի պես գյուղի մոտ նա հանդիպել էր փարթամ հագնված մի խումբ կավալերիստների, վորոնք ֆրանսերեն էին խոսում — էմիգրանտների՝ ինարկե։ Նրանք շրջապատել էին իրան և իմանալով, վոր ինքն այդ գյուղից է, պահանջել էին ցույց տալ, թե վորտեղ է թաքցրված հացահատիկը, անասունները. կերը։ Ծերը լռել էր։ Այն ժամանակ կավալերիստները նրան գանակածել էին (Տարդյեն ցույց տվավ մեջքի շերտերը), գյուղը հրդեհել ու գնացել։ Ծերուկը մնացել էր մենակ։ Նա չեր կարողացել հրդեհը հանգցնել և անօգնական, ավերածությունից, ծեծից, ընդհանուր թշվառությունից ցնցված՝ մտիկ էր տալիս, թե հրդեհն ինչպես է լափում գյուղը։

— Էլ վոչինչ չկա. վոչ ձի, վոչ կով, վոչ հաց, վոչ տուն... — վերջացրեց ծերն իր պատմությունը։

Նա ծոցից հանեց խնամքով պահած մի թերթ թուղթ։ Դա ստացական էր, վոր գյուղացիներից նրանց գույքը խլող գերմանական սպաներն էին տվել. «Արգոնների Գրանշան գյուղացի Մարի-Ժան-Տարդյեն գերմանական բանակին տվավ մի ձի, մի կով, մի հորթ և քսան վոչխար, վորի համար նորին մեծություն ֆրանսիական թագավորը պարտավորվում է վճարել արդարացի գին, յերբ նրա սրբազան անձնավորությունը կազատվի և նրա յերկրում կարգ կհաստատվի։ Վորը հաստատելու համար և նորին մեծություն պրուսիայի թագավորի հատուկ յերաշխավորությամբ յես տվել եմ այս ստացականը, վորով պետք է հատուցվի վերը հիշած ապրանքի գինը դրա համար նշանակված տեղում և նշանակված ժամանակ։ Գրանշան-Արգոններում 1792 թ. սեպտեմբերի 18։ Բրաունշվեյգցի — Լյունեբուրգցի դուքս Կարլ-Վիլհելմ»։

— Ա՛յ, անիծյալնե՛ր, — բարկությունը թափեց ծերը, յերբ Տոբին կարդաց այդ ստացականը։ — Թող դուքսը խեղդվի այդ ստացականով։

— Հանգիստ թող։ Նրանց տերտերներն են թաղում, — ասաց նրան Տոբին։



Ճանապարհը զառիվայրով վեր էր բարձրանում։ Ձին հևում էր, վոտները սայթաքում էին կակղած կավի մեջ։ Ծանր տարանտասը հազիվ էր առաջ շարժվում։

Բոլորն իջան և սկսեցին կառքի կողքից վոտով գնալ։

Դժվարությամբ հասան բլրի գագաթը։ Նրանց առաջ բացվեց հեռուն։ Դեպի ամեն կողմ ձգվող լեռնաշղթաները փակում էին հորիզոնը։ Խիտ անտառները ծածկում էին լեռնափեշերը՝ տեղ-տեղ ընդհատվելով խաղողի այգիներով և մարգագետիններով։ Այսուայնտեղ տարածվում էին դաշտերը։

Ճանապարհը նորից վայր էր իջնում և ծառերի մեջ կորչում։ Քիչ հեռվում ցցված բարձունքում նոր ծառերի հետևը յերևում էին խեցիի թեք կտուրներ։ Այնտեղ էր գտնվում Բերրի մեծ գյուղը, ուր դիմեցին մեր ճամփորդները։

Յերկու ժամ հետո տարանտասը խճուղիով դղրդոցով՝ գյուղն էր մտնում։ Լիգեռը վստահորեն փողոցից փողոց էր ծռվում՝ գնալով դեպի կենտրոնը։ Գյուղապետության առաջ ձին կանգնեցրեց։

— Տպրո՛ւ... Հասա՛նք։

Ձին լապտերից կապեցին։ Բոլոր չորս ճամփորդներն էլ տարանտասից իջան, դիմեցին դեպի տունը։ Լիգեռն առաջ էր գնում. գյուղապետը նրան ճանաչեց, ինչպես այդ շրջանում շատերն էին ճանաչում Մոնտորժի աղջկանը։

— Բարև՛, Պլյուշա՛ր հորեղբայր, — բարևեց Լիգեռը՝ տունը մտնելով։

Գյուղապետը, փռուգիական փեղույրով մի խստադեմ մարդ, հուզված՝ ձեռները շարժելով խոսում էր մի քանի գյուղացիների հետ։

— Մոնտերժի աղջի՞կը։ Ի՞նչ քամի յե քեզ բերել էստեղ, -- ասաց նա՝ դառնալով դեպի աղջիկը։

— Յես մենակ չեմ. ձեզ հետ գործ ունենք...

— Հետո, հետո... — ընդհատեց նրան գյուղապետը։ — Դարդս քո գործերը չի հիմի։ Լսում ես...

Դրսից զանգի ձայն լսվեց։ Զանգահարությունը գյուղացիներին հրապարակ էր ժողովում։

— Ժողովից հետո կգաս...

Լիգեռը դուրս գնաց։ Սրահում սպասում էին նրա ուղեկիցները։

— Ես ի՞նչ զանգահարություն է, ի՞նչ է պատահել, — դիմավորեցին նրան հարցով։

— Չգիտեմ։ Միայն Պլյուշարն ինձ ասաց, թե հիմի խոսելու ժամանակ չի։ Նա՛ պատվիրեց հետո գալ։

— Կսպասենք, էլ ճար չկա...

Բոլորը դուրս յեկան սրահից և կանգնեցին գյուղապետության սանդուղքի մոտ։

Հրապարակը ժողովրդով լցվում եր։ Տղամարդիկ, կանայք գործները թողած՝ անհանգստացած վազում եյին ամեն կողմից։ Առաջինները բարձրանում եյին սանդուղքը, սրահը և գոռում.

— Ի՞նչ կա, Պլյուշա՛ր, ժողովրդին ինչի՞ համար ես կանչում։

Գյուղապետը դուրս յեկավ։ Հրապարակում խաղաղություն տիրեց։

— Քաղաքացիներ, — սկսեց գյուղապետը, — դեռ մեր անտառներն ու ձորերը չեն մտել են անիծված նվաճողները։ Վոնց վոր յերևում է, հիմի մեր հերթն ել հասել։ Արքայական մուշկետյորների*) Վուզյեյում կանգնած գնդի հրամանատարից յես հենց նոր հրաման ստացա, վոր նրան ամբողջ գնդի համար պարեն և կեր մատակարարեմ։ Նա պահանջում է, վոր ամեն ինչ խկույն տանենք, և սպառնում է, վոր թնդանոթներով զինվորներ կուղարկի եստեղ։ Ի՞նչ եք կարծում, գյուղացինե՛ր, ի՞նչ անենք, ի՞նչ պատասխան տանք եդ եմիգրանտների թափթփուկին։

— Զտա՛լ։ Վոչինչ չտա՛լ։ Թող սովից սատկե՛ն, — լսվեցին առանձին ձայներ։

— Յես ել եմ կարծում, վոր պետք չի տալ, — յեռանդով արտասանեց գյուղապետը։ — Լավ է բոլորն այրենք, մեզ սնանկացնենք, քան թե թեկուզ մի բուռ ալյուր տանք... Հո չենք կարող մենք կերակրել ազգի թշնամիներին։ Ամե՞նքդ եք եդպես կարծում։ Ուրեմն յեկեք տեսնենք թե ի՞նչ անենք, յեթե իսկապես մեզ վրա զորքեր գան։

— Թողե՛ք յես մի խոսք ասեմ, քաղաքացիներ, — լսվեց ամբոխի միջից մի ձայն։ Սանդուղքի հրապարակը բարձրացավ մի հասակավոր գյուղացի։ Նրա խելոք խորամանկ աչքերն աղվեսի աչքերի պես սողացին ամբոխի վրայից։ Նա գլխարկը վերցրեց և խոսեց.

— Քաղաքացիներ, յես կարծում եմ եդպես չի կարելի միանգամից տաքացած գլխով եսպես մեծ ու լուրջ գործ կատարել։ Իսկ յեթե իսկապես մեր դեմ թնդանոթներ դուրս բերեն և սկսեն մեզ ռմբակոծե՞լ։ Ո՞ւր կթագնվենք։ Գերմանացիները հո մի քանի գյուղեր երեցին մեր շրջանում. իսկ եստեղ գերմանացիները չեն գրում մեզ, այլ ֆրանսիացիներ. թեկուզ է՛ եմիգրանտներ, բայց ելի ֆրանսիացիներ։ Միթե նրանց հետ չենք կարող համաձայնության գալ։ Մենք նրանց ամեն ինչ չենք տալ։ Այ ամեն տնտեսությունից մի պարկ ալյուր, մի պարկ վարսակ, մի քիչ խոտ, մի քանի գառ — ինչ՞ու չտալ։ Գուցե դրանով ել բավականանան։ Կտանք ու գյուղը կպահենք... Ո՞ւր է հիմի

*) Մուշկետյորները ֆրանսիական արքայական ամենաարիստոկրատ գունդն եյին կազմում։ Հեղափոխության ժամանակ այդ գունդը ցրվեց. նրա սպաները Ֆրանսիայից փախան է՛ արդեն եմիգրանտներ՝ նորից կազմեցին իրանց գունդը։ Վորպես և բոլոր եմիգրանտական գնդերում, մուշկետյորների գունդը 1792 թվականին կազմված եր բացառապես սպաներից։



մեր բանակը, քաղաքացիներ։ Մեզ ո՞վ կպաշտպանի։ Ո՛վ գիտե, գուցե հիմի Փարիզն ել է գերմանացիներին սպասում։ Հիմի նրա՛նք են տերը, նրա՛նցն է ուժը։ Ուժեղի հետ չի կարելի վիճել։

— Իսկ դու վորտե՞ղ ես տարել տաս բեռ։ Հացահատիկդ ո՞ւմ ես ծախել։ Անասուններդ ու՞ր ես տարել, — ամբոխի միջից իրար վրա թափվեցին այսպիսի հարցեր։

— Յես չեմ թագցնում, քաղաքացիներ. յես դուրս եմ տարել, թե՛ ծախել եմ, թե՛ թագցրել եմ... Ո՞վ է իր և իր տնտեսության թըշնամի։ Յես տնտեսաբար կարողացել եմ տեղավորել եմ բերքը։ Յես...

Բայց նա չկարողացավ վերջացնել։

— Քաղաքացիներ, — աղաղակեց Տոբին՝ վեր վազելով գյուղապետության սանդուղքը և խոսողին ընդհատելով։ — Բոլորը ստում է ես մարդն՝ ասելով, թե գերմանացիներն ու եմիգրանտներն են Ֆրանսիայի տերերը։ Մեր բանակն անվնաս է և ինքն է սպառնում գերմանացիներին ջարդով։ Փարիզը փրկված է։ Ազատությունը փրկված է։ Հանրապետությունն ապրե՛լու յե։ Գերմանացիները տառապում են հիվանդություններից, սովից ու ցրտից։ Նրանց միտքը միայն սա յե, թե ինչպես յետ փախչեն։ Դավաճան է նա, ով առաջարկում է կերակրել ազգի թշնամիներին և նրանց ուժ տալ հենց մեզ խփելու և կործանելու։

— Ես ի՞նչ տղա յե։ Եդ վո՞ր տեղից է եդպիսի լուրեր բերել, — աղմկեց ամբոխը։

— Յես բանակից եմ, — պատասխանեց Տոբին։ — Հենց նոր եմ յեկել Սեն-Մենուլդից, վորի մոտ մեր բանակը շրջապատել է գերմանացիներին։ Են մասին ձեզ գրում է ինքը գեներալ Դյումուրյեն, մեր բանակի հրամանատարը։ Յես ձեզ ցույց կտամ նրա նամակը։

— Դու եդ ճշմարի՞տ ես ասում, հ՞ը։ Եդ վո՞նց ես եստեղ հասել։ — Գյուղապետն ուրախությամբ բռնեց Տոբինին, բայց նա դուրս պրծավ և վազեց հեռվում կանգնեցրված տարանտասի մոտ։ Մոնտարժի հորաքույրն արդեն հանել եր թագցրված թռուցիկները։ Տոբին և Լիզետը նետվեցին ամբոխի մեջ բաժանելու թռուցիկները։

ԳԼՈՒԽ XXI.

## ՄԵՌՆԵԼ ԿԱՄ ՀԱՂԹԵԼ

Հրապարակում ամեն ինչ ալեկոծվեց։ Դատողությունները, ուրախ բացագանչությունները, գրգռված ձայների աղմուկը խլացնում եյին խոսել փորձողների ձայնը։

Վերջապես գյուղապետը կարողացավ լռեցնել

— Հիմա՞ ինչ եք կարծում, քաղաքացիներ: Քանի վոր ամեն ինչ չի կորել, քանի վոր ֆրանսիացիները դեռ ուժեղ են, ընդդիմանանք թալանչիներին: Հը՞: Մենք նրանց հաց չենք տա, անասուններ չենք տանի, իսկ թե կխծկվեն, ինքներս մեզ կպաշտպանենք: Օրենքը և հայրենասիրությունը մեզ թույլ չեն տալիս ուրիշ կերպ վարվել. ճշմարի՞տ է:

— Կորչե՛ն արիստոկրատները: Վոչինչ չե՛նք տա նրանց:

Ծերերը, յերիտասարդները, տղամարդիկ ու կանայք բռնված էին ընդհանուր վոգևորությամբ:

Մոնտարժի հորաքրոջը և Տոբիին հանգիստ չէին տալիս: Նրանց վրա այնքան հարցեր էին թափում, վոր նրանք պատասխանելու ժամանակ չէին ունենում:

Գյուղապետության պատշգամբը շրջապատված էր խիտ ողակով: Այնտեղ ինքը գյուղապետը, գյուղի պաշտոնյաները, ազգային գվարդիականների զորաբաժնի հրամանատար Գոդենը խորհրդակցում էին, թե ինչպես կազմակերպեն գյուղի պաշտպանության գործը:

Ազգային գվարդիականները բոլորը զինված էին. գյուղում նույնիսկ ավելորդ հրացաններ կային. վառոդի պաշար կար: Բայց մարդիկ քիչ էին: Համարում էին, հիշում էին բոլորին, բայց Գոդենն էլի գլուխն օրորում էր:

— Քիչ է, — ասում էր նա գյուղապետին: — Տես, հարկավո՞ր է պահակախմբեր դնել:

— Հարկավոր է:

— Ճանապարհները փչացնել հարկավո՞ր է:

— Հարկավոր է:

— Գյուղում մարդիկ հարկավո՞ր են:

— Հարկավոր են:

— Իսկ քանի՞ հոգի հաշվեցիր դու:

— Ազգային գվարդիականներ 114 հոգի, ծերեր էլ կհավաքենք 30 մարդ, այսպիսով բոլորը միասին 144 հոգի:

— Իսկ մե՞նք ինչացու յենք, — բացականչեց Լիզետը, վոր կանգնած էր հենց պատշգամբի մոտ և լսել էր ամբողջ խոսակցությունը: — Տվե՛ք կանանց հրացաններ, նիզակներ, կացիններ: Մենք էլ կկարողանանք ազգին ծառայել:

— Հրացաններ տվե՛ք, — ձայնակցեցին մի քանի կանայք ամբոխի միջից:

— Սրա՛նց տեսեք, էս ճարպիկներին, տղամարդկանց հետ մեկտեղ կռիվ գնալ են ուզում, — ծիծաղեց գյուղապետը:

— Բա ի՞նչ ես կարծում: — Յես հո քեզ նման յերկուսին յեղանով կբարձրացնեմ, — ճչաց մի կին:



— Դու վոչ թե ինձ, այլ արքայական մուշկետներին բարձրացրու, — կատակեց գյուղապետը:

— Ե՛, նրանց հոգին էլ կբարձրացնեմ. նրանց մեջ ինչ կա, հենց էն է, վոր յերևում են:

— Ի՞նչ ես կարծում, — հարցական ձևով նայեց գյուղապետը Գոդենին:

— Լավ, զինենք: Հավաքվեցե՛ք, կնանի՛ք, — պատասխանեց Գոդենը:

Այն կինը, վոր պատրաստվում էր հինգ արիստոկրատ միանգամից յեղան ծայրը բարձրացնել, և Լիզետը սկսեցին ժողովել բոլոր կանանց, վորոնք կարելի յեր տնից կորել:

Բայց կանանց հետ միասին էլ նորից մարդիկ բավական չէին գյուղը պաշտպանելու համար: Այն ժամանակ վորոշեցին սուրհանդակներ ուղարկել հարևան գյուղերը, ամեն տեղից տղամարդկանց օգնության կանչել: Սուրհանդակները նշանակվեցին և սլացան ամեն կողմ:

Հրապարակը դատարկվում էր: Ամեն տեղ սկսեցին պատրաստություններ տեսնել գյուղը պաշտպանելու: Ազգային գվարդիականները հրացաններ, վառոդ, գնդակներ էին բաժանում: Արդեն զինված մարդկանց խմբերը մոտենում էին գյուղապետությանը և Գոդենից հրաման ստանալով գնում էին աշխատանքի: Նույն օրը գյուղացիները պահակախմբեր կարգեցին ճանապարհներին հսկելու համար. վոմանք ծառերն էին կտրում, գլորում ճանապարհները և պատնեշներ էին դնում: Գյուղն ամեն կողմից շրջապատում էին խրամատներով:

Հենց գյուղի մեջ էլ աշխատանքը յեռում էր: Դարբնոցները թունդ վառվում էին. այնտեղ նիզակներ էին կռում և գնդակներ ձուլում: Յերեխաների հետ մնացած կանայք կորպիս (կտավի թելեր) էին հանում և քաթան էին պատռում վիրավորների վերքերը կապելու համար:

Մոնտարժի հորաքույրն աշխատում էր տնից տուն վազելով, օգնելով մերթ յերեխաներին պահելու, մերթ հրացանով գնացածների համար կերակուր յեփելու կամ կանանց սովորեցնելով վերքեր կապել:

Արդեն հետևյալ օրն սկսեցին Բերրիյում հարևան գյուղերից հավաքվել գյուղացիների խմբեր: Վոմանք գալիս էին հրացանով, վոմանք թրով. մնացածներին զինում էին նիզակներով:

Գյուղը զորաբանակ դարձավ: Շտաբը գյուղապետության մեջ էր. Չարունակ այնտեղ էին գալիս շրջագայությունից վերադարձող խմբեր, հարևան գյուղերն ուղարկված մարդիկ և նոր յեկողներ, գալիս էին կարգադրություններ ստանալու և զեկույցներ տալու:

Յերրորդ օրը չարագուշակ լուրեր հասան: Հարևան գյուղից գլխապատառ յեկած մի գյուղացի հաղորդեց, վոր Վուզյեյից դուրս են յեկել պատժողական արշավանքի արքայական մուշկետյորները, մի թեթև հեծելազոր, թնդանոթներով և պրուսացիների մի գումարտակ:

Հետևյալ առավոտ շրջակա անտառներում նկատեցին մուշկետյորների մոխրագույն շրջազգեստներ ճերմակ խաչերով և նրանց ճերմակ փետուրներով գլխարկներ: Մի քանի ժամից հետո Վուդյե տանող ճանապարհի կողմից լսվեցին առաջին հրաձգությունը: Այնտեղ երևացին առաջապահ հեծելախմբերը:

Թշնամու ավանգարդը երևացած վայրում կանգնած պահապաններին օգնելու համար Գոդենը լրացուցիչ մարդիկ ուղարկեց. երրորդ շարքի աջ թևում մեծերի հետ հավասար հրացանն ուսին քայլում էր Տոբին: Այդ զորամասն անցավ առաջին պատնեշը, գյուղը մտնելու տեղը — երկրորդ պատնեշը և մոտեցավ երրորդին, որտեղ թաքնված էին պահապանները:

— Երևացե՞լ են, — անհանգիստ հարցրեց զորամասի պետը:

— Երևացին, կրակեցին ու հեռացան, — պատասխանեցին նրան:

— Շա՞տ են:

— Աղմուկին մտիկ տված՝ շատ պիտի լինեին: Կասես ամբողջ գնդեր էին գալիս, գետինը դղրդում էր: Բայց մենք տեսանք երևի միայն առաջավոր հեծելախմբերը:

— Բայց նրանք մեր թիկունքը կանցնեն...

— Էնքան էլ չէ... երկու կողմից էլ մարդիկ ենք ուղարկել, նրանք հետևում են, չեն թողնի: Էնտեղ անտառը պետք է ճանաչել, էն էլ վո՞նց — հինգ մատի պես: Նրանք վո՞նց կարող են:

Շրջանում երկու օրվա թափառումներից հետո, էմիգրանտները մի տեղ ճարեցին, որը պաշտպանելն ամենից դժվար էր: Այստեղ անտառն այնքան էլ խիտ չէր. մոտիկ բլուրների մեկի վրայից երևում էր գյուղը, որ հնարավորություն էր տալիս ռմբակոծելու այն:

Շուտով թնդանոթաձգություն լսվեց: Անտառից, աջից, ձախից լսվում էին պայթոցներ. մարտկոցը ռմբակոծում էր: Բոլոր ուժերն ուղարկվել էին այդ կետը պաշտպանելու համար: Ճանապարհը կտրող պատնեշի և ծառերի բների հետևը թաքնվելով՝ գյուղացիներն սպասում էին թշնամուն: Նա մի քանի անգամ երևացել էր: Անտառում մերթ այստեղ, մերթ այնտեղ հրացանաձգություն էր սկսվում. հեծելազորը փորձում էր գյուղը մտնել առանց ճանապարհից օգտվելու, բայց համազարկերի հանդիպելով՝ ետ էր գնում: Գյուղացիներն ամուր էին իրանց տեղում. նրանք ականջ էին դնում ամենափոքր շրխկշրխկոցին և իսկույն նետվում էին այնտեղ, որտեղից գալիս էր կոտրատվող ճյուղերի ձայն և սմբակների մեղմ տրոփյուն:

Բայց գյուղը ռմբակոծությունից փրկելու համար գյուղացիներն անզոր էին: Էմիգրանտական մարտկոցը ռմբակոծելու տեղը գտել էր փորձնական թնդանոթաձգությամբ և այնտեղից էր խփում: Կանայք և երեխաները թաքնվեցին նկուղներում: Ռումբ ռումբի հետևից էր



թափվում: Նրանք պայթում էին կամ բակերում՝ կործանելով սյուները և խեղանդամ դարձնելով անասուններին, կամ փողոցներում, կամ դատարկ տարածություններում և բանջարանոցներում, կամ տներում՝ շուրջը քարուքանդ անելով ամեն ինչ: Պայթյունների արանքում ամբողջ գյուղում տարածվում էր կոտրվող ապակիների և կտուրներից թափվող խեցիների չրխկոց, քանդվող փայտե շենքերի, գերանների, ձեղունակալների թրխկոց:

Հետևյալ օրը հրաձգությունը և գրոհը վերսկսվեց: Գյուղը դիմանում էր:

Էմիգրանտները տեսնելով գյուղը ռմբակոծելու անօգուտ լինելը — ոչ խոշոր հրդեհ էր առաջացել, ոչ էլ իրարանցում — փոխեցին իրանց գործելակերպը: Այժմ նրանք իրանց բոլոր ուժերը դարձրին դեպի գյուղին մոտենալու համար տեղերը:

Ճանապարհի պատնեշի դիմաց երկու թնդանոթ դրին. ուղիղ խըփում էին դեպի ճակատ՝ պատնեշի հետևի ճանապարհը և անտառը կարտեչ թափում: Անտառում բզզալ սկսեցին գնդակները. կարկուտի պես էին թափվում նրանք. ծառերից թափվում էին չոր ճյուղերը. ծառերի բների խրվող գնդակների բութ և կարճատև ձայնն ամեն կողմից լսվում էր:

Գյուղացիները ծառերի հետևում թաքնված՝ չէին թողնում դիրքերը:

Վերջապես էմիգրանտները բաց գրոհի դիմեցին: Նրանք համարյա երեք անգամ ավելի էին: Տաս-տաս մարդ խմբեր կազմած՝ նրանք ավելի ու ավելի էին մոտենում: Գրոհն սկսվել էր միաժամանակ ամեն կողմից. մարտկոցը շարունակում էր ռմբակոծել ճանապարհը:

Ճակատամարտը երկար չշարունակվեց: Միաժամանակ աջ թևում հաղթական աղաղակներ լսվեցին. էմիգրանտները գյուղի հետևում անցել և գյուղացիներին քշում էին դեպի ճանապարհը:

Գյուղացիները պաշտպանում էին ամեն մի թիզ հող. նրանք իրանց տեղերից չէին հեռանում այնքան ժամանակ, մինչև որ իր թվով գերակշռող հակառակորդը դուրս էր գալիս իրանց առաջ: Կռիվը տեղի էր ունենում անտառում, ամեն մի պատնեշի մոտ, ամեն մի ծառախմբի մոտ և վերջապես փոխադրվեց գյուղը: Տների ցցված պատերի, ցանկապատերի հետևում թաքնվելով՝ գյուղացիները շարունակում էին պաշտպանվել: Բայց նրանց շարքերը նոսրանում էին. էմիգրանտները մաս-մաս էին անում նրանց ուժերը: Կռիվը տեղի էր ունենում միաժամանակ թե՛ գյուղում, թե՛ անտառում:

Տոբին նահանջում էր ամբողջ ժամանակ խիտ խմբով պահպանված ազգային գվարդիականների հետ: Նրանք 20 հոգի էին. նրանց հետ էին նահանջում և՛ գյուղապետը, և՛ Գոդենը: Նրանք հեռանում էին ավելի ու ավելի գյուղի խորքը:

Փրկվելու վոչ մի հնարավորություն չկար։ Թշնամին ամեն տեղ էր. նա գրավել էր կողքի բոլոր փողոցները և անտառը տանող ճանապարհը կտրել։

— Մտնել գյուղապետության շենքը։ Հետևի՛ց, — գոչեց Գոդենը։

Զորամասը բռնեց գյուղապետության շենքը։ Քիչ հետո դա մնաց միակ կետը, վորտեղ դեռ կռիվ էր տեղի ունենում։ Բայց այստեղ էլ դիմադրությունը յերկար չտևեց։ Տունը շրջապատվեց ամեն կողմից. դարպասը, դռները կոտրատվեցին և եմիգրանտները ներս խուժեցին։

ԳԼՈՒԽ XXII.

## ՄՈՒՇԿԵՏՅՈՐՆԵՐԻ ՁԵՌՔՈՒՄ ԳԵՐԻ

— Վերջ, — շշնջաց Տոբին։ Մի անախորժ թուլություն թափվեց ամբողջ մարմնի մեջ։ Բռունցքի մի հարված գլորեց նրան։ Տոբին ընկավ և գիտակցությունը կորցրեց։

Ուշքի գալով՝ նա իր շուրջը հատակի վրա ընկած տեսավ նրանց, վորոնք ամբողջ ժամանակ իր հետ էին։ Անկյունից տնքոց էր լսվում. այնտեղ պառկած էր մի վիրավոր գյուղացի։ Նրա առաջ ծունկ էր չոքել Գոդենը և պատռում էր իր շապիկը, վորպեսզի վերքը կապի։

Ամենքն էլ առանց բացառության ջարդված էին մորակներով, շամփուրներով։ Ատամները սեղմած՝ նրանք լուռ էին։

Բակից լսվեցին աղաղակներ, հայհոյանք և ծեծվողների տնքոցներ։

Պատի հետևը խմթաններ էին զնգում. այնտեղից լսվում էին բարձր ձայներ, ծիծաղ, յերբեմն հրամաններ։

— Պարոննե՛ր, համեցե՛ք սեղանի մոտ, — աղմուկի մեջ առանձնապես լսվեց մի ձայն։

Ուրախական բացագանչություններ թափվեցին.

— Հա՛ց։ Խոզի ապխտե՛ր։ Ճա՛րպ։ Գինի՛։ Վիվա՛տ։ Ես հո գինի յե՛լ կա եստեղ։

Գյուղապետության շենքում տեղավորված մուշկետյորները հարձակվեցին ուտելեղենի վրա։ Խոսակցություններն ավելի բարձրաձայն հուզված էին դառնում, ծիծաղն ավելի քրքջալի. զրնգում էին բաժակները, չրխկում ափսեները։

Ապա մեկը գոռաց.

— Մենք մոռացել ենք լուսային եֆեկտները։ „Պարոննե՛ր, այսպիսի ընթրիքը, յես կարծում եմ, արժանի յե մի փոքր հրավառության։

— Ճի՛շտ է։ Ճիշտ է, — ձայնակցեցին մյուսները։

— Յես կարծում եմ, վոր բակի թափթփուկներից մի քանի հոգի չեն հրաժարվի այդ համեստ բավականությունը պատճառել մեզ։ Պարոն դը-Տրեն, դուք թույլ կտաք ինձ վերցնել մի տաս հոգի ծղոտ բերելու համար։



— Խնդրեմ, կոմս, այդ բոլոր սրիկաներին արեք՝ ինչ սիրտներդ է ուզում։

Գերիների սրտերը մի ակնթարթ բաբախելուց դադարեց. նրանք լսեցին խմթանների զնգոց, ապա դուռը թրխկաց, և բակից լսվեց աղաղակներ և վոտների դոփյուն։

Նա, վորին իր հետ կոնծողներն անվանում էին կոմս, մորակներով դուրս քշեց բակից մի տաս մարդ և պահապաններով ուղարկեց մոտիկ խոտանոցը ծղոտի։ Նրա հրամանով կալանավորները ծղոտի խուրձերը շարեցին հրապարակում տնկած ազատության ծառի շուրջը։

— Վառի՛ր, — հրամայեց կոմսը։

Վոչվոք տեղից չշարժվեց։ Կոմսը հանեց ատրճանակը և լեզվակը քաշեց։

— Վառի՛ր, — նորից գոռաց նա։

Վերջապես գյուղացիներից մեկն սկսեց շտապ-շտապ բան փնտռել իր զգեստում. Նրա դողացող ձեռները վոչ մի կերպ չէին կարողանում գրպանը ճարել։ Վերջապես նա հանեց կայծքար և աբեթ, կայծ դուրս բերավ և կրակ անելով՝ մոտեցավ ծղոտին։

— Շո՛ւտ, — հրամայեց կոմսը։

Հրդեհողը վազեց ծառի շուրջն՝ ամեն կողմից վառելով ծղոտի խուրձերը։ Բոցը բարձրացավ՝ լուսով վողողելով ամբողջ հրապարակը. կրակն ընդգրկեց ծառը և դրոշակները։ Ազատության ծառը վառվում էր. երակի լեզուները բարձրանում էին վեր ու վեր. ծառի ծայրին դրված փռուգիական փեղույրի կարմիր գույնը դարձավ բոսորային։
Ապա ամեն ինչ ծածկվեց կրակի մեջ։

— Վիվա՛տ, վիվա՛տ, — գոռում էին մուշկետյորները գյուղապետության սենյակից նայելով, թե ինչպես է վառվում ազատության ծառը։

Խնջույքը շարունակվում էր։ Կոմսին ծափահարություններով դիմավորեցին։

— Պարոննե՛ր, յես այս հրավառությունը խիստ համեստ եմ համարում։ Բայց մեզ կվարձատրենք Փարիզում։ Դեպի Փարի՛զ — գոչեց նա։

— Դեպի Փարի՛զ։ Կորչե՛ն սանկյուլոտները, — արձագանքեցին մյուսները։

Յեվ աղմուկները խեղդվեցին յերգի տակ.

Հառա՛ջ, պանդոկի՛ զավակներ,
Հասել է կոնծելու ժամը.
Ճարպ յերշիկը ձեզ նվեր,
Սպասում է մեզ անուշ համը։

Տըղերք, մոտեցեք սեղանին.
Շիշեր կանգնած ահա շար-շար.
Դեհ, կեր, խըմի՛ր, և թող գինին
Վառողի մեր լյարդը վարար։

Տոբին խոսքերը չեր լսում, այլ միայն յեղանակը. նույն խրոխտ կոչական յեղանակը, վորով մարսելցիները Փարիզ յեկան, վորով նրանք գնում եյին Տուիլըրին վերցնելու, վորի մեջ եր պարփակված ազատ ժողովրդի ամբողջ խանդավառությունը։

Մուշկետյորները յերգում եյին.

Խոհանոցից բուրում անուշ
Աքար, հընդկահավ ու վոչխար։
Կերդվեմ, հիմար ե նա, ապուշ,
Ով նրանց նայի աչքով ողխմար։

Այժմ ամեն մի բառը պարզ եր հնչում։ Տոբիին թվաց, թե մորթակահարում են իր դեմքը։ Նա ականջները փակեց, վոր յերգը չլսի, աչքերը փակեց, վոր բոսորագույն լույսը չտեսնի լուսամուտի վրա։ Բայց փրկվելու ճար չկար. սենյակը լուսով վողողված եր, աչքի առաջ լողում եյին կարմիր շրջանակներ, իսկ հարբածների մարսելյեզի բառերը մըտնում եյին ականջները։

Յերգը հանկարծ ընդհատվեց։ Տոբին ականջները բաց արավ։ Նա մի ձայն լսեց.

— Հա՛, պարո՛ն մատակարար։ Եստեղ համեցեք։ Ինչո՞ւ մեզ եսպիսի քացախ են տալիս խմելու։ Մեթե՞ գյուղում չեր կարելի իսկական գինի ճարել։

— Պարոն սպաներն ինձնից դանգատավոր են, — պատասխանեց մյուս ձայնը։ — Յես ուրախությամբ ձեզ բավականություն կպատճառեյի, բայց ազնվականի ազնիվ խոսք...

— Ձեր ազնվականությունը դե՛ն գցեցեք, — ընդհատեց մեկը խոսողին։

— Իմ ազնվականությունն ենքան եւ հին չե, ինչպես պարոն դը-Տրեննինը... բայց յես բավականաչափ ապացուցել եմ իմ հավատարմությունը միապետությանը...

— Այո, այո, — գիջողաբար համաձայնեց առաջինը։

— Ցեվ յես յերդվում եմ պատվովս, վոր ես անիծած գյուղում մի կարգին բան ճարել չի կարելի։ Ասենք, թեթև հեծելազորի քթի տակ մի փոքրիկ տակառ ընկավ ձեռս. կարելի յե դա ձեր ճաշակովը լինի։ Խնդրեմ փորձեք, պարոններ։

Տոբին գլուխը տրաքացնում եր հիշելու համար, թե վորտեղից է լսել այդ ձայնը։ Նրա միտն եր գալիս Փարիզը, ինչ-վոր մի ժողով, բայց հիշողությունը վեր եր հանում միայն մի քանի աղոտ բեկորներ։



Ցեվ այդ ձայնի մեջ եվ նրա հիշողության մեջ ծագածից օտար մի ինչ-վոր բան կար. այն ժամանակ այդ բաս ձայնը հնչում եր կտրուկ և հրամայական, իսկ հիմա քնքույշ ծորում եր, կարծես քծնելով մեկի առաջ։

Նոր գինին ըստ յերևույթին նույնպես դուր չեկավ պայծառափայլ քեֆ անողներին։

— Բը՜ռռռ... քացախ է, — դժգոհ կանչեց նրանցից մեկը։

— Ճար չկա, — նորից լսվեց մատակարարի ձայնը։ — Բայց Փարիզում ինձ մոտ ձեզ համար ինչպիսի՜ գինի կա կղզիներից բերած, վոր մատնիրդ հետը կուլ կգնան...

— Հա՛, ճիշտ վոր. դուք գիտե՞ք, պարո՛ն մատակարար, վոր պետք է Փարիզ գնանք։ Իշխանը հույս ունի, վոր նրա վստահությունը կարդարացնենք և հիմիկվա գնալն անցյալ անգամվանից ավելի հաջող կլինի։

— Դուք անարդար եք իմ վերաբերմամբ, պարո՛ն դը-Տրեն, — բողոքեց մատակարարը. — ազնվակ... (նա անշուշտ ուզում եր ազնվականի ազնիվ խոսք տալ, բայց քաշվեց) ազնիվ խոսք, յես արել եմ ավելի, քան կարելի յեր։ Իմ մեղքը չի, վոր են անիծված խանութպաններն ու սանկյուլոտներն իրար հետ վիճելով՝ ելի կարողանում են միհանալ, հենց վոր բանը հասնում է թագավորին ու արիստոկրատիային։ Ա՜խ, եդ վախկոտ բուրժուանե՜րը։ Յես ժողովումն եյի և խնդրագիր տվի իմ սեփականությունը պաշտպանելու համար, ենպիսի պաշտպանություն, վորի մասին մտքում յերազում է ամեն մի խանութպան, ամեն մի բուրժուա, բայց չի համարձակվում բարձրաձայն խոսել եդ մասին։ Ցեվ ի՞նչ եք կարծում. նրանք ինձ պաշտպանեցի՞ն։ Վո՛նց չե... վոչ մի ձեն չլսվեց իմ օգտին։ Նրանք չեյին համարձակվում, գիտե՞ք... Միայն իրանց յերիտասարդությունը գաղութներում անցկացրած նեգոցիանտներն ունեին հաստատուն բնավորություն ու քաջություն, իսկ եդ խանութպաններին ազնիվ հատկություններն անմատչելի յեն։ Ցեվ ինձ վիճակվեց լսել, թե «գուլբայավաճառներն» ինչպես եյին դահլիճից գոռում. «լապտերից կախե՜լ»։ Ցեվ իսկապես քիչ մնաց ինձ կախեին լապտերից։ Ենտեղ մի լակոտ կար... Ա՜խ, թե մի կտեսնեյի նրա՜ն... Յերկու անգամ քիչ մնաց ինձ կախել տար. յերրորդ անգամ հանդիպելուց յես նրա վիզը պիտի վոլորեմ։

Տոբին վոտքի թռավ, կարծես նրան հարվածեց ելեքտրական հոսանքը։ Մի ակնթարթում նրա հիշողության մեջ յերևան յեկավ Ազգային ժողովի նեգոցիանտի կերպարանքը, Ցերտեյի շորը փոխած ագիտատոր — պարոն Եյլբան։ Տոբին պատրաստ եր հարձակվելու իր թշնամու վրա. ձեռքն ուզում եր խփել դուռը, կոտրել, ճանկել նեգոցիանտին։ Բայց պարանը, վորով ձեռները կապած եյին հետևից, մի-

այն ավելի ցավագին խրվեց մարմնի մեջ: Իր անզորությունից ընկճված՝ Տոբին պարկի պես գլորվեց հատակին և հեկեկաց:

— Ի՞նչ յեղավ քեզ, փոքրի՛կ: Մի՛ լար, պետք չի,— կարեկցաբար խոսեց նրա հարևանը:

Բայց Տոբին ուժ չուներ պատմելու նրան իր տանջանքների մասին: Մուշկետյորները շարունակում էին քեֆը:

Առավոտյան բոլոր կալանավորներին քշեցին բակը: Այստեղ էին և գյուղապետը, և Գոդենը, և բոլորը, վորոնց հետ այդ օրերը ծանոթացել էր Տոբին: Բայց ինչպե՜ս էին փոխվել նրանք: Բոլորը ծեծված և այլանդակված էին, շատերի շորերը պատռված էին, վրան մակարդված արյուն, շատերը վիրավոր էին, դեմքներին արյունակալած տեղեր: Ծանր լռություն էր տիրում:

Փայլուն պահակախումբը, վոր համարյա ամբողջովին փարթամ հագնված սպաներից էր բաղկացած, հրացանի կոթերի և թրերի հարվածներով կալանավորներին չորս-չորս շարեց: Բռնվածներից վոչվոք չհարցրեց, թե իրանց ուր են տանում,— յուրաքանչյուրը գիտեր.— գնդակահարելու:

Բակով անցուդարձ էին անում սպաները՝ կամ տուն մտնելով, կամ փողոց դուրս գալով: Կալանավորների վրա վոչվոք ուշադրություն չէր դարձնում:

Խմբի ներսում կանգնած Տոբին հանկարծ լսեց գիշերն իրան ծանոթ ձայնը. մեկի հետ խոսելով՝ բակը մտավ Եյլրան: Նա անճանաչելի յեր դարձել: Սերտուկի և կոկարդավոր գլխարկի փոխարեն նա հագել էր մուշկետյորի համազգեստ մոխրագույն պատմուճանով, վորի վրա արծաթով կարված էր խաչ:

— Եդ ո՞ւր եք տանում էս խուժանին,— լսեցին կալանավորները նրա հնչեղ ձայնը:

— Վուպյե:

— Ինչո՞ւ:

— Հրամանն եդպես է:

— Արժե՞ գլուխ ցավեցնել էս խուժանի համար...— պերճախոս շարժումով ցույց տվավ Եյլրան դեպի խումբը: Նա խոսքը չվերջացրեց և աչքերը հառած նայեց խմբի մեջ մեկի վրա: Հա՛, իհարկե. նա ճանաչեց Տոբիին: Շեկ դանդուրները և խոշոր կապույտ աչքերը յերևի լավ էին նրա միտը գալիս:

Նրա դեմքը կարմրատակեց:

— Հա՛, ա՛յ թե դու վորտե՞ղ ես...— խուպոտ ձայնով ասաց նա:

Կալանավորների շարքերը դես-դեն գցելով՝ Եյլրան հասավ Տոբիին:

— Ա՛յ թե վորտեղ եմ յես քեզ պատահում: Բայց սա, յերդվում եմ, վերջին հանդիպումը կլինի:



Նա ճանկեց Տոբիի օձիքից և շարքերից դուրս քաշեց:

Ինչպես այն ժամանակ, Մանեժի մոտ, յերբ Եյլրան փայտը ձեռին մոտենում էր Տոբիին, յերեխան տեղնուտեղը սառած մնաց: Բայց այս անգամ նրա ձեռներն իսկ կապկպած էին:

— Հետևի՛ր ինձ, անպիտա՛ն,— հրամայեց Եյլրան և Տոբիին քարշ տվավ իր հետևից:

Բայց դեռ յերկու քայլ անգամ չէր արել, վոր բակում յերևաց մի պրուսացի սպա:

— Ո՞ւր եք քարշ տալիս յերեխային,— խստությամբ հարցրեց նա Եյլրային:

— Սա կատաղի սանկյուլոտ է, կապիտա՛ն: Կարիք չկա սրան քաշ տալ տանել հետներս, յես սրան ճանաչում եմ ու սրա դատաստանը յես կանեմ:

— Բա՛ց թողեք յերեխային,— սառնորեն հրամայեց կապիտանը:

— Բայց, պարո՛ն կապիտան...

— Խնդրեմ յենթարկվել: Վուպյեյում և շրջանում ինձ է հատկացված իշխանությունը: Իսկ ձեզ խնդրում եմ կարգադրություններ չանել, յես չեմ թույլ տա, վոր ամեն մեկն իր քեֆն ուզածն անի:

Եյլրայի դեմքը բարկությունից ծռվեց: Բայց և այնպես նա ստիպված յեղավ ձեռքը բանալ և Տոբիին բաց թողնել. էմիգրանտների գնդում նա լոկ մատակարար էր և չէր կարող համարձակվել հակաճառել պրուսական կապիտանին:

Յերեխան թեթև շունչ քաշեց, յերբ վերադարձավ կալանավորների շարքերը, նա պատրաստ էր մեռնելու (ուրիշ բան նա չէր սպասում), միայն թե վո՛չ այդ Եյլրայի ձեռքից:

Դարպասը լայն բացվեց: Կալանավորներին ուզում էին դուրս տանել, բայց ստիպված յեղան սպասել, մինչև վոր անցնի յերկար քարվանը: Էմիգրանտները գյուղից հեռանալիս իրանց հետ տանում էին այն ամենը, ինչ վոր կարող էին: Հենց գյուղացիների ձիերը լծած գյուղացիական սայլերը բեռնել էին հատիկով, խոտով, գինով լի տակառներով և այն ամենով, ինչ վոր քիչ-շատ արժեք ուներ և գտնվել էր գյուղում. հեռվում լսվում էր քշվող հոտերի բառաչը:

Հրապարակը լցված էր, էմիգրանտներն այստեղ էին քշել բոլոր բնակիչներին: Տղամարդիկ և կանայք կանգնել էին իրանց յետ քշող պրուսացիների յերկշարքի հետևում. նրանք առաջ էին մղվում, վորպեսզի նորից տեսնեն իրանց մերձավորներին, վորոնց դեպի մահ էին տանում:

Տոբին աչքերով զուր էր փնտռում Մոնտարժի հորաքրոջը: Նա վոչ մի տեղ չէր յերևում: Այն ժամանակ Տոբին ամբողջ ձայնով յերգեց:

«Հառա՛ջ, վորդիք հայրենիքի»:

Ժողովուրդն ուզեց ձայնակցել, բայց զինվորները հարձակվեցին երգողների վրա, և երգը լռեց։ Հարվածների կարկուտ թափվեց կալանավորների վրա։ Հանկարծ հնչեց մի սուր աղաղակ.

— Տոբի՜։ Ի՛մ Տոբի՜։

Հրապարակի հակառակ կողմում Մոնտարժի հորաքույրը լսել էր Տոբիի ձայնը, երբ սա երգեց մարսելյեզը։ Նա սլացել էր դեպի Տոբին։ Զինվորները նրան ետ շպրտեցին։ Նա թպրտում էր նրանց ձեռներում և կատաղությամբ կծում էր, ճանկռտում...

Բայց և այնպես նա առաջ եկավ։

Զինվորների ձեռքեց դուրս պրծնելով՝ նա նետվեց կալանավորների հեռացող խմբի հետևից։ Նրա ալեոր մազերը բացվել էին, գդակը պատռտվել էր, քթից արյուն էր հոսում։

— Ի՛մ Տոբի՜,— հեկեկում էր նա։— Ի՛նձ տվեք Տոբիիս։

— Ե՛տ գնա,— լսվեց մի խիստ գոչյուն։

Պառավը չէր լսում։

Մի սպա բարձրացրեց ատրճանակը և արձակեց։

Մոնտարժի հորաքույրը հառաչանքով գետին գլորվեց։ Պառավի հետևից եկած Լիզետը կռացավ նրա վրա. Մոնտարժի հորաքույրը մեռած էր։

ԳԼՈՒԽ XXIII

## ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Խումբը դուրս եկավ ճանապարհը։ Առջևից գնում էին բեռները, նրանց հետևից զորքերը և վերջապես ուժեղ հսկողության տակ ձեռքները միջքներին կապած կալանավորները։

— Հրդեհ,— գոչեց հանկարծ կալանավորներից մեկը ետ նայելով։

Հիրավի գյուղի կողմից սև ծխի քուլաներ էին բարձրանում։ Էմիգրանտները ջարդով ու թալանով չբավականանալով՝ իրանց գնալուց գյուղն էլ հրդեհել էին։

Երբ կալանավորները մոտենում էին Վուդյեյին, նրանց հետևից հասավ թեթև հեծելազորի մի եսկադրոն. նա մնացել էր գյուղում նրա համար, որ բնակիչներին չթողնի հրդեհը հանգցնելու։ Էմիգրանտները աշնանը մի քանի հարյուր հոգի թողնում էին ցրտում առանց ծածկի, անձրևի ու քամու տակ։

Կալանավորները ծանրացած սրտով մտան Վուդյե և մոտեցան քաղաքի ծայրում բարձր տեղ շինված մի փոքր քարաշեն տան, որ գերմանացիները բանտ էին դարձրել։



Հարցափորձը կարճ էր։ Դա կատարում էր պրուսական մի սպա թարգմանչի միջոցով.— անունն ի՞նչ է. ո՞ր գյուղից է. քանի՞ տարեկան է. եղե՞լ է արդյոք շրջանում Յակոբենների ակումբ, և հարցափորձի ենթարկվողն անգամ է եղել այդ ակումբին, թե՞ ոչ։

Կալանավորներն իրանց պահում էին քաջաբար։ Սպան շտապում էր՝ հարցափորձը երբ արդեն վերջանալու վրա էր, աղմկելով սենյակը մտան մի քանի հոգի մուշկետյորներ՝ տեսնելու, թե ինչպե՞ս են հարցափորձի ենթարկում իրանց գերիներին. դրանց մեջ էր նաև Նյլբան։ Նա սուր սուր նայեց կալանավորներին, ապա մոտեցավ սպային և մի բան ասաց նրան. Տոբին տեսավ, որ Նյլբան մատով իրան է ցույց տալիս։ Սպան դժգոհ մրթմրթաց։ Հետո երբ նա վերջացրեց հարցափորձը և վեր կացավ, Նյլբան նորից վազեց նրա մոտ, բայց սպան այլևս նրան չուզեց լսել և մոտից անցավ գնաց։

Կալանավորներին ներս քշեցին բանտասենյակ։ Դա մի ընդարձակ, փոս նկուղ էր քարե հատակով. առաստաղին բոլորովին մոտ փոքրիկ լուսամուտից միքիչ լույս էր թափանցում։ Ոչ մահճակալ կար, ոչ սեղան, միայն լերկ, խոնավ, բորբոսնած պատերն էին։

Կողպեքը չրխկաց։ Կալանավորները մնացին մենակ։ Նրանք միանգամայն ջարդված էին դժվարին ճամփորդությունից և վերջին օրերի տանջանքներից. նրանց նեղացնում էին ցուրտն ու քաղցը։ Իրար կիպ կպչելով, որ գոնե միքիչ տաքանան, նրանք պառկեցին սառը հատակին։

Տոբին պառկեց գյուղապետի և մի մեծ միրուքավոր գյուղացու արանքում և աչքերը փակեց։ Նկուղի խոնավությունից և քաղցից նրա գլուխը պտտվում էր և սիրտը թեթևակի խառնվում։ Նրան տիրեց մի անզգայություն, կատարյալ անտարբերություն — դատարկություն։

Ցերեկոյան բանտարկյալներին կերակրեցին. նրանց համար կաթսայի մեջ բերին մի պղտոր հեղուկ, որից Տոբիի սիրտն ավելի խառնեց. հաց չտվին. իրանց համար էին պահել։

Այդպես անցավ ցերեկը, գիշերը... Կալանավորների հետևից մարդ չէր գալիս։ Հետևյալ օրը, երբ արևի ճառագայթները գունավորել էին պատերի բորբոսը պղտոր վարդագույնով, ցանցի միջով սենյակն ընկավ մի փոքրիկ քար։ Բոլորը նետվեցին դեպի քարը. նրա վրա մի թուղթ էր կապած։ Գյուղապետը հուզմունքից դողացող ձեռներով բացավ թուղթը և կարդաց. «Մի՛ հուսահատվեք»։

— Սա ո՞վ է գրել,— աշխատում էին գուշակել բանտարկյալները.— ո՞վ կարող էր նրանց լուր բերել ազատության մասին։

— Ինձ բարձրացրեք լուսամուտի մոտ,— առաջարկեց Տոբին։— Ես դուրս կնայեմ։

Տասնյակ ձեռներ մեկնվեցին դեպի նա և բարձրացրին լուսամուտի մոտ։ Նա մեկի ուսերին կանգնեց և կպավ ցանցին։ Ցերեկոյան աղոտ

լուսով նա տեսավ շավղով արագ հեռացող մի կանացի կերպարանք։ Տորին ուշի ուշով նայեց, բայց նա իրան անծանոթ թվաց։

— Դա ո՞վ էր, — շշնջում էին ցածում կանգնածները։

— Մի կին է... — պատասխանեց Տորին։

Վոչվոք չկարողացավ հասկանալ, թե վորտեղից, վոր կողմից կարող էր ոգնություն գալ իրանց։ Ֆրանսիական բանակի՞ց։ Նրան կարելի չէր սպասել, բայց նրա մոտենալու մասին լուր չկար։ Գյուղացիների՞ց։ Միթե նրանք կարող էին բացեիբաց գրոհի դուրս գալ ամրացված քաղաքի վրա։ Մնում էր մի բան — բարեկամ մարդիկ նրանց փախցնելու մասին էին հոգում, բայց դա յել հավանական չէր, պրուսացիներից ամուր պահպանվող բանտից փախչելու վոչ մի հնարավորություն չկար։

Գիշերը վոչ վոք չքնեց։ Ականջ էին դնում ամեն մի շշուկի. վորևե տեղից լսվող ամենափոքր աղմուկից նրանց սրտերն սկսում էին հուզված բաբախել։

Գիշերվա միջին շատ հեռվից մի կրակոցի ձայն լսվեց։ Բանտարկյալները բոլորը միանգամից վեր թռան։ Ապա համադարկ...

Մի ակնթարթում բանտարկյալները լուսամուտի տակ էին։ Մի քանի հոգի ընկերների մեջքներով վեր բարձրացան և դուրս նայեցին։

Քաղաքում շփոթություն կար։ Լուսամուտից յերևում էին մթության մեջ արագ տարվող ջահեր. լսվեց սմբակների դոփյուն, թմբուկների թնդյուն, ռազմական փողերի հնչյուն, փոխադրվող ծանրությունների դղրդյուն։

Թնդանոթը գոռաց։ Զարկերը ճռճռացին։

Քաղաքի մյուս ծայրից դուրս կռիվ էր տեղի ունենում։

Կալանավորները շունչները կարել էին լուսամուտի մոտ։ Նրանք չէին համարձակվում իրանց հավատալ։ Չէ՞ վոր այդ կռիվը նշանակում էր, թե մոտեցել են ֆրանսիական գնդերը։ Նշանակում է գերմանացիները նահանջե՛լ են. նշանակում է — հաղթությո՛ւն։

Հեռավոր մարտի աղմուկն ավելի ու ավելի յեր սաստկանում։

Տորին ցանցից չէր հեռանում։ Նա ականջ էր դնում հեռվից յեկող ձայներին։

— Սո՛ւս, — շշնջաց նա, — թողեք լսենք, տեսնենք, պահապանը մո՞տ է գալիս, թե՞ չէ։

Բոլորը շունչները պահեցին։ Տորին ականջ էր դնում, բայց թնդանոթների գոռոցը չէր թողնում բան լսել։ Այդ ժամանակ ամպերի տակից դուրս լողաց լուսինը։ Նրա լույսով Տորին տեսավ, վոր լուսամուտի աջ կողմը սովորական տեղում պահապաններ չկային։

— Կանչե՛մ, — շշունջով խորհրդակցեց Տորին ընկերների հետ։



— Կանչի՛ր...

— Ե՛հե՛յ, հե՛յ... — գոռաց Տորին։

Վոչ մի պատասխան։ Չորս կողմը մարդ չկար։

— Ընկերնե՛ր, պահապաններին վերցրե՛լ են. — արտասովոր ձայնով գոչեց Տորին։ — Դուռը կոտրեցե՛ք։

Բայց ծանր, շղթայված դուռը չէր կոտրվում։ Այն ժամանակ ընկան ցանցի վրա։ Բայց դա էլ չափազանց պինդ էր ամրացված պատում։ Մոտալուտ փրկության ուրախությունն ույժ տվավ բանտարկյալներին։ Յերկար ջանքերից հետո դուռն սկսեց շարժվել, ճռճռալ, ողակները ճռնչացին, և վերջապես բարձր աղմուկով դուռը դուրս պրծավ ողակներից։

Դռան հետևը միջանցք կար. այնտեղ նորից դուռ էր։ Անե՛ծք, նոր խոչնդո՛տ։

Բայց այդ դուռը շուտով բացվեց։ Նրա հետևը սանդուղք էր դեպի վեր, ապա նորից մի միջանց, գրասենյակը... Վոչ մի տեղ մարդ չկար։

Դեպի բակը տանող դուռը բաց էր։ Ուռա՜։

Սիրտները թեթևացած շունչ քաշեցին։ Նրանք փախչում էին անխուսափելի մահից։

Բակում նրանք կանգ առան՝ չիմանալով ինչ անել, ո՞ւր փախչել։

Հրաձգությունը հեռվում ավելի յեր սաստկանում. մի տեղ անշուշտ լուրջ ճակատամարտ էր տեղի ունենում։

Արևելքում յերկինքը լուսացավ, առավոտյան մառախլապատ լույսը տարածվում էր բակում։ Մութ սենյակից հետո դա կուրացուցիչ էր թվում։

— Գնանք էնտե՛ղ... — առաջարկեց Պլյուշարը՝ ցույց տալով այն կողմը, վորտեղից հրաձգության ձայնն էր գալիս։

— Դատարկ ձեռնեռո՞վ, — առարկեց մեկը։

— Մենք հենց էնտեղ կզինվենք վիրավորների հրացաններով։ Մենք կլրացնենք ֆրանսիացիների շարքերը։

Բայց նոր կրած պարտությունը, բանտը, մահվան բնազդը կոտրել էին շատերի կամքը։ Նրանք ուզում էին փախչել անտառը և այնտեղ թագնվել։

Գյուղապետը նկատեց այդ տատանումը։

— Ընկերնե՛ր, ո՞վ է ինձ հետ գալիս, — գոչեց նա։

Նրա մոտ վազեցին մի քանի հոգի։ Նրանք գնացին դեպի դարպասը։ Նրանց վճռականությունը վարակեց մյուսներին. քիչ-քիչ բոլորն էլ միացան գյուղապետին։

Փախստականներն արդեն բանտի դարպասի մոտ էին, երբ լսվեցին ձիերի տրոփյուն։

— Թշնամինե՛րը։ Գլուխներդ ազատեցե՛ք, — գոչեց մեկը։

Բոլորը բակում դեսուդեն ընկան թաքնվելու տեղ ճարելու։ Բայց բակը բոլորովին բաց էր։ Ամեն կողմից շրջապատված էր բարձր պարիսպներով։ Այն ժամանակ սկսեցին սանդուղք փնտռել, բայց չգտան։ Սկսեցին ընկերների մեջքներով պատը բարձրանալ։

— Յետ դառեք, — գոչեց առաջին բարձրացողը։ Պատի հետևը դատարկ տարածություն էր, վոր ճանապարհից շատ լավ յերևում էր. իսկ անտառը հեռու չէր։

Փրկություն չկար։ Բանտարկյալները խմբովին կուչ յեկան պատի մոտ։ Վերջին անաջողությունը նրանց հուսահատեցրեց։ Հետևը բանտն էր, պատերից դուրս մահը։ Խաղաղության մեջ լսվում էր նրանց սրտերի բաբախումը։ Րոպեները հավիտենականություն եյին թվում։ Տրոփյունը մոտենում էր։

— Գուցե հենց մերո՞նք են... — արտասանեց մեկը կամաց ու վախվխելով։

Վոչվոք չպատասխանեց։

Լարված ականջներն արդեն լսում եյին թրերի ձայնը։

Տորին խմբից բաժանվեց և կուզեկուզ հասավ դարպասին։

— Մերո՛նք են։ Ազատության հուսարնե՛րն են, — գոռաց Տորին և սլացավ դեպի ճանապարհին շարքով յեկող կապույտ համազգեստները։

Ամենքն էլ այնքան եյին վհատված, վոր սկզբում վոչ վոք տեղից չշարժվեց։ Անցավ մի րոպե, գուցե յերկու, վոր բոլորն էլ լավայի պես դուրս թափվեցին Տորիի հետևից։

Տորին արդեն լսում էր սրացող ձիերի թնչոցը։ Շնչակտուր աղաղակելով նա վազեց դեպի նրանց։

Վազողներին տեսնելով՝ եսկադրոնը կանգ առավ։ Միայն մի ձի անջատվեց շարքերից և սլացավ դեպի Տորին։

— Տորի՛։ Կենդանի՞ յես, — լսեց Տորին կանչ և տեսավ Լիզետին։ Լիզետը ցած թռավ ձիուց և վազեց Տորիի մոտ։

— Փրկված եք, — ուրախությունից իրան մոռացած՝ աղաղակեց աղջիկը։ — Բոլո՞րը կենդանի յեն։

— Բոլորը. բոլորը...

— Հուսարները գալիս եյին ձեզ ազատելու...

— Սրանք վորտեղի՞ց դուրս յեկան։ Ո՞ւր է տատիկը։

Լիզետը չպատասխանեց։ Նա առաջ վազեց դեպի գյուղացիները և հարցեր տեղաց նրանց վրա։

— Լիզե՛տ, են դո՞ւ եյիր մեր բանտը քար քցողը, — հարցրեց նրան գյուղապետը։

— Յես եյի։ Վուգյեցիներն ինձ ոգնեցին կաշառել պահապանին։ Մի ֆունտ հացով նա ամեն բանի համաձայնեց։



— Ա՜յ խելոք աղջիկ... Դու մեզ կյանք տվիր քո գրությամբ։ Մենք մահվան եյինք սպասում։

— Եղպես էլ կլիներ, յեթե զորքերը չգային։

— Բայց վորտեղի՞ց յեկան նրանք։

— Յես նրանց հանդիպեցի ճանապարհին։ Ձեզ տանելու մյուս օրը յես յեկա Վուգյե իմանալու ձեր մասին։ Ճանապարհը դուրս յեկա թե չէ, տեսա ձիավորներ են գալիս։ Ազատության հուսարներն եյին — այ սրանք։ Ինչքա՜ն ուրախացա։

Իսկ Տորին արդեն հուսարների մոտ էր։ Նա իմացավ, վոր գերմանացիները Վալմիից նահանջել են հոկտեմբերի 1-ին, և ֆրանսիական գնդերը նրանց հալածում են։ Շագոյի զորամարմինը, վորի առաջամասում եյին ազատության հուսարները, մաքրում է լեռնանցքերը՝ ցրիվ տալով թշնամու դեռ մնացած զորամասերը։

— Շագոյի զորամարմի՞նը... — բացագանչեց Տորին։ — Կամավորները։ 13-րդ գունդը ձեզ հե՞տ է։

— Այստեղ է, — պատասխանեց նրան զինվորներից մեկը։

— Բայց ո՞ւր են նրանք։ Ախր դա իմ գունդն է։ — Տորին վառվում էր անհամբերությունից. ընտեղ, կողքին, բոլորովին մոտիկ Բատիստն է, ամբողջ գունդը, բոլոր բարեկամները։

— Ընտեղ են...

Զինվորը ցույց տվավ անտառակը, վորի հետևից գալիս էր կռվի աղմուկը։

Սպայի հրամանով եսկադրոնը ձիերը դարձրեց։

— Յեղբայրնե՛ր, ինձ վերցրե՛ք, — աղաչեց Տորին։

Հուսարներից մեկը Տորիին բարձրացրեց իր թամբի վրա։ Եսկադրոնը սլացավ։ Լիզետը ձիու վրա թռչելով՝ քշեց հետևներից։

Նրանց հետևից կռվի վայրը վազեցին գյուղացիները։

Հրաձգությունն ավելի ու ավելի յեր լսելի դառնում։ Հուսարները մոտենում եյին կռվի վայրին։ Նրանք անցան անտառը, մարգագետինը, մի փոքրիկ գյուղ և կանգ առան նրա վերջին տնակների մոտ։ Նրանց առաջ ընկած էր թեք բարձրացող մի հարթություն։ Նրա վրայով հուսարների դեմ էր սլանում մի հեծելազոր։

Սպան կանգնեցրեց իր եսկադրոնը և մի կողմ տարավ ծառերի հետևը թաքնվելու։

Հեծելազորն ավելի ու ավելի յեր մոտենում։ Փոքրիկ կետերն ավելի ու ավելի եյին աճում, և վերջապես սև դաշտում փայլեցին արքայական հուսարների փայլուն համազգեստները, իսկ նրանց գլխավերևը քամուց ծածանում էր նրանց սպիտակ դրոշակը։ Նրանց հետևից յերևացին նրանց հալածող դրագունները։

Եմիգրանտների հեծելազորը փախչում էր հալածանքից։

— Հառա՛ջ։ Կեցցե՛ ազգը, — գոչեց ծառերի հետևում թաքնված եսկադրոնի սպան և նետվեց թշնամու առաջը կտրելու։

Տորին որորվում էր իրան վերցնող հուսարի ձիու գավակին։ Հուսարը նրան տվավ ատրճանակները.

— Ա՛ռ, խփի՛ր։ Յես թուր ունեմ... — ասաց նա և ձին քշեց թշնամիների վրա։

Արքայական հուսարները մի կողմ ծռվեցին։ Բայց դա չոգնեց. նրանց ճանապարհը կտրված էր։ Ճրճտացին ատրճանակների կրակոցները, զրնգացին թրերը, ամեն ինչ իրար խառնվեց։

Հետևից վրա հասան դրագունները։ Արքայական հուսարները ճանապարհ էին բանում դեպի հեռուն սևին տվող անտառը։

Մի քանի հոգի դուրս պրծավ իրար խառնված մարդկանց և ձիերի զանգվածից։ Արքայական սպիտակ դրոշակը ծածանում էր նրանց գլխավերևը։ Բայց նրանց արդեն շրջապատեցին կապույտ համազգեստները։

— Կրակի՛ր, — լսեց Տորին ականջի տակ մի գոռոց։ Նա տեսավ մի սպիտակ դրոշ, ապա իր վրա բարձրացած մի ձեռք և թրի պայծառ փայլող բերան։ Տորին կրակեց։ Սպիտակ դրոշակը տատանվեց։ Ազատության մի հուսար նետվեց ընկնող մետաքսե դրոշակի մոտ և ընկնելիս բռնեց։ Արքայական դրոշակը խլված էր։

Կռիվը շարունակվում էր։

Ձիերը վազվզում էին դաշտով փռթացնելով և ծառս լինելով, հեծվորներն ընդհարվում էին, թրերը շառաչով իջնում էին, ամեն կողմից ճռճռում էին ատրճանակների կրակոցները։ Սև գետնի վրա գալարվում էին վիրավորները։ Հեծվորներից զրկված ձիերը փախչում էին զանազան կողմեր։

Արքայական հուսարները հաղթահարված էին։ Նրանցից միայն միքանիսին աջողվեց փախչել հասնել անտառը։ Փայլուն համազգեստների մի մեծ խումբ՝ հուսարներով և դրագուններով շրջապատված՝ կանգնել էր, բութ հայացքները գետնին սևեռած. զինվորները նրանց ձեռները կապկպում էին մեջքներին։

Մարտի վայրը յեկան գյուղացիները։ Նրանց թողնելով հավաքելու բոլոր վիրավորներին և սպանվածներին՝ հուսարները և դրագունները կարգի կանգնեցին առաջ գնալու համար։ Նրանց շարքերը նոսրացել էին, բայց հաղթությունն իրանցն էր։

Տորիին նստեցրին հեծվորից զրկված մի ձի, և նա կանգնեց դրոշակը վերցնող հուսարի կողքին։ Հուսարն ուրախությունից փայլում էր. ասեղնագործ սպիտակ դրոշը ծածանում էր նրա ձիու գնչի մոտ։

Մոտեցավ սպան։

— Ապրե՛ք քաջերս։ Կեցցե՛ք։ Ո՞վ է խլել դրոշակը, — հարցրեց նա



— Նա, — հուսարը ցույց տվավ Տորիին, — արիստոկրատին գլորեց, յես էլ դրոշակը ձեռքից խլեցի։

— Իսկ դու ո՞վ ես, փոքրի՛կ, — հարցրեց սպան։

— Կամավորների 13-րդ գնդի Թմբկահարն եմ, — պատասխանեց Տորին։

— Թմբկահա՞ր, — թերահավատությամբ հարցրեց սպան։ — Բայց ինչո՞ւ դու գյուղացու շորով ես։

— Գեներալ Դյումուրյեյի հրամանով։ Յես թիկունքում գերմանացիների մոտ գյուղացիներին թռուցիկներ էի տանում։

— Հա՜... Իսկ հիմա վերադառնում ես գո՞ւնդ։ Դու վո՞ր գումարտակից ես։

— Առաջին։

— Հա, գնդապետ Պեպինի... Յես նրան կզեկուցեմ... իսկ են աղջի՞կն ուր է, վոր մեզ պատմեց գյուղացիների կալանավորման մասին։

Տորին ինքը վաղուց էր արդեն դեսուդեն նայում Լիզետին տեսնելու համար, բայց չէր կարողացել նրան գտնել։ Հիմա տեսավ. նա հետևից ձիով գալիս էր։ Հարմար ժամանակ գտնելով՝ Տորին մոտեցավ նրան։

— Լիզե՛տ, ինչո՞ւ յես ինձանից թաքնվում, — հարցրեց Տորին։

Լիզետը լուռ էր։

— Լիզե՛տ, բա՞ն է պատահել։ Տատի՞կը։

Լիզետը միայն դրական կերպով գլխով արավ։

— Մեռե՞լ է, — աղաղակեց Տորին։

— Յես չկարողացա քեզ ասել։ Չէ՞ վոր դա քեզ համար մեծ ցավ է...

Տորին չէր լսում... Նա գնում էր գլուխը կախ, չնայելով թե ձին ուր է տանում իրան։ Տատիկը, վոր առավել թանգագին էր դարձել նրա համար այստեղ, բանակում, ուր յերկուսն էլ ապրում էին նույն ուրախություններով, նույն վշտերով... Եվ նա չկա՜ր...

— Նրան սպանե՞լ են, — հարցրեց Տորին։

— Այո։ — Յեվ Լիզետը Տորիին պատմեց, թե ինչ պատահեց, յերբ հրապարակով տանում էին կալանավորներին։

— Նա զոհվեց... — կամաց ասաց Տորին։

— Տորի՛, յես էլ մեր չունեմ, — կամաց և քնքշությամբ արտասանեց Լիզետը։

Նրանք գնում էին կողք կողքի։ Յերկուսն էլ լուռ էին, իրանց մտքերի մեջ խորասուզված։

Եսկադրոնը մոտեցավ ճակատամարտի վայրին։ Թնդանոթաձգությունը և հրացանաձգությունը հիմա հեռվից էին լսվում. արտիլլերիան ռմբակոծում էր փախչող հակառակորդին։ Յերկար ճանապարհից և կռվից հոգնած գնդերը գնում էին հանգստանալու մոտիկ գյուղը։





Եսկադրոնը հետևեց նրանց: Առջևում յերևում եյին ծանոթ համազգեստները:

Տորին աչքերի առաջ բացվում եր ծանոթ տեսարանը: Զինվորները տնկում եյին վրանները, հրացանները խաչաձևած եյին, չորս կողմը սայլակներ, բեռներ, թնդանոթներ, ռազմամթերքի արկղներ եյին: Բայց այս անգամ բանակում արտասովոր նեղվածք եր. ուր վոր նայում եյիր, ամեն տեղ կանգնած եյին փարթամ կառքեր, վորոնց շուրջն եյին հավաքվել խումբ-խումբ զինվորներ և հետաքրքրությամբ մոտիկ եյին տալիս: Դա եմիգրանտներից խլված կառքերն եյին:

Բայց ահա վերջապես յերևացին և կամավորների ձիթենիագույն համազգեստները: Եսկադրոնը կանգ առավ նրանց վրանների մոտ. սպան վորոնում եր գնդապետ Պեպինին: Զինվորները վազեցին նրան գտնելու, և մի քանի րոպեյից հետո խմբով շրջապատված յեկավ գընդապետը:

— Գնդապետ, յես վերադարձնում եմ ձեզ ձեր թմբկահարին: Նա հերոսություն ե գործել: Այս իմ հուսարի հետ միասին նա խլել ե արքայական հուսարների գնդի դրոշակը:

Վերջին շարքերից Բատիստին մոտեցավ գյուղացու հագուստով մի տղա, վոր ավելի փոքր եր յերևում խոշոր զառրյուն ձիու վրա, քան իսկապես կար: Կամավորները ճանաչեցին իրանց թմբկահարին:

— Տորի՛ն: Վիվա՛: Տորի՛, — դիմավորեցին նրան ընկերները:

Փոքրիկ հերոսն անհամբեր կերպով ձիուց իջավ և նետվելով դեպի Բատիստը՝ հեկեկաց.

— Բատիստ: Տատիկին սպանեցի՛ն:

ԳԼՈՒԽ XXIV.

## ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հեծկլտացող Տորիին Բատիստը տարավ իր վրանը: Զինվորները խմբովին լուռ հետևեցին նրանց: Տորիին պառկեցրին, ծածկեցին, և նա հոգնածությունից հաղթված, հեկեկալով և արցունքները կուլ տալով՝ ծանր քնով քնեց:

Բոլորը դուրս յեկան: Բատիստը մնաց մենակ: Նա նստեց Տորիի վոտների մոտ, ծխամորճը ծխեց, ապա վեր կացավ և սկսեց խոշոր քայլերով անցուդարձ անել վրանում: Վոչ մի կերպ նրա միտքը չեր հաշտվում Տորիի արտասանած խոսքերի հետ, թե «տատիկին սպանեցին»:

Բատիստն այնպես եր հուզված իր մտքերով, վոր չնկատեց վրանը մտնող և անվճռականությամբ մուտքի մոտ կանգնող Լիզետին: Տորիի

հայտնվելուց և Մոնտարժի հորաքրոջ մահվան լուրից առաջացած ընդհանուր շփոթության մեջ Լիզետի վրա վոչվոք ուշադրություն չդարձրեց: Նա մեն-մենակ մնաց աղմկալից բանակի, անծանոթ մարդկանց մեջ: Յերկար տատանումներից հետո նա մտավ գնդապետի վրանը և անկյունում սուսուփուս կանգնեց՝ յերկչոտությամբ նայելով յետ ու առաջ քայլող Բատիստին:

Քիչ հետո Բատիստը մոտեցավ մուտքին, յետ քաշեց մուտքը ծածկող բրեզենտը և վրանը մտած ցերեկվա լույսով նկատեց Լիզետին:

— Ի՞նչ ես ուզում, աղջիկ, — հարցրեց նա:

— Յես... Նրա հետ... — յերկչոտությամբ պատասխանեց նա, չիմանալով ինչպես բացատրել իր յերևալը, և ցույց տվավ Տոբիին:

— Նրա՞ հետ, — զարմացավ Բատիստը: — Իսկ դու ո՞վ ես:

— Լիզետն եմ, Մոնտարժի աղջիկը...

— Մոնտարժի՞... — Այդ անունը Բատիստին վոչինչ չեր ասում:

— Յես Տոբիի հետ միասին գյուղերն եմ ման յեկել: Իմ աչքի առաջ սպանեցին տատին...

— Դու տեսե՞լ ես... Եստե՛ղ յեկ տեսնեմ: Ինչի՞ եյիր մինչև հիմի լռում:

Բատիստը բռնեց Լիզետի ձեռքից և տարավ նստարանի մոտ:

— Նրան ո՞վ սպանեց: Գերմանացինե՞րը, — անհամբերությամբ հարցրեց նա:

— Վոչ, են փետրավոր ագռավները, եմիգրանտները...

— Նրա՞նք... — Բատիստն ակամա բռունցքները սեղմեց: — Բայց ինչի՞ համար:

— Տատիկը վազում եր Տոբիի հետևից, յերբ նրան բանտ եյին տանում...

— Բա՞նտ: Տոբի՞ն: Մի բոլորը կանոնավոր պատմիր տեսնեմ է, — գրգռված բացականչեց Բատիստը, չնկատելով, վոր ինքը չի թողնում բան պատմել:

Լիզետն սկսեց մեկ-մեկ պատմել գնդապետին վերջին որերի բոլոր անցքերը: Հուզմունքից նա շփոթվում եր՝ մերթ առաջ ընկնելով, մերթ խոտորվելով. նա բացատրեց, թե ինչպես ե պատահել տատին և Տոբիին, հետո ցատկեց՝ սկսեց պատմել Բերրիի ճակատամարտերի մասին, հիշեց հուսարներին հանդիպելու մասին և պատմեց եմիգրանտների դրոշակը խլելու մասին, և այդտեղ միայն հիշեց իր գյուղը, հորը... Կարճ ժամանակում այնքան դեպքեր եյին տեղի ունեցել և անսպասելի ապշեցուցիչ արագությամբ, աղջկա աչքի առաջով այնքան մարդիկ եյին անցել, այնքան սարսափներ, մահեր, կալանավորումներ, ճակատամարտեր, հրդեհներ, վոր այդ բոլոր սոսկալի պատկերները նրա ուղեղում խառնվել, դարձել եյին անծայր լաբիրինթոս, վորի մեջ կարելի յեր մոլորվել՝ յելք չգտնելով:



Վրանի մյուս անկյունից, ուր քնած եր Տոբին, լսվում եր նրա ընդհատ շնչառությունը և յերբեմն աղիողորմ հառաչանքներ, հեկեկոցներ և սուր ճչեր: Այն ժամանակ Լիզետը լռում եր, վազում Տոբիի մոտ, վորը նրա գուրգուրանքից հանգստացած՝ նորից համաչափ եր շնչում:

Հողի հատակի վրա պայծառ լույսի շերտ ընկավ. մեկը դրսից բարձրացրեց բրեզենտը:

— Մտի՛ր, Բրիսսա՛ր, — կանչեց Բատիստը՝ ճանաչելով վրանի ներսը մտիկ տվող կապրալին:

Բրիսսարն զգուշությամբ ներս սահեց: Մի մռայլ և կենտրոնացած ծամածռություն աղավաղել եր նրա միշտ հպարտ, ժպտուն դեմքը:

— Քնա՞ծ ե, — գլխով արավ նա դեպի Տոբիի կողմը:

— Սուս... տես, չզարթեցնես. հալից ընկել ե տղան, — ասաց Բատիստը: Լսիր, տես ինչ ե պատմում էս աղջիկը: Սա նրա հետ ե յեղել...

— Մեր տղերքն ենտեղ են, — ասաց Բրիսսարը, — թույլ տվեք, գնդապետ, վոր նրանք ել գան:

— Թող գան: Բայց սուսուփուս...

Ծռմվելով վոտների մատների վրա՝ վրանը մտան զինվորները:

— Ե՛, հետո՞, Լիզետ... Դուք գնացիք Բերրի...

Լիզետը դեռ յերկար պատմեց: Յերբ նա լռեց, տիրեց մեռելային լռություն:

— Դե հիմի քեզ հետ ինչ անենք — ասաց հետո գնդապետը Լիզետին: — Քեզ պետք ե ձեր տուն հասցնել:

— Յես ուզում եմ միալ ձեզ հետ, — առարկեց Լիզետը:

— Մեզ հե՞տ... — զարմացած բացագանչեց Բատիստը: — Բայց դու ինչ պիտի անես:

— Պիտի պատերազմեմ ազգի թշնամիների դեմ, — հաստատակամությամբ ասաց Լիզետը:

— Սրա՞ն տես է, — ժպտաց Բատիստը: — Չլինի՞ թե հրացան ել պիտի տանք քեզ...

— Վո՛չ թե հրացա՞ն... — մեջ ընկավ Բրիսսարը: — Թող սա մնա Մոնտարժի հորաքրոջ տեղը: Հորաքույրը մեզ համար մայր եր, իսկ նա մեզ համար քույր կլինի: Ճիշտ չե՞մ ասում, գնդապե՛տ:

— Լավ, յես գեներալից թույլտվություն կխնդրեմ, — խոսքը կտուր գցելով պատասխանեց Բատիստը:

Այդ ժամանակ փողերը հնչեցին. բանակը ճաշի եյին ժողովում: Զիլ հնչող սիգնալից Տոբին զարթնեց: Նա քիչ բարձրացավ յեվ վախեցած դեսուդեն շարժվեց մահճակալի վրա՝ մտիկ տալով մարդկանց անորոշ կերպարանքներին և ականջ դնելով բանակաժողովի ծանոթ և հարազատ հնչյուններին: Ապա նա լսեց Լիզետի ձայնը և կանչեց:

— Լիզետ... դու եստե՞ղ ես:

Աղջիկը տեղից թռավ և վազեց Տոբիի մոտ:

— Ես վո՞րտեղ ենք, — դողդոջյուն ձայնով հարցրեց Տոբին:

— Մի՛ վախիր... տանն ես.

Տոբիի մոլոր հայացքն ընկավ մահճակալի մոտ դրած արկղի վրա, վորը Մոնտարժի հորաքրոջն եր, և ծանոթ իրի տեսքը միանգամից հանգստացրեց նրան: «Գո՞ւնդը: Կամավորնե՞րը, Բատիստն այստե՞ղ են,» — անցավ նրա գլխով՝ միանգամից հեռացնելով յերազային տեսիլների դեռ իրար խառնվող բեկորները:

— Տոբի: տղա՛, զարթնեցի՞ր, — լսեց նա Բատիստի ձայնը:

Հարազատ մարդկանց մոտիկության, սովորական կարգուսարքի, ծանոթ իրերի և ձայների գիտակցությունից առաջացած ուրախության զգացումը համակեց Տոբիի ամբողջ եյությունը: Նա վայրկենապես վոտի կանգնեց:

— Բատի՛ստ: Բարև՛, յեղբայրնե՛ր:

Տոբիին ամեն կողմից ձեռք մեկնեցին: Նա ուրախ-ուրախ սեղմում եր այդ ձեռներն՝ ասելով.

— Յես ելի ձեզ հետ եմ: Վո՞րքան ուրախ եմ: Վո՞րքան ուրախ եմ:

Իրանց թմբկահարին շրջապատած՝ զինվորները վրանից դուրս յեկան և դիմեցին դեպի գոլորշի արձակող կաթսան, վորի շուրջն եր հավաքվում առաջին վաշտը: Տոբիին դիմավորեցին վողջույնի աղաղակներով. գնդում արդեն գիտեյին եմիգրանտների դրոշակը վերցնելու մասին: Փոքրիկ հերոսի վրա հարցեր տեղացին: Բայց իրան հերոսին այնպիսի ուժով եր քաշում համեղ արգանակի հոտը, վոր նա գնալիս բարևելով ընկերներին՝ շտապ հասավ կաթսային, ճանկեց ձեռն ընկած գդալը և ագահությամբ բերանը տարավ տաք-տաք կերակուրը:

— Ե՛հե՛, փորդ՝ վո՞նց վոր յերևում է՝ քեզ շատ է չարչարել հա՞, — կատակեց զինվորներից մեկը: — Կե՛ր, յեղբա՛յր, կե՛ր:

— Մի՛ վախիր, Տոբի, մենք քեզ էնպես կկերակրենք, վոր շուտով թե՛ կլոր, թե՛ լիքը կդառնաս, — արձագանքեց մյուսը՝ խղճահարությամբ նայելով Տոբիի վրա — մոխրագույն, սաստիկ դուրս ընկած այտերին:

— Իսկ դո՞ւ ինչի չես ուտում, — հարցրեց Բրիսարը Լիզետին:

— Սրան հո գդալ չե՞ք տվել, — գլխի ընկավ Տոբին և իրանը տվավ Լիզետին: — Տղե՛րք, գդալ ո՞վ ունի:

Լիզետը միացավ ճաշողներին: Քաղցած զինվորները կենտրոնացած և աղմուկով կուլ եյին տալիս տաք-տաք արգանակը:

— Գիտե՞ս, Տոբի, — դարձավ Լիզետն իր բարեկամին՝ ուտելուց հետո սրբելով իր գդալը, — գնդապետը թույլ է տվել ինձ մնալ գնդում:



— Ա՛յ լավ բան: Ուրեմն դու արդեն խոսե՞լ ես նրա հետ:

— Բայց նա ուզում է, վոր յես խահավաճառուհի լինեմ, իսկ յես ինչպե՞ս եյի ուզում իսկական զինվոր դառնալ:

— Դու քմահաճություն մի անիր, — մեջ ընկավ Բրիսարը և խրոխտաբար ավելացրեց. — Մոնտարժի հորաքույրը գնդում վերջին մարդը չեր, նրան փոխարինելը պատիվ է քեզ համար:

Լիզետն ամաչեց: Պատճառաբանությունն այնքան համոզիչ եր, վոր Լիզետն զգաց իր բողոքների անտեղի լինելը և իսկույն համաձայնեց:

— Մենք կհավաքենք այն բոլորը, ինչ վոր Մոնտարժի հորաքույրը թողել է մեր հոգածությանը, և կտանք քեզ, դու էլ նրանով գործ արա: Տես, մենք հասարակ մարդիկ ենք, բայց պահանջկոտ ենք: Մոնտարժի հորաքրոջը փոխարինելն էնքան էլ հեշտ բան չի:

— Այո, տատիկի պես մարդ էլ չես ճարի: Դուք մի տեսնեիք, թե ինչպես եր նա խրախուսում գյուղացիներին և նրանց համոզում դիմադրել եմիգրանտներին և պաշտպանել ազգը: Բայց ի՞նչ արած... Նա էլ չկա... Իսկ Լիզետը — ճարպիկ աղջիկ է: Սա յել վերջին մարդը չի լինիլ գնդում: Ճի՞շտ է, Լիզետ:

— Դու յել բան ասացիր... — ծիծաղեց Լիզետը, և նրա աչքերն ուրախ փայլեցին: — Միայն թե ինչպե՞ս անենք. տատիկի սայլակը մնացել է ագարակում, իսկ տարանտասը Բերրիում: Վո՛չ ձի կա, վո՛չ սայլակ, — յես ի՞նչ խահավաճառուհի յեմ:

— Այո, պետք է դրա համար մտածել, — համաձայնեց Տոբին:

— Եվ ի՞նչ մտածել, — բացականչեց մի զինվոր: — Հրեն տես գերմանացիներից ու եմիգրանտներից ինչքան ձի ու սայլեր ենք խլել. վողջ բանակում դարսված են: Բա մեզ թույլ չե՞ն տա մի սայլակ վերցնել մեր խաճավաճառուհու համար:

— Ճիշտ է, գնանք մի հարմար սայլակ ճարենք, իսկ հետո էլ թույլտվություն կխնդրենք, կվերցնենք, — համաձայնեց Տոբին:

Այս ասելով՝ նա բռնեց Լիզետի ձեռից և տարավ իր հետևից: Մի-քանի հոգի նրանց հետ գնացին:

Բանակը յեռուզեռի մեջ եր, վորպես հսկայական մրջնանոց: Վաշտերում սրապանները ճաշից հետո հավաքում եյին կաթսաները, զինվորները ցրվում եյին վրանները: Վոմանք հանգստանում եյին, վոմանք պատրաստվում եյին գնալու հսկումի և պահպանության: Հուսարների մի դասակ թամբում եր ձիերը, ուղղում թրերը, հրացանները: Տեղեկատուները և բանբերները շտապից վազում եյին հրամաններ տանելով: Դրագունյան գունդը պատրաստվում եր վորպես առաջապահ գնալու Գրանպրե, ուր ժողովվում եյին թշնամու ուժերը: Զինվորները շարք եյին կանգնում, դասակը դասակի մոտ եր գնում և վորոշ տարածության վրա կանգնելով՝ զորասյուն կազմում: Հանգստացած ձիերն

անհամբերությամբ փառացնում և պարում էյին իրանց զսպող հեծ-վորների տակ։

Տորին ուրախությունից փայլող աչքերով դիտում էր բանակային կյանքի այս ծանոթ տեսարանը։ Լիզետը միշտ Տորիի ձեռքից բռնած խոնարհ գնում էր նրա հետևից, խլացած, շփոթված իր համար անսո-վոր այդ յեռուզեռից։

— Իսկ սա՞ ինչ է։ Իսկ սա՞ ինչ է, — անդադար հարցնում էր նա իր բարեկամից՝ ցույց տալով յերբեք չտեսած ռազմամթերքի արկղները, սայլերը, ճանապարհորդական խոհանոցները։ Տորին նրան բացատրում էր ամեն մի իրի նշանակությունը, ծանոթացնում էր նրան զինվորա-կան կյանքին, նրա կարգապահությանը և յուրաքանչյուր մարդու և ամեն մի առարկայի համար հաստատապես սահմանված կարգին։



— Դու ուզո՞ւմ ես, վոր մեզ մոտ ես մնացել, — հարցնում էր նրան Տորին։ Յեվ Լիզետը պատասխանում էր՝ սրտագին սեղմելով Տորիի ձեռը։

Վերջապես նրանք և նրանց հետևող կամավորները հասան էմիգ-րանտներից խլված սայլերին։ Դա քիչ բան չեր։ Գերմանացիները, մա-նավանդ էմիգրանտներն արշավանքի դուրս գալիս հոգում էյին, վոր վոչ մի բանի նեղություն չքաշեն։ Նրանց բանակի հետևից յեր-կար կիլոմետրով ձգվում եր քարվանը՝ բաղկացած փափուկ զսպա-նակներով ճանապարհորդական կառքերից, ներսն ատլասով կամ կաշ-վով շինած քնելու կառքերից, ճանապարհորդական մառանիկներով, անկողիններով, արկղներով և յերևելի մարդկանց ով գիտե ինչպիսի տուալետի ամեն տեսակ պարագաների անվերջ քանակով լցված սայ-լակներից։ Էմիգրանտները, վոր հավատացած էյին, թե հաղթելու և շուտով խուժելու յեն Փարիզ, իրանց հետևից տանում էյին իրանց ընտանիքները, կանանց և հաճախ յերեխաներին։ Ուստի նրանց քար-



վանները չլսած չափերի էյին հասնում։ Վուզյեյում, ուր գլխավորա-պես գտնվում էյին էմիգրանտների գնդերը, այդ քարվանը հանրապե-տական բանակի անսպասելի արշավանքի ժամանակ փակեց բոլոր ճանապարհները և դանդաղացրեց զորքերի նահանջը, վորը քիչ մնաց, վոր ամբողջովին գերի ընկնի։ Քարվանը չկարողացավ անցնել և այժմ նա շարված եր հաղթողների բանակատեղիում՝ վորպես էմիգրանտ-ների չարդարացված հույսերի վողորմելի վկայությունը։ Տորին և Բրիսարը նկատեցին աղմկելով խոսող մի խումբ զինվոր-ների, վորոնք շրջապատել էյին յերկու արկղ անիվների վրա դրված և մի ավելի փոքր արկղ, վոր տեղավորած եր կաշվե ծածկ ունեցող մի համար սայլակի հետևում։ — Ընկերնե՛ր, սա ինչ տարօրինակ արկղներ են։ Սրանք է՛լ էմիգ-րանտների քարվանից են, — հարցրեց Բրիսարը զինվորներից։ — Դու, միամիտ, վորտեղի՞ց ես կարող հասկանալ ազնրի տար-րինակությունները... — ծիծաղելով պատասխանեց մի զինվոր և բար-ձրացրեց արկղներից մեկի կափարիչը։ — Ա՛ռ, մոտի՛կ արա, — ասաց նա Բրիսարին։ Արկղները ծայրեիծայր լիքն էյին խաղաթղթերի կապոցներով։ Էմիգ-րանտները հարյուրավոր լյո տանում էյին դրանք, վորպեսզի միշտ հնարավորություն ունենան իրանց ժամանակն սպանել հաղթական-րեն Փարիզ արշավելիս։ Զէ՞ վոր սանկյուլոտների դեմ պատերազմելն այլ կերպ չէյին պատկերացնում նրանք։

— Նրանք վատ բան չեն մտածել, — հայտարարեց Տորին, վոր շա-րունակ պտտում եր արկղը մեջը դրված սայլակը և խնամքով ամեն կողմից մոտիկ եր տալիս։ — Տե՛ս, Լիզե՛տ, այ, ետեղ է համար գրել «Կաֆե Սեն-Ժակ, — ցույց տվավ նա արկղի ներկած պատը։ Սայլակի մեջ շա՛տ բան կարելի յե տեղավորել, ամուր է, քեզ համար փառավոր տուն կլինի։

Բրքջի և կատակների միջից հանկարծ լսվեց մի պոչյուն.

Քրքջի և կատակների միջից հանկարծ լսվեց մի պոչյուն. — Արիստոկրատներին բերո՛ւմ են։ Հրեն նրա՛նք։

— Արիստոկրատներին բերո՛ւմ են։ Հրեն նրա՛նք։

Ճանապարհով բերում էյին գերի վերցրած էմիգրանտների մի մեծ խումբ։ Նրանց մեջ կային նորերս Բեռրի արշավանք կատարած թե մուշկետյորներ, թե թեթև հեծելազորի սպաներ։ Նրանց տեսնելով Լի-զետը ճչաց։

— Տորի՛, հենց նրանք են, տե՛ս։

Յերկուսն էլ վազեցին ճանապարհը և առաջ անցան... Տորին հան-կարծ ցնցվեց. Եյլբան նրա առաջն եր։ Արիստոկրատական հուրը կեր-պարանքների մեջ խիստ աչքի յեր ընկնում տնկարանատիրոջ, նեգ-ցիանտի, արքայական լրտեսի և վերջապես մուշկետյորի խոշոր գեր կերպարանքը։ Նա աչքի տակով նայում եր ամբոխին և անտարբեր

լսում էր իրան ծանոթ բացագանչությունները. «Կախե՛լ լապտերներից»:

Նյլեան անցավ Տոբիի կողքից: Նրանց հայացքները խաչաձևվեցին: Հետո կալանավորներն անցան: Իսկ Տոբին դեռ յերկար ժամանակ տեսնում էր իր վաղեմի թշնամու մեջքը և ճերմակ փետուրներով զարդարված գլխարկը:

---

ԳԼՈՒԽ XXV.

## ՏԱՊԱԼՎԱԾ ԴՐՈՇԱԿԸ

Մի շաբաթ հետո Տոբին այցելեց Մոնտարժի հորաքրոջ գերեզմանը:

Ծանր զգացումով էր նա մոտենում յերբեմնի հարուստ և բազմամարդ, իսկ այժմ այրված գերանների կույտ դարձած գյուղին: Ցեխերք հարյուր տնից հիսուն տուն հազիվ էր մնացել նրանում. դրանց մեջ տեղավորված եյին հրդեհվածները:

Գյուղացիներից մեկը Տոբիին տարավ գերեզմանատուն: Ճանապարհին Տոբին հանկարծ ծանոթ ձայն լսեց: Նա կանգ առավ՝ տարակուսանքով նայելով դեպի իրան սլացող մեծ ճերմակ պուճը:

Դա Մոնշալեյն էր: Պատերազմի և մահերի սարսափների մեջ մոռացված շունն ապրել էր գյուղում մենակ: Վոչվոքի հետ չկապվելով, վոչվոքի տանը չմնալով. նա վորոնում էր իր տիրոջը: Հանդիպումն ավելի քան սրտառուչ էր: Նիհարած, կեղտոտ, անճանաչելի դարձած Մոնշալեյը վռնում էր հրճվանքից: Մինչև գերեզմանատուն ամբողջ ճանապարհը նա սլանում էր խենթացածի պես, մերթ թռչում էր Տոբիի վրա, մերթ հեռու յեր փախչում, մերթ փաթաթվում էր նրա վոտներին: Միայն գերեզմանի մոտ նա հանդարտացավ: Խելոք շունն զգաց, վոր այդտեղ չի կարելի վեր-վեր թռչել, և հանդիստ կանգնեց անշարժ կանգնած Տոբիի կողքին:

Գյուղացիները պատվով եյին թաղել պառավին: Գյուղի դարբինը թուջից դամբանաքար էր ձուլել այսպիսի մակագրությամբ. «Այստեղ թաղված է հայրենասեր Մոնտարժին, վոր սպանվել է ազգի թշնամիներից», և մակագրության գլխին դուրս էր բերել փռուգիական փեղույր:

Տոբին յերկար կանգնեց իր համար թանկագին շիրմի առաջ:

Ապա նա վերադարձավ գյուղը, մնաք բարով ասաց գյուղացիներին և ճանապարհ ընկավ: Շալոնում նրան սպասում էր այն հուսարը, վորի հետ միասին նա պետք է Փարիզ գնար Կոնվենտին հանձնելու արքայական դրոշակը:



Բերրիից Տոբին մենակ չէր գնում. Նրա ձիու հետևից առանց յետ մնալու վազում էր Մոնշալեյը: Հին բարեկամները նորից եյին իրանց հետևը թողնում այն ճանապարհները, վորոնց վրա դեռ նորերս որորվում եյին տարանտասում: Տոբին նորից տեսավ այն գյուղերը, վորտեղ նա թռուցիկներ էր բաժանել: Նա յեղավ և՛ լքված ագարակում, ուր նա հայտնաբերել էր ռոյալիստական վորջ, և՛ Մոնտարժի մոտ: Գյուղապետը տխուր ապրում էր իր տանը մենմենակ: Նա անվերջ հարցուփորձ էր անում Տոբիից Լիզետի մասին, գլուխն որորում էր գյուղացիական պատերազմի և Մոնտարժի մորաքրոջ մահվան մասին պատմելիս և ձեռներն իրար էր խփում աղջկա նոր կյանքի մասին լսելիս:

Տոբին հասավ Շալոն և այնտեղ իրան սպասող հուսարի հետ ճանապարհը շարունակեց: Շուտով նրանք հասան և՛ Փարիզ:



Հասնելու հետևյալ օրը Տոբին և հուսարն ուղևորվեցին Կոնվենտ:

Հուսարը դրոշակի կոթն ուսին հպարտությամբ հետևում էր Տոբիին, ամեն բանով զարմացած և քաղաքի փառահեղությամբ սքանչացած: Նա հուսարին Տոբիի համար ամբողջ քաղաքը լիքն էր հիշատակներով: Նա հուսարին պատմում էր քաղաքի զանազան մասերում տեղի ունեցած անցքերի մասին՝ ցույց տալով նրան պատմական տեղերը — ակումբները, այգիները, պալատները, շեշտելով օգոստոսի 10-ից հետո առաջացած ամեն մի փոփոխությունը:

Կարուսել հրապարակի կողմից նրանք մտեցան Տյուիլրիին: Այստեղ պալատը վերակառուցելու վրա մեծ աշխատանքներ եյին կատարվում. դա հարմարեցնում եյին Կոնվենտի նիստերին և նրանում կոմիտեները*) տեղավորելու համար: Ծառայատները, վոր առաջ ծածկում եյին պալատի բակը, քանդվեցին. նրանց տեղ շինում եյին գեղեցիկ

*) Պետական իշխանության կատարողական մարմինները, վոր Կոնվենտի ժամանակ փոխարինում եյին մինիստրություններին

ցանկապատ և բակում շագանակենիներ էյին տնկում։ Նախկին արքայական պալատի նոր գործադրության վորպես նշան՝ կենտրոնական գմբեթի վրա շինում էյին մի ամբողջ շենք — վեց վոտնաչափ բարձրությամբ փռուգիական փեղույր։ Կմախքն արդեն պատրաստ եր և վրան կարմիր կտոր էյին քաշում։

Մանեժի շենքի առաջ Տոբին կանգ առավ։

— Նստիր, — հրամայեց նա Մոնշալեյին։ Ցևմ՝ ինչպես առաջները՝ շունը հլու պառկեց դռան մոտ։

Մանեժում ամեն ինչ մնացել եր անձեռնմխելի։ Նույն վերակացուներն ուրախությամբ դիմավորեցին հին ծանոթին։ Այս անգամ նրան ուղարկեցին վոչ թե վերև, պատշգամբը, այլ տարան ցանկապատի հետևը։

Մինչ յերկար շարունակվում էյին ճառերը, լսում էյին պատգամավորություններին և խնդրատուներին, Տոբին հետաքրքրությամբ դիտում եր դահլիճը։

Նախագահը խոսք տվավ մի բարձրահասակ, չոր, յեռանդուն դեմքով մարդու։ Նա օտարազգի յեր. խոսում եր դանդաղ, կարծես ֆրանսերեն հարկավոր խոսքերը փնտրելով և խիստ ակցենտով (օտար արտասանությամբ), վորը մատնում եր նրա անգլիացի լինելը։ Նրան անվանում էյին Ջոնս։

— Հանրապետական ժողովրդի քաղաքացի պատգամավորներ, — դիմեց նա Կոնվենտի պատգամավորներին։ — Յես պատիվ չունեմ պատկանելու ֆրանսիական մեծ ազգին, բայց նրա գաղափարները պատկանում են բոլորը յերկրների դեմոկրատիային։ Ազատության բոլոր խակական բարեկամներն ամբողջ աշխարհում մեծագույն անհամբերությամբ են սպասում, թե յերբ իրանց յերկրում ևս կհնչի ազդանշանի փողերը և ժողովուրդը կկատարի մարդու սրբազնագույն պարտականությունը — դուրս կգա բռնակալների դեմ։ Բայց ժողովուրդները դանդաղում են։ Մի միայն ֆրանսիական արի ժողովուրդն ե նվիրված ազատությանը։ Յես խնդրում եմ ֆրանսիական ազգից ընդունել ինձնից այն նվերը, վոր յես բերել եմ Փարիզ և գտնվում ե հիմա այստեղ, Մանեժի բակում — վեց թնդանոթ, մի տակառ կարտեչ և հարյուր հատ ռումբ։ Բացի այդ, յես խնդրում եմ ֆրանսիական ազգին այդ բոլոր զենքը գործածել բռնակալների դեմ։ Բայց յես նախատեսնում եմ մոտ ապագայում հեղափոխություն և՛ իմ յերկրում, Անգլիայում, ուստի և խնդրում եմ վերադարձնել այդ առարկաներն ինձ այն ժամանակ, յերբ Ֆրանսիային նրանք այլևս պետք չեն լինի, բայց անգլիական ապստամբված ազգը նրանց կարիքը կզգա։

Ծափահարությունների վորոտը ծածկեց հռետորի խոսքերը։ Շատ պատգամավորներ վազեցին դեպի այգին ու բակը դուրս յեկող լուսա-



մուտների մոտ, վորպեսզի իրանց աչքով տեսնեն անգլիացու այդ հայրենասիրական նվերը։

Մինչ խոսում եր անգլիացին և շարունակվում էյին ծափահարու-
թյունները, Տոբին մտքի մեջ կրկնում եր այն խոսքերը, վորոնցով նա
պիտի դիմեր Կոնվենտին եմիգրանտներից վերցրած դրոշակը հանձ-
նելիս։ Նրա ճառն արդեն վաղուց եր պատրաստ, բայց բոլոր գտնված
բոցավառ խոսքերն այժմ փախչում էյին և Տոբին զուր եր աշխատում
բռնել նրանց իր հիշողության մեջ և նորից ներդաշնակ նախադասու-



թյուններ հյուսել։ Հուսարը բռնել եր փաթաթված դրոշակը. նա ըստ
յերևույթին Տոբիի նման չեր հուզվում։ Ցերբեմն - յերբեմն նա հրում
եր իր ընկերոջը և շշունջով հարցնում.

— Դու պատրաստ ես։ Տես...

Բայց նրանցից վոչ մեկին չվիճակվեց խոսել։

— Կամավորների 13-րդ գնդի և ազատության հուսարների պատ-
գամավորությունը, — գոչեց վերակացուն։

Տոբին և հուսարը մոտեցան ցանկապատին և բաց արին ասեղնագործ
սպիտակ, բուրբոնյան շուշաններով դրոշակը։ Իրանց զինվորների ձեռ-
քում տեսնելով թշնամուց խլած դրոշակը՝ պատգամավորները վոտքի
կանգնեցին։ Ամեն կողմից հնչեցին հրճվանքի աղաղակներ, կատաղի
ծափահարություններ, թմբկոց և դղրդյուն։

Տոբին և հուսարը կանգնել էյին ձգված, ինչպես զորահանդեսում։
Նրանք նայում էյին գլուխների, բարձրացված ձեռների այդ ծովին
խլացած, շփոթված։

— Ազատության զինվորներին բաց թողեք գան ցանկապատի յետևը — լսվեցին ձայներ։

Վերակացուն բաց արավ ցանկապատը։ Զինվորներն առաջ անցան և կանգ առան։ Տոբին բերանը բաց արավ, վորպեսզի արտասանի այնպիսի դժվարությամբ պատրաստած ճառը։

— Քաղաքացիներ... — հազիվ արտասանեց Տոբին։ Ազդակների և ծափահարությունների նորից բարձրացած ալիքը թնդացրեց դահլիճը, և Տոբիի ձայնը խեղդվեց այդ քաոսում։

---

ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ I. Տոբին և իր արտիստները . . . . . 3
» II. Փարիզն ազմկում է . . . . . 9
» III. Լապտերից կախել սպեկուլյանտներին . . . . . 15
» IV. Քարտաշի տղան . . . . . 24
» V. Ի զեն, քաղաքացիներ . . . . . 31
» VI. Հայրենիքը վտանգի մեջ է . . . . . 42
» VII. Սեն-Ժակ թաղի առաջին կամավորը . . . . . 47
» VIII. Փոթորկից առաջ . . . . . 57
» IX. Արշավանք . . . . . 63
» X. Թմբկահարությամբ . . . . . 66
» XI. Նեգոցիանտը – թափառաշրջիկ . . . . . 70
» XII. Բանակը զորատեսում . . . . . 79
» XIII. Ազատության զինվորները . . . . . 88
» XIV. Ճեղքվածք . . . . . 98
» XV. Ով կարող է՝ թող գլուխն ազատի . . . . . 110
» XVI. Վալմիի բլուրների վրա . . . . . 119
» XVII. Ակամա սանկյուլոտ . . . . . 130
» XVIII. Տաւիկն ու թոռնիկը . . . . . 136
» XIX. Աղոթք սուրբ Միքայելին . . . . . 144
» XX. Արգոնների անտառներում . . . . . 152
» XXI. Մեռնել կամ հաղթել . . . . . 159
» XXII. Մուշկետյորների ձեռքում գերի . . . . . 164
» XXIII. Ազատություն . . . . . 170
» XXIV. Վերջին հանդիպում . . . . . 179
» XXV. Տապալված դրոշակ . . . . . 186

ԻՆԸ 2 ՌՈՒԲԼԻ

Е. ХАЗИН

**БАРАБАНЩИК РЕВОЛЮЦИИ**

НГИЗ—ЭРИВАНЬ

ՀՀ Ազգային գրադարան
NL0395264

3519